The software developed by the authors can be used for building damage as well as seismic intensity estimation during earthquakes (even hypothetical). For example, with the help of this software it'd be easier to understand the possible severity and the volume of damage to buildings if the magnitude of the earthquake (that was actually magnitude 4.7) that happened in 2021 were 5.5, as shown in Fig. 7. Currently, MES relies on residents to provide actual damage information in the event of an earthquake via emergency call. But, in case of scattered damage, shown in Fig. 7, it would be difficult to make a phone call, because many of the calls are concentrated. If there is a seismic intensity map and an estimated building damage map, as in Fig. 7, the damage can be assumed in advance, and a response and a rescue plan can be formulated regardless of whether telephone lines work or not. If the maps exist, it is also useful to consider precautionary measures for disaster prevention, such as what to do if the earthquake on February 13 were a magnitude of 5.5. Since the distribution of damage, shown in Fig. 7, indicates that damage to buildings in Erebuni area is significant, it is necessary to take certain measures, such as rebuilding masonry buildings that are vulnerable to earthquakes or converting them into housing complexes in that area. It would also be useful to consider the stockpiling of disaster prevention materials and food supplies considering the damage distribution and assuming that a temporary shortage of support will occur

due to the damage. Given the above-mentioned, the developed software is useful considering disaster prevention management.



Estimated MSK seismic intensity map due to M=5.5 earthquake near Yerevan

Estimated building damage map due to M=5.5 earthquake near Yerevan

Fig. 7. Seismic Intensity and building damage map in case of magnitude 5.5 at the same location as in Figure 6.1 near Yerevan

In this paper, we have described the developed software that can display seismic intensity maps of cities, seismic intensity distribution map and building damage estimation map of Yerevan using data currently available in Armenia, which is can be useful for earthquake disaster prevention. In reality, it takes about 30 minutes for earthquake source information to be released after an earthquake, so it takes a bit longer to display the seismic intensity maps than the original real-time seismic intensity display system that uses the observed seismic waveform could do. Although in the future it would be desirable to restore the real-time seismic intensity display system that uses observation data, the developed software can display the seismic intensity distribution for hypothetical earthquake sources and can also estimate the building damage situation in Yerevan. Therefore, even if actual damage information is not available, it is possible to comprehensively grasp the results of damage information collected through telephone calls. So, it can be effectively utilized as basic information for disaster management planning.

The building data used in this paper are from JICA project (JICA 2012), i.e. they are more than 10 years old. Updating the basic data will enable us to estimate the currently existing and critical assumptions about damage to buildings. Besides, at the end of this paper, we recommend to reconstruct the seismic intensity display system with the seismic station data. Even if this software can show the user information for disaster prevention management, the seismic intensity distribution display system immediately provides more important data to those dealing with seismic disaster prevention management in Yerevan.

Acknowledgement

In developing the software, the Acting Director of RSSP Dr. S. Margaryan and Dr. V. Arzumanyan provided us with seismic information on Armenia. They also allowed us to accompany

them to the seismograph installation sites for regular maintenance. We deeply appreciate their cooperation. In addition, we would like to also express our appreciation to JICA and MES, since some parts of this paper are the result of the Project for the Improvement of Crisis Communication and Public Awareness for Disaster Risk Reduction, carried out in cooperation between JICA and MES.

Reference

1. **Chiou, B.S.-J., Youngs R.R.**, An NGA model for the average horizontal component of peak ground motion and response spectra, Earthq. Spectra, 24: 2008a, 173–216.
2. **Japan International** Cooperation Agency, OYO International Corp.: Nippon Koei Co., Ltd.: Kokusai Kogyo Co., Ltd. The project for seismic risk assessment and risk management planning in the Republic of Armenia., JICA report. 2012.
3. **Atkinson M.**, Ground-Motion Prediction Equations for Eastern North America from a Referenced Empirical Approach: Implications for Epistemic Uncertainty Bulletin of the Seismological Society of America, Vol. 98, No. 3, 2008, pp. 1304–1318.
4. **Akkar S., Bommer J.**, Empirical Equations for the Prediction of PGA, PGV, and Spectral Accelerations in Europe, the Mediterranean Region, and the Middle East, Environmental Science Seismological Research Letters. 2012.
5. **Medvedev S., Sponheuer W.** (East Germany), and V. Kárník (1964). MKS seismic intensity https://www.wikizero.com/www/Medvedev%E2%80%93Sponheuer%E2%80%93Karnik_scale.

Ջ. Մացուո, Բ. Շիվակու, Գ.Ս. Գևորգյան

ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍԵՅՍՄԻԿ ԻՆՏԵՆՍԻՎՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՊԱՐԿԵՐՄԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՓԱԹԵԹԻ ՄՇԱԿՈՒՄ

1988 թվականին Հայաստանի հյուսիսում տեղի ունեցավ Սպիտակի երկրաշարժը: Այն ահռելի վնասներ ու զոհեր է պատճառել հիմնականում շենքերի փլուզման պատճառով: Ելնելով դրանից, Հայաստանի կառավարությունը մի քանի կանոն է մշակել: Կանոններից մեկն այն է, որ Սեյսմիկ պաշտպանության տարածքային ծառայությունը (ՄԴՏԾ) պետք է 30 րոպեի ընթացքում քաղաքացիներին տրամադրի տեղեկատվություն երկրաշարժի մասին, օրինակ՝ երկրաշարժի օջախի գտնվելու վայրը (լայնություն, երկայնություն, խորություն) և մագնիսությունը: Այնուամենայնիվ, սեյսմիկ վնասների մասին տեղեկատվությունը, ինչպեսիք են շենքերի փլուզումը և ենթակառուցվածքների վնասները, որոնք առավել կարևոր են քաղաքացիների համար, ներառված չեն սեյսմիկ ինֆորմացիայի արտապատկերման համակարգում, քանի որ այն դեռ մշակված չէ Հայաստանում: Հաշվի առնելով վերը նշվածը՝ հեղինակները մշակել են ծրագրային փաթեթ, որը թույլ է տալիս արտապատկերել սեյսմիկ ինֆորմացիայի տրամադրում և գնահատել շենքերի հասցված վնասը՝ մուտքագրելով երկրաշարժի օջախի տվյալները: Հուսով ենք, որ այս ծրագրի օգնությամբ, որը տեսանելի է դարձնում օգտակար տեղեկատվությունը, կձեռնարկվեն աղետների կանխարգելմանն ուղղված արդյունավետ միջոցառումներ:

Առանցքային բառեր. սեյսմիկ ինֆորմացիայի արտապատկերման համակարգ, շենքերի վնասի գնահատում, երկրաշարժ:

Дж. Мацуо, К. Шиваку, Г.С. Геворгян

РАЗРАБОТКА ПРОГРАММНОГО ОБЕСПЕЧЕНИЯ ДЛЯ ОТОБРАЖЕНИЯ СЕЙСМИЧЕСКОЙ ИНТЕНСИВНОСТИ В ЕРЕВАНЕ

В 1988 году на севере Армении произошло Спитакское землетрясение. Это вызвало огромный ущерб и человеческие жертвы, в основном из-за обрушения зданий. Поэтому правительство Армении разработало несколько правил. Одно из правил заключается в том, что Региональная служба сейсмической защиты (РССЗ) должна предоставить гражданам информацию о землетрясении, такую как местоположение очага землетрясения (широта, долгота, глубина) и магнитуду, в течение 30 минут. Однако, более важная для граждан информация о сейсмическом ущербе, такая как обрушение зданий и ущерб инфраструктуры, не включена в систему отображения сейсмической интенсивности, так как в Армении она еще не разработана. Принимая во внимание вышеизложенное, авторы разработали программное обеспечение для отображения сейсмической интенсивности в городе Ереван и оценки ущерба, нанесенного зданиям, путем ввода данных о сейсмическом очаге. Мы надеемся, что с помощью этого программного обеспечения, визуализирующего полезную информацию, будут приняты эффективные меры по предотвращению стихийных бедствий.

Ключевые слова: система отображения сейсмической интенсивности, оценка поврежденных зданий, землетрясение.

Jun Matsuo - Dr. of Science (OYO International Cooperation).

Koichi Shiwaku - Global Environment, Engineer (OYO International Corporation).

Gevorgyan Gevorg Samvel - Doctor of Physics (Yerevan State University).

Presentation date: 23.09.2022

Review date: 28.09.20

Ա.Ա. Խաչատրյան, Կ.Է. Զիրաքյան, Թ.Թ.Մադոյան, Ն.Ա. Հակոբյան

COVID-19 ՀԱՄԱՎԱՐԱԿԸ ՈՐՊԵՍ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿ, ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅԱՆ, ԲԺՇԿԱԿԱՆ ՏԵՍԱԿԱՎՈՐՄԱՆ, ԲԺՇԿԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐ ՏԵՂԱՓՈԽՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ

Կորոնավիրուսը պարզվեց, որ այն վիրուսների խմբին, որոնք առաջացնում են տարբեր հիվանդություններ՝ սովորական հարբուխից մինչև ծանր հիվանդություն, ինչպես օրինակ մերձավոր արևելքի շնչառական համախտանիշը (MERS-CoV) և ծանր սուր շնչառական համախտանիշը (SARS-CoV): Նոր կորոնավիրուսը (COVID-19) նոր ենթատեսակ է, որը մինչ օրս չի հայտնաբերվել մարդկանց շրջանում:

Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը (ԱՀԿ) հայտարարել է համավարակ՝ պայմանավորված կորոնավիրուսային հիվանդությամբ (COVID-19):

COVID-19 համավարակով պայմանավորված՝ ամբողջ աշխարհում հասարակվել էր միջազգային արտակարգ իրավիճակ: Այսպիսի ռեժիմը ենթադրում էր հասարակական կյանքի գոյություն ունեցող որոշ օրինաչափությունների փոփոխություն, իսկ որոշների՝ արգելք: Այսպիսով, սրտեղծվեց նոր իրավիճակ, որտեղ հասարակական հարաբերությունների որոշ նախկին կանոնակարգեր սկսեցին չգործել, իսկ նոր կանոնակարգերին հարմարվելու համար հարկավոր էր ժամանակ: Հասարակական կյանքի առավել փոփոխված դրսևորումներն արտահայտվեցին քաղաքական, տնտեսական, մշակութային, բժշկական և հոգեբանական մի շարք ոլորտներում:

COVID-19-ի հիվանդների կարիքներին առողջապահական համակարգի կարողությունների բարձրացումը և հարմարեցումը նկարագրվում են ԱՀԿ-ի կողմից որպես հիվանդության բռնկմանն արձագանքելու հիմնարար միջոց:

Առանցքային բառեր. արտակարգ իրավիճակ, տարահանում, բուժկանխարգելիչ հիմնարկ, բժշկական տեսակավորում, տեսակավորման դրոշմանիշ, COVID-19 համավարակ, անհետաձգելի բժշկական օգնություն:

Հոդվածում քննարկվում են COVID-19 համավարակով պայմանավորված բնակչության պատեհաժամ բուժօգնության ցուցաբերման, ինչպես նաև նախքան բուժհիմնարկ տեղափոխումը և բուժհիմնարկ տեղափոխված հիվանդների տեսակավորմանը նվիրված որոշ առանձնահատկություններ:

COVID-19-ի հիվանդների կարիքներին առողջապահական համակարգի կարողությունների բարձրացումը և հարմարեցումը նկարագրվում են ԱՀԿ-ի կողմից որպես հիվանդության բռնկմանն արձագանքելու հիմնարար միջոց:

Հիվանդությունների կանխարգելման և վերահսկման եվրոպական կենտրոնի (ECDC) և ԱՀԿ-ի եվրոպական տարածաշրջանային գրասենյակը թողարկել են ուղեցույցներ հիվանդանոցների և առաջնային առողջապահական ծառայությունների համար ռեսուրսների վերաբաշխման մի քանի մակարդակներում, ներառյալ՝ COVID-19 փորձարկման լաբորատոր ծառայությունների կենտրոնացումը, հնարավորության դեպքում պլանային ընթացակարգերի վերացումը, COVID-19-ի դրական արդյունքներով հիվանդների բաժանումը և մեկուսացումը, նախքան բուժհիմնարկներ տեղափոխումը, բժշկական տեսակավորման անցկացումը, ինչպես

նաև անձնակազմի ուսուցման միջոցով ինտենսիվ թերապիայի հնարավորությունների ընդլայնումը և թոքերի ու կոկորդի արհեստական օդափոխության մատչելի սարքերի թիվը [4]:

Մի շարք հեղինակների ուսումնասիրությունները վկայում են այն մասին, որ նորմալ պայմաններում հիվանդի կյանքը փրկելու համար առողջապահական համակարգը ներգրավում է իր անբողջ առկա ռեսուրսները: Սակայն, լայնածավալ վթարները, բնական աղետալի երևույթները, զինված հակամարտությունները, ահաբեկչությունները կամ համավարակները առողջապահության ոլորտին պարտադրում են առաջնահերթություն տալ առկա ռեսուրսների և հնարավորությունների բաշխմանը: Այս փուլում կատարվում է հիվանդների, տուժածների տեսակավորում մինչև բուժհիմնարկ տեղափոխելը և որից հետո բուժհիմնարկի ընդունաբանում գտնվելու դեպքում [3]:

Բժշկական հիմնարկներում հիվանդների ընդունման համար նախատեսված ընդունաբաններն աշխատում են 24 ժամ և ընդունելության բաժանմունքներում շուրջօրյա հերթապահություն են իրականացնում բժիշկները: Ընդունման բաժանմունքում հիվանդների առաջնային տեսակավորումն իրականացնում է հերթապահ բուժքույրը, ով սահմանում է հերթապահ բժշկի բժշկական մասնագիտության բնութագիրը՝ հիվանդի նախնական զննման և հետազոտության կարգի համար: Ընդունարանում նախնական հետազոտության հաջորդականությունը կարող է փոփոխվել հերթապահ բուժքույր կամ հերթապահ բժշկի կողմից՝ կախված հետազոտությանը սպասող հիվանդի վիճակի վատթարացումից:

Հերթապահ բժիշկը հիվանդին զննելիս որոշում է այն չափանիշները, որոնք հանդիսանում են հիվանդի կյանքին սպառնացող վտանգի նշաններ, անհրաժեշտության դեպքում ցուցաբերում է շտապ բժշկական օգնություն և որոշում հիվանդանոցում հոսպիտալացման ցուցումները և տեսակավորման անհրաժեշտությունը:

Բժշկական տեսակավորում «տրիաժ» տերմինը, որն օգտագործվում է անգլերեն և ֆրանսերեն, հիմնված է ֆրանսիական «trier» բառի վրա, որը նշանակում է «տեսակավորել, ընտրել կամ առանձնացնել»: Բժշկական համատեքստում «տրիաժը» հիվանդների դասակարգումն է ըստ հրատապության և նրանց բուժման ինտենսիվության: Օրինակ, թեթև վնասվածքով հիվանդն ավելի քիչ բժշկական օգնության կարիք ունի, քան ծանր վնասվածք ունեցող հիվանդը: Իրավիճակը դառնում է խնդրահարույց, երբ ծանր հիվանդի բուժումը կարող է պահանջել այլ հիվանդների գոյատևման համար անհրաժեշտ անձնակազմի և սարքավորումների կիրառում: Նման դեպքերում բուժանձնակազմը պետք է գնահատի հիվանդի գոյատևման հնարավորություններն առկա ռեսուրսների հետ և հնարավորինս շատ կյանքեր փրկի:

Բազմաթիվ հեղինակների ուսումնասիրությունները բժշկական տեսակավորման վերաբերյալ ցույց են տվել, որ Եվրոպայում բժշկական օգնությանը առաջնահերթ տալու պրակտիկական սկիզբ է առել Նապոլեոնյան պատերազմների ժամանակաշրջանից: Ռազմական բժիշկներն իրենց բուժումը հիմնել են վիրավորների ողջ մնալու կանխատեսված հնարավորությունների վրա:

18-րդ և 19-րդ դարերի սկզբին օգտագործվում էին տեսակավորման դրոշմանիշներ, որոնք ցույց էին տալիս յուրաքանչյուր զինվորի ախտորոշումը: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին կատարելագործվել է հիվանդների պիտակավորման և տեսակավորման համակարգը [2]:

19-րդ և 20-րդ դարերում զուտ բժշկական նկատառումները համակցված էին պատերազմող կողմերի ընդհանուր առաջադրանքների հետ: Սա հանգեցրեց բուժման առաջնահերթության էլ ավելի մանրամասն դասակարգմանը:

Օրինակ՝ զինվորականներին նախապատվությունը տրվել է քաղաքացիական անձանց նկատմամբ, և վիրավոր զինվորներին բուժել են առաջինը, երկրորդ հերթին՝ հակառակորդի զինվորներին: Հետագայում սառը պատերազմի ժամանակ տրիաժի և դրոշմանիշների համակարգը բարելավվեց: Ելնելով այն ենթադրությունից, որ միջուկային պատերազմի դեպքում վիրավորներին բուժելու հնարավորությունը չափազանց սահմանափակ է եղել և բժիշկները պատրաստ են եղել մանրակրկիտ կանխատեսել ռադիոակտիվ աղտոտումից հիվանդների գոյատևման հնարավորությունները [3]:

Այսօր ազգային առողջապահական համակարգը ստեղծել և կատարելագործել է մեծ թվով կորուստներով արտակարգ իրավիճակի դեպքում առաջին արձագանքողների կողմից դրոշմանիշների օգտագործման մեխանիզմը: Տեսակավորման դրոշմանիշները բժշկական մասնագետներին հնարավորություն են տալիս արդյունավետ և խելամտորեն բաշխել սահմանափակ ռեսուրսները և անհրաժեշտ շտապ օգնություն տրամադրել տուժածներին՝ նախքան լրացուցիչ բժշկական խմբերի դեպքի վայր հասնելը [1]:

Բժշկական տեսակավորման դրոշմանիշները կողավորված են տարբեր գույներով: Սև դրոշմանիշը նշանակում է, որ հիվանդը անհույս վիճակում է (մահանալու է): Նման դեպքերում հիվանդներին անցկացվում է սիմպտոմատիկ թերապիա հատուկ ծավալված բուժկետերում: Կարմիր գույնը ցույց է տալիս, որ հիվանդի վիճակը վտանգավոր է կյանքի համար և պահանջում է անհապաղ բժշկական օգնություն: Դեղին դրոշմանիշը նշանակում է, որ հիվանդի վիճակը մեծ վտանգ չի ներկայացնում կյանքի համար, սակայն շտապ օգնություն է պահանջում: Կանաչը նշանակում է հիվանդության թեթև աստիճան: Ժամանակակից շտապօգնության մեքենաները և շարժական ինտենսիվ թերապիայի բաժանմունքներն ունեն տեսակավորման դրոշմանիշների հավաքածուներ [3]:

Հասկանալի է, որ գործնական և տրամաբանական պատճառներով հասարակությունը պետք է ակնկալի, որ ազգային առողջապահական համակարգն ամեն ինչ կանի հիվանդներին բուժելու համար, հատկապես այնպիսի դեպքերում, ինչպիսին է ներկայիս COVID-19 համավարակը [1]:

Վերջապես, տրիաժի երկրնտրանքը, այն է, որ խիստ սահմանափակ ռեսուրսներով հնարավորինս արագ և շատ խնամք տրամադրել հիվանդների առավելագույն քանակին:

Բժշկական տեսակավորումը կազմակերպչական կարևորագույն մեթոդներից է, որն ուղղված է արտակարգ իրավիճակներում բնակչության առաջին օգնության ցուցաբերման և բուժման երկփուլ համակարգի հաջող իրականացմանը: Պատշաճ կազմակերպված տեսակավորումը նպաստում է բժշկական ծառայության ուժերի և միջոցների ռացիոնալ օգտագործմանը տուժածներին բոլոր տեսակի բժշկական օգնության ժամանակին և ամբողջական տրամադրման, նրանց բուժման և համապատասխան բժշկական հիմնարկներ տեղափոխման համար:

Արտակարգ իրավիճակների դեպքում միջոցառումների նախապատրաստումն ու պլանավորումը շատ կարևոր են դրանց հետևանքների դեմ հաջող պայքարի համար: Դա անելու

համար բժշկական անձնակազմը պետք է մշտապես կատարելագործի իր գիտելիքները, հմտությունները և տեղեկացված լինի այն ռեսուրսների մասին, որոնք կարող են օգտագործվել արտակարգ իրավիճակների դեպքում հիվանդների վիճակի կայունացման և վերացնելու համար [3]:

Այսպիսով, անհրաժեշտ ենք համարում նշել, որ COVID-19 համավարակի դեպքում հիվանդներին պետք է ցուցաբերել պատեհաժամ բուժօգնություն, անհապաղ անցկացնել հիվանդների բժշկական տեսակավորում, ինչպես նախքան բուժհիմնարկներ տեղափոխվելը, այնպես էլ բուժհիմնարկների ընդունարաններում, որը ենթադրում է հիվանդների բաշխումը տեսակավորման խմբերի՝ ըստ հիվանդության աստիճանի:

Գրականություն

1. **Еремин А.В.**, Алгоритмы действия медицинских работников на различных этапах оказания помощи в период наличия и угрозы дальнейшего распространения новой коронавирусной инфекции: [руководство], М.: Т8 Издательские технологии, 2020. - 118 с.
Eremin A.V., Algoritmi deystviya medicinskikh rabotnikov na razlichnikh etapakh okazaniya pomoshi v period nalichiya i ugrozi dalneyshego rasprostraneniya novoy koronavirusnoy infekcii: [rukovodstvo.] М., Т8 Izdatelskie tekhnologii, 2020-118p
2. **Кошелев А.А.**, Медицина катастроф, Санкт-Петербург, М., Краснодар 2016, С. 45-48.
Koshelev A.A., Medicina katastrof, Sankt-Peterburg, М., Krasnodar 2016, p.45-48
3. **Никифоров В.В.**, Суранова Т.Г., Миронов А.Ю., Забозлаев Ф.Г., Новая коронавирусная инфекция (COVID-19): этиология, эпидемиология, клиника, диагностика, лечение и профилактика, – М., 2020. – 48 с.
Nikiforov V.V., Suranova T.G., Mironov A.Yu., Zabozaev F.G. Novaya koronavirusnaya infekciya (COVID-19): etiologiya, epidemiologiya, klinika, diagnostika, lechenie i profilaktika. –M, 2020-48p
4. **Hospital** readiness checklist for COVID-19, 24 February 2020 (produced by WHO/Europe), p. 122-123.

А.А. Хачатрян, К.Э. Зиракян, Т.Т. Мадоян, Н.А. Акопян

ПАНДЕМИЯ COVID-19 КАК ЧРЕЗВЫЧАЙНАЯ СИТУАЦИЯ И НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ, ПОСВЯЩЕННЫЕ ОСОБЕННОСТЯМ МЕДИЦИНСКОЙ ПОМОЩИ НАСЕЛЕНИЮ, МЕДИЦИНСКОЙ СОРТИРОВКЕ, ОСОБЕННОСТЯМ ПЕРЕМЕЩЕНИЯ В МЕДИЦИНСКИЕ УЧРЕЖДЕНИЯ

Коронавирус относится к той группе вирусов, которые провоцируют различные болезни от простых ОРВИ, до тяжелых болезней, таких как, например, ближневосточный респираторный синдром (MERS-CoV) и острый респираторный синдром (SARS-CoV). Новый коронавирус (COVID-19) является новым подвидом, который до сих пор не обнаруживался среди людей.

Всемирная организация здравоохранения (ВОЗ) объявила, обусловленную коронавирусной болезнью (COVID-19), пандемию.

Пандемия COVID-19 («CoronaVirus Disease 2019») уже вошла в историю как чрезвычайная ситуация международного значения. Подобный режим предполагает изменение существующих определенных закономерностей общественной жизни, и даже запрет некоторых. Таким образом

возникла новая ситуация, при которой перестали действовать некоторые прежние нормативы общественной жизни, а для приспособления к новым нормативам требовалось время. Наиболее изменившиеся проявления общественной жизни выразились в политической, экономической, культурной, медицинской и психологической областях.

В данной статье рассматриваются некоторые особенности оказания своевременной медицинской помощи населению в связи с пандемией COVID-19, а также проведения медицинской сортировки и эвакуации больных.

Считаем необходимым отметить, что в случае пандемии COVID-19 больным должна быть оказана неотложная медицинская помощь, медицинская сортировка, предполагающая распределение больных на группы по степени заболевания, рациональная эвакуация в перепрофилированные медицинские учреждения.

Ключевые слова: чрезвычайная ситуация, эвакуация, лечебнопрофилактическое учреждение, медицинская сортировка, сортировочная маркировка, пандемия COVID-19, неотложная медицинская помощь.

A.A. Khachatryan, K.E. Zirakyan, T.T. Madoyan, N.A. Hakobyan

COVID-19 AS AN EMERGENCY, AND SOME QUESTIONS DEDICATED TO THE FEATURES OF POPULATION MEDICAL CARE, MEDICAL CLASSIFICATION, MEDICAL FACILITIES TRANSFER

Coronavirus belongs to a group of viruses that cause a variety of illnesses, from common flu to severe illness, such as Middle East Respiratory Syndrome (MERS-CoV) and Severe Acute Respiratory Syndrome (SARS-CoV). The new coronavirus (COVID-19) is a new subtype that has not yet been identified in humans.

The World Health Organization (WHO) has declared a pandemic due to the coronavirus disease (COVID-19). Due to the pandemic of COVID-19, an international emergency was established all over the world. Such a regime implied the change of some existing patterns of public life, and the prohibition of others.

Thus, a new situation was created, where some of the previous regulations of public relations began to fail, and time was needed to adapt to the new regulations. The most changed manifestations of social life were expressed in a number of political, economic, cultural, medical and psychological spheres.

Improving and adapting health system capacity to the needs of COVID-19 patients is described by the WHO as a fundamental way to respond to the outbreak.

Keywords: emergency situation, evacuation, preventive medical institution, medical classification, sorting stamp, COVID-19 pandemic, emergency medical care.

Խաչատրյան Աշխեն Ալբերտի- դոցենտ, բժշկ. գիտ. թեկնածու, ր/ծ պ. փոխգնդապետ (ՀՀ ԱԻՆ ՃԿՊԱ, Մխիթար Գոշ ՀՌՄՀ).

Զիրաբյան Կարեն Էդուարդի - ր/ծ գնդապետ (ՀՀ ԱԻՆ ՃԿՊԱ).

Մադոյան Թերեզա Թեմուրի - բժշկ. գիտ. թեկնածու (Մխիթար Գոշ ՀՌՄՀ).

Հակոբյան Նվարդ Արթուրի - (Մխիթար Գոշ ՀՌՄՀ).

Ներկայացման ամսաթիվը՝ 20.09.2022

Գրախոսման ամսաթիվը՝ 26.09.2022

M.G. Manasyan, Mustafa Sani

CRISIS MANAGEMENT AND SECURITY OF CITIES

The article discusses the interrelationships and issues of crisis management, large city planning and security urban planning. Ways and necessity of studying urban planning aspects of protection of cities from natural disasters, particularly earthquakes, are emphasized. The necessity of using the latest technologies, including the geographic information system, in ensuring the safety of the population of large cities from natural disasters, and implementing plans and other urban development measures is noted.

Keywords: *crisis management, city planning, natural disasters, earthquake, urban planning.*

When natural disasters such as earthquake, flood, storm, tornado and so on happen, in most cases, they leave devastating effects on human residence and they leave heavy casualties on the resident, they ruin buildings and infrastructures and as a result they impose far-reaching economic and social consequences on societies and countries. Range of damages created by an event does not only depend on power of devastation and level of damage made, it is dependent on condition of infrastructures which face accident, but in many developing countries which encounter increasing focus of population, poor areas, a natural event can cause a disaster even in a place where its basic effect is not that serious [1].

Looking at growth conditions of cities indicates that in 1900 there existed only 11 metropolises in the world, while during one century in 2000 more than 400 cities were created by millions of people in the world. Condition of Iran on this shows that urban population growth with 30% in 1955 reached to more than 71% in 2011 and 199 cities in 1955 became seven times more in 2011 with 1331 more cities. This indicated growth and development of urbanization and necessity of planning for securing cities (statistical center of Iran, 2011).

Therefore, it is necessary to investigate following cases in order to conduct some planning for securing cities against natural events and also the way of distributing different functions across the city.

- 1) Investigating role of urban planning in reducing effects of natural events.
- 2) Determining areas with too much population and more planning for reducing effects of natural events in this area as much as possible.
- 3) Noticing old structure of cities and planning and strengthening more immunization of this vulnerable area against natural events.
- 4) Investigating the way of preventing from natural events in urban areas with caring about positioning and the way of distributing functions across the city.
- 5) Investigating the way of effecting natural events on urban constructions.
- 6) Investigating the way of effecting natural events on infrastructures and different urban functions.

- 7) Investigating the way of effecting of city form (figure) in reducing the effects of natural events.
- 8) Investigating condition of vulnerability and resistance of structures in urban constructions.
- 9) Analyzing the role of authorities in urban management in reducing effects of natural events
- 10) Improving public awareness to the effects of natural events and the way of cooperation of people in reducing their effects.

Urban planning as one of city making elements.

Although quality of urban environment is dependent on facilities and security of the environment, it should be mentioned that the aim of urban planning as one of elements of creating city in order to prevent from crisis must be based on recognizing process of risky elements and strengthening security of environment, improvement and modifying city and creating city. It is a duty that some planners have noticed less during preparing a comprehensive plan or plan of urban development [2]. Hosner, 1989 considered following items as solutions for fighting against natural accidents:

- 1) Determining places with high level of risk.
- 2) Gathering and recording documentations and data of natural accidents.
- 3) Conducting research and researches for discovering public awareness on accidents, effects and their significance.
- 4) Developing and implementing programs to improve public awareness about disaster impacts and their significance.

Generally, principles of urban planning for preventing from events (accidents) contain development and creating a secure and non risky environment and rebuilding a vulnerable environment. In this relation ways of fighting against natural events can be effective as one of the solutions in urban planning. These solutions can be as follows:

- 1) Identifying and determining places with a relative level of risk and a high level of vulnerability.
- 2) Gathering and recording documentation and data of natural events.
- 3) Conducting necessary researches for discovering the relation between events and their other effects.
- 4) Preparing and performing some plans for improving public awareness of events, effects and their significance.
- 5) Preventing from too much growth and urban development in risky areas.
- 6) Editing and performing prevention programs.
- 7) Assessing damages based on different scenarios.

Strengthening and a lot of attention to type of construction materials and adjusting rules of controlling them and more supervision of urban managers on planning and urban management can greatly be effective in reducing damage of human casualties, however assessing the casualties is widely dependent on some factors such as time of accident, relief and saving services and people's awareness from events and some other factors.

Necessity of preparedness against earthquake.

Training is the basis of the preparation against every kind of event. So presenting public education on the way of encountering natural events such as an earthquake is important due to following reasons:

- by having training and awareness, people can prepare themselves against earthquake and can protect their own lives and others' lives during occurrence of such events.
- due to the magnitude of dimensions of disaster during occurrence of an earthquake, it is necessary that all the people help those suffered, without doubt this needs necessary awareness during relief operation.
- after earthquake often other events such as fire may happen which can strengthen depth of disaster. People's awareness can help them deal with events after the earthquake by sufficient preparedness and this way they can prevent the consequences of such events to some extent.
- by having knowledge on the direct effect of quality of constructions and the way of strengthening them against earthquake, people can make their own houses in a resistant way so that the consequences resulting from the earthquake will not injure them.

As it was emphasized, previous preparation in a society during facing an earthquake as one of the most important factors in reducing damages resulting from earthquakes, has been proved. Although the way of providing information for people during occurrence of events can be very different, we can definitely suggest that the first step for performing and conducting preventive programs from events is public awareness and informing through the media and publishing information on risks resulting from unwanted events such as earthquakes. In this relation human reaction against earthquakes somehow indicates their necessity and preparedness against earthquake which are shown in table 1:

Table 1.

Human reaction against earthquake and necessity of preparedness against it

Row	Time	Disaster	Reaction	
			Positive	Negative
1	From 0 to 1 minute	Earthquake		
2	From 1 minute to 1 week	Aftershock	Rescue	Panic
3	From 1 week to 1 month	Reduced aftershocks	Short - term and	Blaming authorities
4	From 1 month to 1 year		Long - term	
5	From 1 year to 10 years			Disregarding to subject
6	From 10 years to disaster			Disregarding to researches for preventing of earthquake
7	Next disaster	Earthquake	Repetition of 1 to	

By GIS function, we can analyze modeling of future development for future planning and also can accelerate and facilitate urban studies such as process of city evolution, civil and the suggested development. There is no doubt that in the current century design and planning experts in developing countries will not move forward without using this old tool. According to GIS capabilities, this system can be used in urban planning fields, urban designing, crisis management and creating a location information basis in the field of urban management which are summarized briefly in the next sections.

A) Urban planning

One of the most important duties in creating cities and urban management is urban planning.

Based on this planning of the buildings, as well as economic and social planning for each city under the supervision and guidance of GIS system can be effective in some fields such as: creating urban environments with high quality, producing and choosing suitable types of housing in city, planning for logical growth in areas of city, rebuilding of city areas, making planning collaborative and people's interference in planning, helping to create job opportunities and economic development and evolution in organizing urban transportation.

B) Urban design

Coloring, lighting, texture and object material presentation are common titles among professional needs of urban designing and arrangements present in multi-dimensional GIS. Complying urban activities with geographical features and characteristics of land complication, layering complication under study and assessing environmental conditions, determining land function along with drawing capabilities, animation complication, designing and environmental analysis is of GIS capabilities in urban designing.

C) Collaborative management

Direct contact of urban management with citizens and their desires makes it necessary that collaborative management system to be designed and developed and as a tool for a stable human development and citizens' cooperation in urban affairs.

Today, geographical informational systems and virtual simulation models are two advanced technologies which are responsible for expert analysis and optimum partnership of people in process of urban decision-making and they will bring a constant future for city.

D) Basis of location information

Founders of urban management face a wide range of information most of which is location information. This information can be useful which are managed in a unified and objective manner. Because of its nearly unique ability in connecting location information to descriptive information, system of geographical information has been considered as a capable device and an efficient technology in forming database, also it is able to create information basis along with specialized programs. In fact, GIS makes managing and organizing of location and descriptive data possible with the aim of an optimum decision-making.

Literature

1. **Hosseini Maziar**, Principles of crisis management. Prevention and crisis management organization in Tehran Publisher, 2006. - 78.
2. **Abdollahi M.**, Crisis management in metropolitan areas (earthquakes and floods), Publications of Tehran, 2003. - 60.

Մ.Գ. Մանասյան, Սանի Մուսթաֆա

ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ՔԱՂԱՔՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

Հողվածում քննարկվում է ճգնաժամային կառավարման, խոշոր քաղաքների հատակագծման և անվտանգության քաղաքաշինական ապահովման փոխադարձ կապերն ու հիմնահարցերը: Կարևորվում է տարերային աղետներից, մասնավորապես երկրաշարժերից քաղաքների պաշտպանության քաղաքաշինական ասպեկտների ուսումնասիրության ուղիներն ու անհրաժեշտությունը: Նշվում է նորագույն տեխնոլոգիաների, այդ թվում աշխարհագրական տեղեկատվական համակարգի օգտագործման անհրաժեշտությունը տարերային աղետներից խոշոր քաղաքների բնակչության անվտանգության ապահովման, հատակագծային և այլ քաղաքաշինական միջոցառումների իրականացման գործում:

Առանցքային բառեր. ճգնաժամային կառավարում, քաղաքների հատակագծում, տարերային աղետներ, երկրաշարժ, քաղաքաշինություն:

М.Г. Манасян, Сани Мустафа

КРИЗИСНОЕ УПРАВЛЕНИЕ И ОБЕСПЕЧЕНИЕ БЕЗОПАСНОСТИ ГОРОДОВ

В статье рассматриваются вопросы и взаимосвязи антикризисного управления, планировки городов и градостроительное обеспечение безопасности крупных городов. Указаны необходимость и пути изучения градостроительных аспектов защиты городов от стихийных бедствий, в частности, от землетрясений. Отмечена важность использования новейших технологий в том числе ГИС (географическая информационная система) при планировке городов и других градостроительных мероприятий в связи с обеспечением безопасности населения крупных городов от стихийных бедствий.

Ключевые слова: кризисное управление, планировка городов, стихийные бедствия, землетрясение, градостроительство.

Manasyan Maksim Garnik - doktor of geog. sci., professor (CMSA, MES of the RA).

Sani Mustafa - lecturer (Islamic Republic of Iran).

Presentation date: 23.09.2022

Review date: 28.09.20

Տ.Ի. Հայրապետյան

ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՆԽԱՓԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ

Բանկային համակարգը, որպես երկրի և տնտեսության կարևորագույն օղակներից մեկը, իր գործունեության արդյունավետությամբ նպաստում է երկրի տնտեսական ակտիվության աճին, իսկ ոչ արդյունավետ գործող բանկային համակարգը խոչընդոտում կամ դանդաղեցնում է տնտեսական ակտիվությունը: Պայմանավորված համավարակի և վերջին պատերազմի հետևանքով առաջացած խնդիրներով՝ ՀՀ բանկային համակարգը շարժառիթ է արտակարգ իրավիճակներում և ձեռնարկել է քայլեր, իրականացրել է հասցեական գործողություններ ստեղծված իրավիճակը մեղմելու և առաջացած ռիսկերը վերացնելու կամ նվազագույնի հասցնելու նպատակով: Վերոնշյալ պայմաններում ՀՀ բանկային համակարգի գործունեության վերլուծությանն է նվիրված սույն հոդվածի իրապարակման անհրաժեշտությունը:

Առանցքային բառեր. բանկային համակարգ, վարկ, վարկային պորտֆել, ակտիվներ, տնտեսական ակտիվության ցուցանիշ, վարկային պարտավորություն:

Համարվելով առևտրային կազմակերպություն՝ առևտրային բանկերը շուկայական տնտեսության ակտիվ տարրերն են: Սա պայմանավորված է նրանով, որ նախ հավաքագրելով ֆիզիկական և իրավաբանական անձանց ժամանակավորապես ազատ դրամական միջոցները և դրանք տրամադրելով այդ միջոցների կարիքը զգացող ձեռնարկություններին, կազմակերպություններին՝ ժամանակավոր օգտագործման, դրանով իսկ նպաստում են ընդլայնված վերարտադրության անընդհատությանը՝ որպես միջնորդ հանդես գալով փոխադարձ վճարումների ու հաշվարկների կատարման գործընթացում:

Հանրապետության մակրոտնտեսական ցուցանիշների բարելավումը բարենպաստ պայմաններ ստեղծեց բանկային համակարգի զարգացման համար: Մասնավորապես, սա արտահայտվեց նրանում, որ սկսեց աճել միջին ժամկետայնության և երկարաժամկետ ներդրումների ծավալը, ինչը առևտրային բանկերի գործունեության առավել ստվերոտ կողմն է:

Վերջին տարիներին Հայաստանի Հանրապետության տնտեսական աճի ցուցանիշների բարելավումը նպաստավոր պայմաններ ստեղծեց նաև բանկային համակարգում առևտրային բանկերի ֆինանսական կայունության մակարդակի բարձրացման համար: Այդ մասին են վկայում շահույթով աշխատող առևտրային բանկերի թվաքանակի աճը և դրանց շահութաբերության մակարդակի բարձրացումը:


Հանրապետության առևտրային բանկերի ֆինանսական կայունության վրա էական ազդեցություն է գործում, այսպես կոչված, կապիտալի բազմարկչի ցուցանիշի մակարդակը, որը ներկայացնում է ակտիվների ու սեփական կապիտալի հարաբերությունը:

Այս ցուցանիշի նշանակությունն այն է, որ ցույց է տալիս, թե որքան արդյունավետ է օգտագործվել առևտրային բանկերի սեփական կապիտալը: Որոշակի իմաստով, այս ցուցանիշը հիշեցնում է տնտեսավարման սուբյեկտների «ֆինանսական լծակ» ցուցանիշը:

2020 թ-ի տարեսկզբին բռնկված COVID-19-ի համավարակը և սեպտեմբերին սկսված լայնածավալ պատերազմը էական վնասներ են հասցրել Հայաստանի տնտեսությանը:

2020 թ-ին համախառն ներքին արդյունքի իրական ծավալը կրճատվել է 7,4%-ով, ֆինանսական և ապահովագրական գործունեության ոլորտում արձանագրվել է ավելացված արժեքի 5,4% հավելում, ինչն ավելի քան 0,3 տոկոսային կետով զսպել է ՀՆԱ-ի անկումը [1]:


2021 թ-ի փետրվարի վերջի դրությամբ չաշխատող ակտիվների («հսկվող», «ոչ ստանդարտ», «կասկածելի» դասերում ընդգրկված ակտիվների) կամ այսպես ասած՝ «դասակարգված վարկերի» մասնաբաժինն առևտրային բանկերի ընդհանուր ակտիվների կառուցվածքում հասել է 7,01%-ի, ինչն ամենաբարձր ցուցանիշն է 2017 թ-ի տարեսկզբից ի վեր, երբ սահմանվեց նորմատիվային կապիտալի նոր շեմ (30 մլրդ դրամ) [2]:



Գծ. 1. ՀՀ առևտրային բանկերի չաշխատող ակտիվների մասնաբաժինը ընդհանուր ակտիվների կառուցվածքում, % [3]


Բանկերի չաշխատող ակտիվների տեսակարար կշիռն աճել է գրեթե բոլոր ոլորտներում, ինչը պայմանավորված է և՛ համավարակի, և՛ պատերազմի ազդեցությամբ, սակայն ամենակտրուկ աճն արձանագրվել է էներգետիկայի ոլորտում՝ ավելի քան 4 անգամ (2021 թ-ի փետրվարը 2020 թ-ի օգոստոսի համեմատ), ինչը հիմնականում պայմանավորված է պատերազմի ազդեցությամբ, երբ Արցախի տարածքում գտնվող բազմաթիվ հիդրոէլեկտրակայաններ ավերվեցին կամ անցան Ադրբեյջանի վերահսկողության տակ: Բայց այսքանով պատերազմի ազդեցությունը չի սահմանափակվում: Հայաստանում գործող բանկերն ակտիվորեն մասնակցում էին նաև Արցախի տնտեսության այլ ոլորտների և ֆիզիկական անձանց վարկավորման ծրագրերին, ավելին՝ 17 բանկից 7-ն ունեին նաև մասնաճյուղեր Արցախում, հետևաբար Արցախի բնակչության ու կազմակերպությունների վարկային պարտավորությունների մարումների, ինչպես նաև պատերազմում հաշմանդամ դարձած կամ զոհված անձանց վարկային պարտավորությունների մասնակի կամ ամբողջական ներման հարցը դեռևս զգալի ազդեցություն է ունենալու բանկերի ֆինանսական ցուցանիշների վրա:

Վերջին տարիներին, հատկապես 2018 թ-ի ապրիլյան իրադարձություններից հետո, բնակչության դրական սպասումները հանգեցրել էին վերջնական սպառման էական աճի, այդ թվում՝ սպառողական վարկերի էական աճի: 2017 թ-ի դեկտեմբերի 31-ի համեմատ 2018 թ-ի տարեվերջին բանկերի տրամադրած սպառողական վարկերի ծավալը աճել էր 37%-ով: Այս բարձր աճի տեմպը պահպանվել էր նաև 2019 թ-ին (31%), սակայն մասնագիտական շրջանակները և Կենտրոնական բանկը բազմիցս շեշտել են, որ աճի այդպիսի միտումները մտահոգիչ են և նախատեսում էին քայլեր ձեռնարկել սպառողական վարկերի աճի տեմպերը զսպելու համար:



Գծ. 2. ՀՀ առևտրային բանկերի կողմից տրամադրված սպառողական վարկերը, 2016-2020 թթ. (Ժամանակահատվածի վերջի դրությամբ), մլրդ դրամ [4]

ՀՀ առևտրային բանկերի վարկային պորտֆելը 2020 թ-ին տարեվերջի դրությամբ կազմել է շուրջ 4 տրիլիոն դրամ, ընդ որում աճի տեմպը պահպանվել է բարձր մակարդակում: Ավելին, առևտրային բանկերի վարկային պորտֆելի դինամիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մշակող արդյունաբերության, գյուղատնտեսության ոլորտներում վարկային պորտֆելները ոչ միայն աճել են, այլև աճել են ավելի մեծ տեմպով, քան 2019 թ-ին, ինչը թերևս մասամբ պայմանավորված է կառավարության հակաճգնաժամային միջոցառումներով, մասամբ տնտեսվարողների ֆինանսական դրության վատթարացմամբ: Համաձայն կառավարության տվյալների՝ 2020 թ-ի սեպտեմբերի վերջի դրությամբ ՀՀ բանկերն այդ միջոցառումների շրջանակում տրամադրել են 119 մլրդ ՀՀ դրամի վարկեր, իսկ միայն գյուղատնտեսության ոլորտում՝ 43,1 մլրդ դրամի [5]:




Գծ. 3. ՀՀ առևտրային բանկերի վարկային պորտֆելի դինամիկան ըստ վարկավորման խոշոր ոլորտների, 2018-2020թթ. (Ժամանակահատվածի վերջի դրությամբ), մլրդ դրամ [6]

Ինչպես երևում է գծապատկերից, առաջանցիկ տեմպերով աճ է արձանագրվել նաև հիվանդության վարկավորման ոլորտում: Այս պարագայում վարկային պորտֆելի աճը պայմանավորված է այն մտավախությամբ, որ կառավարությունն աստիճանաբար չեղարկում է առաջնային շուկայից բնակարանի ձեռքբերման վարկի տոկոսագումարի հետվերադարձի ծրագիրը, ինչը հանգեցրել է պահանջարկի էական աճի:

2021 թվականի առաջին եռամսյակում Հայաստանում գործող բանկերի ընդհանուր զուտ շահույթը կազմել է 19.4 մլրդ ՀՀ դրամ, ինչը 4 մլրդ ՀՀ դրամով (17%-ով) պակաս է 2020 թվականի 1-ին եռամսյակում գրանցած արդյունքից [7]:

Նշված նվազման հիմնական պատճառը վարկային կորուստների պահուստին կատարված զուտ մասհանումների էական աճն է, որը կազմել է 7.5 մլրդ ՀՀ դրամ (55%):




Գծ. 4. Բանկերի զուտ շահույթը 1-ին եռամսյակում 2021 թ. (մլն ՀՀ դրամ) [8]

Բանկային համակարգի ընդհանուր վարկային պորտֆելը 2021 թ. 1-ին եռամսյակում նվազել է 0.9%-ով:

Առ 31.03.2021 թ., ընդհանուր վարկային պորտֆելը հավասար է 4.017 մլրդ ՀՀ դրամի և կազմում է ընդհանուր ակտիվների 60%-ը:

Նշված ընդհանուր վարկային պորտֆելը ներառում է մանրաձախ և կորպորատիվ վարկեր:




Գծ. 5. Բանկերի վարկային պորտֆելի դինամիկան 1-ին եռամսյակում 2021 թ. (մլն ՀՀ դրամ) [9]

Ամենախոշոր 5 բանկերի (Ամերիաբանկ, Հայբիզնեսբանկ, Արդշինբանկ, ԱԿԲԱ Բանկ, Կոնվերս Բանկ) ընդհանուր վարկային պորտֆելները կազմում են բանկային համակարգի ընդհանուր վարկային պորտֆելի 61.4%-ը:

Ամենախոշոր 3 բանկերի (Ամերիաբանկ, Հայբիզնեսբանկ, Արդշինբանկ) ընդհանուր վարկային պորտֆելները կազմում են բանկային համակարգի ընդհանուր վարկային պորտֆելի 47.5%-ը:

Ամերիաբանկի մասնաբաժինը ամենամեծն է՝ 17.2%:



Գծ. 6. Բանկերի ընդհանուր վարկային պորտֆելի կենտրոնացումը առ 31.03.2021 թ. [10]

Հարկ է նշել, որ տնտեսության զարգացման, ձեռնարկատիրական ակտիվության բարձրացման և տնտեսական տարաբնույթ հիմնախնդիրների լուծման գործում բանկային համակարգի դերն և նշանակությունն առանձնահատուկ է:

Հայաստանի բանկային համակարգը մի շարք ուղղություններով՝ կապիտալի, ակտիվների, ավանդների և շահույթի աճ է գրանցել 2021 թ. առաջին 9 ամսվա ընթացքում: Հակառակ դրան՝ կրճատվել է վարկերի ծավալը:

2021 թվականի սեպտեմբերի վերջի դրությամբ Հայաստանում գործող 17 առևտրային բանկերի ընդհանուր կապիտալը կազմել է 927 մլրդ դրամ: Տարվա 9 ամսվա ընթացքում այն աճել է շուրջ 37 մլրդ դրամով կամ 4.2%-ով [11]:

Այսպիսով՝

- Ֆինանսական շուկան և մասնավորապես բանկային համակարգը՝ բավականին կտրված է տնտեսության իրական հատվածից, ինչը կարելի է բացատրել թե՛ այդ հատվածի չափազանց ռիսկային լինելով, թե՛ համապատասխան ինստիտուցիոնալ կառույցների, օրինակ՝ ֆոնդային բորսայի թույլ զարգացվածությամբ:
- Բանկային համակարգը գտնվում է ամբողջ տնտեսությունում առկա դոլարիզացիայի ազդեցության ներքո, երբ շուկայի մասնակիցները գերադասում են հաշվարկներ իրականացնել ԱՄՆ դոլարով՝ դրամ/ԱՄՆ դոլար փոխարժեքի ոչ բարենպաստ տատանումների ազդեցությունից խուսափելու նպատակով:
- Քանի որ բանկերը բարձր են գնահատում տնտեսության ռիսկայնությունը, ուստի խուսափում են վարկավորման ծավալները մեծացնել, նվազեցնել վարկերի տոկոսադրույքները, ինչի պայմաններում տնտեսական զարգացման և տնտեսական ակտիվության առկա

պայմաններում տնտեսությունը չի օգտվում բանկային համակարգում կուտակված ֆինանսական ռեսուրսներից:

Նշված խնդրի լուծման հիմնական ուղին տնտեսության իրական հատվածի ակտիվացումն է, դրա ռիսկերի նվազեցումը, ոչ բանկային ֆինանսական ինստիտուտների կողմից տնտեսության ֆինանսավորման մակարդակի բարձրացումը:

Գրականություն

1. **Հայաստանի Հանրապետության** վիճակագրական կոմիտե, <https://armstat.am/am/> Դիտում՝ 01.10.2022թ.:
Hayastani Hanrapetutyayn vichakagrakan komite, <https://armstat.am/am/> Ditung- 01.10.2022t.:

Т.И. Айрапетян

ОРГАНИЗАЦИЯ БЕСПЕРЕБОЙНОЙ РАБОТЫ БАНКОВСКОЙ СИСТЕМЫ РА В ЧРЕЗВЫЧАЙНЫХ СИТУАЦИЯХ

Банковская система, как одно из важнейших звеньев экономики, продуктивностью своей деятельности способствует росту экономической активности страны, а непродуктивно действующая банковская система препятствует или замедляет экономическую активность. За последнее время банковская система РА очень часто действовала в чрезвычайной ситуации, обусловленной проблемами, вызванными последствиями пандемии и последней войны, и, с целью ливидации или доведения до минимума возникших рисков, осуществляла адресные действия, предпринимая шаги для смягчения создавшейся обстановки. Публикация настоящей статьи обусловлено необходимостью анализа ее деятельности в вышеуказанных условиях.

Ключевые слова: банковская система, кредит, кредитный портфель, активы, показатель щкономической активности, кредитное обязательство.

Т.Ի. Hayrapetyan

ORGANIZING UNINTERRUPTED WORK OF RA BANKING SYSTEM IN EMERGENCY SITUATIONS

The banking system, as one of the most important links of the country and the economy, contributes to the growth of the country's economic activity with its efficiency, while an ineffective banking system hinders or slows down the economic activity.

Due to the issues caused by the pandemic and the last war, the RA banking system has often acted in emergency situations and has taken steps, carried out targeted actions in order to mitigate the created situation and eliminate or minimize the risks. The above mentioned conditions show the need to publish this article which is devoted to the analysis of the banking system of RA.

Keywords; banking system, credit, credit portfolio, assets, economic activity index, credit liability.

Հայրապետյան Տիգրան Իշխանի – տնտեսագիտության թեկնածու, դասախոս («Հայրիզնեսրանկ» ՓԲԸ, ՀՀ ԱԻՆ ՃԿՊԱ).

Ներկայացման ամսաթիվը՝ 26.08.2022
Գրախոսման ամսաթիվը՝ 08.09.2022

К.М. Сараян

СОВРЕМЕННЫЕ ПРОБЛЕМЫ УПРАВЛЕНИЯ РИСКАМИ СТИХИЙНЫХ БЕДСТВИЙ В АРМЕНИИ

Воздействие циркулирующей информации на поведение системы называется управлением

А.А. Ляпунов

Управление рисками или риск-менеджмент это процесс принятия и исполнения управленческих решений, которые уменьшают отрицательное влияние на жизнедеятельность, вызванные случайными событиями. В статье представлены различные опасности, характерные для территории Армении, для управления рисками которых предлагается национальная программа, которая должна базироваться на результатах научных изысканий, которые были реализованы ведущими специалистами разных организаций занимающихся проблемами безопасности.

Ключевые слова: управление рисками, случайные события, противооползневые мероприятия, стихийные бедствия.

Управление риском или риск-менеджмент, является процессом принятия и выполнения управленческих решений, которые минимизируют неблагоприятное влияние на жизнедеятельность, вызванное случайными событиями.

Развитие концепции управления риском происходило в течении 20-ого века. Управление риском органически вписывается в общий контекст менеджмента.

Главная цель системы управления риском – обеспечение успешного функционирования отдельных элементов в условиях реализации риска и неопределенности. Существуют понятия инженерного, экономического, экологического, социального и других рисков [3].

Среди инженерных рисков отдельно рассмотрим сейсмический риск, который определяется как вероятность социального и экономического ущерба, связанного с землетрясениями, на определенной территории в течении определенного интервала времени. Следует отметить, что землетрясение, как стихийное бедствие является следствием произошедшего события.

Большинство геофизических явлений очень сложны и многомерны и поэтому с трудом поддаются научному анализу [5].

Структурно риск можно представить с помощью следующих элементов:

1. опасность;
2. угроза риска;
3. уязвимость (чувствительность к риску);
4. готовность (сейсмостойкое строительство, готовность населения и т.д.);
5. ущерб.

Важнейшим фактором является эффективность управления риском, состоящая в том, что затраты на управление риском (включая стоимость получаемой для этого информации) не должны превышать эффекта от снижения риска и его неблагоприятных последствий [1]. К началу 21-ого века управление риском стало более или менее стандартным элементом

менеджмента и, учитывая достаточно сложный вид деятельности, следует в первую очередь проанализировать общие принципы и рассмотреть оптимальность процедур управления риском. Первым элементом в структуре риска является опасность, одним из видов потенциальной опасности является сейсмическая опасность. Сейсмическая опасность характеризуется макросейсмической интенсивностью и максимально возможным ускорением колебания почвы при землетрясении. Основными параметрами, определяющими поражающее действие землетрясения на элементы инфраструктуры являются кинематические параметры грунта вблизи поверхности Земли – ускорение, скорость, смещение грунта [3]. Подробное изучение этих параметров может способствовать улучшению сейсмозащитных мероприятий и следовательно снижению сейсмического риска. Результаты изучения во многом зависят от качества исходных данных деформационных и наклонных измерений, как на поверхности исследуемой территории так и на зданиях и сооружениях.

Надо отметить, что нарушение устойчивости на любом уровне управления может привести к нарушению устойчивости всей системы управления [2]. При воздействии сейсмических волн нарушение устойчивости происходит на социальном уровне, а при проведении некоторых работ при контакте с радиоактивными источниками открытого и закрытого типа или при использовании ускорительных источников ионизирующих излучений мы имеем дело с индивидуальным риском. Возможность облучения персонала требует разработки решений управления для обеспечения радиационной безопасности. От своевременного и правильного решения задач радиационной безопасности зависит здоровье не только самих работающих, но и их потомства. В наше время источники ионизирующего излучения используются в разных отраслях, в медицине, в геологоразведочных работах, в энергетике, в рудной промышленности и т.д.

Отношение людей к какой либо опасности определяется тем насколько хорошо она им знакома, поэтому необходима достоверная и объективная информация. Надо учесть, что засекреченность, а особенно полусекретность, питает страхи. Некоторые экспертные заключения оказывались не точными, что приводило к кризису доверия. Управление риском можно разделить на следующие конкретные методы:

- отказ от риска,
- снижение частоты ущерба,
- уменьшение размера убытков,
- разделение риска,
- аутсорсинг риска.

Перечисленные методы представляют разные процедуры управления рисками. Отказ от риска – это процедура уклонения от риска. Аутсорсинг – это процедура передачи риска. Остальные три метода представляют процедуру сокращения риска.

На конкретном примере применения источников ионизирующего излучения в геологоразведочных работах: отказ от риска – это отказ от ядерногеофизических методов с применением закрытых источников. Аутсорсинг это передача методов геологоразведочных работ с применением радиоактивных изотопов другому стороннему исполнителю. Применяв процедуру сокращения риска можно уменьшить время проведения работ, применить многосменную систему работы, использовать дистанционные методы управления процессом

работ или применить дополнительные защитные экраны для уменьшения воздействия ионизирующего излучения на персонал. В общем случае логическая последовательность применения процедур управления рисками следующая: уклонение от риска, уменьшение риска, передача риска. На всех этапах применения процедур управления рисками при геологоразведочных работах важную роль играет радиационный контроль (РК). В условиях геологоразведочных работ можно выделить следующие основные взаимосвязанные задачи РК:

- контроль уровней радиационно опасного фактора (роф);
- контроль и учет облучения персонала;
- оценка радиационной обстановки;
- разработка комплекса мероприятий по предупреждению, фиксации и ликвидации радиационной опасности.

Для учета и максимального ограничения облучения персонала в задачи службы радиационной безопасности должно входить:

1. установление участков подверженных радиационной опасности;
2. определение фактической радиационной опасности;
3. составление инструкций для персонала, обеспечивающих меры предотвращения облучения;
4. обучение персонала;
5. контроль за выполнением инструкций;
6. учет дополнительного облучения;
7. определение эффективности методики управления риском;

Все мероприятия выполняются для уменьшения радиационной обстановки и защиты персонала от ионизирующего излучения.

Рассмотрим проблему на следующем примере. Одной из крупных проблем на протяжении многих лет является защита от оползней. В последние годы, совместно с японскими специалистами, проделана огромная работа по изучению оползневой обстановки в Армении. Общепринято, что оползнеопасными территориями следует считать склоны и примыкающие к ним участки плато и террас, где оползни развиваются или могут возникнуть вследствие увеличения интенсивности воздействия антропогенных или естественных факторов [4]. Многолетний опыт и детальное изучение оползневых участков в Армении показал, что оползни могут происходить на всех склонах с крутизной 19° и более. Наиболее вероятная форма рельефа для формирования зон повышенного увлажнения локального водонасыщения – вогнутая, при которой вероятность образования оползней достигает 92%. Оползни могут сходить в любое время года.

При антропогенном воздействии активизация оползней существенно нарушается.

Оползни наносят существенный ущерб экономике страны. Нарушая коммуникации, воздействуя на жизнедеятельность малых и больших населенных пунктов, оползни наносят ущерб сельскому хозяйству, природным и культурным памятникам. Примерами подобных оползней являются Джухтак ванк и монастырь Макараванк в Тавушском марзе, а также оползневые участки вокруг Еревана: Птхни, Нубарашен, Вохчаберд, оползневые участки марза Вайоц Дзор: Мартирос, Ринд, Гнишик, Чива и т.д. Проблема защиты от оползней возникает не только в населенных пунктах. Они угрожают непрерывному и безопасному движению поездов

и автомобильному транспорту. Примером может служить оползень недалеко от железнодорожной станции Айрум.

Управление оползневыми процессами можно осуществить противооползневыми мероприятиями которые по своему характеру можно разделить на две группы: пассивные и активные.

К первой группе можно отнести мероприятия охранно-ограничительного характера:

- запрещение подрезки оползневых склонов и устройство на них разного рода выемок;
- запрещение строительства на склонах и на указанной полосе: сооружений, прудов и водоемов;
- запрещение производства взрывов и горных работ вблизи оползневых участков;
- охрана древесно-кустарниковой и травянистой растительности на склонах;
- запрещение неконтролируемого полива земельных участков;
- запрещение устройства водопроводных колонок и постоянного водопровода без устройства канализации;
- недопущение сброса на оползневые склоны: ливневых, талых, сточных и других вод;
- залесение оползневых территорий.

Учитывая вышеизложенные мероприятия, можно рекомендовать также следующие мероприятия инженерной защиты: регулирование поверхностного стока, гидроизоляция подземных частей зданий сооружений, вертикальный дренаж подземных вод, закрепление оврагов и берегов рек, а так же проведение других инженерных мероприятий.

Осуществление охранно-ограничительных противооползневых мероприятий не связано с устройством каких-либо инженерных сооружений и проведением трудоемких работ. Вместе с тем очевидно, что эффект от этих мероприятий может быть получен не сразу.

Ко второй группе следует отнести такие противооползневые мероприятия, проведение которых требует устройства различного рода инженерных сооружений.

Важным местом в теоретической и практической деятельности ученых и специалистов, связанных с вопросами совершенствования управления, можно считать процесс отработки разных степеней управления, который является одним из основных направлений в современной теории и практике совершенствования системы управления, имеющее цель активизировать деятельность управляющей системы.

Следующим опасным явлением, наиболее часто встречающееся в мире, считаются камнепады. На это указывает и тот факт, что эта опасность единственная, которая имеет международный дорожный предупреждающий знак, который часто встречается на автомагистралях особенно в горных странах. Такие опасные участки встречаются почти на всех дорогах Армении. Для уменьшения риска камнепадов используют несколько наиболее эффективных мероприятий, начиная от организованного принудительного сбрасывания со склонов наиболее неустойчивых каменных глыб, удержание мелкого камнепада металлическими сетками и, наконец, возведение опорных стен вдоль опасных участков дорог с установкой предупреждающих дорожных знаков.

Учитывая частоту проявления камнепадов в Армении, этот тип опасности находится в центре внимания. Этой опасности подвержены как дороги, так и населенные пункты, объекты культурного и исторического наследия (Севанская трасса, села Шатин, Вохчаберд,

монастырский комплекс Гегард и т.д.). Основными факторами вызывающими камнепады являются колебания возникающие как при землетрясениях так и вследствие деятельности человека (взрывы, большегрузовые перевозки, бессистемная вырубка лесов). Это касается также оползней и селей. Для предотвращения потенциального риска падения отдельных крупных каменных глыб, используют большие ямы-ловушки вырытые вдоль дороги, наперерез предположительной траектории движения. В особо опасных случаях рекомендуется эвакуация населения с последующим переселением в наиболее безопасные районы. Выше были рассмотрены несколько наиболее актуальных для Армении опасностей, риск которых особенно влияет на хозяйственные объекты и транспортные системы.

В настоящее время государственное регулирование вопросов обеспечения безопасности хозяйственных объектов и транспортных систем с учетом риска возникновения крупных аварий, катастроф, экологических и стихийных бедствий опирается главным образом на административные методы, не имеющие достаточно правовой и экономической основы. Такие методы все больше вступают в противоречие с действительностью и оказываются неэффективными.

Отсутствие научно обоснованных и юридически подтвержденных методик обеспечения безопасности населения, хозяйственных объектов и транспортных систем требуют эффективных адаптированных действий обеспечивающих, на государственном уровне, защиту населения, хозяйственных объектов, населенных пунктов и транспортных систем от стихийных бедствий (землетрясения, паводки, сели, оползни, камнепады и т.д.).

Государственными органами управления, для регулирования устойчивого развития и стабильного функционирования базовых отраслей, предусматривается разработка основных положений “Государственной программы обеспечения безопасности хозяйственных объектов и транспортных систем”.

Основные положения данной программы должны обеспечить выполнение следующих целей:

- упорядочение данных по природным катастрофам по отраслям и организациям обмена данными в реальном времени;
- упорядочение природных факторов, вызывающих катастрофы;
- упорядочение критериев обеспечения безопасности и методологии оценки риска и прогнозирования риска в отраслях;
- упорядочение мер обеспечения безопасности населения и хозяйственных объектов с учетом риска возникновения природных катастроф и экологических бедствий.
- развитие взаимодействия с зарубежными партнерами, регулирующими вопросы обеспечения безопасности населения хозяйственных объектов и транспортных систем.

Работа по программе будет базироваться на научных разработках, проводимых специалистами ведущих организаций и учебных заведений, занимающихся вопросами обеспечения безопасности населения и управления рисками при стихийных бедствиях;

Լիտերատուրա

1. **Մաթևոսյան Հ.Շ.**, Ճգնաժամային կառավարում: Մենագրութ., «Վարդ հրատ»: Եր., 2012. - 240 էջ:
Matevosyan H.SH., Chgnazhamayin karavarum: Menagrutyun, «Vard hrat»: Yer., 2012. - 240 ej:
2. **Алексеев Н.А.**, Стихийные явления в природе, Мысль, М., 1988. - 255 с.
Alekseev N.A., **Stikhiynye yavleniya v prirode, Mysl, M.**, 1988. - 255 s.
3. **Стейси Ф.**, Физика земли, Мир, М., 1972. - 342 с.
Steysi F., Fizika zemli, Mir, M., 1972. - 342 s.
4. **Степанян В.Э.**, Бойнагрян В.Р., Галстян М.А., Гюрджян Ю.Г., Снижение уязвимости урбанизированных территорий Армении от потенциально опасных природных процессов. Ер., 2016. - 128 с.
Stepanyan V.E., Boynagryan V.R., Galstyan M.A., Gyurjyan Yu.G., Snizhenie uazvimosti urbanizirovannykh territoriy Armenii ot potencialno opastykh processov. Yer., 2016. - 128 s.
5. **Чернова Г.В.**, Кудрявцев А.А., Управление рисками, Проспект, М., 2003. - 158 с.
Chernova G.V., Kudryavcev A.A., Upravlenie riskami, Prospekt, M., 2003. - 158 s.

Կ.Մ. Սարաֆյան

ՏԱՐԵՐԱՅԻՆ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ռիսկերի կառավարումը կամ ռիսկմենեջմենթը կառավարչական որոշումների ընդունման և կատարման մի գործառույթ է, որը մեղմացնում է կենսագործունեության վրա անբարենպաստ ազդեցությունները, որոնք հարուցված են պատահական իրադարձություններով:

Ներկայացվում է Հայաստանի տարածքի համար բնորոշ մի շարք վտանգներ, որոնց ռիսկերի կառավարման համար առաջարկվում է ազգային ծրագիր, ինչը հիմնված պետք է լինի գիտական ուսումնասիրությունների արդյունքների վրա, որոնք իրականացվել են անվտանգության ապահովման հարցերով զբաղվող տարբեր կազմակերպությունների առաջատար մասնագետների կողմից:

Առանցքային բառեր. ռիսկերի կառավարում, պատահական իրադարձություններ, հակասողանքային միջոցառումներ, տարերային աղետներ:

K.M. Sarafyan

CONTEMPORARY ISSUES OF NATURAL DISASTER RISK MANAGEMENT IN ARMENIA

Risk management is a function of managerial decision-making and execution that mitigates the adverse effects on life activities caused by random events. A number of dangers typical for the territory of Armenia are presented, and a national program is proposed for the management of the risks, which should be based on the results of scientific studies carried out by the leading specialists of various organizations dealing with security issues.

Keywords: risks management, occasional event, anti-landslide activity, natural disasters.

Տարաֆյան Կարապետ Մեսրոպ - դասախոս (ՀՀ ԱԻՆ ՃԿՊԱ).

Дата представления: 22.09.2022

Дата рецензии: 30.09.2022

Գ.Թ. Մանուկյան

ԻՐԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ
ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿՈՒՄ

«Հուլայական հարաբերությունների զարգացումը օբյեկտիվորեն պահանջում է կառավարման համակարգի արմատական վերակառուցում, ինչպես ազգային տնտեսության, այնպես էլ կոնկրետ կազմակերպությունների մակարդակով: Շուկայական հարաբերությունների ամենակարևոր թերությունը հասարակության, պետության, աշխատողների, սեփականատերերի շահերի ներդաշնակ համակցության բացակայությունն է: Կազմակերպության զարգացման նպատակով անհրաժեշտ է անբարենպաստ գործոնների ազդեցությունը հարթելու մեխանիզմի ձևավորում, որի փորձերից է ճգնաժամային իրավիճակում ֆինանսական կառավարումը: Ճգնաժամային իրավիճակում ֆինանսական կառավարումը տեղի է և անհրաժեշտ, ինչպես գիտական, այնպես էլ գործնական առումով: Այն թույլ է տալիս նոր հիմունքներով լուծել տնտեսավարող սուբյեկտների, սեփականատերերի և աշխատակիցների միջև տնտեսական հարաբերությունների խնդիրները, կանխել ճգնաժամերը և կազմակերպությունները դուրս բերել ճգնաժամից: Այսօր այս խնդիրն առանձնահատուկ արդիական է նոր մարտահրավերների ի հայտ գալով, մասնավորապես COVID-19 համավարակով:

Հետազոտության նպատակն է հիմնավորել իրական ոլորտում ճգնաժամային իրավիճակում ֆինանսական կառավարման ձևավորման տեսական դրույթներն ու մեթոդական մոտեցումները, ինչպես նաև զարգացնել մեթոդական և գործնական առաջարկություններ ճգնաժամային ֆինանսական կառավարման համակարգի զարգացման համար: Առաջադրված նպատակին համապատասխան աշխատանքում լուծվել են հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել հակաճգնաժամային ֆինանսական կառավարման էությունը,
- մշակել տեսական դրույթներ, որոնք բացահայտում են իրական ոլորտում ճգնաժամային իրավիճակում ֆինանսական կառավարման բովանդակությունն ու առանձնահատկությունները,
- հիմնավորել ճգնաժամային ֆինանսական կառավարման ձևավորման մեթոդաբանական մոտեցումը,
- ներկայացնել ճգնաժամային ծրագրի հիմնական փորձերը,
- հիմնավորել ընկերության զարգացման նպատակների կառուցվածքը հակաճգնաժամային ֆինանսական կառավարման համակարգում,
- պարզել հակաճգնաժամային ֆինանսական կառավարման համակարգի ձևավորման գործընթացի որոշ թերությունները և դրանց վերացնելու միջոցառումները:

Հետազոտության առարկան իրական ոլորտում ընկերության ճգնաժամային իրավիճակում ֆինանսական կառավարման տեսության ու մեթոդաբանության համակարգն է:

Առանցքային բառեր. ճգնաժամային ֆինանսական կառավարում, հակաճգնաժամային ծրագիր, ֆինանսական կայունացման գործառնական, մարտավարական, ռազմավարական մեխանիզմ:

Ճգնաժամային կառավարման առաջացման և զարգացման նախապայման է երկրի, տարածաշրջանի և ընկերության տնտեսության զարգացման գործում կառավարելի գործոնների առկայությունը և դրանց վրա ազդելու հնարավորությունը: Ճգնաժամում կառավարումը բարդ և ռիսկային է, քանի որ անհրաժեշտ է գտնել նոր, արտակարգ իրավիճակներում կազմակերպության զարգացման արդյունավետ ուղիներ: Ճգնաժամային կառավարմանը պետք է բնորոշ լինի բարձր պրոֆեսիոնալիզմը, որը հնարավորություն է տալիս ժամանակին ճանաչել ճգնաժամերը, հաջողությամբ լուծել կազմակերպության զարգացմանը նպատող խնդիրները, հաղթահա-

րել ճգնաժամերը նվազագույն կորուստներով: Դրանից ելնելով, կառավարման միջոցառումների ճիշտ ձևավորումն ընկերության արդյունավետ ֆինանսական կառավարման, շուկայի հարմարեցման և նրա հետագա գոյության բանալին են ինչպես բնականոն, այնպես էլ ճգնաժամի, գլոբալ բնույթի փոխակերպումների պայմաններում:

Ժամանակակից տնտեսապես անկայուն պայմաններում տարբեր գործոններով պայմանավորված ապակայունացվում է տնտեսավարող սուբյեկտների ֆինանսական կառավարումը առաջացնելով ֆինանսական բարդություններ: Ֆինանսական հոսքերի անհավասարակշռությունն առաջացնում է ընկերության հակաճգնաժամային ֆինանսական կառավարում: Վերջինիս առանձնահատկությունները, գործնական նշանակությունը որոշելու տեսական մոտեցումները դեռևս լիարժեք ձևավորված չեն, և մեթոդաբանական համապարփակ մշակումը ձևավորման փուլում է:

Հաշվի առնելով, որ ֆինանսական կառավարումը սերտ փոխկապված է կառավարման համակարգի բոլոր ենթահամակարգերի հետ, կարելի է նշել, որ ցանկացած ֆինանսական կառավարում պետք է կրի հակաճգնաժամային բնույթ: Միևնույն ժամանակ պետք է փաստել, որ ճգնաժամերի հաճախականությունից կազմակերպության ֆինանսական գործունեության արդյունավետության ապահովման հիմնական տարրը հակաճգնաժամային ֆինանսական կառավարումն է: Դրանով ապահովվում է ֆինանսական ռեսուրսների ձևավորումն ու ներգրավումը, որոշվում է դրանց հետագա օգտագործման հնարավոր ուղղությունները, որով մեծանում է կազմակերպության ներդրումային գրավչությունը և ելքը ճգնաժամային իրավիճակից:

Ֆինանսական ռեսուրսների արդյունավետ կառավարումը պահանջում է պահպանել հետևյալ սկզբունքները [5].

- կազմակերպությունում առաջացող ճգնաժամային երևույթների վաղ փուլում ախտորոշում,
- ճգնաժամերին արձագանքել հնարավորինս առանց ուշացման,
- կիրառված միջոցների համադրելիությունը և ընկերության ֆինանսական կայունության սպառնալիքի աստիճանը,
- կազմակերպության ներքին ներուժի օգտագործում ճգնաժամը հաղթահարելու համար:

Ձեռնարկությունների ճնշող մեծամասնությունը չի կարողանում առավելագույնի հասցնել շահույթը ճգնաժամի պայմաններում: Ուստի նրանց գործողություններն ավելի շատ խորհուրդ են տրվում միտված լինել ծախսերը նվազագույնի հասցնելուն: Սակայն, որպեսզի ձեռնարկությունը չընդգրկվի լուծարված կազմակերպությունների ցանկում, շուկայում մնալու համար ձեռնարկությունները ստիպված են մեծացնել ներդրումային ակտիվությունը և ներդնել նոր տեխնոլոգիաներ: Դրա իրականացման համար ձեռնարկության ղեկավարությունը պետք է արդյունավետ հարաբերություն գտնի ռեսուրսների ծավալների և որակի, ընթացիկ և պլանավորված շահույթի, նոր ռեսուրսների ակտիվացման և ներգրավման, տեսականու ընդլայնման և ուժեղացման, վաճառքի ծավալների և ակտիվների փոփոխությունների, սեփական և փոխառու կապիտալի, աշխատանքի արտադրողականության և աշխատավարձի, հիմնական և շրջանառու միջոցների, շահութաբերության և իրացվելիության ցուցանիշների միջև [3]:

Ներկայիս պայմաններում հայրենական ընկերությունների ցածր արդյունավետության կարևորագույն խնդիրներից է հակաճգնաժամային կառավարման հստակ ձևակերպված փուլե-

րի բացակայությունը, որպես ճգնաժամային կառավարման ընդհանուր ուղղություն, այդ թվում՝ ֆինանսների ոլորտում: Մի շարք աշխատանքների առկայության պայմաներում չկան ընդհանրացնող մոտեցումներ հակաճգնաժամային ֆինանսական կառավարման համակարգի ձևավորման՝ որպես ընկերության բիզնես ակտիվության բարձրացման գործոն, որը կդիտարկեր գործընթացը համապարփակ կերպով՝ հաշվի առնելով ընկերության ֆինանսական միջավայրի արտաքին պայմանների մշտական փոփոխությունը: Հետազոտություններում չկա կոնսենսոս ճգնաժամային իրավիճակում ֆինանսական կառավարման էության, դրա փուլերի, տարրերի և գործոնների, ֆինանսական կառավարման համակարգի ձևավորման մեթոդական դրույթների վերաբերյալ՝ որպես ընկերության բիզնես ակտիվության բարձրացման գործոն:

Ձեռնարկության ֆինանսների բարելավման ժամանակ ճգնաժամային իրավիճակի ֆինանսական կառավարման միջոցով տնտեսավարող սուբյեկտի ֆինանսական պարտավորությունները և պահանջները բերվում են այնպիսի վիճակի, որն ապահովում է ֆինանսական հոսքերի, ռեսուրսների պատշաճ շրջանառությունը՝ բացառելով դրանց անհավասարակշռությունը և անվճարունակության նշանների դրսևորումը: Կանխարգելիչ ճգնաժամային ֆինանսական կառավարումն առաջնահերթություն է, քանի որ այն մեծացնում է ընկերության դիմադրողականությունը կրիտիկական գործոնների ակնկալվող ազդեցության նկատմամբ, ապահովում է առկա ռեսուրսների կորուստների կրճատումը և նվազագույնի է հասցվում ճգնաժամային գործունեության ծախսերը [6]:

Կազմակերպության ճգնաժամային զարգացման նշանների վաղաժամկետ բացահայտումը և ճգնաժամային վիճակի մասշտաբների նախնական գնահատումը կազմակերպության հակաճգնաժամային վերահսկման համակարգի կարևոր բաղկացուցիչն է, որի նպատակն է կանխատեսել սպասվող սնանկացումը: Դրա շրջանակներում ֆինանսատնտեսական գործունեության վերլուծությունը հնարավորություն կընձեռի գնահատելու ընդհանուր ֆինանսական վիճակը և կարճ ժամկետում պարզելու ճգնաժամի խորության աստիճանը [2]:

Իրական պրակտիկան ցույց է տալիս, որ արտադրության, ֆինանսական հատվածի ճգնաժամային երևույթները, ենթակառուցվածքների անբավարար զարգացումը որոշակի դժվարություններ են ստեղծում արդյունաբերական ընկերությունների ֆինանսների կառավարման հարցում: Դրանց կայունության հիմնական պայմանը ճգնաժամի առաջին նշանների ժամանակին կանխատեսելու և արձագանքելու կարողությունն է: Այս միջավայրում գոյատևելու և զարգանալու համար ընկերությունները պետք է օգտագործեն ֆինանսական կառավարման հակաճգնաժամային ռեժիմ, որը կարող է ապահովել ճգնաժամերի կանխատեսումը, կանխարգելումը և հաղթահարումը, միաժամանակ պահպանելով իրենց կայուն գործունեությունը [4]:

Ընկերության ճգնաժամային ֆինանսական կառավարման համակարգը ժամանակակից ձեռնարկության կառավարման անբաժանելի մասն է, որն ունի ձեռնարկության որոշակի ձևակերպված առաքելություն, նպատակ և հեռանկարային տեսլական: Ձեռնարկության ապագա աճի կարևոր նախադրյալը, դրա զարգացման հեռանկարային ուղղությունների ընտրությունն ու ռազմավարության հայեցակարգն է՝ ձեռնարկության հիմնական նպատակը սահմանելիս [7]:

Ընդհանուր առմամբ, ճգնաժամային ֆինանսական կառավարման համակարգի միջոցով սնանկացման սպառնալիքն ախտորոշվում է դրա առաջացման դեռևս վաղ փուլերում, որը թույլ է տալիս ժամանակին գործողության մեջ դնել հատուկ ֆինանսական մեխանիզմներ կամ հիմ-

նավորել որոշակի վերակազմակերպական գործընթացների անհրաժեշտությունը: Եթե նման մեխանիզմները և գործընթացները ոչ ժամանակին կամ անբավարար արդյունավետությամբ իրականացման պատճառով չեն հանգեցնում կազմակերպության ֆինանսական առողջացմանը, այն կանգնում է կամավոր կամ հարկադիր կարգով իր տնտեսական գործունեությունը դադարեցնելու և լուծարային գործընթացներ սկսելու անհրաժեշտության առաջ [1]:

Կատարված ուսումնասիրություններից կարող ենք նշել, որ ընկերության կառավարման այլ ֆունկցիոնալ տեսակների համեմատ ճգնաժամային ֆինանսական կառավարման առանձնահատկությունն այն է, որ ֆինանսական ճգնաժամի կանխարգելմանն ուղղված կանխարգելիչ միջոցառումների հետ կապված կառավարչական որոշումների կայացումը հաճախ իրականացվում է ընկերության միջավայրի էական փոփոխության, վերահսկելիության նվազման, ժամանակի սղության, իրավիճակի անկանխատեսելիության, անորոշության բարձր աստիճանի միջավայրի, աշխատողների տարբեր խմբերի շահերի բախման, բարձր որակավորում ունեցող մենեջերների հատուկ խմբի ձևավորման պայմաններում: Ճգնաժամային իրավիճակում ֆինանսական կառավարման ձևավորման տեսական մոտեցումների ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս հաստատել, որ կազմակերպության կյանքի ցիկլի ցանկացած փուլում ֆինանսական կառավարումը պետք է միշտ լինի հակաճգնաժամային, այսինքն՝ թույլ տա կանխատեսել, կանխել կամ մեղմացնել: Այն ապահովում է մշակված ռազմավարության հիման վրա արտաքին և ներքին միջավայրի էական փոփոխություններին արագացված և արդյունավետ արձագանք: Ընկերության ճգնաժամային իրավիճակում ֆինանսական կառավարման համակարգն ակտիվ դեր է խաղում ընդհանուր կառավարման համակարգում՝ ապահովելով ընկերության ֆինանսական գործունեության նպատակների հուսալի ձեռքբերումը:

Ընկերության ճգնաժամային իրավիճակում ֆինանսական կառավարման զարգացումը որոշվում է ֆինանսական ճգնաժամի վերլուծությամբ, դրա մասշտաբներով, պատճառներով, գործոններով և դրա կանխարգելման միջոցառումներով: Ֆինանսական ճգնաժամը ընկերության ֆինանսական հաշվեկշռվածության խախտման հիմնական ձևերից մեկն է, որը բնութագրվում է բիզնես գործընթացների անարդյունավետությամբ կամ դրանց բացակայությամբ՝ ներքին և արտաքին գործոնների ազդեցության հետևանքով, որոնք էական վտանգ են ներկայացնում նրա ֆինանսական կայունության, վճարունակության և ընկերության արժեքի նվազման համար: Ֆինանսական ներուժի փաստացի վիճակի և ֆինանսական կարիքների պահանջվող ծավալի միջև հակասությունների արդյունքում ընկերությունը կրում է դրա գործունեության ամենավտանգավոր պոտենցիալ սպառնալիքները: Հակաճգնաժամային ֆինանսական կառավարումը դժվարացնում է կոնկրետ միջոցառումների և կառավարման գործողությունների որոշումն այն ժամանակահատվածում, երբ տնտեսավարող սուբյեկտները գտնվում են ճգնաժամային վիճակում:

Տնտեսության առաջնահերթ ոլորտներում արդյունավետ ճգնաժամային իրավիճակում ֆինանսական կառավարում իրականանցելու համար անհրաժեշտ է ունենալ մեթոդաբանություն: Կատարված ուսումնասիրություններից կարող ենք եզրակացնել, որ ճգնաժամային իրավիճակում ֆինանսական կառավարման մեթոդաբանությունը նպատակի, սկզբունքների, ֆինանսատնտեսական գործունեության արտաքին կարգավորման մեթոդների ու գործիքների, տեղեկատվական աջակցության, բիզնեսի ֆինանսական վիճակի վերլուծության և ախտորոշ-

ման կառավարման մեթոդների և գործիքների, ֆինանսական կայունացման գործառնական, մարտավարական, ռազմավարական մեխանիզմի, դրանց իրականացման վերահսկողության ու գնահատման ամբողջություն է, որոնք ապահովում են ռազմավարական որոշումների մշակման և իրականացման գործընթացը՝ հնարավորություն ընձեռելով իրականացնել ֆինանսապես կայուն գործունեություն և ապահովել արդյունավետ զարգացում կառավարման համակարգի հիմնական նպատակին հասնելու համար:

Ճգնաժամային իրավիճակում ֆինանսական կառավարման նպատակը կառավարման ռեժիմի ստեղծումն է, որը թույլ է տալիս նվազագույնի հասցնել ընկերության շուկայական արժեքի նվազումը հաղթահարելով ճգնաժամերը, վերականգնելով ընկերության ֆինանսական հավասարակշռությունն ու ֆինանսապես կայուն գործունեությունը:

Ճգնաժամային իրավիճակում ֆինանսական կառավարման արդյունավետությունը բնութագրվում է սահմանված նպատակներին հասնելու աստիճանով: Այդ նպատակով անհրաժեշտ է սահմանել գլխավոր նպատակը և այն համալրող հիմնական ու օժանդակ նպատակները: Որպես գլխավոր նպատակ պետք է ընդունել ֆինանսական հավասարակշռության ապահովումը անորոշության և ռիսկի պայմաններում, իսկ հիմնական նպատակները՝ 1. պահպանել ֆինանսական կայունություն, կայուն զարգացում, 2. վերացնել անվճարունակությունը, 3. վերականգնել ֆինանսական կայունությունը, 4. փոփոխել ֆինանսական ռազմավարությունը: Օժանդակ նպատակները լինում են 2 տեսակ՝ 1. կառուցվածքային (դրամական ֆոնդերի, հիմնական կապիտալի, շրջանառու կապիտալի ձևավորում, սեփական և փոխառու կապիտալի կառուցվածք), 2. կազմակերպատեխնիկական (տեղեկատվական-վերլուծական ապահովում, ֆինանսական ռիսկերի կառավարման համակարգ, ակտիվների և պասիվների կառավարման համակարգ, կանխատեսման, պլանավորման և վերահսկողության համակարգ):

Ճգնաժամային իրավիճակում ֆինանսական կառավարումը պետք է հիմնվի հետևյալ սկզբունքների վրա.

- կազմակերպության ֆինանսական հավասարակշռության հնարավոր խախտման մշտական պատրաստվածության:
- Կազմակերպության գործունեության բոլոր ոլորտներում նորարարության:
- Թիրախային կողմնորոշման, որը բաղկացած է ֆինանսական կառավարման նպատակների սահմանումից, ինչն առաջին հերթին ազդում է ընկերության ֆինանսական ասպեկտների վրա:
- Կանխարգելիչ գործողությունների իրականացման՝ ժամանակին ֆինանսական կառավարման համակարգում առկա խնդիրների բացահայտում, ընկերության ուժեղ և թույլ կողմերի համակարգված վերլուծություն, սնանկության հավանականության գնահատում, ռիսկերի կառավարում, որով ավելի արդյունավետ է կանխել ֆինանսական ճգնաժամի սպառնալիքը, քան ապահովել դրա բացասական հետևանքների չեզոքացումը:
- Ֆինանսական ցուցանիշների մոնիտորինգի ապահովման, որը ենթադրում է գործարար միջավայրի վիճակի մոնիտորինգի ստեղծում՝ նախապես հայտնաբերելու անհանգստացնող իրադարձությունները, որոնք կարող են առաջացնել ընկերության ճգնաժամ, ինչպես նաև թույլ տալ գոյատևել և դիմակայել ճգնաժամին:
- Արձագանքման հրատապության:

- Այլընտրանքային գործողությունների արտացոլման:
- Ընկերության գործունեության համապատասխանության. այն թույլ է ընկերության առաքելության, տեսլականի համատեքստում, անհրաժեշտ է համակարգել գործողությունները ճգնաժամային կառավարման ֆինանսական ոլորտում:
- Իրավասության. կայուն մրցակցային առավելություն ապահովելու համար ընկերությունը և նրա անձնակազմը պետք է ունենան հատուկ իրավասություններ:
- Ֆինանսական ճկունության, որը կանխորոշում է հակաճգնաժամային ֆինանսական կառավարման արագ հարմարեցումը արտաքին և ներքին ֆինանսական միջավայրի փոփոխվող պայմաններին: Այն առաջին հերթին իրականացվում է, ֆինանսական ռազմավարական (ներդրումային) այլընտրանքների ընտրության միջոցով, որով ռեսուրսներն ի վիճակի են ձևավորել ֆինանսական հոսքեր, որոնք բավարար են ընկերության մշտական վճարունակության համար:
- Կազմակերպության ճգնաժամային ֆինանսական վիճակից ելքի ներքին ռեսուրսների առաջնահերթ օգտագործման:
- Առողջացման (սանացիայի) օպտիմալության:
- Արդյունավետության. այս սկզբունքի իրականացումն ապահովվում է՝ համեմատելով ճգնաժամային ֆինանսական կառավարման ազդեցությունը և դրա գործունեության իրականացման հետ կապված ֆինանսական ռեսուրսները:
- Հետադարձ կապի ձևին համապատասխանության, որը մեծացնում է ընկերության տեղեկատվական ծառայության դերը, հաղորդակցության կարևորությունը ճգնաժամային ֆինանսական որոշումների արագ և ճշգրիտ իրականացման համար:

Ճգնաժամային իրավիճակում ֆինանսական կառավարման ձևավորման և իրականացման գործում կարևոր տեղ է գրավում արդյունավետ հաշվապահական և վերլուծական աջակցությունը, որը թույլ է տալիս ավելի հավասարակշռված և կոնկրետ հակաճգնաժամային որոշումներ կայացնել: Հակաճգնաժամային ֆինանսական կառավարման համակարգի հաշվապահական հաշվառման տեղեկատվությունը տրամադրում է ընկերության առանձին հատվածներում ֆինանսական ճգնաժամի նշաններ հայտնվող տեղեկատվությունը կազմակերպության գույքի վիճակի, կառուցվածքի և շարժի և դրա ձևավորման աղբյուրների, բիզնես գործընթացների և կազմակերպության ֆինանսատնտեսական և արտադրական-տնտեսական գործունեության արդյունքների մասին տեղեկատվություն: Հետևաբար ճգնաժամային ֆինանսական կառավարումը կարող է հնարավորինս ճկուն կերպով օգտագործել ընկերությունում հաշվապահական և վերլուծական աջակցությունը:

Ընկերության ֆինանսական վիճակի վերլուծության և ակտորոշման համար կիրառվող ճգնաժամային ֆինանսական կառավարման գործիքներն անհրաժեշտ է բաժանել.

1. ֆինանսական ցուցանիշների վերլուծության նպատակով գործիքներ, մանավորապես իրացվելիության, շահութաբերության, ռեսուրսների օգտագործման արդյունավետության, ֆինանսական կայունության ցուցանիշներ:
2. Սնանկության հավանականությունը որոշելու գործիքներ. սնանկության հավանականությունը որոշելու համար օգտագործվում են սնանկության կանխատեսման մոդելները

(Ալտմանի, Լիսի մոդելը, Բիվերի գործակիցը և այլն): Սակայն, այսօր մեծ խնդիր է մեր ընկերություններում դրանց կիրառման արդյունավետությունը:

3. Ընկերության արտաքին և ներքին միջավայրի վերլուծության գործիքներ. ընկերության գործունեության արտաքին և ներքին միջավայրի վերլուծության ամենատարածված գործիքները ներառում են. SWOT, SNW և PEST վերլուծություն:

Ընկերության ֆինանսական վիճակի վերլուծության և ախտորոշման արդյունքների հիման վրա կորոշվի ճգնաժամային միջոցառումների անհրաժեշտությունը: Անհրաժեշտության դեպքում պետք է կազմել ճգնաժամային ծրագիր, որը պետք է արտացոլի ընկերության ճգնաժամային վիճակից դուրս բերելու համար նախատեսված ճգնաժամային միջոցառումների ցանկը: Ծգնաժամային ծրագիրը պետք է ներառի հետևյալ տարրերը.

1. Ֆինանսական ճգնաժամի ձևավորման պատճառների և ընկերությունում դրա ընթացքի ներկա փուլի մանրամասն նկարագրությունը:
2. Ծգնաժամային գործընթացի թիրախային պարամետրերի դետալացված բնութագիրը:
3. Նախկինում արդարացված ճգնաժամային միջոցառումների ցանկը:
4. Հիմնական գործիքները, որոնք կօգտագործվեն ընկերությունում ֆինանսական ճգնաժամը հաղթահարելու համար:
5. Ծգնաժամային ծրագրի ֆինանսավորման բյուջեն:
6. Ծգնաժամային ծրագրի իրականացման համատեքստում ընկերության գործունեության միջոցառումների առաջարկություն:
7. Ծգնաժամային ծրագրի իրականացման ընթացքի մոնիտորինգի մեթոդները ընկերությունում:

Մինչ օրս ընկերություններում ճգնաժամային ֆինանսական կառավարման համակարգի ձևավորման գործընթացը անթերի չէ և ունի մի շարք թերություններ.

1. չկա հստակ պատկերացում ճգնաժամային ֆինանսական կառավարման էության մասին:
2. Ֆինանսական ճգնաժամի նշանների դեմ պայքարի իրականացման գործում առկա են գործողությունների համակարգման խնդիրներ:
3. Ծգնաժամաստեղծ գործոնների դրսևորումների անտեսումը վաղ փուլերում:
4. Ընկերությունների մակարդակով ճգնաժամային ֆինանսական քաղաքականության պատշաճ իրականացման համար չկա պատշաճ օրենսդրական աջակցություն:

Մեր կողմից հայտնաբերված թերությունները վերացնելու համար անհրաժեշտ է իրականացնել հետևյալ միջոցառումները.

1. Ներդրել ճգնաժամային ֆինանսական կառավարման համակարգ ընկերությունների կառավարման ընդհանուր գործընթացում՝ միաժամանակ ապահովելով համապատասխան նոր փաստաթղթերի ստեղծումը, որը կնկարագրի ընկերությունների կառավարման ընդհանուր գործընթացը՝ հակաճգնաժամային քաղաքականության իրականացման համատեքստում: Այն պետք է ունենա պատշաճ տեղեկատվական բազա՝ հաշվապահական և վերլուծական աջակցության տեսքով:
2. Շարունակական հիմունքներով ներդնել և անհրաժեշտության դեպքում կիրառել ընկերության ֆինանսական ճգնաժամի մակարդակի ախտորոշման մեթոդաբանություն:

3. Ընկերությունների հակաճգնաժամային ֆինանսական կառավարման ապահովման մեխանիզմի համար մշակել նոր տարրեր, որոնք կհամապատասխանեն այս ոլորտի գործունեության ժամանակակից իրողություններին:
4. Ճգնաժամային ն ֆինանսական կառավարում իրականացնելիս անհրաժեշտ է հաշվի առնել այն հոգեբանական հետևանքները, որոնք կարող են առաջանալ ֆինանսական ճգնաժամի սկսվելուց հետո: Հետևաբար կառավարման օղակները պետք է միշտ պատրաստ լինեն ֆինանսական ճգնաժամի ցանկացած հետևանքի:

Գրականություն

1. **Մանուկյան Գ.Թ.**, Կազմակերպության հակաճգնաժամային ֆինանսական կառավարման արդի առանձնահատկությունները և հակաճգնաժամային ֆինանսական քաղաքականության փուլերը, Ճգնաժամային կառավարում և տեխնոլոգիաներ: Գիտ. և գիտամեթոդ. հոդվածների ժողովածու, Եր.: 2014. էջ 26-30:
Manukyan G.T., Kazmakerputyan hakachgnazhamayin finansakan karavarman ardi arantsnahatkutyunnery ev hakachgnazhamayin finansakan qaghaqakanutyany pulery, Chgnazhamayin karavarum ev tekhnologianer: Git. Ev gitametod. Hodvatsneri zhoghovacu, Yer.: 2014. ej 26-30:
2. **Մանուկյան Գ.Թ.**, Կազմակերպության ճգնաժամային վիճակի բացահայտումը և գնահատումը, Ճգնաժամային կառավարում և տեխնոլոգիաներ: Գիտական և գիտամեթոդ. հոդվածների ժողովածու, Եր.: 2013, էջ 28-33:
Manukyan G.T., Kazmakerputyan chgnazhamayin vichaki bacahaytummy ev gnahatumy, Chgnazhamayin karavarum ev tekhnologianer: Git. Ev gitametod. Hodvatsneri zhoghovacu, Yer.: 2013. ej 28-33:
3. **Закшевская Е.В.**, Принципы и механизм функционирования системы антикризисного управления предприятием / Журнал: Вестник Воронежского государственного аграрного университета. - 2020. - №3 (66) - с. 166-173.
4. **Zakshevskaya E.V.**, Principy i mekhanizm funkcionirovaniya sistemy antikrizisnogo upravleniya predpriyatiem /Zhurnal: Vestnik Voronezhskogo gosudarstvennogo universiteta.- 2020. - №3 (66) - s. 166-173.
5. **Рахманов Л.С.**, Совершенствование управления финансовыми ресурсами предприятия в условиях кризиса / В сборнике: Управление и экономика народного хозяйства в России. - Сборник статей IV Международной научно-практической конференции. - 2020. - с. 205-207.
6. **Rakhmanov L.S.**, Sovershenstvevanie upravleniya finansovymi risursami predpriyatiya v usloviyakh krizisa / V sbornike: Upravlenie i ekonomika narodnogo khozyaystva v Rossii. – Sbornik ststey IV Mezhdunarony nauchno-prakticheskoy konferencii. - 2020. - s. 205-207.
7. **Смоляков И.**, Формирование системы антикризисного управления финансами предприятия, Автореферат диссертации на соискание учёной степени кандидата экономических наук, Волгоград – 2006, 8 – 28 с.
Smolyakov I., Formirovanie sistemy antikrizisnogo upravleniya finansami predpriyatiya, Avtoreferat dissertacii na soiskanie uchenoy stepeni kandidata ekonomicheskikh nauk, Volgograd – 2006, 8 – 28 s.
8. **Наталья Н.**, Антикризисное финансовое управление промышленным предприятием: теория, Методология, Практика, Автореферат диссертации на соискание ученой степени доктора экономических наук, Саранск – 2009, 3 – 42 с.
Natalya N., Antikrizisnoe finansovoe upravlenie promyshlennym predpriyatiem: teoriya, Metodologiya, Praktika, Avtoreferat dissertacii na soiskanie uchenoy stepeni doktora ekonomicheskikh nauk, Saransk - 2009, 3 – 42 s.

9. **Фучеджи В.**, Антикризисное финансовое в обеспечении устойчивости системы управления предприятием, Новый университет. № 11 (21). Экономика и право, 2012. 20-23 с.
Fuchedzhi V., Antikrizisnoe finansovoe v obespechenii ustoychivosti sistemy upravleniya predpriyatiem, Noviy universitet. № 11 (21). Ekonomika i pravo, 2012. 20-23 s.

Г.Т. Манукян

РАЗВИТИЕ ФИНАНСОВОГО УПРАВЛЕНИЯ В РЕАЛЬНОМ СЕКТОРЕ В КРИЗИСНОЙ СИТУАЦИИ

Развитие рыночных отношений в Республике Армения объективно требует коренной перестройки системы управления как на уровне народного хозяйства, так и отдельных организаций. Важнейшим недостатком рыночных отношений является отсутствие гармоничного сочетания интересов общества, государства, работников и собственников. Для развития организации необходимо разработать механизм сглаживания воздействия неблагоприятных факторов, одним из элементов которого является кризисное управление финансами. Кризисный финансовый менеджмент актуален и необходим как в научном, так и в практическом плане. Он позволяет на новой основе решать проблемы экономических отношений между хозяйствующими субъектами, собственниками и работниками, предупреждать кризисы и выводить организации из кризиса. Сегодня этот вопрос особенно актуален в связи с появлением новых вызовов, в частности, в связи с пандемией COVID-19.

Целью исследования является обоснование теоретических положений и методологических подходов формирования кризисного финансового управления в реальных условиях, а также разработка методических и практических рекомендаций по развитию системы антикризисного финансового управления. В соответствии с поставленной целью в работе были решены следующие задачи:

- *изучение содержания кризисного финансового управления;*
- *разработка теоретических положений, раскрывающих содержание и особенности кризисного финансового управления в реальном секторе;*
- *обоснование методологического подхода к формированию кризисного финансового управления;*
- *представление основных элементов антикризисного плана;*
- *обоснование структуры целей развития компании в системе кризисного управления финансами;*
- *выявление некоторых недостатков процесса формирования кризисной системы финансового управления и меры по их устранению;*

Предметом исследования является теория и методология системы кризисного финансового управления предприятием реального сектора.

Ключевые слова: *кризисное финансовое управление, антикризисная программа, оперативный, тактический, стратегический механизм финансовой стабилизации.*

G.T. Manukyan

THE DEVELOPMENT OF REAL SECTOR FINANCIAL MANAGEMENT IN A CRISIS SITUATION

The development of market relations in the Republic of Armenia objectively requires a radical restructuring of the management system, both at the level of the national economy and specific organizations. The most important shortcoming of market relations is the lack of a harmonious combination of the interests of society, the state, workers, and owners. In order to develop the organization, it is necessary to design a mechanism to smooth out the impact of adverse factors, one of the elements of which is crisis financial management. Crisis financial management is relevant and necessary, both scientifically and practically. It allows solving the problems of economic relations between business entities, owners and employees on a new basis, preventing crises and getting organizations out of crisis. Today, this issue is especially relevant to the emergence of new challenges, in particular with the COVID-19 pandemic.

The purpose of the research is to substantiate the theoretical provisions and methodological approaches of the formation of anti-crisis financial management in the real field, as well as to develop methodological and practical recommendations for the development of the crisis financial management system. The following problems were solved in the work in accordance with the set goal.

- *study about the content of crisis financial management,*
- *develop theoretical provisions that reveal the content and features of crisis financial management in the real sector,*
- *to justify the methodological approach to the formation of crisis financial management,*
- *present the main elements of the crisis plan,*
- *justify the structure of the company's development goals in the anti-crisis financial management system,*
- *to find out some shortcomings of the process of forming the anti-crisis financial management system and the measures to eliminate them.*

The subject of the research is the theory and methodology system of crisis financial management of the company in the real sector.

Key words: *crisis financial management, anti-crisis program, operational, tactical, strategic mechanism of financial stabilizatio.*

Մանուկյան Գրիգոր Թաթուլի – տնտ. գիտ. թեկն., դոցենտ (Մ. Քոթանյանի անվան ՀՀ ԳԱԱ ՏԻ, ՀՀ ԱԻՆ ՃԿՊԱ):

Երկայացման ամսաթիվը՝ 19.09.2022

Գրախոսման ամսաթիվը՝ 28.09.2022

Ի.Վ. Նասիյան, Կ.Հ. Աթոյան

ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԹՎԱՅԻՆ ՄՈԴԵԼԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Ժամանակակից ինստիտուտները պետական և մասնավոր կազմակերպությունների մակարդակով մեծ ֆինանսական միջոցներ են հատկացնում առաջնորդության մշակույթի զարգացման և կիրառելիության ոլորտում: Արդի ժամանակների թելադրանքով անհրաժեշտ է պետական մակարդակով լուրջ ծրագրեր իրականացնել առաջնորդության կառավարման ոլորտում:

Ներկայացված հոդվածում դիտարկվում է ճգնաժամային կառավարման համակարգի հիմնախնդիրների լուծմանն ընդառաջ կիրառել առաջնորդության կառավարման թվային մոդելավորման համակարգային մեթոդը:

Առանցքային բառեր. առաջնորդություն, լիդեր, կառավարում, թվային մոդելավորում, թվային համակարգ, ուժային կառույց, կադրային քաղաքականություն, տեղեկատվական տեխնոլոգիաներ:

Առաջնորդումը՝ լիդերությունը, կառավարման գծերից մեկն է: Դա անձի կարողությունն է՝ անհատների կամ նրանց խմբերի վարքի վրա ազդելու՝ հանուն կազմակերպության նպատակների իրականացման: Առաջնորդումը համատեղ աշխատանքի ամբողջականացման, կազմակերպության անդամների ներուժի բազմապատկման հզոր մեխանիզմ է: Քանի որ առաջնորդումը, ոչ թե լոկ գիտելիք է մարդկանց համախմբելու և ուղղորդելու եղանակների մասին, այլ, ամենից առաջ, գործնական հմտություններ, ուստի ամեն մակարդակի կառավարչի խնդիրն առաջնորդման արվեստին տիրապետելն է [3]:

«Առաջնորդ» («լիդեր») հասկացությունը գրականության մեջ ներմուծվել է կյանքի պահանջով, արտահայտելու մարդկանց խմբային վարքին բնորոշ օբյեկտիվ հարաբերություններից մեկը [5]:

Առաջնորդման երևույթի ուսումնասիրությունը կարևոր է իշխանության փաստացի գործադրման ընթացքն ըմբռնելու, արդյունավետ կառավարման բազմաբնույթ խնդիրները լուծելու, կազմակերպությունում աշխատակիցների ծառայողական առաջխաղացման ընթացքը կարգավորելու, անձի ինքնաճանաչման և սեփական վարքի ինքնակարգավորման համար [3]:

Հատկապես միջանձնային փոխհարաբերությունների արդյունավետ կառավարման առումով են կարևորվում առաջնորդի համբերատարությունը, զսպվածությունը: Դրանք են ամենից առաջ հիշատակվում «կատարյալ առաջնորդի», «XXI դարի առաջնորդի» վերաբերյալ դատողություններում [6, 7, 8]:

Առաջնորդման կարևորությունն առավել ընդգծվում է ճգնաժամային կառավարման գործընթացում: Ճգնաժամային կառավարումը նպատակաուղղված, բազմաբնույթ, անընդհատ գործընթացների համախմբություն է, ուղղված կառավարման համակարգը վտանգների, վտանգավոր երևույթների հնարավոր ազդեցություններից պաշտպանելուն և կառավարման համակարգի գործունեության կայունությունն ապահովելուն [1]:

Ուժային կառույցները և համակարգերը սոցիալական մեծ խմբեր են, որոնց կազմում կան բազմաթիվ միջին մեծության և փոքր խմբեր: Անժխտելի փաստ է, որ մարտունակ, կարգապահ և բարոյահոգեբանական բարձր պատրաստվածությամբ ուժային համակարգ ունենալու գործում նշանակալի դեր ունեն հրամանատարները, որոնք պետք է լինեն և՛ առաջնորդ, և՛ ղեկավար, և՛ հրամանատար: Կան արդյո՞ք այնպիսի բնածին գծեր, որոնք մարդուն առաջնորդ են դարձնում բոլոր հանգամանքներում:

Լիդերն այն անձն է, ով իշխանություն ունի որոշակի թվով մարդկանց վրա, հմուտ է այն գործունեության մեջ, որի խմբային կատարումը նա պետք է կառավարի, ունի վճիռներ կայացնելու և իրագործելու զարգացած ընդունակություն և այլ անձնային հատկանիշներ, որոնք անհրաժեշտ են մարդկանց կառավարելու համար:

ՀՀ ՊՆ համակարգում պաշտպանական բարեփոխումների համատեքստում առաջնորդության հայեցակարգի ներդրման շրջանակներում առաջ է բերվում ՀՀ ՁՈւ-ի հրամանատարական օղակների համար տարանջատված և նախագծված առաջնորդության մի շարք մակարդակներ.

- պաշտոնի վրա հիմնված առաջնորդություն. պետ:
- հարաբերության վրա հիմնված առաջնորդություն. ավագ ընկեր:
- զարգացման վրա հենվող առաջնորդություն. հայր:
- արդյունավետության վրա հենված առաջնորդություն. հաղթանակ բերող ղեկավար [2]:

Ուսումնասիրելով և վերլուծելով առաջնորդության էությունը, տեսությունները, ոճերը, մակարդակները, շրջանակները, առաջնորդության ձևավորման և կառավարման ճյուղային առանձնահատկությունները, առաջնորդի կերպարին ներկայացվող առանցքային պահանջները, առաջնորդի դրսևորման բազմաբնույթ իրավիճակները, հետազոտողների կողմից առաջ բերված բազմաթիվ հատկանիշները և ընդհանուր առմամբ առաջնորդության հայեցակարգերը, այն գիտական մակարդակը, որում գտնվում է առաջնորդության ընդհանուր գաղափարը: Տրամաբանական է համարվում, որ ընդհանուր ձևավորված բազան բավականին լայն հնարավորություն է ընձեռնում ստեղծել առաջնորդության մոդելավորման միասնական համակարգ:

Ճգնաժամային կառավարման համակարգում անհրաժեշտություն է առաջանում առաջնորդության կառավարման թվային մոդելավորման համակարգի ստեղծումը, կիրառումը և զարգացումը՝ արդի ժամանակներին և պահանջներին համապատասխան, որը հնարավորություն կտա խուսափել կադրային ճգնաժամից և կադրային առաջնորդության բացակայությունից:

Տեղեկատվական տեխնոլոգիաները ներկայումս բավականին լայն հնարավորություններ են ընձեռում ունենալ թվայնացված համակարգային ամբողջական բազաներ և ապահովել տվյալների կիրառման բազմաֆունկցիոնալություն: Համակարգերի օգնությամբ հետազոտողները, գիտահետազոտական ինստիտուտները գիտական և պրոֆեսիոնալ մակարդակում կարողանում են համակարգել տվյալ բնագավառին առնչվող գիտելիքները, փորձը, իրականացնել դինամիկ զարգացման կանխատեսումներ: Ժամանակը թելադրում է համակարգերի օգնությամբ առավել բարձր մակարդակի հետազոտություններ իրականացնել և զարգացնել նաև սոցիալ-հասարակական տիրույթում գտնվող ոլորտները [4]:

Առաջնորդության կառավարման ոլորտում առկա են բազմաթիվ հետազոտությունների, փորձի, գիտելիքների և տվյալների մեծ բազաներ, որոնք ուղղված են մարդկային ռեսուրսների կառավարմանը, ճգնաժամային իրավիճակներում խոցելիության նվազեցմանը: Անհրաժեշտություն է առաջանում ձևավորել կառավարման թվային համակարգ՝ կենտրոնացնելով տվյալները մեկ ընդհանուր թվային համակարգի մեջ:

Համակարգի գործունեության հիմնական նպատակը կազմակերպություններում առաջնորդության արդյունավետ և արդիական կառավարման թվայնացված մոդելների սինթեզումն է: Առաջնորդության կառավարման թվայնացված համակարգի ստեղծումը նախ և առաջ ենթադրում է ստանալ էտալոնային առաջնորդի թվային մոդել: Թեև առաջնորդության կառավարման թվային համակարգը կարող է ունենալ միասնական և համընդհանուր բնույթ, սակայն յուրաքանչյուր կազմակերպություն՝ ելնելով իր նպատակներից ու առաջադրված խնդիրներից, ներկայացնում է տարբեր պահանջներ առաջնորդության կառավարման թվային մոդելին, ինչպես նաև կազմակերպությունում գործող էտալոնային առաջնորդի թվային մոդելին: Բացի հիմնական և համընդհանուր բնութագրիչ տարրերի կողավորումը և թվայնացումը, յուրաքանչյուր կազմակերպություն հնարավորություն ունի մուտքագրել իր առանձնահատուկ բնութագրիչ տարրերը:

Կամայական խմբի էտալոնային առաջնորդի մոդելն առաջանում է այդ իսկ խմբի անդամների իդեալականացված մոդելների համադրումից, այսինքն՝ խումբը համապատասխանում է իր առաջնորդին, առաջնորդը համապատասխանում է իր խմբին: Համակարգը, խմբի անդամների իդեալականացված մոդելների համադրումից մշակում է տվյալ անդամներին առաջնորդելու ունակ առաջնորդի մոդել՝ արդյունավետության և համատեղելիության գնահատման հնարավորությամբ: Համակարգի միջոցով կարողանում են հասկանալ, թե տվյալ խմբի անդամներին իրենց բոլոր բնութագրիչներով հանդերձ ինչպիսի՞ առաջնորդ է հարկավոր: Այստեղ լուծվում է նաև բարդագույն խնդիրներից ևս մեկը, այն է՝ խմբի ֆորմալ և ոչ ֆորմալ լիդերների գործունեության արդյունավետության աստիճանի բարձր կամ ցածր լինելը՝ կախված կոնֆլիկտայնության ռիսկից:

Կամայական խմբի անդամների իդեալականացված մոդելի համակարգը սինթեզում է այդ անդամի զբաղեցրած հաստիքի և խմբի մյուս անդամների համար նախատեսած խնդիրների լուծման համար պահանջվող որակները, հատկանիշները և այլ բնութագրիչ տարրերը, որոնք նախապես կողավորվում են, թվայնացվում և մուտքագրվում համակարգ: Համակարգի հիմքում դրված է հաստիքը, հաստիքների ամբողջությունը և ղեկավարող հաստիքի օղակը, իսկ կազմակերպության մակարդակով մուտքագրվում է ընդհանուր կազմակերպչահաստիքային կառուցվածքը: Ընդ որում, համակարգը կարող է նաև ցուցադրել, թե ինչքանով են համատեղելի և արդյունավետ կազմակերպության բոլոր օղակները և՛ ուղղահայաց, և՛ հորիզոնական մակարդակներում՝ կազմակերպության նպատակներին հասնելու համար: Համակարգը յուրաքանչյուր օղակի տոկոսային ցուցանիշը և գործակիցը դուրս է բերում նախապես մուտքագրված, կողավորված բնութագրիչների հիման վրա:

Այսպիսով, թվային համակարգում ձևավորվում է կամայական կազմակերպության կազմակերպչահաստիքային կառուցվածքի բոլոր տարրերի բնութագրիչների իդեալականացված թվային մոդելը:

Համակարգի խնդիրներից է նաև յուրաքանչյուր անձին, ով հավակնում է այս կամ այն հաստիքին, գնահատել տեսական և գործնական թեստային առավել զարգացած մոդելներով՝ վերադրման մեթոդով համեմատելով իդեալականացված մոդելի համանուն ցուցանիշների և գործակիցների հետ, որը հնարավորություն կտա որոշել անձի տվյալ հաստիքին համապատասխանության, խմբում մյուս անդամների հետ ներդաշնակության, կոնֆլիկտայնության ռիսկի աստիճանը, օգտակար գործողության գործակիցը, գործունեության կանխատեսվող արդյունքի աստիճանը և մի շարք այլ տվյալներ: Նույնն անհրաժեշտ է իրականացնել խմբի մասշտաբով, որպես վերջնարդյունք՝ ստանալով գնահատվող անձին և խմբին համապատասխան առաջնորդի թվային մոդել:

Համակարգի առանձնահատկություններից կարող է լինել այն, որ համակարգը, անձի գնահատումը և իդեալականացված մոդելի հետ համեմատումը կատարելուց հետո, ավտոմատ կերպով կարող է սինթեզել նրա պատրաստման և վերապատրաստման ծրագրերը, որոնց ավարտից հետո անձի, խմբի, կամ առաջնորդի տոկոսային ցուցիչները և գործակիցը կբարձրանան:

Համակարգի հետագա զարգացումը թույլ կտա ստանալ նաև անցյալում գործած առաջնորդների թվային մոդելները, ինչպես նաև ապագայի առաջնորդների թվային մոդելները, կատարել համեմատություններ և ստանալ կարևոր եզրակացություններ:

Համակարգի հետագա զարգացումը հնարավորություն կտա նաև ստանալ այնպիսի ֆունկցիաներ, ինչպիսիք են կոնֆլիկտների լուծման տարբերակների սինթեզումը և կառավարման համակարգում առկա խնդիրների լուծմանը նպաստող բազում մոդելներ:

Համակարգը հսկայական բեկում կարող է մտցնել կադրային քաղաքականության վարման սկզբունքներում, մասնավորապես կադրերի հավաքագրման, պատրաստման, կիրառման մեջ:

Ընդհանուր պատկերացում ունենալու նպատակով՝ թվարկենք նախնական և պարզունակ բնութագրիչ տարրեր, որոնք կողավորվելու և մուտքագրվելու են համակարգ: Համակարգ մուտքագրվելու են բանական անձին բնութագրող՝ մտավոր, հոգևոր, ֆիզիկական, սոցիալական և այլ հատկանիշներ:

1. Ընդհանուր ժամանակային տվյալներ.

- հազարամյակ, դար, տարի

Հետազոտման համար որպես օբյեկտ են հանդիսացել Բաղրամյանի ենթաշրջանի Շենիկ համայնքին պատկանող հողերը, որոնք օգտագործվում են որպես արոտ: Տարածքը գտնվում է Շենիկ-Վանանդ միջհամայնքային ավտոճանապարհի և «Թալինի» մայր ջրանցքի միջև, ծովի մակերևույթից 1113-1130մ բարձրության վրա՝ ջրանցքից ավտոճանապարհի ձգվող բլրապատ արևելյան կողմնադրություն ունեցող լանջին: Հետազոտվող հողատարածքը հանդիսանում է «ԳԳՎ» ՍՊԸ-ի սեփականությունը: Կազմակերպությունը նպատակ ունի հողատարածքը օգտագործել գյուղատնտեսական և վերականգնողական էներգիայի արտադրության կազմակերպման նպատակներով: Նախատեսվում է բլրապատ ռելիեֆի պայամաններում ձևավորված քարքարոտ, սակավազոր արոտների յուրացում և բազմամյա տնկարկների հիմնում: Հողատեսքի փոխարկման գործում բազում գոծոնների թվում առաջնակարգ նշանակություն ունի տեղանքի բազմակողմանի ուսումնասիրումը, քանի որ հողերի ոչ համակարգված օգտագործումը, կարող է հանգեցնել հողաձածկի քայքայման [3]:

Տարածքում առաջին հերթին նախատեսվում է իրականացնել քարհավաքի աշխատանքներ, իսկ այնուհետև կազմակերպել մելորացիաման ու հողի հետագա մշակության աշխատանքները: Հետևաբար անհրաժեշտություն է առաջանում ճշտել քարքարոտության բնույթն ու աստիճանը և դասակարգել դրանք ըստ խմբերի: Այդ նպատակով հողատարածքի որակական հատկանիշների և գյուղատնտեսական նպատակներով դրանց մշակության հնրավորությունների բացահայտման համար, դրվել են 37 հողային կտրվածք (նկ. 1), որոնցից վերցվել են հողանմուշներ, կատարվել են հողի որակական հատկանիշների՝ դաշտային ու լաբորատոր հետազոտություններ: Ուսումնասիրվել է յուրաքանչյուր հողային կտրվածքի փաստացի վիճակը, փորելու ունակությունը, կատարվել է հողային հորիզոնների չափագրում: Յուրաքանչյուր հողափոսի միջոցով տրվել է նաև հարակից տարածքի մակերևույթային ու խորքային քարքարոտվածության աստիճանի նկարագիրը [4]:

Դաշտում կատարված դիտարկումներով՝ ըստ փորվելու ունակության, հողային կտրվածքները բաժանվել են երեք խմբերի [4].

1-ին խմբում ընդգրկվել են մինչև 120սմ և ավելի խորը փորվող հողակտրվածքները, որոնք կազմում են տարածքի շուրջ 60%-ը:

2-րդ խմբում՝ 70-80սմ խորությամբ փորվելու հնարավորություն ունեցող հողատարածքներ, որոնք կազմում են տեղամասի 10%-ը:

3-րդ խմբում՝ մինչև 50-60սմ խորությամբ փորվելու հնարավորություն ունեցող հողատարածքներ, որոնք կազմում են տարածքի 30%-ը:

Ըստ մակերեսային և պրոֆիլային քարքարոտության աստիճանի կտրվածքները բաժանվել են հինգ խմբի.

Մակերեսում և պրոֆիլում քարագուրկ հողակտրվածքները՝ (28%-ը) դասվել են 1-ին խմբին,


2-րդ խմբում ընդգրկվել են մակերեսում և պրոֆիլում թույլ քարքարոտ (32%-ը) հողակտրվածքները,

3-րդ խմբում՝ մակերեսում թույլ, պրոֆիլում միջին քարքարոտ (11%-ը).

4-րդ խմբում՝ մակերեսում միջին, պրոֆիլում ուժեղ քարքարոտ (14%-ը),

5-րդ խմբում՝ մակերեսում և պրոֆիլում ուժեղ քարքարոտ (15%-ը) հողակտրվածքները:

Դաշտային հետազոտություններով պարզվել է, որ Շենիկ-Վանանդ ճանապարհին հարակից և հողատարածքի սկզբնամասում կառուցված փոքր հիդրոկայանից հյուսիս գտնվող տարածությունները պիտանի չեն գյուղատնտեսական մշակության համար՝ տուֆի հանքերի առկայության պատճառով:



Պայմանական նշաններ
 ○ Չնմուշառված հողային կտրվածքներ ● Նմուշառված հողային կտրվածքներ

Նկ. 1. Հեղազորվող հողատարածքում կտրվածքների տեղադրման սխեման

Հողի որակական հատկանիշների լաբորատոր հետազոտությունների նպատակով հետազոտվող հողատարածքի տարբեր տեղադրման կտրվածքներից և գենետիկական հորիզոններից վերցվել են 16 հողանմուշներ:

Հողանմուշների ֆիզիկական և քիմիական հատկությունները որոշվել են հետևյալ մեթոդներով՝ հողային լուծույթի ռեակցիան էլեկտրոպոտենցոմետրիկ եղանակով, ջրալույծ աղերը՝ Ե.Վ. Արուշինյայի [6], փոխանակային կատիոնների կազմը՝ Ca, Mg, ինչպես նաև K և Na քանակը՝ Ա.Ն. Բաղրամյանի [7], կարբոնատների պարունակությունը՝ Ս.Ա. Կուդրինի, մեխանիկական կազմը՝ Ն.Ա. Կաչինսկու, մատչելի սննդատարրերից N-ը՝ Ի.Վ. Տյուրինի և Մ.Մ. Կոնոնովայի, P₂O₅-ը՝ Բ.Պ. Մաչիգինի, K₂O-ը՝ Ա.Լ. Մասլովայի մեթոդներով [6]:

Դաշտային և լաբորատոր հետազոտությունների արդյունքները վկայում են, որ ուսումնասիրվող հողատարածքի տարբեր թեքության ու կողմնադրության բլրալանջերի և գոգավորությունների հողերի ֆիզիկամեխանիկական և քիմիական կազմը խայտաբղետ է, այդ ցուցանիշները տարաբնույթ են նաև ըստ հողափոսերի խորության [3]:

Աղ. 1-ում բերված հողերի մեխանիկական կազմի լաբորատոր հետազոտությունների տվյալներից երևում է, որ ուսումնասիրված՝ տեղանքին բնորոշ չորս (№ 1, 18, 23 և 26) հողակտրվածքների AB հորիզոններում ֆիզիկական կավը (<0,01%) տատանվում է 35,20 - 44,50% սահմաններում, այսինքն այն ունի միջակ կավավազային մեխանիկական կազմ: Նույն կտրվածքների C հորիզոնում ֆիզիկական կավը կազմում է ընդամենը 13,22 – 17,36%, այսինքն մեխանիկական կազմը ավազակավային է:

Աղյուսակ 1.

Հողանմուշների մեխանիկական կազմը

№	Կտրվածքի համարը	Հորիզոնները	խորությունը, սմ	Ֆիզ. կավ <0,01%
1	1	AB	0-38	44,56
		C	38-120	16,40
2	18	AB	0-36	39,48
		C	36-110	17-01
3	23	AB	0-40	35,40
		C	40-110	17,36
4	26	AB	0-27	35,20
		C	27-110	13,22

Հայտնի է, որ հողի մեխանիկական կազմի տեսանկյունից, բույսերի աճի ու զարգացման համար առավել նպաստավոր պայմանները առկա են № 1-ին և № 18-րդ կտրվածքներին հարակից հողերում, որտեղ AB հորիզոններում հողերն ունենեն միջին և ծանր կավավազային մեխանիկական կազմ:

Աղ. 2-ում բերված են ուսումնասիրվող հողերի ջրալույծ աղերի կազմը:

Հողանմուշների ջրային քաշվածքի քիմիական կազմը

№	Հողանմուշի կտրվածքի համարը և հորիզոնը	pH	Աղեր, %	Ջրալույծ իոնները մգ/էկվ 100 գ հողում						
				CO ₃ ²⁻	HCO ₃ ⁻	Cl	SO ₄ ²⁻	Ca ²⁺	Mg ²⁺	Na ⁺ +K ⁺
1	կտր. 1 AB -38	7,8	0,08	-	0,64	0,37	0,21	0,7	0,4	0,125
	Կտր. 1 C - 38-120	7,1	1,05	-	0,72	0,65	14,24	14,0	1,04	0,035
2	կտր. 18 AB -40	7,4	0,16	-	0,56	0,37	1,61	1,1	0,88	0,037
	կտր. 18 C-40-110	7,5	1,13	-	0,72	0,28	15,59	13,0	1,28	0,063
3	Կտր.23 AB -40	8,1	0,8	-	0,72	2,03	9,0	4,0	0,72	0,288
	Կտր.23 C- 40-110	7,5	1,17	0,17	0,61	0,31	10,73	10,0	1,12	0,112
4	Կտր. 26 AB-27	7,8	0,19	-	0,75	0,37	1,75	1,2	1,04	0,024
	Կտր. 26 C-27-110	7,4	1,05	-	0,61	0,4	14,56	14,0	0,36	0,024

Հետազոտված 16 հողային կտրվածքների տարբեր հորիզոններից վերցված հողանմուշների ջրային քաշվածքի անալիզներից ստացված տվյալները վկայում են, որ ինչպես ըստ հողային կտրվածքների, այնպես էլ ըստ հորիզոնների, հողային լուծույթի ռեակցիան (pH-ը) թույլ հիմնային է և տատանվում է 7.1-8.0 սահմաններում: Այսինքն այն էականորեն չի կարող խոչընդոտել մշակաբույսերի աճին ու զարգացմանը: Բացահայտվել է նաև, որ հետազոտվող հողատարածքի՝ բացառությամբ 23 կտրվածքի, մյուս կտրվածքների AB հորիզոնների հողերը հիմնականում աղակալված չեն և աղերի ընդհանուր պարունակությունը տատանվում է թույլատրելի՝ 0.08-0.19% միջակայքում:

Ուսումնասիրության արդյունքները վկայում են միաժամանակ, որ հետազոտվող 37 հողակտրվածքներից վերցված հողանմուշների C հորիզոնում՝ 27-120 սմ շերտում, աղերի պարունակությունը բավականաչափ բարձր է և այն տատանվում է 1,05-1,13%-ի սահմաններում, որը պայմանավորված է հողաշերտում գիպսի բարձր պարունակությամբ [1]:

Աղ. 3-ում բերված են հողերի փոխանակային կատիոնների կազմը:

Հողանմուշների փոխանակային կափոնների կազմը

№	Կտրվածքի համարը և հորություն սմ	Փոխանակային կափոնների պարունակությունը, մգ/էկվ				Ընդհանուր գումարը	Փոխանակային կափոնների պարունակությունը, %			
		Ca	Mg	Na	K		Ca	Mg	Na	K
1	Կտրվածք 1 AB 0- 38	16,8	21,1	4,46	1,12	43,48	38,63	48,52	10,25	2,58
	Կտրվածք 1 C 0- 120	20,4	13,96	2,06	0,73	37,15	54,91	37,60	5,43	2,06
2	Կտրվածք 23 AB 0- 36	11,0	16,28	8,85	1,79	37,92	29,0	42,93	23,33	4,72
	Կտրվածք 23 C 36-110	5,5	22,38	2,18	0,29	30,39	18,12	73,73	7,18	0,35
3	Կտրվածք 18 AB 0-40	13,4	23,62	2,07	1,12	40,21	33,32	58,74	5,14	2,73
	Կտրվածք 18 C 40-110	26,5	16,72	0,35	0,38	43,95	60,30	38,04	0,80	0,86
4	Կտրվածք 26 AB 0-27	8,8	18,36	2,63	0,73	31,14	28,25	60,88	8,44	2,4
	Կտրվածք 26 C 27-110	18,1	8,54	2,01	0,38	29,03	62,35	29,42	6,92	1,31

Ուսումնասիրություններով բացահայտվել է (աղ. 3), որ հետազոտվող հողանմուշներում հողի կլանված կատիոնների կազմն կախված հողային կտրվածքից և հորիզոնից, նույնպես էապես տարբերվում են միմյանցից: Բերված տվյալներից միաժամանակ երևում է, որ հողի փոխանակային համակարգում գերակշռում են Ca և Mg-ի իոնները: Ինչպես առանձին կտրվածքներում, այնպես էլ ըստ հորիզոնների, կլանված կատիոնների կազմում Mg-ի պարունակությունը առանձին դեպքերում գերակշռում է Ca-ի պարունակությանը, որը կարող է հանգեցնել ինչպես բույսերի նյութափոխանակության խախտման, այնպես էլ հողի ֆիզիկական հատկությունների վաթարացման: Հետևաբար հողերի հետագա բարելավման գործընթացում անհրաժեշտություն կառաջանա կիրառել կալցիում պարունակող պարարտանյութեր, որը թույլ

կտա աստիճանաբար կարգավորել կալցիումի և մագնեզիումի փոխհարաբերությունը կլանող համարգում:

Հողանմուշների լաբորատոր հետազոտության արդյունքները վկայում են, որ հողերն ունեն միջինից բարձր կլանողունակություն և կլանման ծավալը տատանվում է 29,03 – 43,95 մգ.էկվ.100գ սահմաններում: Աղ. 3-ում արձանագրված ցուցանիշներով պարզ նկատվում է, որ բոլոր կտրվածքներում հորիզոնում գերակշռում են Ca-ի իոնները, այն տատանվում է 18,12-62,35-ի սահմաններում: Հողանմուշների փոխանակային կատիոնների կազմի վերաբերյալ լաբորատոր հետազոտություններից ստացված արդյունքների համադրությունից պարզվում է (աղ. 3), որ հողի կլանող համակարգում փոխանակային նատրիումի պարունակությունը նույնպես թույլատրելի սահմաններում է, և տատանվում է 0,8-10,25%-ի սահմաններում: Հողերի ագրոքիմիական ցուցանիշների՝ շարժուն սննդատարրերի պարունակության տեսակետից, աղ. 4-ում գրանցված՝ լաբորատոր հետազոտումից ստացված տվյալները վկայում են, որ հետազոտվող բոլոր հողակտրվածքների AB հորիզոններում, բույսերին մատչելի սննդաէլեմենտների պարունակությունը 100գ հողում նույնպես խայտաբղետ է:

Աղյուսակ 4.

Հողանմուշների ագրոքիմիական ցուցանիշները

Կտրվածքի համարը	Հորիզոնը, խորությունը, սմ	Շարժուն սննդատարրեր մգ 100 գ հողում		
		N	P ₂ O ₅	K ₂ O
1	AB 0-38	4,26	0,75	32,71
14	AB 0-35	3,19	2,00	28,98
18	AB 0-40	2,66	2,60	42,81
23	AB 0-40	3,73	1,00	37,11
26	AB 0-27	4,27	2,30	35,13
35	AB 0-50	3,20	2,61	29,64
5	AB 0-38	4,25	1,80	38,20
10	AB 0-30	3,74	2,82	30,08
17	AB 0-35	3,21	2,7	35,85
13	AB 0-22	4,26	4,04	58,97
30	AB 0-35	2,13	1,82	38,64
37	AB 0-32	4,24	4,04	58,97

Պարզվել է նաև, որ հետազոտված հողանմուշներն ազոտով աղքատ են (2,13-4,27մգ100գ հողում) ֆոսֆորով՝ թույլ և միջակ (0,75-4,04մգ100գ հողում), իսկ կալիումով լավ ապահովված են (28,98-58.97 մգ100գ հողում):

Այսպիսով, ելնելով ուսումնասիրվող հողատարածքի դաշտային ու լաբորատոր հետազոտությունների համադրումից կարելի է փաստել, որ հողերն այդ վիճակում պիտանի չեն բազմամյա տնկարկների մշակության համար և պահանջում են իրականացնել լոկալ մեխորատիվ աշխատանքներ: Մասնավորապես, հատուկ քարիավաք մեխանիզմների օգնությամբ անհրաժեշտ է կատարել հողատարածքում առկա մակերեսային, կիսաթաղված և խորքային քարերի հեռացում, և մասնակի հարթեցում, այն հաշվով, որպեսզի հումուսային շերտը հնարավորության սահմաններում մնա տեղում: Արարատյան հարթավայրի նախալեռնային ենթազոտու ան-

մշակ, քարքարոտ, սակավ բերրի, թույլ մեխանիկական կազմով հողերում բազմամյա տնկարկների հիմնման նպատակով անհրաժեշտ է տնկումները կատարել բնային եղանակով (1x1x0,75մ), կիրառելով կաթիլային եղանակով ոռոգում:

Մեծ թեքություն ունեցող բլրալանջերի վրա, կառուցել դարավանդներ՝ օգտագործելով տեղանքի տուֆի և բազալտի քարաբեկորները: Առանձին գոգավորություններում և ոչ մեծ թեքության բլրալանջերի վրա, որտեղ քարհավաքից և մասնակի հարթեցումից հետո հողի A և B հորիզոններում կպահպանվի 20-25 սմ շերտ, գիպսային հողի փոխարեն ծառերի բները լցնել միջշարային տարածություններից քերված (8-10սմ հաստությամբ) հողով, իսկ մնացած տարածություններում տնկումները կատարել այլ վայրերից ներկրված հողով: Երկու դեպքում էլ ծառաբները լցվող հողին խառնելով, հանքային և օրգանական պարարտանյութեր: Հողերի որակական հատականիշների բարելավման, բերրիության բարձրացման նպատակով մշակվող տարածքներում ամեն վեգետացիոն տարում՝ մշակվող բուսատեսակի պահանջին համահունչ, հող մտցնել օրգանական և հանքային պարարտանյութեր, տարաբնույթ կոմպոստներ:

Արարատյան հարթավայրի նախալեռնային գոտու գորշ կիսաանապատային անմշակ հողերը բնութագրվում են բարձր քարքարոտությամբ, էրոզացվածությամբ, խորքային գիպսակիր հողաշերտերի առկայությամբ, աղերի բարձր և օրգանական նյութերի ցածր պարունակությամբ, սննդատարրերի ցածր ապահովվածությամբ, փոխանակային կալցիումի և մագնեզիումի անբավարար փոխհարաբերությամբ:

Չորային տարածքներում ինչպիսին Արարատյան հարթավայրի նախալեռնային գոտու հետազոտվող տարածաշրջանն է, բուսածածկի ստեղծումը պահպանում է հողերը էրոզիայից, կասեցնում է դեգրադացիոն պրոցեսները՝ հողում կուտակում է օրգանական նյութեր, որի արդյունքում մեծանում է հողի ածխածին պահելու ունակությունը, այն նպաստում է ջերմային գազերի մթնոլորտ արտանետումը, այսինքն բուսածածկի առկայությունը տանում է ջերմաստիճանի նվազեցմանը, մեղմացնում ու կասեցնում է հողերի դեգրադացիան և անապատացումը [8]:

Այս հողերի բարելավման համար պահանջվում է կիրառել գիտականորեն հիմնավորված միջոցառումների համակարգ, որն ընդգրկում է քարհավաքի, հարթեցման, բարձր թեքություն ունեցող լանջերի դարավանդման, ծառերի բնամասի գիպսակիր հողաշերտի փոխարինման աշխատանքներ, ինչպես նաև ծառերի տնկումից հետո կաթիլային ոռոգման համակարգի կառուցման և հողերի բերրիության մակարդակի բարձրացման աշխատանքներ:

Գրականություն

1. **Էդիլյան Ռ.Ա.**, Մկրտչյան Գ.Ա., Հայաստանի հողային ծածակոցի բնագյուղատնտեսական շրջանացումը: Եր., 1991. - 55 էջ:
Edilyan R.A., Mkrtychan G.A. Hayastani hoghayin tsatskotsi bnagyughatntesakan shrjantsumy. Yer., 1991. 55 ej.
2. **Հայրապետյան Է.Մ.**, Հողագիտություն: Եր., 2000. - 456 էջ:
Hayrapetyan E.M., Hoghagitutyun. Yer., 2000. - 456 ej.

3. **Հայրապետյան Է.Մ., Պետրոսյան Հ.Պ., Զաքոյան Ռ.Հ., Հայկական ԽՍՀ հողերի մելիորացիան, կուլտուրականացումը և պահպանումը:** Եր., 1990. - 499 էջ:
Hayrapetyan E.M., Petrosyan H.P., Zaqoyan R.H., Haykakan KHSH hogheri melioratsian, kulturakanactsyumu yev pahpanumy. Yer., 1990. - 499 ej.
4. **Հողաշինարարության** պետական նախագծային ինստիտուտ: «Հայպետհողշիննախագիծ», Հողագիտության և ագրոքիմիայի Գ/Հ ինստիտուտ – Ժամանակավոր հրահանգ «Քարքարոտ հողերի կուլտուր-տեխնիկական աշխատանքների հողագիտական հետազոտության»: Եր., 1988. - 27 էջ:
Hoghashinararutyanyan petakan nakhagcayin institut: «Haypethwghshinnakhagic», Hoghagutyanyan ev agroqimiayi G/H institut zhamanakavor hrahang «Qarqarot hogheri kultur-tekhnikakan ashkhatankneri hoghagitakan hetazotutyanyan»: Yer., 1988. - 27 ej:
5. **Атлас** почв Республики Армения - НИИ Почвоведения и Агрохимии, Ер., 1990.- с. 64.
Atlas pochv Respubliki Armeniya – NII Pochvovedeniya I Agrokhimii, Yer., 1990. – s. 64.
6. **Аринюшкина Е.В.,** Руководство по химического анализу почв, М., 1962. – с. 492.
Arinushkina E.V., Rukavodstvo po khimicheskogo analizu pochv, M., 1962. – s. 492.
7. **Баграмян А.Н.,** Определение активности ферментов почв: Методические указания. Филиал типографии N 1 ГСМ Арм. ССР. Ер., 1978. - с. 54.
Baghramyan A.N., Opredelenie aktivnosti fermentov pochv: Metodicheskie ukazaniya. Filial tipografii N 1 GSM Arm. SSR. Yer., 1978. - s. 54.
8. **Մաթևոսյան Հ.Շ.,** Տեղական մակարդակում աղետների ռիսկի կառավարմանն ուղղված առաջարկություններ գյուղատնտեսության ոլորտում: «Առնապ» հիմնադրամ, Եր., 2017. – 90 էջ:
Matevosyan H.SH., Teghakan makardakum aghetneri riski karavarmann ughghvac arajarkutyunner gjuhathntesutyanyan volortum: «Arnap» himnadram, Yer., 2017. – 90 ej:

С.К. Багдасарян, А.С. Ашкарян, Ж.Ш. Месропян, Р.Д. Григорян

МЕЛИОРАТИВНОЕ СОСТОЯНИЕ СЕРЫХ ПОЛУПУСТЫННЫХ НЕОБРАБАТЫВАЕМЫХ ЗЕМЕЛЬ ПРЕДГОРНОЙ ПОДЗОНЫ АРАРАТСКОЙ ДОЛИНЫ И ПУТИ ИХ УЛУЧШЕНИЯ

Цель данной статьи - выявить фактическое состояние необрабатываемых, каменистых, холмистых территорий, прилегающих к поселку Шеник предгорий Армавирской области Араратской долины, возможности ведения обработки земель сельскохозяйственного и иного производственного назначения. Сильно изрезанная холмистая местность, покрытая скалами в предгорьях Араратской долины, разная степень уклонов и ориентация склонов, бедная флора, низкое плодородие и неправильная обработка почв в значительной степени способствуют активным эрозионным процессам, деградации и опустыниванию.

Ключевые слова: необработанный, каменистый, холм, склон, почвенный разрез, горизонт, образец почвы, механический состав, растворенные соли.

S.K. Baghdasaryan, H.S. Ashkaryan, Zh.Sh. Mesropyan, R.D. Grigoryan

THE AMELIORATIVE CONDITION OF THE GRAY SEMI-WALL UNCULTIVATED SOILS OF THE PRE-MOUNTAIN ZONE OF THE ARARATIAN PLAIN AND THE WAYS OF IMPROVEMENT

The purpose of this article is to identify the meliorational condition of the gray semi-desert uncultivated lands of the foothills of the Ararat plain and propose a system of measures for their improvement. It has been shown that the soils of that region are characterized by high rockiness, erosion, the presence of a deep gypsum-bearing soil layer, high salt and low content of organic substances, low supply of nutrients, the insufficient relationship between exchangeable calcium and magnesium. For the improvement of these lands, the works of stone collection, leveling, reclamation of steep slopes, replacement of the gypsum-bearing soil layer in the tree area, as well as the construction of a drip irrigation system after the establishment of polychaete plantations and the improvement of soil fertility were proposed.

Keywords: *gray semi-desert barren lands, petrification, physical and chemical properties, local amelioration, perennial plants, increasing the level of fertility.*

Բաղդասարյան Սանասար Կոլյաժի - գյուղ. գիտ. թեկնածու (ՀԱԱՀ ՀԱՄ գ/կ).

Աշկարյան Հասմիկ Սմբատի - (ՀԱԱՀ ՀԱՄ գ/կ).

Մեսրոպյան Ժորժեստա Շակարի - (ՀԱԱՀ ՀԱՄ գ/կ).

Գրիգորյան Ռոբերտ Դրաստամատի - (ՀԱԱՀ ՀԱՄ գ/կ).

Ներկայացման ամսաթիվը՝ 08.07.2022

Գրախոսման ամսաթիվը՝ 14.07.2022

V.A. Bagiyán, N.L. Ghazanchyan, N.S. Khachaturyan

THE ROLE AND PRACTICAL APPLICATION OF CULTURE COLLECTIONS IN GLOBAL CHALLENGE MITIGATION

Microbiological synthesis of biologically active compounds is one of the most important areas of modern biotechnology. In this regard, the importance of culture collections of microorganisms, which represent a significant biotechnological potential and practical value in the light of solutions to current problems and global challenges, is increasing.

Key words: culture collections, synthetic plastics, microbial degradation, cheese whey, environmental safety, antimicrobial resistance.

The Microbial Depository Center (MDC) presents the National Culture Collection and databases of non-pathogenic microorganisms is the main potential of general and applied microbiology in Armenia. The culture collection includes more than 12,000 strains of microorganisms (tabl. 1).

Table 1.

LIST of microbial cultures maintained in Microbial Depository Center

Microorganisms groups	Quantity of strains
Aerobic sporeforming bacteria (<i>Bacillus</i>)	
- Entomopathogens - <i>B. thuringiensis</i> , <i>L. sphaericus</i> , <i>B. laterosporus</i> and others	5000
- Mesophiles	2200
- Extremophiles - Thermophiles, Alkaliphiles, Halophiles, Acidophiles and others	2000
Non-sporeforming bacteria	
- Pseudomonas group	300
- Phytopathogenic cultures	200
- Nitrogen-fixing bacteria	25
- Genus <i>Rhodococcus</i>	10
Fungi	
- Mycosporic fungi	1000
- Basidiomycetes	35
Actinomycetes - Streptomycetes (including typical strains)	20
Yeasts, including extremophiles	600
Lactic-acid bacteria	650
Test cultures	40
Total:	12080

The Center consist of the following sectors:

- sector of sporeforming bacteria and actinomycetes;
- sector of non-sporeforming bacteria;
- sector of lactic acid bacteria;
- sector of yeasts;
- sector of fungi;
- information center, databases.

Most of the strains were isolated, identified and studied in Armenia, reflecting the extraordinary diversity of the ecological and climatic biotopes of the South Caucasus region. The main research directions of Center are:

- Study of bacterial biodiversity.
- Complex study, isolation and classification of new microbes, development of long-term maintenance methods for their vitality and important industrial features, as well as suggestions for practical use.
- Preservation and expansion of the collection fund of microbiologically and biotechnologically valuable strains.

The MDC activity covers the Research and Development of national priorities in modern microbiology and biotechnology: food, environmental safety, pest control, biofertilizers, biotransformation, metals bioleaching, bioenergetics (fig.1).




Fig. 1. Applied Potential of MDC Culture Collection

In this article submitted the brief review about the applied potential of microorganisms of the Center's Collection of Cultures as objects of research in solving current global problems and challenges.

To date, the problem of cleaning the environment from plastic materials is extremely relevant. Over the past decades, the widespread use of synthetic polymers has led to the accumulation of these materials in the environment: with about 400 million tons of plastic produced worldwide every year. Efficient biodegradation of synthetic polymers is one of the tasks of modern biotechnology. Microorganisms, in particular microscopic fungi, are able to colonize synthetic polymers and damage them.

Fungi are the leading group of microorganisms for the biodegradation of synthetic polymeric materials. The Center is the successor of many years of research work on the development of a comprehensive assessment of microbial degradation of synthetic polymeric materials for space technology. The Center collection includes more than 1000 strains of fungi of cultures isolated from manned spacecraft and destroyed materials.

In the process of microbial degradation, microbial communities which can contain various aggressive or opportunistic forms of microorganisms that can create a sanitary and epidemiological hazard to the environment, especially in containment areas and habitable spacecraft.

To develop methods for recycling waste polymers, knowledge about the species spectrum of destructor fungi is required. Information about the species diversity, relative abundance and occurrence of these types of fungi on various polymeric materials contributes to the simultaneous solution of two interrelated problems:

1. Recycling waste and garbage of synthetic origin to solve ecological problems and protect the environment. And second.
2. Creation of promising and most tolerant to biodamage classes of synthetic polymeric materials used in various techniques.

In polymer biodamages, only one species is present in 20% of cases; in the vast majority of cases, 3 or more types of filamentous fungi are present. Development outside associations is typical for *A.oryzae*, *A.puniceus*, *Aureobasidium pullulans*. The most common fungal associations are represented by species of the genera *Aspergillus*, *Penicillium*, less often - *Alternaria*, *Aspergillus*, *Penicillium*, and even more rarely - *Alternaria*, *Aspergillus*, *Penicillium*, *Fusarium* [1].

In general, the following types of micromycetes are most often found on various polymeric materials in descending order: *A. niger*, *A. terreus*, *Alternaria alternata*, *A. tamarii*, *A. flavus*, *P. aurantiogriseum*, *Fusarium sp.*, *P. chrysogenum*, *A. candidus*, *Trichoderma viride*, *Chaetonium olivaceum* [2]. The most intensive growth of fungi was observed, as a rule, on artificial leather, and then, in decreasing order, followed - rubber technique materials, polyimides, polyesters, fluoroplastics. As seen on the tab. 2, depending on the synthetic polymeric material, growths are formed on it, represented by microbial associations of different composition.

Table 2.

Degrading fungi found in biodamaged polimeric materials

Polimeric materials	Species of fungi - destructors
Silicone materials	<i>Aspergillus niger</i> , <i>A. terreus</i> , <i>A. tamarii</i> , <i>A. flavus</i> , <i>A. candidus</i> , <i>Alternaria alternata</i> , <i>Scopulariopsis brevicaulis</i> , <i>Fusarium sp.</i> , <i>A. fimigatus</i> , <i>Chaetomium olivaceum</i> , <i>A. unilateralis</i> , <i>Penicillium auruntiogriseum</i> , <i>P. aeneum</i>
Fluoroplastics	<i>A. niger</i> , <i>A. terreus</i> , <i>A. flavus</i> , <i>A. candidus</i> , <i>P. auruntiogriseum</i> , <i>Alternaria alternata</i> , <i>A. tamarii</i> , <i>Trichoderma viride</i> , <i>Fusarium sp.</i> , <i>Oidiodendron sp.</i> , <i>P. chrysogenum</i> , <i>A. phoenicus</i>
Polyamides	<i>A. niger</i> , <i>A. terreus</i> , <i>A. candidus</i> , <i>A. flavus</i> , <i>Alternaria alternata</i> , <i>Fusarium sp.</i> , <i>Mucor sp.</i> , <i>Trichoderma viride</i> , <i>A. tamarii</i> , <i>Chaetomium olivaceum</i> , <i>P. auruntiogriseum</i> , <i>P. variable</i> , <i>P. simplicissimum</i> , <i>P. funiculusum</i>
Polyimides	<i>A. terreus</i> , <i>A. tamarii</i> , <i>Fusarium sp.</i> , <i>A. niger</i> , <i>P. chrysogenum</i> , <i>A. flavus</i> , <i>P. auruntiogriseum</i> , <i>Trichoderma viride</i>
Polyesters	<i>A. terreus</i> , <i>A. niger</i> , <i>P. auruntiogriseum</i> , <i>F. oxysporum</i> , <i>Alternaria alternata</i> , <i>C. olivaceum</i> , <i>P. chrysogenum</i>
Rubber materials	<i>Alternaria alternata</i> , <i>A. niger</i> , <i>A. terreus</i> , <i>C. olivaceum</i> , <i>P. chrysogenum</i> , <i>Fusarium sp.</i> , <i>A. ustus</i> , <i>A. tamarii</i> , <i>Mucor sp.</i>
Leatherette	<i>A. ustus</i> , <i>Aspergillus sp.</i> , <i>Alternaria sp.</i> , <i>Penicillium sp.</i> , <i>A. niger</i> , <i>A. terreus</i> , <i>Fusarium sp.</i> , <i>Verticillium sp.</i>
Leather	<i>A. niger</i> , <i>A. terreus</i> , <i>A. flavus</i> , <i>Alternaria alternata</i> , <i>A. candidus</i> , <i>A. tamarii</i> , <i>P. chrysogenum</i> , <i>P. auruntiogriseum</i>
Cellulosic material	<i>A. fumigatus</i> , <i>Aureobazidium pullulans</i> , <i>Chaetomium globosum</i> , <i>Cladosporium herbarum</i> , <i>Paecilomyces variotii</i> , <i>P. auruntiogriseum</i> , <i>P. ochrochoron</i> , <i>P. funiculosum</i> , <i>P. chrysogenum</i> , <i>Scopulariopsis brevicaulis</i> , <i>Ulocladium botrytis</i>

In the biotechnological application of these species for the complete biodegradation of synthetic plastics, various factors must be considered. These factors include cell surface attachment in biofilms, catalytic enzymes involved in the oxidation or hydrolysis of the plastic polymer, metabolic pathways responsible for uptake and assimilation of plastic fragments, and chemical factors that promote or hinder the biodegradation process [3].

The increasing pace of production of new synthetic materials and composites requires the development of test methods for their biostability, mainly through microbial assessment, which

requires the creation of new microbiological kits based on fungi and other microorganisms adapted to the tested materials. Unfortunately, the specificity of the tested materials is usually ignored, although the adaptation of fungi to the deterioration of materials of various compositions is well known. Increasing requirements for polymer materials in space technology, especially for their reliable operation in long-term flights, require more stringent testing of the polymers used for biostability with using certain kits, which are the use of well-established fungal biodegradants [4].

Of more than 1000 strains of various species and different origin of fungal degradants in the Center's Collection, 124 cultures were isolated from biodegraded samples of space technique from the Mir Orbital Complex and the International Space Station (ISS). Among the most important criteria for the selection of fungi were the frequency of detection on various biodegraded materials, abundant growth and sporulation of fungi with high destructive activity, resistance to extreme conditions, the ability to long-term preservation with maintenance of their initial activity. Based on a comparative assessment of various types of degrading fungi, promising strains were selected from biodegraded samples of space technique and 7 new kits were created to study the biostability of polymeric materials.

The resistance of polymeric materials to fungal degradation was evaluated using the current standard kit GOST 1 9.049-91 and the "Commission" kit developed at the Microbial Depository Center (tab. 3).

Table 3.

The composition of standard kits

Kit GOST 9.049-91 (GOST, Russia, c)	Kit "Commission" (MDC)
<i>Aspergillus niger</i> 8133	<i>Alternaria alternata</i> 8265*
<i>Chaetomium globosum</i> 8117	<i>Aspergillus niger</i> 8266
<i>Paecilomyces variotii</i> 8135	<i>Aspergillus puniceus</i> 8267
<i>Penicillium aurantiogriseum</i> 8119	<i>Aspergillus ustus</i> 8268
<i>Penicillium chrysogenum</i> 8128	<i>Aureobasidium pullulans</i> 8269
<i>Penicillium funiculosum</i> 8120	<i>Cladosporium herbarum</i> 8270
<i>Aspergillus flavus</i> 8134	<i>Penicillium funiculosum</i> 8271
<i>Aspergillus terreus</i> 8114	<i>Scopulariopsis brevicaulis</i> 8272
<i>Trichoderma viride</i> 8125	

As shown on the Tab. 4 a result of the tests of the tests, in comparison with the GOST and "Commission" kits, kits 3 and 5 had a higher biodestructive activity with respect to the polymers under study. Kit 5 is of particular interest as it is composed of two strains, which is more convenient than other kits for assessing the biostability of materials.

**Compositions of fungal degradants Kits for biostability tests of polymers
(in brackets: the origin of strains, NE – natural exploitation)**

Kit 1 <i>Alternaria alternata</i> 12115 (ISS) <i>Aspergillus fumigatus</i> 12036 (Mir) <i>A. niger</i> 8133 (GOST) <i>Penicillium chrysogenum</i> 12039 (Mir) <i>P. decumbens (steckii)</i> 8220 (NE)	Kit 2 <i>Aspergillus niger</i> 8266 (Commission) <i>A. versicolor</i> 12086 (Mir) <i>Cladosporium macrocarpum</i> 12043 (Mir) <i>Paecilomyces lilacinus</i> 8221 (NE) <i>Penicillium aurantiogriseum</i> 12050 (Mir)
Kit 3 <i>Aspergillus fumigatus</i> 12101 (Mir) <i>Penicillium chrysogenum</i> 12110 (Mir) <i>P. melinii</i> 12035 (Mir) <i>P. decumbens (steckii)</i> 8220 (NE) <i>Phoma eupyrena</i> 12047 (Mir)	Kit 4 <i>Aspergillus fumigatus</i> 12116 (ISS) <i>Cladosporium sphaerospermum</i> 12098 (ISS) <i>Paecilomyces lilacinus</i> 8221 (NE) <i>Penicillium aurantiogriseum</i> 12132 (ISS) <i>Ulocladium botrytis</i> 12037 (Mir)
Kit 5 <i>Penicillium chrysogenum</i> 12110 (Mir) <i>P. decumbens (steckii)</i> 8220 (NE)	Kit 6 <i>Paecilomyces lilacinus</i> 8221 (NE) <i>Penicillium aurantiogriseum</i> 12050 (Mir)

Summing up the results of our R&D, we can conclude that the use of fungal degraders from biodegraded synthetic polymeric materials should be a mandatory requirement to assess their biostability [5].

Another environmental issue is the disposal of organic matter in the wastewater treatment system. Cheese whey is known to be the largest by-product of the dairy industry in the production of cottage cheese and other fresh cheeses. Disposal of cheese whey is a difficult problem in terms of contamination the wastewater treatment system due to its high content of organic nutrients. It is estimated that 40,000 litres of cheese whey discharged into the city sewer system creates a load equal to domestic wastewater, which is produced by two thousand people [6, 7].

In this regard, there is a significant need for a convenient, cost-effective way to process whey. The dairy industry is considering various approaches to the disposal of cheese whey. However, no commercially practical process has been developed to date for treating cheese whey that substantially eliminates organic waste and essentially converts cheese whey into a commercially useful yeast product [8, 9].

Whey is widely used in bakery to improve the quality and nutritional value of bakery products, however, its use is limited to this only as one of the improvers. Although it is known that yeast grown on whey is a source of essential amino acids (lysine, tyrosine, arginine), which is important in terms of enriching bread with them. However, when cultivating baker's yeast *Saccharomyces cerevisiae* on whey, the yield of absolutely dry yeast does not exceed 10 g/l, due to the fact that they are able to use lactic acid as a carbon source, but not lactose [10].

On the basis of a complex of microbiological and technological works, we have developed a mode of two-stage co-cultivation of cultures of lactic acid bacteria and baker's yeast in order to obtain yeast whey, with its further use as a bread sourdough. Initially, milk whey is fermented with a culture of *Lactobacillus lactis* MDC-10881 at 37°C with an increase in acidity to 160-180° T after 48 hours of cultivation, after which a yeast culture of the strain *Saccharomyces cerevisiae* MDC-9788 is inoculated with further incubation for 36-48 hours at 32°C with the final acidity of the obtained yeast whey in the range of 70-90°T. The method of whey utilization developed by us is completely waste-free.

In contrast to the previously proposed similar approaches to the utilization of cheese whey, when, at the end of the fermentation process, the yeast biomass is separated, and whey with a significant content of organic substances is discharged directly into wastewater treatment systems. The resulting yeast whey can be fully used in the bakery industry. The quality indicators of bread samples baked with dry yeast and yeast whey showed that bread baked with yeast whey, not inferior in terms of volume yield and porosity, surpasses control bread samples made with dry yeast in taste, aroma and shelf life [11].

Antimicrobial resistance (AMR) is also a global challenge. WHO has declared that AMR is one of the top 10 global public health threats facing humanity. Without effective antimicrobials, the success of modern medicine in treating infections would be at increased risk [12].

The MDC collection contains more than 300 species of opportunistic and phytopathogenic bacteria of the genera *Pseudomonas*, *Stenotrophomonas* and *Xanthomonas* isolated from the soil of various geographical areas. These gram-negative bacteria are found on almost any wet surfaces of natural and anthropogenic origin.

One of the characteristic features of representatives of the genera *Pseudomonas*, *Xanthomonas* and *Stenotrophomonas* is their high adaptability to various environmental conditions. This is due to the presence in bacteria of a wide range of enzymes that play an important role in the adaptation and survival of bacteria. The study of the activity of such enzymes as polyphenol oxidase, lipase, as well as proteolytic enzymes showed that the latter are the virulence factor of pathogenic strains. The results also indicate that polyphenol oxidase activity is more common in antibiotic-resistant strains.

Among the strains of the collection, bacteria resistant to the following antibiotics were identified - penicillin, ampicillin, amoxicillin, streptomycin, gentamicin, chloramphenicol, tetracycline, azithromycin, kanamycin, ciprofloxacin, cefixime, ceftriaxone, augmentin (produced by Asteria), while the spectrum of resistance is quite wide - from resistance to one antibiotic to multiresistance to 12 antibiotics. The emergence of antibiotic-resistant pathogenic strains of bacteria belonging to the genera *Pseudomonas*, *Xanthomonas* and *Stenotrophomonas* is a serious threat to the treatment of infectious diseases.

Antibiotic resistance is mainly determined by the presence of antibiotic-destroying enzymes in bacteria (beta-lactamases), the presence of antibiotic-modifying enzymes (nucleotide transferases), the ability of bacteria to eject the antibiotic from the cell (efflux). Interestingly, the strains retained their resistance properties after many years of storage under nonselective conditions. It should also

be noted that the strains show resistance to antibiotics, which appeared much later than the moment the strain was isolated from the environment.

According to WHO reports, the fight against multidrug resistance is one of the 5 priority areas for research in the 21st century. The search and development of new classes of biodegradable, semi-synthetic drugs based on natural antimicrobial compounds is of great medical and environmental importance.

In this regard, the strains of the collection were used to test the antimicrobial properties of various compounds, both synthetic and natural.

The antimicrobial activity and biodegradation potential of the synthesized 5 derivatives of tartaric acid were studied. New synthetic derivatives of tartaric acid: benzyl-, cyclohexyl-, phenylamino complex salts and imides demonstrate antibacterial properties against sensitive and resistant strains of opportunistic and phytopathogenic representatives of *Pseudomonas*, *Stenotrophomonas* and *Xanthomonas*. Cyclohexyl derivatives of tartaric acid are more active against most strains studied. The mechanism of the antibacterial effect is not associated with the acidity of tartaric acid, but is due to the action of functional groups. Resistance to new derivatives of tartaric acid is mainly observed in non-pathogenic soil bacteria of the *P. chlororaphis* group, which have pronounced extracellular polyphenol oxidases. Some of them are capable of biodegradation of benzyl, cyclohexyl, and phenylamino complex salts of tartaric acid, using them as a carbon source.

The study of the enzymatic activity of the strains of the collection will contribute to the identification of enzymes of practical importance.

Literature

1. **Kirk P.M.**, Cannon P.F., David J.C., Stalpers J.A., Ainsworth & Bisby's dictionary of the fungi. 9th edition. CABI Publishing, Wallingford, 2001. - p. 624.
2. **Pitt I.J.**, A laboratory guide to common Penicillium species. Australia, 1991. - p. 188.
3. **Samson R.A.**, Pitt J.I., Integration of Modern Taxonomic Methods for Penicillium and Aspergillus Classification. CRC Press, 2000. - 524 p.
4. **Watanabe T.**, Pictorial atlas of soil and seed fungi: Morphologies of cultured fungi and key to species. 2nd Ed., Boca Raton: CRC Press, 2002. - p. 486.
5. **Gevorgyan S.A.**, Khachatryan N.S., Markosyan L.S., Afrikian E.G., Screening fungal degradants for evaluation of biostability of synthetic polymeric materials. Biolog. J. Armenia, Special Issue, 2016. p. 19-23.
6. **Champagne C.P.**, Goulet J., Lachance R.A., Fermentative activity of baker's yeast cultivated on cheese whey permeate. J. food sci., 54, 5, 1989. p. 1238-1240.
7. **Champagne C.P.**, Goulet J., Lachance R.A., Production of baker's yeast in cheese whey ultrafiltrate. Appl. and Environ. Microbiology, 56(2), 1990. p. 425-430.
8. **Ramachandra B.**, Manjunath H., Prebha R., Krishna R., Standardization of bread dough rise capacity using *Kluyveromyces lactis* and *Saccharomyces cerevisiae*. J.Dairying, Foods & H.S., 28(2), 2009. p. 124-126.

9. **Shilpa Vij.**, Gandhi D.N., Fermentative activity and storage stability of *Kluyveromyces fragilis* 2C1 cultivated on paneer permeate. J. food sci. and technol., 42(4), 2005. p. 307-311.
10. **Ferrari M.D.**, Bianco R., Froche C., Loperena M.L., Baker's yeast production from molasses/cheese whey mixtures, Biotechnol. Letters, 23, 2001. p. 1-4.
11. **Bagiyan V.A.**, Madoyan R.A., Stepanyan M.L., Mixture cultivation lactic acid bacteria and baker's yeast on whey. Biol. J. of Armenia, 48(3-4), 1995. p. 86-89.
12. **International Health Regulations**, 2005.

Վ.Ա. Բագիյան, Ն.Լ. Ղազանչյան, Ն.Ս. Խաչատուրյան

ԿՈՒԼՏՈՒՐԱՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԾՈՒՆԵՐԻ ԴԵՐՈ ԵՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԳԼՈՒԲԱԼ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԻ ՄԵՂՄԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Կենսաբանական ակտիվ միացությունների մանրէաբանական սինթեզը ժամանակակից կենսատեխնոլոգիայի կարևորագույն ուղղություններից է: Այս առումով մեծանում է միկրոօրգանիզմների կուլտուրաների հավաքածուների նշանակությունը, որպես էական կենսատեխնոլոգիական ներուժ և կիրառական արժեք՝ առկա խնդիրների և գլոբալ մարտահրավերների լուծումների շրջանակում:

Առանցքային բառեր. կուլտուրաների հավաքածուներ, սինթետիկ պլաստիկայիններ, մանրէաբանական քայքայում, պանրի շիճուկ, շրջակա միջավայրի անվտանգություն, հակամանրէային կայունություն:

В.А. Багиян, Н.Л. Казанчян, Н.С. Хачатурян

РОЛЬ И ПРАКТИЧЕСКОЕ ПРИМЕНЕНИЕ КОЛЛЕКЦИЙ КУЛЬТУРЫ В СМЯГЧЕНИИ ГЛОБАЛЬНЫХ ВЫЗЫВОВ

Микробиологический синтез биологически активных соединений является одним из важнейших направлений современной биотехнологии. В связи с этим возрастает значение коллекций культур микроорганизмов, представляющих значительный биотехнологический потенциал и практическую ценность в свете решения актуальных проблем и глобальных задач.

Ключевые слова: коллекции культур, синтетические пластики, микробная деградация, подсырная сыворотка, экологическая безопасность, антимикробная резистентность.

Bagiyan Valery Aleksandr – Ph.D. Biological Sciences, Associate Professor (CMSA MES RA).

Ghazanchyan Narine Levon – Deputy Head of Microbial Depository Center (MDC), SPC "Armbiotechnology" of NAS RA.

Khachaturyan Nune Samuel – Head of Sector MDC SPC "Armbiotechnology" of NAS RA.

Presentation date: 13.09.2022

Review date: 19.09.2022

Ս.Բ. Հովհաննիսյան

ՈԱԴԻՈԱԿՏԻՎ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ՄԵՐ ՇՐՋԱՊԱՏՈՒՄ

Ռադիոակտիվության երևույթը մարդը չի տեսնում, չի զգում, բայց նրան հայտնի է, որ այն կարող է հիվանդության՝ անգամ մահվան պատճառ դառնալ, որն էլ երբեմն որոշ մարդկանց մոտ առաջացնում է վախի զգացում: Որտեղի՞ց և ինչպե՞ս է ազդում ռադիոակտիվ ճառագայթումը մարդու և շրջակա միջավայրի վրա:

Ռադիոակտիվությունը նոր երևույթ չէ, և այն գոյություն է ունեցել երկրի վրա շատ ավելի վաղ, քան կյանքն է առաջացել: Երկրագնդի բնակչությունը միշտ ենթարկվել ու ենթարկվում է ճառագայթման՝ հիմնականում ճառագայթահարվում է ճառագայթման բնական աղբյուրներից:

Ճառագայթումն իսկապես վրանգավոր է: Մեծ քանակություններով ճառագայթումը կարող է առաջացնել հյուսվածքների, կենդանի բջիջների քայքայում, իսկ փոքր չափաբաժինների դեպքում կարող է առաջացնել քաղցկեղային հիվանդություններ և խթանել գենետիկական փոփոխություններին:

Առանցքային բառեր. ռադիոակտիվություն, չափաբաժին, ռադիոակտիվ ճառագայթ, ճառագայթման բնական աղբյուր, ռադիոակտիվ մասնիկ, ռադիոակտիվ աղբյուր, քիմիական տարր:

19-րդ դարի վերջը և 20-րդ դարի սկիզբը նշանակալից դեր խաղաց ատոմային ֆիզիկայի նվաճումների համար: Այդ տարիներին աշխարհի գրեթե բոլոր հայտնի ֆիզիկոսներն ու փորձագետները ողջ գիտելիքները և ուշադրությունը բևեռել էին ատոմի միջուկի և նրա դեռևս անհայտ հատկությունների ուսումնասիրությանը: Հենց այդ ժամանակ էլ պարզվեց, որ բնության մեջ կան ոչ մեծ քանակությամբ քիմիական տարրեր, որոնց ատոմի միջուկն անկայուն է՝ տրոհվում է, այն էլ՝ ինքնակամ: Այդ երևույթն անվանեցին ռադիոակտիվություն, որն առաջացել է լատիներեն «ռադիոս» (ճառագայթ) բառից: Այդպիսի հատկություն ունեցող քիմիական տարրերը կոչվում են ռադիոակտիվ:

Ռադիոակտիվության բացահայտումից անմիջապես հետո ուշադրության արժանացավ ճառագայթների կենսաբանական ազդեցությունը: Այսպես, 1895 թ. Ռենտգենի օգնական Վ. Գրուբեն, ռենտգենյան ճառագայթների հետ աշխատելիս, ստացավ ձեռքի այրվածք, իսկ Բեքերելը ստացավ մաշկի ուժեղ այրվածք ռադիումի ճառագայթումից [1]:

Նրանք, ովքեր ուսումնասիրում էին ճառագայթների կենսաբանական ազդեցությունը, և նրանք, ովքեր մասնագիտության բերումով գործ ունեին այդ ճառագայթների հետ ստիպված էին նախազգուշական միջոցներ կիրառել, երբ ճառագայթների կենսաբանական ազդեցության մասին դեռևս ոչինչ հայտնի չէր:

Հետագայում իրականացվեցին բազմաթիվ կենսաբանական գիտափորձեր, և պարզ դարձավ, որ ճառագայթումը կարող է օգտագործվել բուժման նպատակով, մասնավորապես՝ քաղցկեղային գոյացությունների դեպքում: Բուժման նպատակով ճառագայթումն առաջին անգամ կիրառել է Մարի Կյուրին: Նա է բացահայտել ռադիում-226-ը և կազմակերպել դրա օգտագործումը քաղցկեղի բուժման նպատակով: Ռադիոնուկլիդային ախտորոշման հիմնադիր և նշակիր ատոմների մեթոդի «հայր» է համարվում Գեորգ Հևեշին:

Գիտելիքների ձեռք բերման հետ վտանգն աստիճանաբար վերացվեց: Եվ հանկարծ՝ 1945թ-ի ճառագայթումը: Ճառագայթում, որի հետ մինչ այդ գործ ունեին միայն առանձին անհատներ, ներխուժեց ողջ մարդկության կյանքի մեջ: Հերոսիմայի վրա գցված ատոմային ռումբը մեկ օրում շատ ու շատ անգամ ավելի մարդկային կյանքեր տարավ, քան մահացել էին ճառագայթումից կես դարում: Երբ երկու խաղաղ քաղաքների վրա ատոմային ռումբեր գցվեց, ճառագայթման մահաբեր հատկությունների մասին իմացան ոչ միայն ռադիոկենսաբանները, այլև մեր մոլորակի բոլոր բնակիչները [2]:

Մարդիկ երկար ժամանակ չգիտեին, որ իոնացնող ճառագայթումը նրանց հին ու բարի հարևանն է: Ռադիոակտիվությունը նոր երևույթ չէ, և կապել նրա առկայությունն ատոմային էլեկտրակայանների կառուցման կամ միջուկային զենքի ստեղծման հետ սխալ է: Այն գոյություն է ունեցել երկրի վրա շատ ավելի վաղ, քան կյանք է առաջացել: Տիեզերքի առաջացման պահից՝ արդեն 20 միլիարդ տարի, ճառագայթումն անընդհատ տարածվել ու տարածվում է տիեզերքում: Իոնացնող ճառագայթների աղբյուրները գոյություն ունեն ոչ միայն մեզանից դուրս, այլ նրանք կան և ջրում, որը խմում ենք, սննդի մեջ, որն օգտագործում ենք, և օդում, որը շնչում ենք: Նրանք մեր մարմնի մշտական կառուցվածքային մասն են: Ավելին, իոնացնող ճառագայթների բոլոր ձևերը գոյություն են ունեցել միշտ, մեր մոլորակի ծագումից առաջ, կյանքի առաջացման ժամանակ, էվոլյուցիոն գործընթացի բոլոր փուլերում:

Մարդը նույնպես ինչ-որ չափով ռադիոակտիվ է, նրա մշտական ուղեկիցներն են ածխածին-14, կալիում-40 և շատ ուրիշ ռադիոակտիվ իզոտոպներ: Փաստորեն, մարդկությունը միշտ էլ ենթարկվել կամ ենթարկվում է արտաքին միջավայրի մշտական և անհրաժեշտ տարրը հանդիսացող ճառագայթային բնական ֆոնի ազդեցությանը:

Երկրագնդի բնակչության հիմնական մասը ճառագայթահարվում է ճառագայթման բնական աղբյուրներից: Այդ աղբյուրների մի մասն այնպիսին են, որոնցից խուսափելն անհնար է: Դրանցից են՝ տիեզերքից երկրի մթնոլորտի վերին շերտերը թափանցող տարբեր տեսակի ճառագայթները, ինչպես նաև այնպիսի ճառագայթներ, որոնք առաջանում են երկրի ընդերքում գտնվող ռադիոակտիվ նյութերից:

Մարդը ճառագայթման հետ առնչվում է 2 ճանապարհով, նախ՝ օրգանիզմից դուրս գտնվող ռադիոակտիվ նյութերով ճառագայթահարում (արտաքին ճառագայթահարում) և երկրորդը՝ ռադիոակտիվ նյութերը կարող են հայտնվել օդում, ջրում, սննդի մեջ և տարբեր ուղիներով թափանցել օրգանիզմ (ներքին ճառագայթահարում):

Երկրագնդի վրա չկա մի վայր, որտեղ չթափանցեն տիեզերական ճառագայթները: Բայց երկրի տարբեր մասերում դրանք ունեն տարբեր ազդեցություն: Ճառագայթման մակարդակն աճում է տեղանքի բարձրությունից կախված, քանի որ ավելի բարձր տեղանքում օդի քանակությունը քիչ է, իսկ վերջինս պաշտպանիչ էկրանի դեր է կատարում:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ աշխարհում գործող ատոմակայանները ժամանակակից անվտանգության տեխնոլոգիաների ապահովվածության պայմաններում մարդու օրգանիզմի վրա ավելի քիչ վնասակար ազդեցություն ունեն, քան մարդու գործունեության և շրջակա միջավայրի այլ երևույթների հետևանքով առաջացած ճառագայթումից: Մարդու տարեկան ստացած ճառագայթման 78%-ը ձևավորվում է բնական ռադիոակտիվությունից,

իսկ մնացած 22%-ը՝ մարդածին պատճառներից (բժշկական, միջուկային արդյունաբերություն և այլն):

Բնական ճառագայթման ֆոնը երկրագնդի վրա տարբեր է, կախված տարածքի ծովի մակերևույթից ունեցած բարձրությունից, տեղանքի երկրաբանական կառուցվածքից և այլն: Անվտանգ է համարվում մինչև 0,5 մՋվ /ժ մակարդակը (այսինքն մինչև 50 մՌ/ժ): Մինչև 0,2 մՋվ /ժ (այսինքն մինչև 20 մՌ/ժ)՝ առավել անվտանգ մակարդակն է մարդու մարմնի արտաքին ճառագայթահարման դեպքում, երբ բնական ճառագայթային ֆոնը նորմալ է: Քաղաքացիական բնակչության համար չափաբաժնի հզորության վերին սահմանը կազմում է 0,5 մկՋվ/ժ (50մՌ/ժ):

ՀՀ-ում, ինչպես և երկրագնդի բնակչության մոտավորապես 95%-ի մոտ, ճառագայթահարման չափաբաժնի հզորությունը մեկ տարվա ընթացքում հասնում է 0,3–0,6 մՋվ [3]:

Ճառագայթահարման այդ չափաբաժինը ներկայումս մեր մոլորակի համար համարվում է նորմալ, չնայած այն բանի, որ մոլորակի բնակչության մնացած 5%-ը ստանում է տարեկան նորմայից մի քանի տասնյակ անգամ ավելի շատ ռադիոակտիվության չափաբաժին: Օրինակ, Բրազիլիայի, Հարավային Հնդկաստանի և Իրանի տարածքի որոշ շրջանների որոշակի բարձրադիր տեղանքում, մեկ տարվա ընթացքում բնակչությունը ստանում է միջինից 800 անգամ ավելի ճառագայթահարում և այն կազմում է 250 մՋվ: Բնական աղբյուրներից ստացած ճառագայթման ազդեցության մոտ 70%-ը մարդը ստանում է օդի, ջրի և սննդի միջոցով: Օրինակ՝ կապարի իզոտոպները մարդու օրգանիզմ են թափանցում սննդի միջոցով, որը մեծ քանակությամբ կուտակված է հատկապես ձկների օրգանիզմում: Օդի միջոցով ճառագայթման բնական աղբյուրներից առավել ծանրակշիռը համարվում է, անտեսանելի, անհամ, անհոտ՝ ռադոնը, որը 7,5 անգամ ծանր է օդից [2]:

Բնության մեջ ռադոնը հանդիպում է 2 հիմնական ձևով՝ ռադոն–222, ռադիոակտիվ շարքի անդամ, կազմավորվում է U^{238} -ի տրոհման նյութերից և ռադոն–220, ռադիոակտիվ շարքի անդամ, թորիում–232: Ընդհանրապես, ճառագայթահարման մեծ մասը դուրս է գալիս ռադոնի տրոհման դուստր նյութերից, այլ ոչ բուն ռադոնից: Ռադոնը տարածվում է երկրակեղևով մեկ, բայց դրա բաղադրությունը երկրագնդի տարբեր վայրերում տարբեր է:

Տարօրինակ է, բայց փաստ, որ մարդը բնական ճառագայթահարման հիմնական չափաբաժինը ստանում է ռադոնից, այն էլ գտնվելով փակ, չօդափոխվող շինության ներսում:

Քանի որ 222Rn-ը ծանր է օդից, այդ պատճառով այն կուտակվում է նկուղային և ցածր հարկերում, որի հետևանքով անկախ տարվա եղանակից, օրվա ընթացքում ցածր հարկերի բնակիչները, ռադոնի ինտենսիվությունը նվազեցնելու համար, պետք է օրվա մեջ մի քանի անգամ օդափոխեն իրենց բնակարանը:

Ռադիոակտիվությամբ են օժտված նաև շինարարական շատ նյութեր: Ամենատարածված շինարարական նյութերից՝ փայտը, աղյուսը և բետոնը պարունակում են որոշակի քանակությամբ ռադոն, իսկ մեծ ռադիոակտիվությամբ օժտված են մարդու կողմից օգտագործվող գրանիտը, տուֆը, պեմզան և հրակայուն աղյուսը [3]:

Ջուրը՝ որպես շատ կարևոր օգտակար հանածո, օգտագործվում է մարդու կողմից և օժտված է որոշակի ռադիոակտիվությամբ: Կանադայում կատարված ուսումնասիրությունները

ցույց են տվել, որ առաջին 7 թույլների ընթացքում, երբ լոգարանում ջրի ծորակը բացում են՝ Rn-ի քանակը բարձրանում է և 12 թույլ հետո նրա քանակը դառնում է նորմային մոտ [2]:

Բնության մեջ առանձնացնում են U-ային, Th-ային և Rn-ային ջրեր:

Մարդը տարեկան տարբեր արտաքին և ներքին աղբյուրներից ստանում է հետևյալ չափաբաժինները.

- տիեզերական ճառագայթներից՝ սկսած 0.300 միլիՋիվերտ (2000մ բարձրության դեպքում մոտ 3 անգամ ավելի, քան ծովի մակերևույթին).
- հող և լեռնային ապառներ՝ 0.250 - 0.600 միլիՋիվերտ (գրանիտից ավելի շատ՝ մոտ 1 միլիՋիվերտ).
- շենքեր, շինություններ՝ սկսած 0.300 ...
- սնունդ՝ սկսած 0.020 ...
- ջուր՝ 0.010 - 0.100 միլիՋիվերտ (օրական 2 լիտր օգտագործելու դեպքում).
- օդ՝ (Ռադոն 222Rn, Տորոն 220Rn և նրանց տրոհման կարճակյաց դուստրերը)՝ 0.2 - 2 մՋվ:

Մարդը տարեկան միջին հաշվով՝ բնական և տեխնածին աղբյուրներից, ենթարկվում է 0,62 ռկհ (ռենտգենի կենսաբանական համարժեք) ճառագայթման:

Բնակչության համար ճառագայթահարման արդյունարար չափաբաժինը 70 տարում չպետք է գերազանցի՝ 70 մՋվ [4]:

Տարեկան 3 մՋվ համարվում է բնական ռադիոակտիվ աղբյուրներից ստացած նորմալ ցուցանիշ, առողջության համար բացարձակ անվտանգ: Համարվում է, որ դա չի առաջացնում որևէ վնասակար կենսաբանական երևույթներ [3]:

Այնուամենայնիվ, ռադիոակտիվ ճառագայթների շատ մեծ չափաբաժինները վտանգավոր են կենդանի օրգանիզմների համար, և նույնիսկ կարող են նրանց մահվան պատճառ դառնալ: Մոլեկուլյար մակարդակով ճառագայթման ազդեցությունը կարելի է նկարագրել իրադարձությունների հետևյալ հաջորդականությամբ.

- ռադիոակտիվ մասնիկները ներթափանցելով կենսաբանական հյուսվածքներ, ուղղակի կամ անուղղակի առաջացնում են մեծ քանակով ատոմների իոնացում: Ատոմից պոկված էլեկտրոնը կարող է ազատ տեղաշարժվել նյութի մեջ: Ե՛վ ազատ էլեկտրոնը, և՛ իոնիացված ատոմը մոտ 10^{-8} վայրկյանում մասնակցում են ռեակցիաների բարդ շղթայի, որոնց հետևանքով առաջանում են նոր մոլեկուլներ, այդ թվում նաև այնպիսի արտակարգ ռեակցիոնունակ, ինչպիսիք են օրինակ՝ ազատ ռադիկալները:
- Մոտ 10^{-6} վրկ առաջացած ազատ ռադիկալները փոխազդում են ինչպես իրար հետ, այնպես էլ այլ մոլեկուլների հետ, և դեռևս մինչև վերջ չհետազոտված եղանակներով առաջացնում են բջիջների նորմալ գոյատևման համար անհրաժեշտ մոլեկուլների քիմիական ձևափոխում:

Հետագա կենսաքիմիական փոփոխությունները կարող են տեղի ունենալ, ինչպես մի քանի վայրկյան հետո, այնպես էլ ճառագայթահարումից տասնամյակներ հետո և պատճառ դառնալ բջիջների անմիջապես մահվան, դրանցում այնպիսի փոփոխությունների, որոնք կարող են քաղցկեղ առաջացնել:

Սակայն, կլանված չափաբաժինը լիովին չի բնորոշում ճառագայթման հետևանքները: Բանն այն է, որ կլանված չափաբաժնի միևնույն քանակի դեպքում ալֆա-մասնիկների կամ նեյտրոնների ճառագայթումն անհամեմատ ավելի վտանգավոր է, քան բետտա կամ գամմա ճառագայթումը: Պատճառներից մեկն իոնացման տարածական բախշման տարբերությունն է:

Ռադիոակտիվ երևույթների հետ կապված, ճառագայթային հիվանդություններն առաջանում են օրգանիզմի վրա իոնիզացնող ճառագայթման ազդեցությամբ և կարող են կախված լինել ճառագայթման տեսակից, տևողությունից, ծավալից և էներգիայից, որի հետևանքով կարող են առաջանալ՝ լեյկոմա, մազաթափություն, անպտղություն, վիժում, մուտացիա, գենետիկ փոփոխություններ, քաղցկեղ և այլն:

ՀՀ-ում՝ որպես տեկտոնապես ակտիվ, կտրտված ռելիեֆ ունեցող տարածք, ռադիոակտիվ դաշտը պետք է պարբերաբար ուսումնասիրել, քանի որ ակտիվ հողմնահարման պրոցեսների հետևանքով նստվածքային վերին շերտը կարող է ենթարկվել փոփոխության և դառնալ ռադիոակտիվ: Ռադիոակտիվ վտանգից խուսափելու համար վերջին տարիներին ուսումնասիրություններ են կատարվել Երևանի՝ Քանաքեռ, Նորք, Արաբկիր, Հաղթանակի այգի, Փոքր Կենտրոն և Զեյթուն շրջաններում ու պարզվել է, որ Երևանի կենտրոնում ռադոնի ինտենսիվությունը բարձր է նորմայից [5]:

Մարդու տնտեսական գործունեության արդյունքում երկրի մակերևույթ են դուրս բերվում հսկայական քանակության բնական ռադիոնուկլիդներ: Դրա հետևանքով հնարավոր է տեղային ճառագայթային ֆոնի կտրուկ փոփոխություններ:

ՀՀ ԳԱԱ էկոլոգոնոսֆերային հետազոտությունների կենտրոնի աշխատակիցների կողմից կատարված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ Երևան քաղաքի տարբեր վարչական շրջաններում խմելու ջրի մեջ ռադոնի պարունակությունը խիստ տարբեր է: Այսպես՝ Արաբկիրի և Շենգավիթի շրջաններում խմելու ջրի մեջ ռադոնի քանակությունը մի քանի անգամ բարձր է նորմայից, իսկ Էրեբունի և Քանաքեռ Զեյթուն շրջանների ցուցանիշները գտնվում են նորմայի մեջ: Ուստի անհրաժեշտ է մշտադիտարկում անցկացնել և իրականացնել հատուկ միջոցառումներ՝ նորմայից բարձր շրջաններում ռադիոակտիվության ինտենսիվության փոքրացման համար [5]:

Այսպիսով, բնակչության բնական ռադիոակտիվ աղբյուրներից ճառագայթահարման նվազեցման հիմնական ուղիներն են.

- բարձր մակարդակի ճառագայթահարված բնակչության խմբերի հայտնաբերման նպատակով իրականացնել մշտադիտարկում և ճառագայթահարման նվազեցմանն ուղղված միջոցառումներ.
 - Շենքերն ու շինությունները կառուցել այն վայրերում, որոնք ունեն գամմա ճառագայթման նվազագույն ցուցանիշներ.
 - շենքերի կառուցման համար օգտագործել ցածր բնական ռադիոնուկլիդների պարունակությամբ շինանյութեր.
 - ապահովել շինությունների օդափոխության անհրաժեշտ մակարդակը;
- Վերը բերված փաստերը թույլ են տալիս անել հետևյալ եզրակացությունները՝

1. ՀՀ-ում անհրաժեշտ է պարբերաբար իրականացնել ռադիոակտիվ դիտարկումներ,

2. անհրաժեշտ է մշտապես վերահսկել ռադիոակտիվ տարրերի պարունակությունը մարդու կողմից օգտագործվող սննդի, ջրի և օդի մեջ,
3. անկախ տարվա եղանակից, օրվա ընթացքում անհրաժեշտ է օդափոխել բնակելի շենքերն ու շինությունները ռադոնի ինտենսիվությունը նվազեցնելու նպատակով,
4. անհրաժեշտ է հաշվի առնել օգտագործվող շինանյութի ռադիոակտիվությունը շինարարական աշխատանքներ իրականացնելիս:

Գրականություն

1. **Լուչնի Ն.**, Անտեսնելի ժամանակակիցները, «Սովետական գրող», հրատարակչություն, Եր., 1977. – էջ 183:
Luchni N., Antesaneli zhamanakacicnery, «Sovetakan grogh», hratarakchutyun, Er., 1977. – 183 ej.
2. **Банникова Ю.А.**, Радиация: дозы, эффекты, риск. Мир, М.: 1990. – 235 с.
Bannikova Yu.A., Radaciya: dozy, efekty, risk. Mir, M.: 1990. – 235 s.
3. **Фар Г.**, Основы изотопной геологии. Мир, М.: 2006. – 178 с.
Far G., Osnovy izotopnoy geologii. Mir, M.: 2006. – 178 s.
4. **ՀՀ Կառավարության** «Ճանապարհային անվտանգության նորմերը հաստատելու մասին» 18.08.2006թ. N 1219-Ն որոշում:
HH karavarutyun «Charagaytayin anvtangutyun normery hastatelu masin» 18.08.2006t. N 1219-N voroshum:
5. **Бабурян М.Г.**, О некоторых закономерностях поведения радона в поляризованных узлах глобальной сети Хартмана. // Вестник МАНЭБ, 2005, т. 10, № 5, с. 11–14.
Baburyan M.G., O nekotorykh zakonomernostyakh povedeniya radona v polyarizovannykh uzлах globalnoy seti Khartmana. // Vestnik MANEB, 2005, т. 10, № 5, с. 11–14.

С.Б. Оганнесян

РАДИОАКТИВНЫЕ ИСТОЧНИКИ В НАШЕЙ СРЕДЕ

Явления радиоактивности человек не видит и не ощущает, но знает, что она может вызывать болезни и даже смерть, что иногда вызывает у некоторых людей чувство страха. Где и как радиоактивное излучение влияет на человека и окружающую среду?

Радиоактивность — явление не новое, она существовала на Земле задолго до возникновения жизни. Население земли постоянно подвергается облучению, в основном, от естественных источников излучения.

Радиация действительно опасна в больших количествах. Она может вызывать разрушение тканей, живых клеток, а в малых дозах может вызывать рак и способствовать генетическим изменениям.

Ключевые слова: радиоактивность, доза, радиоактивное излучение, естественный источник радиации, радиоактивная частица, радиоактивный источник, химический элемент.

S.B. Hovhannisyan

RADIOACTIVE SOURCES IN OUR ENVIRONMENT

A person does not see or feel the phenomenon of radioactivity, but he knows that it can cause illness and even death, which sometimes causes a feeling of fear in some people. Where and how does radioactive radiation affect humans and the environment?

Radioactivity is not a new phenomenon and it existed on earth long before life appeared. The population of the earth is always exposed and will be exposed to radiation, mainly from natural sources of radiation.

Radiation is really dangerous. In large amounts it can cause the destruction of tissues, living cells, and in small doses can cause cancer and promote genetic changes.

Keywords: *radioactivity, dose, radioactive rays, natural source of radiation, radioactive particle, radioactive source, chemical element.*

Հովհաննիսյան Սիրուշ Բաղիլի - դասախոս (ՀՀ ԱԻՆ ՃԿՊԱ).

Ներկայացման ամսաթիվը՝ 13.09.2022

Գրախոսման ամսաթիվը՝ 23.09.2022

ՀՏԴ 378

III. ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՄԵԹՈՂԱԿԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

Հ.Շ. Մաթևոսյան, Հ.Պ. Ղարիբյան, Ս.Բ. Հովհաննիսյան, Կ.Մ. Պապիկյան,
Տ.Գ. Հովակիմյան

ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀԵՆԱԿԵՏԱՅԻՆ
ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԱՐՑԵՐ

Հոդվածում ներկայացվում է ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի հենակետային հիմնական դպրոցի գործունեության հայեցակարգային հարցեր «Ճգնաժամ հաղթահարողներ» խմբակի չափորոշիչի, ծրագրերի և մոդուլների նախագծի, ուսուցման գործընթացում՝ գործունեության փեսակների վերաբերյալ: Հիմնավորվում է ծրագրի ներդրման արդիականությունն ու արտակարգ իրավիճակներից և պատերազմի ազդեցությունից բնակչության պաշտպանության, աղետներին դիմակայելու անվտանգության մշակույթի ձևավորման հարցերին անդրադարձը:

Առանցքային բառեր. հիմնական դպրոց, չափորոշիչ, հայեցակարգ, հիմնական գաղափար, ծրագրերի և մոդուլների նախագիծ, գործունեության փեսակ:

21-րդ դարում բնապահպանական, տնտեսական և քաղաքական իրավիճակի կտրուկ վատթարացումը մեծացրել է բնական, տեխնաժին, սոցիալական և համաճարակաբանական աղետների թիվը: Վերջին հարյուրամյակի վիճակագրական տվյալներով աշխարհում հայտնի 350 վտանգներից Հայաստանի տարածքին բնորոշ են 110-ը, որոնցից միայն 10-ն են առավել հաճախակի տեղի ունեցողները [1]: Դրանց թվին են դասվում երկրաշարժերը, հեղեղումները, սողանքները, փլուզումները, սելավները, անտառային հրդեհները և այլն: Բացի բնական վտանգներից, մեր հանրապետությանն առանձնահատուկ են նաև մի շարք տեխնաժին բնույթի վտանգներ: Հանրապետությունում գործում է մոտ 26 քիմիական վտանգավոր օբյեկտ, որտեղ օգտագործվում են ամոնիակ, քլոր, աղաթթու, ազոտական թթու և այլն, շուրջ 24 պոչամբար, որից 7-ը՝ դադարեցված, ավելի քան 1500 հրդեհապայթյունավտանգ օբյեկտ, տարբեր ենթակայության մոտ 84 ջրամբար և այլն:

Հանրապետությունում գործում է նաև ատոմային էլեկտրակայան:

Եթե բնաժին և տեխնաժին վերոհիշյալ վտանգներին ավելացվեն համաճարակների վտանգները, բույսերին, մշակաբույսերին, կենդանիներին յուրահատուկ վտանգները, տեխնոլոգիաների զարգացման գործընթացների հետ կապված առկա և սպասվելիք տարաբնույթ վտանգները, ապա պարզ կդառնա հանրապետությանն առանձնահատուկ վտանգների ողջ շարքը:

Ելնելով մեր երկրի բնակչության պայմաններից, աշխարհագրական դիրքից և այլ գործոններից, կարևորվում է բնակչության մոտ անվտանգության մշակույթի ձևավորումը, ինչը որպես երկարատև ու շարունակական գործընթաց, պետք է սկսել նախադպրոցական կրթական հաստատություններից, շարունակել հանրակրթական դպրոցում, և ընդհանրապես կրթական համակարգում, քանի որ արտակարգ իրավիճակներում առավել խոցելի են երեխաները:

Սույն հայեցակարգային հարցերն ուղղված են հանրակրթության իրականացման ամբողջ ժամանակաշրջանում անվտանգության հետ կապված խնդիրների ու հարաբերությունների բնութագրմանն ու դրանց կարգավորմանը: Այն մշակվել է Հայաստանի Հանրապետության «Հանրակրթության մասին օրենքի» Հոդված 5-ի դրույթների պահանջներին համապատասխան [6]:

Բացի այդ, համաձայն ՀՀ «Հանրակրթության պետական չափորոշիչով» սահմանված՝ միջնակարգ կրթության շրջանավարտի ակնկալվող կարողունակությունների, որոնք իրենց մեջ հնարավորինս ամփոփ ներառում են հանրակրթության հիմնական առաքելությունը՝ ձևավորել քաղաքացի, որն ունի գիտելիքի, հմտությունների, վերաբերմունքի և արժեքների այն ամբողջությունը, որի արդյունքում կունենանք կարողունակ քաղաքացի [7]:

«Ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն» - սովորողներն ընդունակ են ինքնանդրադարձման և ինքնակազմակերպման միջոցով ձգտել ինքնաճանաչման, ձևավորել վստահություն սեփական ուժերի և կյանքի հանդեպ, հաջողությամբ կառավարել սեփական ժամանակը, գիտելիքներն ու հմտությունները, դրսևորել առողջ և անվտանգ կենսակերպ, ինչպես նաև մասնագիտական կողմնորոշում:

«Ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն» - սովորողները նպաստում են ժողովրդավարության, ազատության, բարեվարքության, սոցիալական արդարության և իրավական պետության գաղափարի վրա հենվող հասարակության զարգացմանը, ճանաչում են հասարակության կյանքի մշակութային, պետաիրավական և տնտեսական ոլորտներն ու համակողմանի վերլուծում դրանք, ցուցաբերում են նախաձեռնողականություն, ինքնուրույն որոշումներ կայացնելու, դրանք իրագործելու ունակություն և հետևանքների համար պատասխանատու լինելու պատրաստակամություն:

«Մաթեմատիկական և գիտատեխնիկական կարողունակություն» - սովորողներն առօրյա կյանքում օգտագործում են մաթեմատիկական մտածողություն՝ բնության, հասարակության, մշակույթի ու աշխատանքային ոլորտի երևույթները ճանաչելու և դրանք մաթեմատիկական կառուցվածքների, բանաձևերի, մոդելների, կորերի, աղյուսակների միջոցով հասկանալու համար: Սովորողներն ընկալում են տեխնոլոգիական գիտելիքի կիրառման հնարավորությունները մարդու պահանջմունքների համատեքստում, ճանաչում են մարդու գործունեության արդյունքում ի հայտ եկող փոփոխություններն ու սեփական պատասխանատվությունը:

ՀՀ հանրակրթական դպրոցներում սովորողների անվտանգ կենսագործունեության գործառույթը գործնականում իրականացվում է «Ես և շրջակա աշխարհը» (1-4 դասարաններ), «Նախնական զինվորական պատրաստություն (ՆԶՊ)» (8-11 դասարաններ), «ՔՊ և ԱԻ հիմնահարցեր» (դասղեկական ժամեր՝ 3-րդ, 6-րդ, 7-րդ դասարաններում) առարկաների շրջանակներում: ԱՌՆ և անվտանգ կենսագործունեությանն առնչվող դրույթներ ներառված են հանրակրթական որոշ առարկաների՝ «Աշխարհագրություն», «Կենսաբանություն», «Բնություն», «Ֆիզիկա», Քիմիա» բովանդակության մեջ:

Քաղաքակրթության և հասարակության զարգացման ժամանակակից միտումները պահանջում են վերանայել մոտեցումներն ու դիրքորոշումները վերոնշյալ հիմնախնդրի շուրջ, շեշտադրել նշված նպատակներին տանող գործողությունները՝ իրականացվող շարունակական ու լայնածավալ բարեփոխումների գործընթացում:

Կառավարման համակարգի զարգացման գործընթացի և ճգնաժամերի միջև գոյություն ունի փոխադարձ կապ: Երկար ժամանակ այդ փոխադարձ կապը ժխտվել է, որի հետևանքով, հատկապես զարգացող երկրներում պետության զարգացման ծրագրերը, որպես կանոն, չեն ներառել հնարավոր վտանգների, կամ վտանգավոր երևույթների կանխման, կանխարգելման, դրանցից խոցելիության նվազեցման ենթածրագրեր: Նման ենթածրագրերի բացակայությունը կառավարման համակարգը դարձնում է առավել խոցելի այդ համակարգին սպառնացող տարաբնույթ վտանգներից և վտանգավոր երևույթներից: Ընդհանուր առմամբ կարելի է ասել, որ հիմնականում ճգնաժամերը դիտարկվել են դրանց ծագման դեպքում արձագանքման տեսանկյունից և ոչ որպես հեռանկարային զարգացման մաս: Եթե ճգնաժամն առաջացել է, ապա արձագանքումը նպատակաուղղվել է տարրական պահանջները բարելավելուն և ճգնաժամի հետևանքները վերացնելուն: Ավելին, որոշ դեպքերում ճգնաժամի մեջ հայտնված համայնքներն իրենց տարածքներով հետագա զարգացման համար կարող են համարվել ոչ բարենպաստ համայնքներ (օրինակ՝ բնածին կամ տեխնածին որոշ վտանգավոր երևույթներից առաջացած ճգնաժամերի դեպքում): Զարգացումն ապահովելու համար պետք է ձևավորել նոր **մտածողությամբ** քաղաքացի, իսկ երկրում ընդունված բոլոր ծրագրերը պետք է ներառեն աղետների ռիսկերը [3]:

Վերջին տասնամյակներին դիտվում է աղետալի երևույթների ծագման հաճախականության և դրանց հետևանքների ծավալների աճի գլոբալ միտում, որի հիմնական պատճառներից մեկը՝ դա մարդու կենսագործունեությունն է:

Վտանգներն ու սպառնալիքները մեր իրականության անբաժանելի մասն են դարձել: Ավելին, դրանք անհատների, հասարակությունների և պետությունների ձևավորման ու զարգացման բոլոր փուլերի պարտադիր ուղեկիցներն են և որոշակի տրամաբանությամբ ընթացող գործընթացներն ու իրադարձություններն են, որոնք կարող են վնաս պատճառել մարդուն, սոցիալական խմբին, հասարակությանը, պետությանը և Երկիր մոլորակին, նրանց բարեկեցությանը, ոչնչացնել նյութական, հոգևոր արժեքները, առաջացնել աստիճանական անկում և փակել զարգացման ուղին, անգամ ոչնչացնել նրանց:

Սույն հարցերն ուղղված են հանրակրթության իրականացման ամբողջ ժամանակաշրջանում տարաբնույթ վտանգների ազդեցությունից անվտանգության հետ կապված խնդիրների ու հարաբերությունների բնութագրմանն ու դրանց կարգավորմանը: Դրանք արտացոլում են «Աղետների ռիսկի նվազեցման Սենդայի 2015-2030թթ. Գործողությունների ծրագրում» նշված չորս գերակա ուղղությունները [2].

- 1) աղետների ռիսկի գիտակցում,
- 2) աղետների ռիսկի պետական կառավարման ուժեղացում աղետների ռիսկի հաղթահարման համար,
- 3) ներդրում աղետների ռիսկի նվազեցման ոլորտում դիմակայունության հզորացման համար,
- 4) աղետների պատրաստվածության ամրապնդում՝ արդյունավետ արձագանքում և ավելի արդյունավետ վերականգնում ու վերակառուցում ապահովելու համար»:

Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի հենակետային հիմնական դպրոցի գործունեությունը միտված է՝

- ապագա քաղաքացու մոտ անվտանգության մշակույթի և անվտանգ միջավայրի ձևավորմանը,
- հասարակության և շրջական միջավայրի միջև հակասությունների վերացմանը,
- բնության և մարդու միասնականության, փոխադարձ կապի գաղափարի ձևավորմանը,
- տարբեր իրավիճակներում որոշումների ընդունման հմտությունների ձևավորմանը,
- հիմքային ռիսկի գործոնների նվազեցմանը,
- աղետներին արդյունավետ արձագանքելու պատրաստվածության բարձրացմանը:

Սովորողների շրջանում վտանգներին, աղետներին դիմակայելուն անհրաժեշտ գրագիտության, պատրաստվածության համակարգը բարելավելու նպատակով ուսումնասիրվել և ընդհանրացվել է փրկարարական ծառայությունների մասնագիտացված դպրոցների գործունեության արտասահմանյան լավագույն փորձը (Ճապոնիա, Իտալիա, Ֆրանսիա, Շվեդիա, Գերմանիա, ԱՄՆ, Նիդեռլանդներ, Անգլիա, Շվեյցարիա և այլն):

Ուսուցման գործընթացում գործունեության հիմնական տեսակներ են՝ մասնագիտացված, հատուկ նախագծված կամ խորացված ուսումնասիրության գործնական պարապմունքները:

Գործունեության վերոգրյալ տեսակների կիրառման արդյունքում տեղի է ունենում՝

- տեսական գիտելիքների ձեռքբերում,
- ձեռք բերված գիտելիքների կիրառում գործնական պարապմունքների միջոցով,
- հետազոտությունների, ուսումնասիրությունների իրականացում:

Վերոգրյալ գործունեության տեսակների համալիր կիրառումն իրականացվում է հատուկ խմբակների («Ճգնաժամ հաղթահարողներ») ձևավորման միջոցով, որոնք կարող են գործել նաև դպրոց-բուհ սխեմայով:

«Ճգնաժամ հաղթահարողներ» խմբակի հիմնական գաղափարները և դրանցից բխող վերջնարդյունքները տարրական և միջին դպրոցների համար կառուցված են պարուրաձև զարգացող գիտելիքների, հմտությունների, դիրքորոշումների և արժեքների վրա: Դպրոցների տրված հիմնական գաղափարներն ու վերջնարդյունքներն ապահովում են ուսումնական այլ-ընտրանքային ծրագրերի մշակման մեծ ճկունություն:

«Ճգնաժամ հաղթահարողներ» խմբակի հիմնական գաղափարները սահմանվել են շարունակաբար աճող բովանդակության միջուկը կազմող առանցքային բաղադրիչներով: Բովանդակության առանցքային ամբողջական գծերը տրված են հիմնական գաղափարների երրորդ մակարդակում: 3-րդ մակարդակի հիմնական գաղափարները հիմք են հանդիսացել 1-4-րդ և 5-9-րդ դասարանների վերջնարդյունքների սահմանման ու պարուրաձև զարգացման համար: Այս վերջնարդյունքները մյուս առարկաների, խմբակների վերջնարդյունքների հետ մեկտեղ ձևավորում են Հանրակրթության պետական չափորոշիչով (ՀՊՉ) սահմանված հանրակրթական տարրական և միջին դպրոցների սովորողների ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները:

«Ճգնաժամ հաղթահարողներ» խմբակի ուսուցումը հիմնվում է բնության մեջ, սոցիալական միջավայրում գոյություն ունեցող վտանգներին դիմակայելու, աղետների ռիսկերը նվազեցնելու, աղետների արագ արձագանքման պատրաստվածության, կանխարգելիչ գործողություն-

ների ձեռնարկման գործընթացների տիրապետման, ինչպես նաև սովորողների անվտանգության մշակույթի ձևավորման վրա:

Խմբակի ծրագիրը կառուցվում է 5 հիմնական գաղափարների վրա՝

1. Վտանգներ (Վ)
2. Արտակարգ իրավիճակներ (ԱԻ)
3. Որոնում և փրկում (ՈՓ)
4. Պաշտպանվածություն (Պ)
5. Ռիսկերի կառավարում (ՌԿ):

Գաղափարների իրականացման համար առաջարկվում է գործունեության հետևյալ ձևերը [4, 5].

1. ուսումնական, դերային, իմիտացիոն, զարգացնող խաղեր.
2. խմբային, համագործակցային առաջադրանքներ (դրական փոխկախվածություն, դեմ առ դեմ, խթանող փոխազդեցություն, անհատական հաշվետվություն և պատասխանատվություն, սոցիալական հմտություն, խմբային գործընթաց, փոխներգործուն (ինտերակտիվ) առաջադրանք).
3. իրավիճակների առաջադրում, քննարկում.
4. դասարանական քննարկում և բանավեճ.
5. ցուցադրություն, պատկերազարդում.
6. հրապարակային ներկայացում, շնորհանդես (պրեզենտացիա).
7. ուսուցողական ֆիլմերի դիտում, քննարկում.
8. մրցույթ, վիկտորինա, հանդես.
9. դերային խաղ.
10. էքսկուրսիա, արշավ.
11. համընդհանուր ներառում:

Ուսումնական նյութը ներկայացնելիս պետք է հաշվի առնել, որ սովորողներն ունեն տարբեր ունակություններ և ուսումնական նյութը պետք է մատուցել այնպես, որ հասանելի ու հասկանալի դառնա յուրաքանչյուր սովորողի, ինչպես կրթության առանձնահատուկ պայմանների կարիք (ԿԱՊԿՈԻ) ունեցող, այնպես էլ չունեցող սովորողների համար:

Ըստ անհրաժեշտության, կարելի է տրամադրել սովորողների զգայական կարիքներին համապատասխան լրացուցիչ օժանդակություն, օրինակ՝ շոշափողական կամ մեծացված քարտեզներ, ընկերների օգնությունը դասարանում տեղից տեղ շարժվելու համար, նշաններ, ուսուցիչները կարող են կիրառել ժեստեր, ուսումնական, դիդակտիկ նյութեր, հաղորդակցման տեխնոլոգիաներ: Առանձին սովորողների դեպքում կարող են պետք գալ լրացուցիչ նյութեր ու սարքավորումներ:

Եթե սովորողը լսողության կամ հաղորդակցության խանգարում ունի, ապա պետք է ապահովել այնպիսի պայմաններ, որ նա ունենա հաղորդակցվելու հնարավորություն, օրինակ՝ ժեստերի լեզու, նկարների կիրառում կամ տեխնիկական միջոցներ: Բոլոր տեսանյութերում պետք է ունենալ սուրդոթարգմանություն կամ տիտրերում ապահովել արտասանվող տեքստը:

Տեսողության խանգարումներ ունեցող սովորողների համար պետք է կիրառել տարբեր լուծումներ, օրինակ՝ նկարների չափի փոփոխում, բրայլյան գրի կիրառում: Տեսողության կամ լսողության խնդիր ունեցող սովորողներին պետք է նստեցնել առաջին շարքում:

Ուսուցման մեջ պետք է լայնորեն կիրառել փոխօգնության սկզբունքը: Պարապմունքների ընթացքում, եթե դասարանում կան ԿԱՊԿՈՒ սովորողներ, ապա խմբերի բաժանվելիս, անհրաժեշտ է նրանց հավասարաչափ ներառել բոլոր խմբերում և առավել բարձր առաջադիմություն ունեցող սովորողներին առաջարկել/հանձնարարել, որ հնարավորինս օգնեն նրանց:

Շարժախաղերի ժամանակ անհրաժեշտ է դերերն այնպես բաժանել, որ ԿԱՊԿՈՒ սովորողներն իրենց հնարավորություններին համապատասխան ստանան դերեր և կարողանան մասնակցել գործընթացին:

Սովորողներին տեքստային քարտեր կամ այլ նյութեր տրամադրելիս, ցանկալի է, որ տեքստում չլինեն անձանոթ կամ անհասկանալի բառեր, լինելու դեպքում, յուրաքանչյուր խմբի համար առանձին, ուսուցիչը պետք է մոտենա խմբին և ընթերցի բարձրաձայն՝ սովորողներին բացատրելով բոլոր նոր կամ անհասկանալի բառերը:

Այսպիսով, ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի հենակետային հիմնական դպրոցի «Ճգնաժամ հաղթահարողներ» խմբակի ուսումնական մոդուլների ուսուցման գործընթացում հիմնավորված է արտակարգ իրավիճակներից և պատերազմի ազդեցությունից բնակչության պաշտպանության, աղետներին դիմակայելու անվտանգության մշակույթի ձևավորման հարցերին անդրադարձը: Իսկ ուսուցման գործընթացում կիրառելի են գործունեության բազմազան ձևեր, մեթոդներ, ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաներ, նորարարական, որոնք բարոյահոգեբանական նպաստավոր միջավայրում լիովին կապահովեն սովորողների հետաքրքրվածությունը, ակտիվ մասնակցությունը, սեփական առաջընթացի արձանագրումը, տարբեր կարողություններով սովորողների հավասար ներգրավվածության հնարավորությունը, ուսուցման համագործակցային, աշակերտակենտրոն բնույթը:

Գրականություն

1. **Ասրյան Հ.**, Մամիկոնյան Յու., Մաթևոսյան Հ., Սարաֆյան Կ., Ռազմական և արտակարգ իրավիճակներում վարվելակերպի կանոնների մասին: Ձեռնարկ, Եր., **Asryan H.**, Mamikonyan Yu., Matevosyan H., Sarafyan K., Razmakan ev artakarg iravichaknerum varvelakerpi kanonneri masin: Cernark, Yer., «Stampa», 2001. - 286 ej:
2. «**Աղետների** ռիսկի նվազեցման Սենդայի 2015-2030թթ. Գործողությունների ծրագիր»: United Nations.
«**Aghetneri** riski nvazecman Sendayi 2015-2030tt. Gortsoghutyunneri tsragir»: United Nations.
3. **Մաթևոսյան Հ.Շ.** Ճգնաժամային կառավարում: Մենագրություն, Եր., 2020. – 384 էջ:
Matevosyan H.SH., Chgnazhamayin karavarum: Menagrutyun, Yer., 2020. – 384 ej:
4. **Պետրոսյան Հ.Հ.**, Ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաներ, «Ան-Ջոն» հրատարակչություն. Եր., 2008. – 316 էջ:
Petrosyan H.H., Usucman zhamanakakuc tekhnologianer, «An-Jon» hratarakchutyun. Yer., 2008. – 316 ej:

5. **Պետրոսյան Հ.Հ.**, Ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաներ, II: Հարցերի, առաջադրանքների, թեստերի և խնդիրների ժողովածու, «Ան-Ջոն» հրատարակչություն, Եր., 2008. - 265 էջ:
Petrosyan H.H., Usucman zhamanakakuc tekhnologianer, II: Harceri. Arajadranqneri, testeri ev khndirneri zhoghovatsu, «An-Jon» hratarakchutyun. Yer., 2008. – 265 ej:
6. <https://www.arlis.am/documentview.aspx?docid=94683>. Դիտում՝ 17.03.2022.
7. <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=149788>. Դիտում՝ 17.03.2022.

Г.Ш. Матевосян, А.П. Карибян, С.Б. Оганнесян, К.М. Папикян, Т.Г. Овакимян

КОНЦЕПТУАЛЬНЫЕ ВОПРОСЫ ДЕЯТЕЛЬНОСТИ БАЗОВОЙ ОСНОВНОЙ ШКОЛЫ ГОСУДАРСТВЕННОЙ АКАДЕМИИ КРИЗИСНОГО УПРАВЛЕНИЯ

В статье представлены концептуальные вопросы деятельности базовой основной школы Государственной академии кризисного управления, а именно – критерии, программы и проекты модулей кружка “Преодолевающие кризис” в процессе обучения. Обосновываются актуальность внедрения программы защиты населения от влияния чрезвычайных ситуаций и войны, отражены вопросы формирования культуры безопасности противостояния бедствиям.

Ключевые слова: *основная школа, критерий, концепция, основная идея, проект программ и модулей, вид деятельности.*

H.Sh. Matevosyan, H.P. Gharibyan, S.B. Hovhannisyan, K.M. Papikyan, T.G. Hovakimyan

REGULATORY QUESTIONS OF THE ACTIVITY OF THE BASE PRIMARY SCHOOL OF CRISIS MANAGEMENT STATE ACADEMY

The article presents the conceptual issues of the activities of the base primary school of the Crisis Management State Academy, regarding the standard, project of programs and modules, types of activities in the learning process of the "Crisis Overcomers" group. The relevance of the implementation of the program and the protection of the population from emergency situations and the impact of war, and the formation of a safety culture to withstand disasters are substantiated.

Keywords: *basic school, standard, concept, main idea, project of programs and modules, type of activity.*

Մաթևոսյան Համլետ Շմավոնի – փ/ծ գեներալ-մայոր (ՀՀ ԱԻՆ ՃԿՊԱ).

Ղարիբյան Հայկանդուխտ Պապինի – տեխ. գիտ. թեկնածու, դոցենտ (ՀՀ ԱԻՆ ՃԿՊԱ).

Հովհաննիսյան Սիրուշ Բադիլի – դասախոս (ՀՀ ԱԻՆ ՃԿՊԱ).

Պապիկյան Կարինե Միշայի – մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ (ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ, ՀՀ ԱԻՆ ՃԿՊԱ).

Հովակիմյան Տաթևիկ Գևորգի – (ՀՀ ԱԻՆ ՃԿՊԱ).

Ներկայացման ամսաթիվը՝ 09.09.2022

Գրախոսման ամսաթիվը՝ 19.09.2022

V.A. Bagiyan, N.L. Ghazanchyan, N.S. Khachaturyan, S.A. Gevorgyan

MICROBIAL BIODEGRADATION POLIMERIC MATERIALS

*Data on microbial fouling of various synthetic polymer materials used in space technology are summarized. It has been established that the dominant groups of the microbiota of polymer fouling are the genera of fungi *Aspergillus*, *Penicillium*, *Alternaria*, *Trichoderma* and bacteria *Staphylococcus*, *Micrococcus*, *Corynebacterium*, *Enterococcus*, *Streptococcus*. New experimental associations of degradant fungi have been formed, the conditions and patterns of their interaction have been studied. At the same time, a comparative analysis of the mechanisms of interaction of fungal associations with an assessment of the degree of biostability of polymeric materials was carried out.*

Key words: *biodegradation, fungi, overgrowth, polymers, biostability.*

The processes of microbial destruction and transformation of various substances form the basis of the vital activity of microbial communities, which are determined by the specifics of their physiological and biochemical properties in close connection with the chemical and physical factors of their fouling environment. The fundamental works of V.I. Vernadsky, S.N. Vinogradsky, G.A. Zavarzin and other scientists laid down systematic approaches for interpreting the role of microorganisms in ecology, biochemical cycles, the cycle of elements and other natural processes [1]. On the basis of the work, biotechnologies for the processing and disposal of organic waste with the production of biogas, bioalcohol and other fuels, the extraction of various metals and other valuable products have been developed and are widely used in practice.

The development of the chemistry of synthetic polymers and the huge scale of their production have determined the urgent need for the development of microbiological technologies for the neutralization and destruction of synthetic polymer wastes and many other hazardous substances of petrochemical synthesis. At the same time, the problem of microbial destruction of these materials has a qualitatively new direction, since they are non-natural compounds with which microorganisms have not previously been in contact.

Microbial damage and destruction of synthetic polymer materials are widely known, which is associated with the importance of the process of biodamage of materials, leading to structural and functional disruptions in their operation. Thanks to the processes of microbial degradation of polymers, their destruction and neutralization of the environment from waste is ensured. In the process of microbial destruction, microbial communities are formed on polymeric materials, which are foci of environmental infection. The microbiota can contain various aggressive or opportunistic forms of microorganisms that can create a sanitary and epidemiological hazard to the environment, especially in containment areas and manned spacecraft [2].

The characteristics of the species composition of the microbiota of biodamages of various classes of polymer materials used in space technology deserve special attention. It has been established that the most extensive group of biodegradants is represented by fungi that cause

biodegradation of polymer and other materials. According to the frequency of occurrence and contamination of polymer materials and products from them, representatives of the genera *Staphylococcus*, *Micrococcus*, *Corynebacterium*, *Enterococcus*, *Streptococcus* are dominant among bacteria, among fungi species - *Penicilliumaurantiogriseum*, *P. chrysogenum*, *P. expansum*, *Aspergillusversicolor*, *A.niger*, *Cladosporiumcladosporoides*, *C. sphaerospermum* [3]. It is known that many of the synthetic polymers are susceptible to fouling by associations of bacterial and fungal cultures. Data from the literature and our studies have revealed the ability of microorganisms, including fungi, to assimilate new polymer materials and contribute to their damage, especially under extreme conditions [4].

At the same time, the features of microbial fouling of polymer materials of various compositions have not been studied enough. In this regard, it is important to emphasize the need to characterize the microbial community formed on various polymers in various ecological and geographical conditions, as well as in the process of natural and climatic tests of various durations, to study the composition of the microbiota in the dynamics of fouling and the succession of different types of biodegradants in this process.

The main purpose of the work was to study the characteristics of microbial fouling and damage to different classes of synthetic polymer materials with the development of proposals for the effective use of microbiological methods to assess their biostability.

Microbial damage and destruction of polymer materials is a complex biological, biochemical, and physicochemical process determined by the biology of the microorganism, the physicochemical characteristics of the material, and the external conditions of exposure. In order to provide a comprehensive description of the morphological, physiological, biochemical features, as well as the biodegrading activity of typical strains of degradant fungi and other types of microorganisms, it was necessary to isolate new cultures of biodegradants from samples of synthetic polymer materials, which was carried out according to the scheme of total microbiological analysis. At the same time, the task was set to identify even those microorganisms, including extremophilic forms, under the conditions of enrichment cultures, if they are present in the examined samples in the number of single cells.

The choice of nutrient media and cultivation conditions ensured the isolation of various groups of microorganisms (non-spore-bearing and spore-bearing bacteria, fungi, yeasts, actinomycetes and chemolithotrophic bacteria), as well as their extremophilic forms, namely: acidophiles developing at pH 2-4, alkaliphiles with an optimum growth at pH 9 or more, halophiles developing at NaCl concentrations of 15% or more, psychrophiles growing at +5 +10°C, facultative thermophiles (45-55°C) and obligate (56°C and above).

To identify the species composition of microscopic fungi, the spectrum of their metabolic products and the conditions for the formation of biodamage processes in synthetic polymer and natural materials, the selection of dominant and typical strains of microorganisms was carried out (tab. 1).

Table 1.

Dominant and typical micromycetes isolated from biodamaged space equipment of the Orbital Complex "Mir" and International Space Station (ISS)

Dominant strains	Strain numbers according to Microbial Depository Center Collection	Typical strains
Orbital Complex "Mir"		
Aspegillus versicolor	12091, 12080, 12042, 12084, 12086, 12109, 12089	12042
Aspergillus fumigatus	12094, 12101, 12093, 12036, 12041	12041
Cladosporium macrocarpum	12043	12043
Penicillium aurantiogriseum	12143, 12095, 12051, 12052, 12053, 12096, 12097, 12099, 12100, 12054, 12055, 12056, 12057, 12058, 12059, 12061, 12090, 12062, 12063, 12044, 12064, 12065, 12067, 12069, 12070, 12071, 12133, 12072, 12073, 12074, 12104, 12105, 12075, 12076, 12077, 12078, 12040, 12079, 12050	12044
Penicillium chrysogenum	12110, 12045, 12039	12045
Penicillium melinii	12060, 12102, 12066, 12046, 12035, 12068, 12048, 12038, 12103, 12081, 12082, 12106, 12049, 12083, 12107, 12108, 12085, 12087, 12088, 12046	12046
Phoma eupyrena	12047	-
Ulocladium botrytis	12037	12037
International Space Station (ISS)		
Alternaria alternata	12115	12115
Aspergillus fumigatus	12116, 12123, 12131, 12127	-
Aspergillus sp.	12118, 12119, 12120, 12121, 12122, 12124, 12125, 12126	-
Aspergillus versicolor	12117, 12113, 12114, 12112,	12117
Cladosporium sphaerospermum	12098	12098
Penicillium aurantiogriseum	12132	12132
Ulocladium botrytis	12111	-

Evaluation of relationships between strain types and biodamaging activity of micromycetes is one of the most important tasks. Table 2 presents generalized data on the presence of a certain species specificity of the studied fungal degradants.

Table 2.

Biodamaging activity of degrading fungi of various taxa to some classes of synthetic polymeric materials

Polymer materials	Fungi
Silicon-containing materials	<i>Aspergillus candidus</i> , <i>A. niger</i> , <i>A. fumigatus</i> , <i>A. tamarii</i> , <i>A. terreus</i> , <i>A. unilateralis</i> , <i>Humicola lanuginosa</i> , <i>Paecilomyces variotii</i> , <i>Thermomyces ibadanensis</i>
Fluoroplastics	<i>A. phoenicus</i> , <i>A. tamarii</i> , <i>A. terreus</i> , <i>A. ustus</i> , <i>Penicillium chrysogenum</i> , <i>Trichoderma viride</i>
Polyamides	<i>Alternaria alternata</i> , <i>A. candidus</i> , <i>A. flavus</i> , <i>A. fumigatus</i> , <i>A. tamarii</i> , <i>A. terreus</i> , <i>A. ustus</i> , <i>Fusarium oxysporium</i> var. <i>orthoceras</i> , <i>Paecilomyces variotii</i> , <i>Penicillium solitum</i>
Rubber containing materials	<i>Al. alternata</i> , <i>A. flavus</i> , <i>A. fumigatus</i> , <i>A. terreus</i> , <i>A. ustus</i> , <i>H. grisea</i> var. <i>thermoidea</i> , <i>H. insolens</i> , <i>P. chrysogenum</i> , <i>T. viride</i> , <i>Th. ibadanensis</i> , <i>Olpitrichum</i> sp.
Cellulose	<i>A. fumigatus</i> , <i>Aureobasidium pullulans</i> , <i>Chaetomium globosum</i> , <i>Cladosporium herbarum</i> , <i>Paecilomyces variotii</i> , <i>P. aurantiogriseum</i> , <i>P. ochrochloron</i> , <i>P. funiculosum</i> , <i>P. chrysogenum</i> , <i>Scopulariopsis brevicaulis</i> , <i>Ulocladium botrytis</i>

Active cultures of biodegradants were included in the Fungi Kits for evaluating the biostability of polymers.

Previously, new sets of fungi were developed and proposed to assess the fungi resistance of polymeric materials. They include fungi isolated from biodamaged polymers used in space technology and contain 2 to 5 fungal strains instead of 7-8 or more in the kits used. Their effectiveness has been shown in comparative tests with conventional kits and is substantiated by viability and resistance of strains on polymeric materials, a high degree of reproduction, the absence of toxic properties, and relatively easy storage methods [5].

The following Kits of fungi were tested:

Kit "GOST 9-048-75": *Aspergillus flavus* 8134, *A. niger* 8133, *A. terreus* 8114, *Chaetomium globosum* 8117, *Paecilomyces variotii* 8135, *Penicillium chrysogenum* 8128, *P. aurantiogriseum* 8119, *P. funiculosum* 8120, 812 viride

Kit "Commission": *Alternaria alternata* 8265, *Aspergillus niger* 8266, *A. puniceus* 8267, *A. ustus* 8268, *Aureobasidium pullulans* 8269, *Cladosporium herbarum* 8270, *Penicillium funiculosum* 8271, *Scopulariopsis brevicaulis* 8272;

Kit "New": *Aspergillus fumigatus* 12036, *Penicillium aurantiogriseum* 12040, *P. chrysogenum* 12039, *P. melinii* 12035, *P. melinii* 12038, *Ulocladium botrytis* 12037;

Kit 3: *Aspergillus fumigatus* 12101, *Penicillium chrysogenum* 12110, *P. melinii* 12035, *P. decumbens* 8220, *Phomaepyrena* 12047;

Kit 5: *Penicilliumchrysogenum* 12110, *P. decumbens* 8220.

The biodegrading activity of degradant fungi in association with bacterial strains isolated from the Mir and ISS was studied. Sample data are presented in tab. 3.

Table 3.

Stability of synthetic polymeric materialsto sets of degrading fungi in association with bacteria

(Incubation 28°C, 28 days, assessment of polymer fungus resistance according to 6-point GOST scale)

Fungi and bacteria kits	Degree of fouling of polymer materials, points				
	Poly-ester	Fluoro-layer	Poly-imide	Poly-ethylene	Polyethylene terephthalate
Kit № 3	4	4	5	4	4
Kit № 3 in association with bacilli: <i>Bacillus pumilus</i> 1215, <i>Bacillus licheniformis</i> 11214, <i>Bacillus subtilis</i> 11213	2	2	4	2	4
Kit № 3 in association with bacilli and cocci	2	1	3	2	3
Kit № 5	4	4	5	5	4
Kit № 5 in association with bacilli	2	2	3	3	3
Kit № 5 in association with bacilli and cocci	2	1	2	2	2
Kit "GOST "	3	3	4	3	4
Kit "GOST " in association with bacilli	3	3	4	4	4
Kit "GOST "in association with bacilli and cocci	1	1	3	1	2
Kit "Commission"	3	3	4	4	4
Kit "Commission" in association with bacilli	2	3	4	3	4
Kit "Commission" in association with bacilli and cocci	2	1	2	1	2
Kit "New"	4	3	4	3	4
Kit "New" in association with bacilli	4	3	4	3	4
Kit "New" in association with bacilli and cocci	2	1	2	2	2

It has been established that kits of degrading fungi in association with bacterial cultures somewhat lose their biodegrading activity towards synthetic polymer materials, which may be due to the manifestation of antagonism between these groups of microorganisms. According to the research results, it was found that the most pronounced antagonistic properties of the strains of fungal degradants used in the kits are: *Aspergillusniger* 8133, *A. fumigatus* 12101, *P. aurantiogriseum* 12061, *Penicilliumchrysogenum* 12039.

Fungal degradant strains isolated from samples of space technology materials were tested for biodamaging activity against the most common classes of polymers. The work was carried out on typical representatives of biodegradant cultures, including *Penicilliumaurantiogriseum* 12045, *P. melinii* 12035, *P. chrysogenum* 12039, *Aspergillusfumigatus* 12036, *Ulocladium botrytis* 12037. The results of testing these strains, used separately, revealed their high aggressiveness to fluoroplast samples and polyesters, and the *U. botrytis* strain turned out to be more active towards fluoroplasts

than the above-mentioned sets of fungi. A new set of biodegradant fungi, composed of cultures of biodamaged space technology, generally exceeded the activity of the above sets.

With the use of extremophilic cultures of fungi and bacteria (thermophiles, psychrophiles, halophiles, alkalophiles) isolated and studied from OC "Mir" and other substrates, the conditions for testing them for the biostability of polymeric materials were worked out (tab. 4). Tests of 13 bacterial strains, including 3 *Bacillus brevis* thermophiles, did not reveal their biodamaging activity to polymers.

Taking into account the data obtained, a comparative assessment of the fungus resistance of samples of various fluoroplastics, polyesters and polyimides, including those that passed accelerated climatic tests, using the GOST, "Commission" and "New" kits, was carried out, on the basis of which one can judge the obvious advantages of strains isolated from biodamaged space technology. Microbial fouling is a significant indicator for the development of integrated approaches to characterize the biostability of synthetic polymers with further prediction of their biostability.

Thus, the study of the mechanisms of biodegradation processes and the biodamaging potential of fungi in the destruction of polymer materials will contribute to expanding our understanding of the issues of recycling waste from polymer production and, at the same time, solving methodological approaches for the effective assessment of the biostability of polymer materials.

Table 4.

Isolated and deposited in the MDC extremophilic forms of fungal degradants

Genera, species	Strain numbers according to the MDC collection	Source of isolation
Thermophiles		
<i>Aspergillus fumigatus</i>	8416, 8422, 8440	Резинотехника
<i>A. fumigatus</i>	8435, 10698	Фторопласт
<i>Humicola grisea</i>	8504	Резинотехника
<i>H. grisea</i>	8505	Фторопласт
<i>H. insolens</i>	8502, 8423	Фторопласт
<i>H. insolens</i>	8503	Полиэфир
<i>H. insolens</i>	10695	Полиимид
<i>Malbranchea pulchella</i>	8446	Натуральная кожа
<i>Olpitrichum sp.</i>	8443	Полиамид
<i>Olpitrichum sp.</i>	8511	Резинотехника
<i>Olpitrichum sp.</i>	11698	Фторопласт
<i>Paecilomyces variotti</i>	8425, 8428, 8433	Фторопласт
<i>Scytalidium thermophilus</i>	8421	Резинотехника
<i>S. thermophilus</i>	8432, 10697	Полиамид
<i>S. thermophilus</i>	10696	Полиимид
<i>Thermomyces ibadensis</i>	8507, 8508	Резинотехника
<i>T. ibadensis</i>	8509	Полиамид
<i>Thermomyces lanuginosus</i>	8506	Резинотехника
Thermotolerants		

<i>Genera, species</i>	<i>Strain numbers according to the MDC collection</i>	<i>Source of isolation</i>
<i>Aspergillus fumigatus</i>	12137, 12138, 12139	ՄԿՏ
<i>Penicillium sp.</i>	12141, 12142	ՄԿՏ
	Acidophiles	
<i>Aspergillus fumigatus</i>	12140	ՄԿՏ
Psychrophiles		
<i>Alternaria alternata</i>	12006	ՄԿՏ
Halophiles		
<i>Penicillium chrysogenum</i>	12045, 12110, 12039	ՕԿ ՄԻՐ
<i>P. aurantiogriseum</i>	12052, 12053, 12061, 12078	ՕԿ ՄԻՐ
<i>P. aurantiogriseum</i>	12132	ՄԿՏ
<i>P. melinii</i>	12048, 12066, 12068, 12081	ՕԿ ՄԻՐ
<i>Aspergillus fumigatus</i>	12094, 12101	ՕԿ ՄԻՐ
<i>A.fumigatus</i>	12131	ՄԿՏ
<i>A.versicolor</i>	12113	ՄԿՏ

Literature

1. **Gevorgyan S.A., Khachaturyan N.S., Markosyan L.S., Afrikian E.G.** Screening fungal degradants for evaluation of biostability of synthetic polymeric materials. *Biolog. J. Armenia, Special Issue*, 2016. 19-23 p.p.
2. **Kirk P.M., Cannon P.F., David J.C., Stalpers J.A.** (eds) *Ainsworth & Bisby's dictionary of the fungi*. 9th edition. CABI Publishing, Wallingford, 2001. - 624 p.
3. **Pitt I.J.** *A laboratory guide to common Penicillium species*. Australia, 1991. - 188p.
4. **Samson R.A., Pitt J. I.** *Integration of Modern Taxonomic Methods for Penicillium and Aspergillus Classification*. CRC Press, 2000. - 524 p.
5. **Watanabe T.** *Pictorial atlas of soil and seed fungi: Morphologies of cultured fungi and key to species*. 2nd Ed., Boca Raton: CRC Press., 2002. - 486 p.

Վ.Ա. Բագիյան, Ն.Լ. Ղազանչյան, Ն.Ս. Խաչատուրյան, Ս.Ա. Գևորգյան

ՄԻԿՐՈԲԱՅԻՆ ՀԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՊՈԼԻՄԵՐԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԿԵՆՍԱՔԱՅՔԱՅՈՒՄԸ

Հոդվածում ամփոփված են փիեզերական փեխնիկայում օգտագործվող փարբեր սինթետիկ պոլիմերային նյութերի մանրէների գերաճի վերաբերյալ տվյալները: Հաստատվել է, որ պոլիմերային գերաճի միկրոբիոտայի գերիշխող խմբերն են *Aspergillus*, *Penicillium*, *Alternaria*, *Trichoderma* և *Staphylococcus*, *Micrococcus*, *Corynebacterium*, *Enterococcus*, *Streptococcus* բակտերիաների տեսակները: Ձևավորվել են քայքայող սնկերի նոր փորձարարական համակցություններ, ուսումնասիրվել նրանց փոխազդեցության պայմաններն ու օրինաչափությունները: Միաժամանակ իրականացվել է բնական և

փորձարարական սնկերի համակցությունների փոխազդեցության մեխանիզմների համեմատական վերլուծություն՝ դրանց կենսակայունության ասփիճանի միաժամանակյա գնահատմամբ:

Առանցքային բառեր. կենսաքայքայում, սնկեր, գերած, պոլիմերներ, կենսակայունություն:

В.А. Багян, Н.Л. Казанчян, Н.С. Хачатурян, С.А. Геворгян

МИКРОБНАЯ БИОДЕГРАДАЦИЯ ПОЛИМЕРНЫХ МАТЕРИАЛОВ

*Обобщены данные о микробном обрастании различных синтетических полимерных материалов, используемых в космической технике. Установлено, что доминирующими группами микробиоты полимерных обрастаний являются роды грибов *Aspergillus*, *Penicillium*, *Alternaria*, *Trichoderma* и бактерии *Staphylococcus*, *Micrococcus*, *Corynebacterium*, *Enterococcus*, *Streptococcus*. Сформированы новые экспериментальные ассоциации грибов-деградантов, изучены условия и закономерности их взаимодействия. При этом проведен сравнительный анализ механизмов взаимодействия грибных ассоциаций с оценкой степени биостойкости полимерных материалов.*

Ключевые слова: биодegradация, грибы, обильный рост, полимеры, биостойкость.

Bagiyan Valery Aleksandr – Ph.D. Biological Sciences, Associate Professor (CMSA MES RA).

Ghazanchyan Narine Levon - Deputy Head of Microbial Depository Center (MDC), SPC "Armbiotechnology" of NAS RA.

Khachaturyan Nune Samuel – Head of Sector MDC SPC "Armbiotechnology" of NAS RA.

Gevorgyan Sona Artavazd - Resercher of MDC SPC "Armbiotechnology" of NAS RA.

Presentation date: 17.09.2022

Review date: 27.09.2022

Ս.Ս. Սողոյան, Ս.Գ. Պապոյան

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԻ ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Հոդվածում ներկայացվում է համավարակի պայմաններում հանրակրթական դպրոցներում մանկավարժների նորարարական մասնագիտական գործունեության անհրաժեշտությունը: Ստեղծված իրավիճակներում կարևոր տեղ է զբաղեցնում կրթական գործընթացի նորարարական հեռանկարը: Հոդվածում հիմնավորվում է նորարարական տեխնոլոգիաների և ուսուցման մեթոդների՝ մշակման և կիրառման անհրաժեշտությունը:

Առանցքային բառեր. մանկավարժական գործունեություն, մանկավարժի մասնագիտական գործունեություն, նորարարություն, նորարարական կրթական տեխնոլոգիաներ, համավարակ:

Հայաստանում, պայմանավորված համավարակով ուսումնական գործընթացը տեղափոխվեց առցանց հարթություն: Եթե սմարթֆոններն ավելի վաղ աշակերտներին խանգարում էին կենտրոնանալ ուսումնական գործընթացի վրա, ապա այսօր առանց դրանց պարզապես հնարավոր չէ դասագործընթացը կազմակերպել: Կրթության ոլորտի մասնագետները ստեղծված իրավիճակում հեռավար ուսուցումը համարում են փրկություն, ստեղծված իրավիճակից ելք: Միաժամանակ, աշակերտները օգտվում են համացանցի ընձեռած այլ հնարավորություններից, չնայած նախընտրում են առկա ուսուցումը: Հեռավար ուսուցումը մանկավարժների և աշակերտների համար իսկական հանկարծահաս փորձություն էր, որին պետք էր դիմակայել և ամենայն լրջությամբ վերաբերվել: Համավարակները միշտ տարածվում են արագ տեմպով, ինչը պահանջում է նման արագ վերակառուցում և ուսումնական գործընթացի հարմարեցում ստեղծված իրավիճակին: Մանկավարժների ընդգրկումն առաջավոր կրթական տեխնոլոգիաների որոնման, մշակման և ներդրման ակտիվ գործընթացում պետք է զուգակցվի լրացուցիչ մասնագիտական մոտիվացիայի բարձրացման հետ, նպաստի ընդհանուր և հատուկ գործընթացի ընդունակությունների զարգացմանն ու մանկավարժական վարպետության ավելի բարձր մակարդակի ձևավորմանը [3]:

Նորարարական մոտեցումն անհրաժեշտ է մասնագիտական գործունեության բոլոր բնագավառներում՝ առարկաների ու երևույթների ուսումնասիրության և վերլուծության համար: Մանկավարժական գործունեության բնագավառում նորարարություններն առանձին մասնագետների և մանկավարժական կոլեկտիվների մասնագիտական որոնումների ու մանկավարժական փորձի արդյունք է: Այդ գործընթացը կրում է ոչ թե տարերային բնույթ այլ՝ կազմակերպված [2]:

Հանրակրթական դպրոցում մանկավարժի նորարարական գործունեությունն ուսումնասիրելը ժամանակակից մանկավարժության կարևորագույն խնդիրներից է, քանի որ արդի դարաշրջանում օրեցօր նոր սերունդների առօրյա գործունեության մեջ համացանցի, համակարգիչների դերի մեծացմամբ, գիտելիքի հաղորդումը պարզապես նպատակ լինելուց բացի, փոխվում է մանկավարժի դերն ու գործունեության ոլորտները: Ժամանակաշրջանը հանրակրթական դպրոցի մանկավարժներին ներկայացնում է նոր պահանջներ:

Համավարակն ուղեկցվում է, այսպես կոչված, կարանտինային ռեժիմի ներդրմամբ: Այս ռեժիմը վերաբերում է նաև կրթության համակարգին: Կարանտինի ընթացքում գործում է հեռավար ուսուցման երկու տեսակ՝ ամբողջական և մասնակի: Հեռավար ուսուցման առաջին տեսակը ներառում է կրթական ծրագրի ամբողջական յուրացումը հեռավար կարգով, օգտագործելով հատուկ պլատֆորմ, որի աշխատանքը տրամադրվում է կազմակերպության կողմից: Նման ուսուցման երկրորդ տեսակը բնութագրվում է հեռավար և սովորական պարապմունքների համադրմամբ:

Մանկավարժի նորարարական գործունեությունը ոչ միայն նոր մանկավարժական փորձի ներմուծում է, այլև կրթության որակի բարձրացմանը միտված գործընթացներ են [1]:

Սակայն այժմ կառուցվում է հուսալի, հստակ և ամուր աշխատող համակարգ, որը կլինի ոչ պակաս արդյունավետ, քան դասական առկա ուսուցումը:

Ուսումնական հաստատությունները մինչ այդ էլ օգտվել են տեխնոլոգիական տարբեր նորամուծություններից՝ լսարաններում ինտերակտիվ գրատախտակների, տեսադասերի, համակարգչային թեստերի կիրառություն և այլն: Այսպիսով, համավարակի պայմաններում հեռավար ուսուցման պարագայում դրանց կիրառությունն ավելի կարևոր նշանակություն է ստանում:

Հեռավար ուսուցումը, մեր կարծիքով պետք է ուղղված լինի կրթության բովանդակության նվազագույնի՝ գիտելիքների, կարողությունների, հմտությունների յուրացման ապահովմանը, աշակերտներին հետաքրքիր գործերի մղելուն:

Հայաստանի Հանրապետությունում գործող առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկության միության կողմից մշակված «ՀՀ հանրակրթական համակարգում ինժեներական լաբորատորիաների ներդրման ծրագրի» շրջանակներում նախաձեռնվել և 2014թ-ից իրականացվում է Հայաստանի կրթական համակարգում ինժեներական լաբորատորիաների հիմնման ծրագիր, որի նպատակն է ուժեղացնել Հայաստանում տեխնիկական կրթության բազան, նպաստել դպրոցականների մասնագիտա-մանկավարժական կողմնորոշմանը, պատրաստել տեխնիկական կրթությամբ մասնագիտական աշխատուժ, որը կբավարարի աճող պահանջարկը, ինչպես նաև հնարավորություն կտա մանկավարժներին իրականացնել նորարարական գործունեություն: Ակնկալվում է, որ նմանատիպ կրթության համակարգը կհանգեցնի մտածելակերպի փոփոխության, կդաստիարակի նոր՝ ստեղծարար արժեքներ, որոնք սովորողների և մանկավարժների շրջանում կառողջացնեն սոցիալական արժեհամակարգը:

Որոշ գիտնականներ կրթության մեջ նորարարական գործընթացները ներկայացնում են որպես «սոցիոմշակութային իրականության մարտահրավերներին ակտիվորեն համապատասխանող համակարգ», որն անտեսելով գոյություն ունեցող ավանդույթները, արմատապես փոխում է անձի ուսուցումը, դաստիարակությունը և զարգացումը: Նորարարական գործընթացները ազդում են ոչ միայն մանկավարժական աշխատանքի, դրան բնորոշ մեթոդների և գործիքների վրա, այլև որակապես վերակառուցում են սուբյեկտների նպատակային մեթոդները և արժեքային համակարգը:

Այսպիսով, ժամանակակից գործունեությունը ոչ միայն ընդլայնում է կրթական գործունեության սահմանները բովանդակության և տեխնոլոգիական ապահովման տեսանկյունից, այլև պայմաններ է ստեղծում մանկավարժի անձի զարգացման համար՝ հնարավորություն

ընձեռնելով նրան օգտագործել իր անձնական ստեղծագործական ներդրման, անհատական նախաձեռնողականության, ինքնազարգացման ազատության իրավունքները:

Գործունեության առաջավոր կազմակերպման պահանջները հասարակությանը դնում են զարգացման բոլորովին նոր, հետինդուստրիալ պայմանների մեջ: Նորարարությունը, առաջին հերթին, տարբեր նորույթների ստեղծում, յուրացում և տարածում է:

Նորարական գործունեությանը պետք է պատրաստվել պատշաճ մակարդակով: Մանկավարժը, ով լավ պատրաստված է նորարական գործունեությանը՝

- տիրապետում է մանկավարժական նորարարության ընդհանուր սկզբունքներին,
- արժևորում է նորարարական գործունեության տեղը և դերը կրթական հաստատությունում, դրա կապն ուսումնադաստիարակչական գործունեության հետ,
- կարողանում է հետազոտել այլ ուսուցիչ-նորարարների փորձը,
- կարողանում է քննադատորեն վերաբերել ուսումնադաստիարակչական գործընթացը կազմակերպելու միջոցներին,
- կարողանում է մշակել և հիմնավորել կրթական գործընթացի կատարելագործման նորարարական առաջարկները,
- կարողանում է մշակել նորամուծությունների նախագծեր,
- կարողանում է փորձնական աշխատանքի նպատակներ դնել և պլանավորել այն,
- կարողանում է աշխատել ներգրավված նախագծերի աշխատանքային խմբերում և իրականացնել փորձեր,
- կարողանում է վերլուծել և գնահատել դպրոցում իրականացվող նորարարական գործունեությունը:

Համավարակով պայմանավորված աշխարհն արագ փոխվում է, մի շարք կրթական գործընթացներ վերափոխվում են հեռավար առցանց տարբերակի և, իհարկե, առցանց կրթությունը դառնում է ավանդական կրթության համակարգի անբաժանելի մաս:

Առցանց դասը սկսելու համար անհրաժեշտ է ունենալ՝

1. անհատական/դյուրակիր համակարգիչ կամ գրասալիկ.
2. համացանց (1մբ/վ և ավել, 3G+ կամ 4G ցանց).
3. բարձրախոս/խոսափող (ականջակալ).
4. Zoom հարթակ:

Հեռավար ուսուցումը գուցե ապագայում կկարողանա փոխարինել ավանդական ուսուցմանը: Սակայն դեռ ոլորտում շատ խնդիրներ կան, որոնց առկայության պարագայում դա դեռ տեղի չի ունենում:

Այդ խնդիրներին են՝

1. սահմանափակ հնարավորություններն աշակերտի և ուսուցչի միջև: Եթե անգամ բոլոր միջոցներն առկա են արդյունավետ ուսուցման համար, միևնույն է անմիջական շփումն ուսուցչի հետ հիմնականում բացակայում է:
2. Ղեկավարման անկատարություն: Ավանդական դասարանում ուսուցիչը միշտ կարող է հաշվառել աշակերտներին, տեսնել թե, որ աշակերտն ինչո՞վ է զբաղված, ով ինչպե՞ս է պատրաստվել դասին, իսկ հեռավար ուսուցման ժամանակ նման հնարավորությունից ուսուցիչը զրկված է:

3. Համացանցային թեստավորման ժամանակ աշակերտը հնարավորություն ունի օգտվել համացանցային աղբյուրներից և պատասխանել հարցերին: Քննությունների հետ կապված պահանջվում է ավելի շատ տրամաբանական մտածողություն:

Համավարակի պայմաններն, անկասկած, ազդում են մանկավարժի նորարարական մասնագիտական գործունեության վրա և անմիջականորեն ազդում գործընթացի վրա՝ արմատապես վերափոխելով այն: Հարցն այն է, թե որքանո՞վ է այս ազդեցությունը դրական:

Համավարակը վնասակար ազդեցություն է ունենում հասարակության՝ մասնավորապես ուսումնական գործունեության վրա: Կայացած համակարգերին փոխարինելու են գալիս ուրիշները՝ բոլորովին նորերը: Այս երևույթի արդյունքում կորսվում է ուսուցչի «կենդանի» շփումը սովորողների հետ:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ համավարակը չտարածելու նպատակով հնարավոր է կազմակերպել տնային պարապմունքներ՝ բարձր տեխնոլոգիաների գործադրմամբ: Ուսուցումը նման ձևով իրականացնելու համար ուսումնական գործընթացի կողմերը պետք է նախապատրաստվեն լիարժեք: Առանց անհրաժեշտ գիտելիքների և կարողությունների, գործընթացի նորարարական բաղադրիչի ապահովումը հնարավոր չէ: Որքանո՞վ են զարգացող տեխնոլոգիաները ներդրում կրթական գործընթացում, և արդյո՞ք նման տեխնոլոգիաները կփոխարինեն մանկավարժական վարպետությանը:

Կարևոր է նորարարական կրթական տարածքի կայացման հիմնարար առանցքները նշել սոցիալական իրավիճակին համապատասխան և, որպես հետևանք, օգնել ուսուցչական կազմին որոշակի պայմաններում հաղթահարել ուսուցման և դաստիարակության հաստատված սկզբունքների իրականացման սահմանափակությունը՝ հաշվի առնելով ժամանակակից մանկավարժական զարգացման իրականացման որոշակի փորձը:

Գրականություն

1. **Зинченко В.П.**, Образование, культура, сознание / В.П. Зинченко // Философия образования для XXI века / Под. ред. Н.Н. Пахомова и Ю.Б. Тупталова. – М.: Исследовательский центр по проблемам управления качеством подготовки специалистов. – 2002. С. 87-104.
Zinchenko V.P., Obrazovanie, kultura, soznanie /V.P. Zinchenko//Filosofiya obrazovaniya dlya XXI veka/ Pod. Red. N.N. Pakhomova i Yu.B. Tuptalova. – М.: issledovatel'skiy centr po problemam upravleniya kachestvom podgotovki specialistov. - 2002. P. 87-104.
2. **Игропуло И.Ф.**, Методология разработки теории управления инновационными процессами в образовательном учреждении: Диссертация на соискание ученой степени доктора педагогических наук. [Текст] / И.Ф. Игропуло. – Ставрополь, 2003. – 401 с.
Igropulo I.F., Metodologiya razrabotki teorii upravleniya innovacionnym processam v obrazovatel'nom uchrezhdenii: Dissertaciya na soiskanie uchennoy stepeni doktora pedagogicheskikh nauk.[Tekst]/I.F. Igropulo.-Stavropol, 2003. – 401 p.
3. **Инновации** // Новые ценности образования: тезаурус для учителей и школьных психологов. – М., 2005. – С. 13-17.
Innovacii// Nove cennosti obrazovaniya: tezaurus dlya uchiteley i shkolnykh psikhologov. М., 2005. – P. 13-17.

С.С. Согоян, С.Г. Папоян

НЕОБХОДИМОСТЬ ИННОВАЦИОННОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ ПЕДАГОГОВ В СРЕДНЕЙ ШКОЛЕ В УСЛОВИЯХ ПАНДЕМИИ

Изучение инновационной деятельности педагога в общеобразовательной школе является одной из важнейших проблем современной педагогики, ведь в современную эпоху, когда в повседневной деятельности новых поколений возрастает роль Интернета, компьютеров и смартфонов, когда знания просто перестали быть целью, меняется роль педагога. Современный век требует от педагога общеобразовательной школы целенаправленной инновационной деятельности, которая будет стимулировать творчество обучающихся и их воображение, используя современные технологии и исходя из возрастнo-индивидуальных особенностей обучаемого, будет направлена на раскрытие в нем талантов.

Ключевые слова: педагогическая деятельность, профессиональная подготовка педагога, потребность, инновации, инновационные образовательные технологии, пандемия.

S.S. Soghoyan, S.G. Papoyan

THE NECESSITY OF INNOVATIVE ACTIVITIES OF TEACHERS IN PRESCHOOLS IN CONDITIONS OF THE PANDEMIC

The article presents the need for innovative professional activities for preschoolers in general education schools in the conditions of the epidemic.

The innovative perspective of the educational process takes an important place in the created laws.

The article is based on the necessity of developing and applying innovative technologies and teaching methods.

Keywords: pedagogical activity, professional activity of the pedagogue, innovation, innovative educational technologies, epidemic.

Սողոյան Սպարտակ Սերյոժայի – մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (Շիրակի պետական համալսարան).

Պապոյան Սևակ Գնեղի – («Արմաթ» ինժեներական լաբորատորիա, Շիրակ).

Ներկայացման ամսաթիվը՝ 28.06.2022

Գրախոսման ամսաթիվը՝ 07.07.2022

Ս.Հ. Հարությունյան, Ա.Գ. Դավինյան

ՀՈԳԵՔԱՆԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ՓՐԿԱՐԱՐՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Հողվածում ներկայացվում է փրկարարների գործունեության հոգեբանական առանձնահատկությունները: Ընդգծվում է որոշ հոգեբանական գործոնների նշանակալի դերը փրկարարի աշխատանքի արդյունավետության համար: Անդրադարձ է կատարվում հոգեբանական պատրաստվածության անհրաժեշտությանը, բնութագրվում են հոգեբանական պատրաստվածության տեսակները: Հաշվի առնելով փրկարարների աշխատանքի արտակարգ բնույթը՝ ներկայացվել են նրանց հոգեբանական գիտելիքների ամրապնդմանն ուղղված առաջարկներ:

Առանցքային բառեր. փրկարար, հոգեբանական գործոն, արտակարգ իրավիճակ, հոգեբանական պատրաստվածություն:

Չունենալով արտակարգ իրավիճակներում կենսագործունեության պահպանման ունակություններ, դրանցում արդյունավետ գործելու փորձ, կարողություններ՝ հաճախ մարդիկ հայտնվում են անելանելի իրավիճակում: Դեռ ավելին՝ վտանգի սպառնալիքն անդրադառնում է մարդու օրգանիզմի բոլոր համակարգերի և հոգեկան աշխարհի վրա:

Հատուկ պայմանները, որոնցում սովորաբար հայտնվում են մարդիկ, որպես կանոն, առաջացնում են հոգեբանական և հուզական լարվածություն: Ոմանց մոտ, դա ուղեկցվում է կարևոր կենսական ռեսուրսների կենտրոնացմամբ, մյուսների մոտ՝ աշխատունակության նվազեցմամբ, առողջության վատթարացմամբ, ֆիզիոլոգիական, հոգեբանական, սթրեսային դրսևորումների առաջացմամբ: Վերը թվարկվածները կախված են օրգանիզմի անհատական առանձնահատկություններից, աշխատանքային պայմաններից, դաստիարակությունից, տիրող իրավիճակի մասին տեղեկացվածությունից և վտանգի աստիճանի գիտակցումից: Դժվար իրավիճակներում որոշիչ դեր է խաղում անձի բարոյահոգեբանական վիճակը: Դա է մեծամասամբ որոշում ծայրահեղ պահերին գիտակցված, վստահ և խելամիտ գործողությունների իրականացման պատրաստվածությունը:

Ինչպես գիտենք, փրկարարական գործունեությունն աչքի է ընկնում դեպքերի արագ զարգացմամբ, հավանական վտանգների ու սպառնալիքների բազմազանությամբ: Դրանցում գործող մասնագետներից պահանջվում է ֆիզիկական ու հոգեբանական պատրաստվածության բարձր մակարդակ:

Փրկարարական գործունեության նշանակալի կողմերից է ռիսկի, վտանգի պայմաններում արագ և ճիշտ վճիռների կայացման ու դրանց արդյունավետ իրականացման պահանջը: Գործելով ռիսկի, վտանգի, տարբեր դժվարությունների պայմաններում՝ փրկարարը կարճ ժամանակահատվածում ստանում է մեծաքանակ տեղեկատվություն: Տեղեկատվության ժամանակին և ճիշտ ընկալման, դրանց հիման վրա հետագա վճիռների կայացման և իրականացման գործընթացի ողջ ծանրաբեռնվածությունն ընկնում է փրկարարի արդյունավետ համագործակցության գործառույթների վրա [3]:

Փրկարարների գործունեության հիմնական սկզբունքներն են.

- մարդկանց կյանքի փրկության և առողջության պահպանման առաջնայնությունը.
- փրկարար ուժերի և փրկարարների գործունեությունն արդարացված ռիսկի շրջանակներում.
- փրկարարական կազմավորումների կենտրոնացված կառավարումը.
- փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կատարման, հաղորդակցության ուղիների, կենսաապահովման և ռազմավարական նշանակության օբյեկտների վերականգնման համար փրկարար ուժերի մշտական պատրաստվածությունը [1]:

Փրկարարները պարտավոր են.

- որոնել և միջոցներ ձեռնարկել մարդկանց փրկության ուղղությամբ.
- պատրաստ լինել արտակարգ իրավիճակների կանխման, դրանց հնարավոր հետևանքների նվազեցման և վերացման աշխատանքների իրականացմանը, ցույց տալ առաջին բուժօգնություն.
- կատարելագործել իրենց ֆիզիկական, մասնագիտական, բժշկական, հոգեբանական պատրաստվածությունը.
- կատարելագործել փրկարար ուժերի կազմում իրենց գործելու ունակություններն ու հմտությունները.
- պահպանել փրկարարական աշխատանքների իրականացման անվտանգության կանոնները.
- անվերապահորեն կատարել արտակարգ իրավիճակների կանխման, դրանց հնարավոր հետևանքների նվազեցման և վերացման աշխատանքների ժամանակ իրենց կազմավորումների ղեկավարների հրամանները.
- բնակչությանը բացատրել արտակարգ իրավիճակների ժամանակ անվտանգ գործելակերպի կանոնները՝ արտակարգ իրավիճակների առաջացումը բացառելու նպատակով.
- հավատարիմ մնալ փրկարարի երդմանը [1]:

Փրկարարը պետք է իմանա.

- տեխնաձին և բնաձին վտանգավոր երևույթներից արտակարգ իրավիճակների առաջացման պատճառները, հետևանքները և բնույթը.
- արտակարգ իրավիճակներում անձի անվտանգ մնալու ժամանակը.
- առաջին օգնության տրամադրման մեթոդները.
- ինքնօգնության և ինքնապաշտպանության ապահովման տեխնիկա.
- փլատակներից, վնասված տրանսպորտային միջոցներից, շենքերի վերին հարկերից զոհեր դուրս բերելու մեթոդներ և տեխնիկաներ.
- հոգեբանության և մանկավարժության հիմունքներ [5]:

Փրկարարը պետք է կարողանա.

- գնահատել առկա իրավիճակը և կայացնել լավագույն որոշում.
- համագործակցել աշխատանքի այլ մասնակիցների հետ, կատարել աշխատանք մեկ կամ մի քանի արտակարգ գործոնների (բարձրություն, սահմանափակ տարածք, լուսավորու-

թյան բացակայություն, գազի աղտոտում, ծուխ, եղանակային բարդ պայմաններ և այլն) ազդեցության տակ.

- կատարել տարբեր ծանրության ֆիզիկական աշխատանք հուզական սթրեսի պայմաններում.
- աշխատել բնական և տեխնածին պայմանների փոփոխման ժամանակ.
- աշխատել մարդու ֆիզիկական և հուզական հնարավորությունների սահմաններում.
- հոգեբանական ազդեցություն գործադրել տուժածների վրա, կանխել խուճապը և արագ ստանձնել առաջնորդի դերը [5]:

Փրկարարների մասնագիտական պատրաստվածության այս և այլ պահանջները պայմանավորված են արտակարգ իրավիճակներում այս մասնագիտության մարդկանց գործունեության առանձնահատկություններով: Հոգեբանական վերապատրաստումը, որն իրականացվում է հոգեբանական գիտելիքների և առաջարկությունների հիման վրա, նպաստում է վերը նշված բոլոր պահանջների ավելի լավ յուրացմանը [5]:

Փրկարարների հոգեբանական պատրաստությունը պետք է լուծի հետևյալ խնդիրները՝

1. նպաստի փրկարարների արագ հարմարվողականությանն արտակարգ իրավիճակի գոտում.
2. հոգեբանական ճկունության ձևավորում ճգնաժամային իրավիճակներում աշխատելու համար.
3. ճգնաժամային պայմաններում փրկարարների հոգեբանական աջակցության ցուցաբերում՝ հոգեբանների և բժիշկների բացակայության դեպքում.
4. հոգեբանական կայունության վերականգնումն արտակարգ իրավիճակների ժամանակ գործողությունների իրականացման ընթացքում և դրանց ավարտից հետո [5]:

Արտակարգ իրավիճակներում վարքը վերահսկելն առավել բարդ է, քան նորմալ պայմաններում: Այդ պատճառով, փրկարարներին անհրաժեշտ են այնպիսի կամային հատկանիշներ, ինչպիսիք են՝ վճռականությունը, քաջությունը, ինքնատիրապետումը, դիմացկունությունը, համառությունը և այլն: Հոգեբանական պատրաստվածության կարևորագույն խնդիրներից է հոգեբանական հարմարվողականությունն արտակարգ իրավիճակների գոտում:

Փրկարարների օրգանիզմը պետք է կարողանա հարմարվել արտաքին պայմանների փոփոխությանը: Հոգեբանական հարմարվողականությունը թույլ է տալիս փրկարարներին համարժեք արձագանքել արտակարգ իրավիճակների գոտում ստեղծված իրավիճակին և սահմանված ժամանակում սկսել վթարափրկարարական աշխատանքները: Միևնույն ժամանակ, նրանց աշխատունակությունը մնում է բավարար մակարդակի վրա: Արտակարգ իրավիճակներում փրկարարների արագ հարմարվողականության և առողջության ու աշխատունակության պահպանման համար անհրաժեշտ են հոգեբանական պատրաստության կանխամտածված միջոցառումներ փրկարարական աշխատանքների տարբեր փուլերի ժամանակ [4]:

Հոգեբանական պատրաստվածությունը հոգեբանական աշխատանքի տարրերից միակն է, որը հանդիսանում է բարոյահոգեբանական աջակցության ամենակարևոր բաղադրիչը:

Հոգեբանական պատրաստությունը կարելի է բաժանել 3 խմբի՝

1. ընդհանուր,
2. հատուկ,

3. նպատակային [2]:

Ընդհանուր հոգեբանական պատրաստվածությունը՝ առաջնորդների, հրամանատարների գործողությունն է, անձնակազմի մոտ հայրենասիրության, մասնագիտական ակտիվության, ինքնազոհաբերման պատրաստակամության ստեղծման գործում: Այն ենթադրում է անհրաժեշտ հոգեբանական գիտելիքներով օժտված անձնակազմ, մասնագիտական առաջադրանքների կատարման նկատմամբ հոգեբանական պատրաստվածության և դիմացկունության ձևավորում:

Ընդհանուր հոգեբանական պատրաստությունն իրականացվում է փրկարարների գիտելիքների ձեռքբերմամբ՝ ներառյալ մասնագիտական հոգեբանական, ինչպես նաև արտակարգ իրավիճակների հետևանքների վերացման ժամանակ գիտակցության և հոգեկանի վրա բացասական ազդող գործոնների վերաբերյալ, դրական տրամադրվածության, վճռականության, նպատակաուղղվածության, մոտիվացիայի ձևավորման և պարտականությունների բարեխիղճ կատարման միջոցով [2]:

Հատուկ հոգեբանական պատրաստությունը՝ ենթադրում է անձնակազմի հոգեբանական պատրաստություն և կայուն զարգացում արտակարգ իրավիճակներում փրկարարական և անհետաձգելի աշխատանքների իրականացման ժամանակ: Այն ձևավորում է բարձր հուզական-կամային կայունություն, այսինքն վախին դիմակայելու, կյանքին սպառնացող իրավիճակներում ինքնատիրապետելու ունակություն և խմբային ու միայնակ գործողությունների իրականացման պատրաստակամություն: Հատուկ հոգեբանական պատրաստությունն իրականացվում է ուսումնառության և հատուկ հոգեֆիզիկական պարապմունքների միջոցով:

Հատուկ հոգեբանական պատրաստությունն ապահովում է՝

1. Փրկարարների հոգեբանական հարմարվողականությունն արտակարգ իրավիճակների գոտում:
2. Ճգնաժամային և վտանգավոր իրավիճակներում գործելու փորձի ձեռքբերմանը զուգընթաց հոգեբանական կայունության ձևավորում [2]:

Նպատակային հոգեբանական պատրաստությունը՝ ղեկավարների, հրամանատարների գործունեությունն է անձնակազմի որակային բարձրացման գործում, որոնք նպաստում են հատուկ առաջադրանքների կատարմանը:

Նպատակային հոգեբանական պատրաստության միջոցով իրականացվում է՝

1. Անձնակազմի անմիջական հոգեբանական վերապատրաստում, բնականոն հոգեկան վիճակի ձևավորում, ֆունկցիոնալ գործունեության բարձրացում:
2. արտակարգ իրավիճակներում փրկարարի կողմից գիտակցված և մասնագիտական գործողությունների կատարման հավանականության բարձրացում, ճգնաժամային իրավիճակներում նրա կամային-հուզական կայունության բարձրացում:
3. Փրկարարական և այլ անհետաձգելի աշխատանքների համար անհրաժեշտ նոր տեխնիկայի և սարքավորումների հետ կապված հոգեբանական հարմարվողականության կազմակերպում [2]:

Փրկարարներն իրենց գործունեության ընթացքում արձագանքում են տարբեր բնույթի դեպքերի: Մասնակցում են ավտովթարների, շենք-շինությունների փլուզումների և այլնի հետևանքով մարդկանց փրկման աշխատանքներին, տեսնում են պատկերներ, որոնք կարող են

անմիջականորեն ազդել նրանց հոգեկանի վրա: Հետևաբար, փրկարարների հոգեբանական պատրաստվածությունն անհրաժեշտություն է՝ սթրեսակայունության զարգացման, իրավիճակի ավելի ճշգրիտ գնահատման հնարավորության համար, որն էլ իր հերթին առավել արդյունավետ կդարձնի փրկարարական աշխատանքների իրականացումը, զերծ կպահի հոգեկան առողջության խնդիրների առաջացումից:

Անհրաժեշտ է, որպեսզի փրկարարներն իրենց կյանքը և աշխատանքն այնպես պլանավորեն, որ կարողանան «հոգնածության - հանգստության» ժամանակահատվածը հնարավորինս շատ պահել հավասարակշռության մեջ: Դա կօգնի փրկարարներին ավելի արդյունավետ աշխատանք իրականացնել և լինել ավելի ակտիվ ու պատրաստված [6]:

Հիմնվելով տեսական և գործնական վերլուծությունների վրա առաջարկվում է՝

1. փրկարար ծառայությունում ծառայության անցնելուց առաջ մանրամասն ստուգել տվյալ անձի հոգեբանական պատրաստվածությունը՝ ոլորտում աշխատանքներ իրականացնելու տեսանկյունից:
2. Տարվա մեջ առնվազն մեկ անգամ փրկարարների համար կազմակերպել հոգեբանական դասընթացներ, թեստերի միջոցով պարզել նրանց հոգեբանական պատրաստվածության աստիճանը:
3. Արտակարգ իրավիճակների ժամանակ փրկարարական աշխատանքներում ներգրավված փրկարարներին, աշխատանքների իրականացման ընթացքում, ինչպես նաև աշխատանքների ավարտից հետո ցուցաբերել հոգեբանական աջակցություն:

Գրականություն

1. «Փրկարար ուժերի և փրկարարի կարգավիճակի մասին» ՀՀ օրենք, 25.05.2004թ.: «Prkarar uzheri ev prkarari kargavichaki masin» HH orenq. 25.05.2004t.:
2. **Մատինյան Ա.Հ.**, Դավինյան Ա.Գ., Հրշեջ-փրկարարական անձնակազմի հոգեբանական և ուսումնական պատրաստվածությունը, «Ճգնաժամային կառավարում և տեխնոլոգիաներ» Գիտական հանդես, Եր., 2020. էջ 250-257:
Matinyan A.H., Davinyan A.G., Hrshej-prkararakan
3. **Մկրտումյան Մ.Պ.**, Արտակարգ իրավիճակների հոգեբանություն: Փրկարարների հոգեբանական պատրաստության տեխնոլոգիաներ, Ջանգակ հրատարակչություն, Եր., 2013. - 248 էջ:
Mkrtumyan M.P., Artakarg iravichakneri hogebanutyun: Prkararneri hogebanakan patrastutyan tekhnologianer, Zangak hratarakchutyun: Yer., 2013. - 248 ej:
4. **Антипов В.В.**, Психологическая адаптация к экстремальным ситуациям, Изд-во ВЛАДОС-ПРЕСС, М., 2002. - 176 с.
Antipov V.V., Psikhologicheskaya adaptaciya k ekstremalnym situacijam, Izd-vo VLADOS-PRESS, M., 2002. - 176 s.
5. **Катунович М.Г.**, Психологическая подготовка спасателей. Учебное пособие для спасателей студенческих спасательных отрядов, М., 2007. - 280 с.
Katunovich M.G., Psikhologicheskaya podgotovka spasateley. Uchebnoe posobie dlya spasateley studencheskikh spasatelnykh otryadov, M., 2007. - 280 s.

6. **Самоукина И.В.**, Экстремальная психология, Ассоциация авторов и издателей «ТАНДЕМ», Издательство ЭКМОС, М., 2000. - 288 с.
Samoukina I.V., Ekstremalnaya psikhologiya, Assocaciya avtorov i izdateley «TANDEM», Izdatelstvo EK MOS, M., 2000. - 288 s.

С.Г. Арутюнян, А.Г. Давинян

НЕОБХОДИМОСТЬ ПСИХОЛОГИЧЕСКОЙ ПОДГОТОВКИ В РАБОТЕ СПАСАТЕЛЯ

В статье представлены психологические особенности деятельности спасателей. Подчеркнута значительная роль некоторых психологических факторов для эффективности работы спасателя. Рассмотрена необходимость психологической подготовки, охарактеризованы виды психологической подготовки. Учитывая неординарный характер работы спасателей, были представлены рекомендации, направленные на укрепление их психологических знаний.

Ключевые слова: спасатель, психологические факторы, экстремальная ситуация, психологическая подготовка.

S.H. Harutyunyan, A.G. Davinyan

THE NECESSITY OF PSYCHOLOGICAL PREPARATION IN ACTIVITY OF RESCUERS

The article presents the psychological features of rescuers' activities. The significant role of some psychological factors is emphasized for the effectiveness in the rescuer's work. The importance of psychological preparation is addressed, the types of psychological preparation are characterized. Taking into account the extraordinary nature of rescuers' work, proposals aimed at strengthening their psychological knowledge were presented.

Key words: rescuer, psychological factors, emergency situation, psychological preparation.

Հարությունյան Սոնա Հենրիկի - հոգ. գիտ. թեկնածու, դոցենտ (ԵԲՀ, ՀՀ ԱԻՆ ՃԿՊԱ).

Դավինյան Անժելիկա Գևորգի - ՓԾ լեյտենանտ (ՀՀ ԱԻՆ ՓԾ Արագածոտնի ՄՓՎ).

Ներկայացման ամսաթիվը՝ 24.08.2022

Գրախոսման ամսաթիվը՝ 07.09.2022

Ք. Շիվակու, Դ.Հ. Ալավերդյան

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՂԵՏՆԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

Աղետների լուսաբանումը կարևոր դեր է խաղում աղետների ռիսկի նվազեցման գործում: Այս հոդվածի նպատակն է բարելավել աղետների լուսաբանումը Հայաստանում՝ 1) աղետների լուսաբանման դերի սահմանման, 2) ճգնաժամային հաղորդակցության ոլորտի խնդիրների բացահայտման և 3) աղետների լուսաբանման հեռանկարի առաջարկման միջոցով: Աղետները պետք է լուսաբանվեն ինչպես նախքան, այնպես էլ հետո՝ պետության բոլոր մակարդակներում աղետների ռիսկի նվազեցումը բարելավելու նպատակով: Ճապոնիայի և Հայաստանի իրականացրած համատեղ միջազգային ծրագիրը ցույց տվեց, որ ՋԼՄ-ների շրջանում աղետների մասին գիտելիքի պակասն աղետների լուսաբանման խնդիրներից մեկն է: Վերջապես, հոդվածում նշվել են Հայաստանում աղետների լուսաբանման սկզբունքներն ու առաջարկությունները, որոնք պետք է հաստատվեն կառավարության և ՋԼՄ-ների կողմից՝ հիմնվելով աղետների փաստացի լուսաբանման դեպքերի վրա:

Առանցքային բառեր. աղետների լուսաբանում, լրատվամիջոց, ՋԼՄ, ճգնաժամային հաղորդակցություն, իրազեկվածության բարձրացում, աղետների ռիսկի նվազեցում:

Աղետների ռիսկի կառավարման (ԱՌԿ) և Աղետների ռիսկի նվազեցման (ԱՌՆ) գործընթացում ներգրավված են բազմաթիվ դերակատարներ, այդ թվում՝ կառավարությունը և համայնքը: Զանգվածային լրատվության միջոցները (այսուհետ՝ ՋԼՄ) համարվում են ԱՌԿ և ԱՌՆ կարևոր դերակատարներ, քանի որ կարող են արդյունավետ տեղեկատվություն տարածել տարբեր եղանակներով: Իրականում, լրատվամիջոցները պետք է ակտիվ և ներառական դեր ունենան տեղական, ազգային, տարածաշրջանային և գլոբալ մակարդակներում հանրային իրազեկվածության և ընկալման բարձրացմանը նպաստելու գործում և տարածեն աղետների ռիսկի, վտանգի և, առհասարակ, աղետների, այդ թվում՝ փոքրածավալ աղետների մասին ճշգրիտ և ոչ զգայուն տեղեկատվություն՝ պարզ, թափանցիկ, ընկալելի և մատչելի ձևով՝ ազգային իշխանությունների հետ սերտ համագործակցությամբ [1]: Մասնավորապես, ակնկալվում է ընդունել աղետների ռիսկի նվազեցման հաղորդակցության հատուկ քաղաքականություն, ըստ անհրաժեշտության՝ նպաստել վաղ ազդարարման համակարգերի գործարկմանը և կյանք փրկող պաշտպանական միջոցառումների իրականացմանը, ինչպես նաև խթանել կանխարգելման մշակույթը և համայնքի ակտիվ ներգրավվածությունը հանրային կրթական քարոզարշավներում և հասարակության բոլոր մակարդակներում անցկացվող հանրային քննարկումներում՝ ազգային փորձին համապատասխան: Աղետների ռիսկի նվազեցման 2015-2030 թվականների Սենդայի գործողությունների ծրագրում նշվում է նաև, որ ՋԼՄ-ների միջոցով պետք է խթանել ազգային ռազմավարությունները՝ աղետների ռիսկի նվազեցման թեմայով հանրային կրթությունը և իրազեկվածությունը, այդ թվում՝ աղետների ռիսկի վերաբերյալ տեղեկատվությունը և գիտելիքը ամրապնդելու համար [1]:

Ք. Շիվակուն ուսումնասիրել է ՋԼՄ-ների ներկայիս դերը Ճապոնիայի ԱՌՆ ոլորտում՝ հաշվի առնելով 1995թ. Հանշին-Ավաջի երկրաշարժից և 2011 թ. Արևելյան Ճապոնիայի երկրաշարժից և ցունամիից քաղված դասերը, ինչպես նաև Ճապոնական հեռարձակող կորպորա-

ցիայի՝ Նիպպոն Հոսո Կյոկայի (այսուհետ՝ NHK) դերը: Նրա ուսումնասիրությունը ցույց տվեց, որ ՋԼՄ-ներին անհրաժեշտ է շեշտադրել աղետների կառավարման ցիկլի բոլոր փուլերը և ժամանակին փոխանցել համապատասխան տեղեկատվությունը հնարավոր բոլոր միջոցներով [2]:

Հայաստանն աշխարհի աղետավտանգ երկրներից է: 1988 թ. տեղի է ունեցել Սպիտակի երկրաշարժը, որը հանգեցրել է ավերիչ վնասների, այդ թվում՝ ավելի քան 25000 զոհի [3]:

Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալությունը (այսուհետ՝ ՃՄՀԳ) սկսել է ճգնաժամային հաղորդակցության ծրագիրը 2019 թ-ից՝ կառավարության և ՋԼՄ-ների, ինչպես նաև վերջիններիս ու բնակչության միջև աղետի ժամանակ հաղորդակցությունը բարելավելու նպատակով:

Սույն հոդվածի նպատակն է առաջարկություններ ներկայացնել Հայաստանում աղետների լուսաբանումը բարելավելու ուղղությամբ: Հոդվածի նպատակները ներկայացված են ստորև.

- սահմանել ՋԼՄ-ների դերն աղետների լուսաբանման գործում՝ հիմնվելով Ճապոնիայի փորձի վրա,
- արժարձել ճգնաժամային հաղորդակցության ոլորտում ՋԼՄ-ների խնդիրները, որոնք տեսանելի են դարձել ՃՄՀԳ ծրագրի ընթացքում,
- ուշադրություն դարձնել աղետները լուսաբանող ՋԼՄ-ների խնդիրներին:

Աղետների լուսաբանումը, դրանց մասին պատմելն է: Քանի որ դա սովորաբար արվում է լրատվական ռեպորտաժի ձևաչափով, ապա կարող է դիտվել որպես տեղեկատվության փոխանցում ՋԼՄ-ներից հանրությանը: Աղետների լուսաբանումը կարելի է դիտարկվել որպես լրատվամիջոցների և մարդկանց միջև հաղորդակցություն: Ապահովության, անվտանգության գիտության և տեխնոլոգիաների ու սոցիալական համագործակցության կոմիտեն [4] տալիս է ռիսկի առկայության դեպքում հաղորդակցության կառուցվածքը. ՋԼՄ-ները հանդիսանում են հաղորդակցության դերակատարներ՝ կառավարության, քաղաքացիների, փորձագետների և բիզնեսի հետ մեկտեղ: Ժամանակահատվածը բաժանված է երեք փուլի՝ վերականգնման, աղետի և սովորական: Նպատակներն են կրթությունն ու իրազեկվածության բարձրացումը, վարքագծի փոփոխությունը, վստահության ձևավորումը և մասնակցությունը որոշումների կայացմանը: Բացի այդ, այն դիտարկում է նաև ժամանակը, տարածքը և սոցիալական մասշտաբները: Ժամանակը բաժանվում է 3 մասի՝ կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ: Տարածքն էլ իր հերթին բաժանվում է տեղականի, ազգայինի, միջազգայինի/գլոբալի, իսկ սոցիալական մասշտաբը ներկայացնում է ազդեցությունն անհատների, փոքր խմբերի կամ մեծ խմբերի վրա:

ՋԼՄ-ների կողմից աղետների լուսաբանումը պահանջում է մարդկանց դատողության և գործողությունների համար նյութեր տրամադրելու գործառույթ՝ փաստերի հաղորդման միջոցով, և համապատասխան ու ճշգրիտ տեղեկատվություն տրամադրելու գործառույթ՝ անհանգստությունը մեղմելու, խուճապից խուսափելու և վնասի տարածումը կանխելու համար [5]: Ըստ Նակամուրայի [6], աղետների լուսաբանումն ունի թե՛ «աղետների լուսաբանման և աղետային իրավիճակի մեկնաբանման լրագրողական գործառույթ», թե՛ «աղետների հետևանքով վնասները նվազեցնելու համար տեղեկատվություն տրամադրելու միջոցով աղետների կառա-

վարման գործառույթ»։ Կոնդոն [7] առաջարկել է աղետների լուսաբանման երեք գործառույթ՝ հիմնված աղետների կառավարման ցիկլի վրա՝ հղում անելով Նակամուրայի սահմանմանը.

- «Աղետի լուսաբանում» աղետին արձագանքման փուլում,
- «Վերակառուցման լուսաբանում» հետագա վերականգնման և վերակառուցման շրջանում,
- «Կանխարգելիչ լուսաբանում», որը հիմնականում իրականացվում է սովորական պայմաններում:

Ճապոնիան այն երկրներից է, որտեղ աղետներ հաճախ են տեղի ունենում: Ինչ վերաբերում է երկրաշարժերին, ապա ամենավերջին խոշոր երկրաշարժերն են 1995թ. Մեծ Հանշին-Ավաջի երկրաշարժը և 2011թ. Մեծ Արևելյան Ճապոնիայի երկրաշարժը: Բացի այդ, ամեն տարի տեղի են ունենում տեղատարափ անձրևներ և դրանց հետևանքով առաջացած ջրհեղեղներ: Սակայն աղետները տեղի են ունենում ոչ թե ամբողջ երկրում համատարած, այլ ունեն տեղային բնույթ: Այլ կերպ ասած՝ կա հավանականություն, որ որոշ մարդիկ կարող են ողջ կյանքում չառերեսվել աղետի հետ: Այնուամենայնիվ, ՋԼՄ-ների կողմից աղետների լուսաբանումը կարող է մարդկանց հաղորդել աղետների հետ կապված իրական զգացողություն, նույնիսկ եթե դա իրական փորձառություն չէ: Կանայը և Կատադան [8] քննարկել են աղետների լուսաբանման ազդեցությունն աղետների մասին կրթության վրա: Նրանք նշում են, որ աղետների լուսաբանման բովանդակությունը փոխվում է ժամանակի ընթացքում և բովանդակությունը պետք է հարմարեցվի տվյալ պահին տուժած մարդկանց կարիքներին:

Այսպիսով, կարելի է տեսնել, որ աղետների լուսաբանումը պետք է ժամանակ առ ժամանակ փոխի իր գործառույթը, նպատակը, թիրախը և բովանդակությունը:

Ելնելով վերոնշյալ քննարկումից՝ ներկայացնում ենք աղետների լուսաբանումը՝ համաձայն 5W1H շրջանակի, ինչպես ցույց է տրված աղ. 1-ում:

Աղյուսակ 1.

Աղետների լուսաբանումը՝ ամփոփ

5W1H	Առարկա	Նկարագիր
Ե՞րբ	Աղետների լուսաբանման ժամկետները	Աղետների լուսաբանում պետք է արվի ոչ միայն աղետի ժամանակ, այլև մինչ աղետն ու վերականգնման փուլում:
Որքե՞ղ	Տեղեկատվության աղբյուրը	Պաշտոնական տեղեկատվություն կարելի է ստանալ պատկան մարմիններից, ինչպիսիք են՝ նախարարությունները և ՏԻՄ-երը: Տեղեկատվություն կարելի է ձեռք բերել նրանց կայքէջերի կամ հարցազրույցների միջոցով: Գիտական տեղեկատվություն կարող են տրամադրել նաև համալսարաններն ու ակադեմիական ինստիտուտները: Բացի այդ, կոնկրետ վնասների և խնդիրների մասին կարելի է տեղեկատվություն ստանալ նաև ազդակիր քաղաքացիների հետ հարցազրույցների միջոցով:
Ո՞վ	Աղետները լուսաբանողներն ու այդ լուսաբանման	Տեղեկատվություն տրամադրողներն են լրատվական ընկերությունները և անհատ լրագրողները: Շահառուները հանրությունն է: Այս դեպքում տուժած տարածքի մարդիկ և

5W1H	Առարկա	Նկարագիր
	շահառուները	տուժած տարածքից դուրս գտնվող մարդիկ կարող են առանձին դիտարկվել: Կախված տեղեկատվության տեսակից՝ շահառու կարող է համարվել նաև կառավարությունը:
Ի՞նչ	Աղետների լուսաբանման արդյունքում փոխանցվող տեղեկատվությունը	Տեղեկատվությունը պետք է օգտակար լինի աղետների լուսաբանման թիրախային լսարանի համար: Այն ներառում է վտանգի և երևույթի, վնասների, արձագանքման ու վերականգնման ընթացքի և խնդիրների, ինչպես նաև անհատների և համայնքների կողմից ձեռնարկվելիք գործողությունների մասին տվյալներ:
Ինչու՞	Աղետների լուսաբանման նպատակը	Նախաաղետային փուլի նպատակն է քաղաքացիներին և համայնքներին փոխանցել գիտելիքներ՝ հակազդելու միջոցներ ձեռնարկելու և աղետներին արձագանքելուն պատրաստ լինելու համար: Աղետից անմիջապես հետո նպատակն է հանրությանը տեղեկացնել աղետի իրավիճակի մասին: Նպատակներից մեկը կարող է լինել անհրաժեշտ օգնության ներկայացումը: Վերականգնման փուլում նպատակն է աղետի գոտում և դրանից դուրս ներկայացնել վերականգնման իրավիճակը:
Ինչպե՞ս	Աղետների լուսաբանման ձևը	Տեղեկատվությունը ձեռք կբերվի լրատվամիջոցների լուսաբանումից, համապատասխան գերատեսչությունների, փորձագետների և աղետից տուժածների հետ հարցազրույցներից: Այն կհաղորդվի հեռուստատեսությամբ, ռադիոյով, թերթերով, ամսագրերով և համացանցով:

Հայաստանում աղետների լուսաբանման ոլորտում բացահայտված խնդիրները.

ՃՄՀԳ-ն Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության (ԱԻՆ) հետ տեխնիկական համագործակցության նախագիծն իրականացնում է 2019 թ-ից: Ծրագրի ընթացքում բացահայտվել են էական խնդիրներ:

Հայաստանի կառավարությունը 2012թ. ընդունել է աղետների ռիսկի կառավարման ազգային ռազմավարություն, որի նպատակն է երկրի կայուն զարգացման կարևոր գործոն հանդիսացող՝ աղետների ռիսկի նվազեցման քաղաքականության միջոցով արտակարգ իրավիճակներում բնակչության և տարածքների պաշտպանությունը: Բացի այդ, աղետների ռիսկի կառավարման ազգային ռազմավարության մեջ նշված է, որ ԱԻՆ համակարգում իր առաջնային դերն ունի տեղեկատվության և հանրային իրազեկման բաղադրիչը:

Հիմք ընդունելով վերոնշյալ ազգային ռազմավարությունը՝ 2016 թ. օգոստոսին Հայաստանի կառավարությունը դիմել է Ճապոնիայի կառավարությանը՝ տեխնիկական համագործակցության ծրագիր իրականացնելու խնդրանքով: Ծրագրի նախագիծը կազմելու նպատակով 2017թ. օգոստոսին Հայաստան է գործուղվել կոնտակտային պատվիրակություն: Այն ներկայացրել է հայտում նշված խնդիրների և ծրագրի ուղղվածության վերաբերյալ իր գաղափարները, հստակեցրել, որ ներկայումս Հայաստանում աղետների վերաբերյալ լրատվամիջոցների կողմից պատշաճ լուսաբանման և ԱԻՆ ոլորտում բնակչության իրազեկվածության հարցում

առկա են խնդիրներ և սույն ծրագրի նպատակն է լուծել այդ խնդիրները: 2017թ. նոյեմբերին իրականացված հիմնական պլանավորման ուսումնասիրության արդյունքում հստակեցվել են ծրագրին առնչվող շրջանակները, իրականացման մեխանիզմը, ակնկալվող արդյունքները և գործողությունները, որի հիման վրա ճշգրտվել և քննարկվել է սույն ծրագրի բովանդակությունն ու ստորագրվել հանդիպումների արձանագրություն: Հիմնական պլանավորման ուսումնասիրության արդյունքների հիման վրա 2018 թ. սեպտեմբերին ստորագրվել է քննարկումների արձանագրություն: Աղյուսակ 2-ում ներկայացված է Ծրագրի ընդհանուր նկարագիրը: Ծրագիրն իրականացվել է փուլային պլանավորման միջոցով՝ երկու փուլով: Առաջին փուլում իրականացվել են արդյունք 1-ն ու 2-ը՝ արդյունք 3-ի և 4-ի մանրամասն պլանը կազմելու նպատակով: Ներկայումս իրականացվում է երկրորդ փուլը, որը բաղկացած է արդյունք 3-ից և 4-ից:

Աղյուսակ 2.

Ծրագրի ընդհանուր նկարագիրը

Ծրագրի անվանումը	Աղետների ռիսկի նվազեցման նպատակով ճգնաժամային հաղորդակցության և հանրային իրազեկման բարելավման ծրագիր
Տևողությունը	1-ին փուլ՝ 2019թ. փետրվարից մինչև 2019թ. դեկտեմբեր 2-րդ փուլ՝ 2020թ. հունվարից մինչև 2023թ. հունվար
Գլխավոր նպատակը	Արտակարգ իրավիճակներում բնակչությանը ճիշտ ժամանակին պատշաճ տեղեկության տրամադրում
Ծրագրի նպատակը	Աղետների վերաբերյալ ժամանակին ճշգրիտ տեղեկատվություն տրամադրելու նպատակով համագործակցային միջավայրի ստեղծման միջոցով ԱԻՆ և լրատվամիջոցների՝ ճգնաժամային հաղորդակցության կարողությունների ամրապնդում
Արդյունքները	Արդյունք 1. Հստակեցվել են ԱԻՆ նպատակով ճգնաժամային հաղորդակցության և հանրային իրազեկման խնդիրները և դրանց հնարավոր լուծումները
	Արդյունք 2. Երկրորդ տարուց սկսած նախատեսվող գործողությունների պլանը բերվել է վերջնական տեսքի և իրականացվել են գործողություններ
	Արդյունք 3. Մշակվել են երկրաշարժի, սողանքի, անտառային հրդեհի դեպքում ճգնաժամային հաղորդակցությանն առնչվող գործողությունների ստանդարտ ընթացակարգեր (ԳՍԸ) ԱԻՆ-ի համար և ճգնաժամային հաղորդակցության ուղեցույց՝ ԶԼՄ-ների համար: Մշակված ԳՍԸ-ների և ուղեցույցի հիման վրա պլանավորվել և իրականացվել է գործնական վարժանք՝ ԳՍԸ-ների և ուղեցույցի վերջնականացման նպատակով
	Արդյունք 4. Մշակվել են ճգնաժամային հաղորդակցությանն առնչվող ուսումնական ծրագիր և նյութեր ու դրանց հիման վրա անցկացվել է վերապատրաստում
Համակարարող (Հ/Կ)	Հիմնական Հ/Կ՝ Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարություն և ԶԼՄ-ներ
Ծրագրի իրականացման վայրը	Հայաստանի ամբողջ տարածք (1-ին փուլը՝ միայն Երևանում)

Ծրագրի ընթացքում աղետների լուսաբանմանն առնչվող խնդիրների և դրանց լուծումների վերհանման ուղղությամբ իրականացվել են հետևյալ միջոցառումները.

- ճգնաժամային հաղորդակցության վերաբերյալ դասախոսություն և սեմինար,
- ճգնաժամային հաղորդակցության վերաբերյալ վերապատրաստում:

Դասախոսությունն ու սեմինարն անց են կացվել ԱԻՆ անձնակազմի համար 2019թ., իսկ նույն տարվա ընթացքում անցկացված վերապատրաստման թիրախ են հանդիսացել ինչպես ԱԻՆ անձնակազմը, այնպես էլ ՋԼՄ-ները: Յուրաքանչյուր միջոցառումից հետո ԱԻՆ աշխատանքային խմբի անդամները և ճապոնացի փորձագետները քննարկել են Հայաստանում ճգնաժամային հաղորդակցության ներկա և ցանկալի (իդեալական) իրավիճակը: Քննարկման արդյունքների հիման վրա ՃՄՀԳ-ն [9] վերհանել է աղ. 3-ում ներկայացված խնդիրները և լուծումները:

Աղյուսակ 3.

**ՋԼՄ-ների կողմից տեղեկատվության տրամադրմանն առնչվող խնդիրները
և դրանց լուծումները (աղբյուր՝ ՃՄՀԳ)**

Խնդիր	Լուծում
Աղետների ոլորտում մասնագիտացած լրագրողների քանակը սահմանափակ է:	Պարտադիր չէ, որ յուրաքանչյուր լրատվամիջոց և յուրաքանչյուր լրագրող ունենա աղետների ոլորտի փորձառություն, բայց յուրաքանչյուր ՋԼՄ պետք է կրթի մի քանի լրագրող, ովքեր գիտելիքներ պետք է ունենան աղետների և դրանց կառավարման մասին: Աղետների կառավարումն իրականացվում է ոչ միայն աղետի ընթացքում: Պահանջվում է նյութեր պատրաստել նաև աղետից առաջ և հետո:
Աղետների և աղետների կառավարման վերաբերյալ ՋԼՄ-ների անձնակազմի գիտելիքները բավարար չեն: Արդյունքում դա երբեմն խանգարում է աղետների արձագանքման գործընթացին աղետի վայրում:	Անհրաժեշտ է աղետների կառավարման վերաբերյալ նվազագույն գիտելիքներ փոխանցել լրագրողներին: Հայաստանում, որտեղ աղետների հաճախականությունը մեծ չէ, անհրաժեշտ է նախապես տեղեկատվություն տրամադրել, թե ինչ իրավիճակ կտիրի աղետի ժամանակ:
ԱԻՆ և աղետի ոլորտից բացի այլ ոլորտների լուսաբանումների ժամանակ ՋԼՄ-ներն, ընդհանուր առմամբ, հրապարակում են պաշտոնական տեղեկատվությունն այնպես, ինչպես այն կա, և կան բազմաթիվ նյութեր, որոնք չեն պարունակում լրագրողների տեսակետը: Ներկայումս չի ենթադրվում, որ աղետների կառավարման և աղետների մասին լուսաբանումների ժամանակ լրատվամիջոցների և լրագրողների դերը կփոխվի ըստ իրավիճակի:	Անհրաժեշտ է աղետից անմիջապես հետո ուղարկել կառավարության կողմից տրամադրված տեղեկատվությունը, սակայն պետք է նաև լրագրողների տեսանկյունից լուսաբանել աղետակիր տարածքում տիրող իրավիճակը մինչաղետային, արձագանքման և վերականգնման փուլերում և տարածել այդ տեղեկատվությունն աղետակիր տարածքի ներսում և դրանից դուրս: Անհրաժեշտ է գիտակցել աղետի գոտում տիրող իրավիճակը վերլուծելու կարողությունը: Ծրագրով նախատեսված վերապատրաստումը (Արդյունք 4) կարևոր է:
Կան հոդվածներ տարհանման վարժանքների վերաբերյալ, բայց քիչ են հոդվածները մինչաղետային և վերականգնման փուլում իրականացվող	Հայաստանում, որտեղ խոշոր աղետներ քիչ են տեղի ունենում, մտավախություն կա, որ մարդիկ աղետների ժամանակ խուճապի կենթարկվեն: Չնայած մտավախություն կա, որ ռիսկի մասին որոշ տվյալների

Խնդիր	Լուծում
<i>հաղորդակցության վերաբերյալ:</i>	փոխանցումը կարող է խուճապ առաջացնել, ոփսկերի և աղետներին արձագանքման վերաբերյալ համապատասխան տեղեկատվության տրամադրումը կարող է նվազեցնել խուճապն աղետների ժամանակ: Վերականգնման փուլի ընթացքի վերաբերյալ նյութերն աղետից տուժած տարածքներում իրականացվող գործողությունների, գործադրվող ջանքերի և առկա խնդիրների մասին տեղեկատվության տարածման և այնտեղ գտնվող մարդկանց քաջալերման եղանակներից են: Բացի այդ, դա հնարավորություն է տալիս աղետից տուժած տարածքից դուրս գտնվող մարդկանց մտածել հետագա աղետների մասին: Հետևաբար, Ծրագրով նախատեսված վերապատրաստումը (Արդյունք 4) կարևոր է:
<i>Աղետների կառավարման գործընթացի լուսաբանման ունակությունները մեծ չեն: Լրագրողների խնդիրն է տարածել այն հարցերը, որոնք կառավարությունը չի ընկալում:</i>	Նույնը, ինչ վերևում:
<i>ՁԼՄ-ները չունեն աղետների լուսաբանման քաղաքականություն, իսկ ԱԻՆ-ը չունի լրագրողների համար նախատեսված նյութեր:</i>	Արդյունք 3-ի շրջանակներում կմշակվի ՁԼՄ-ների համար ուղեցույց: Մամուլի ազատության պատճառով ԱԻՆ-ը չի կարող կառավարել լրատվամիջոցների գործողությունները: Հետևաբար, Ծրագրի շրջանակներում կմշակվի ուղեցույց, այլ ոչ թե ԳՍԸ:

ՁԼՄ-ների և լրագրողների աշխատանքի սկզբունքներն արտակարգ իրավիճակներում՝

Հայաստանում վերջին տասնամյակներին գրանցված արտակարգ իրավիճակների, մասնավորապես, երկրաշարժերի, համավարակների, հանրային առողջությանը սպառնացող վտանգների ու սպառնալիքների, սողանքների ու հրդեհների լուսաբանման փորձն առաջին պլան են մղել այն կանոններն ու սկզբունքները, որոնց պետք է հետևեն լրագրողներն իրենց առաքելությունը կատարելիս:

Գործնականում բնակչությանը տեղեկացնելը պետք է նպաստի արդյունավետ որոշումների կայացմանը: Հատկապես արտակարգ իրավիճակներում տեղեկատվության տրամադրման, փոխանակման, որոշում ընդունողների կողմից արդյունավետ որոշումների կայացման հարցում առանձնահատուկ տեղ ունեն նաև պետական գերատեսչություններն ու հատկապես դրանց մամուլի ծառայությունները: Անկախ յուրաքանչյուրի աշխատանքի առանձնահատկությունից, գլխավոր նպատակը պետք է լինի մեկը՝ հասարակական շահը:

Ուստի իրականում արդյունավետ լուսաբանմամբ են պայմանավորված՝

- բնակչության իրազեկվածությունը,
- հնարավոր վտանգներին պատրաստ լինելն ու արդյունավետ որոշումներ կայացնելը,
- հասարակական համագործակցության մեխանիզմների արդյունավետ կիրառումը,

➤ ստեղծված արտակարգ իրավիճակներից անվնաս կամ նվազագույն վնասներով դուրս գալը:

Արտակարգ իրավիճակները լուսաբանող լրագրողների համար առաջարկվող սկզբունքներից շատերը նույնական են՝ անկախ արտակարգ իրավիճակի տեսակից, սակայն կան նաև առանձնահատկություններ:

Արտակարգ իրավիճակներում ՋԼՄ-ների աշխատանքի հիմնական սկզբունքները՝

Լրատվամիջոցները պարտավոր են հանրությանը տրամադրել արտակարգ իրավիճակին (համաճարակներ, տարերային աղետներ և այլն) վերաբերող ողջ տեղեկատվությունը, որը օրենքով գաղտնիք չի համարվում՝ պահպանելով աղ. 4-ում բերված սկզբունքները:

Աղյուսակ 4.

Հիմնական սկզբունքներ

Մարչելիություն	Այս դեպքում տեղեկատվությունը տրամադրվում է հնարավորինս հեշտ, օգտագործելի ձևաչափերով՝ ներառյալ տեղեկատվության տրամադրման online և offline միջոցները, նաև ՋԼՄ-ները: Սա նշանակում է, որ միևնույն տեղեկատվությունը պետք է հասանելի դարձնել պաշտոնական փաստաթղթերի, առցանց գրառումների, ինֆոգրաֆիկաների, տեղեկատվությանը տիրապետող newsmaker-ների, ինֆյունեսերների, ասուլիսների և առանձին հարցազրույցների, սոցիալական ցանցերի պաշտոնական գրառումների, հատուկ այդ նպատակով պատրաստված կայքերի միջոցով:
Ներառականություն	Տեղեկատվության տրամադրումը, տարածումը պետք է տեղի ունենա համագործակցության, համակարգվածության, տեղեկատվությունը միմյանց հետ փոխանակելուց ստացված արդյունքների հիման վրա, ինչը հնարավորություն կտա հասարակությանը տրամադրել համակարգված, համապարփակ ու ամբողջական տեղեկատվություն՝ պատասխանելով նրան հետաքրքրող բոլոր հարցերին:
Հաշվեպրովոզականություն	Տեղեկատվություն ստացողները պետք է հնարավորություն ունենան գնահատելու տեղեկատվության հավաստիության ու վստահելիության չափը, ինչը նշանակում է, որ պետք է հստակ նշված լինի տեղեկատվության աղբյուրը: Դրանք պետք է լինեն առաջին ձեռքից և պաշտոնական: Այս դեպքում անհրաժեշտ է նկատի առնել, թե որքանով է տեղեկություն տրամադրող անձն իրավասու կրելու այդ տեղեկատվությունը:
Ստուգելիություն	Տեղեկատվության ճշգրիտ լինելուց զատ պետք է ապահովվի նաև տեղեկատվության տրամադրման հետևողականությունը: Այսինքն՝ տեղեկատվության սպառողի համար պետք է հստակ լինեն այն միջոցները և աղբյուրները, որով հնարավոր է համադրել և հավաստիանալ տեղեկատվության իսկության մեջ:
Կարևորություն	Տեղեկատվությունը տրամադրելիս անհրաժեշտ է նկատի առնել, թե այն որքանով է պրակտիկ, որքանով կարող է նպաստել բնակչության տեղեկացված լինելուն, պատասխանել նրան հետաքրքրող ու անհանգստացնող հարցերին, նպաստել նրա որոշումների կայացմանը:
Օբյեկտիվություն	Տեղեկատվության հավաքման ու տարածման գործընթացում անհրաժեշտ է ուսումնասիրել ու վերլուծել տարբեր աղբյուրներից եկող

	տեղեկատվությունը՝ հավասարակշռված որոշումներ կայացնելու համար:
Մարդակենտրոնություն	Տեղեկատվությունը չի կարող օգտագործվել ապակողմնորոշելու, խուճապի կամ հանրությանը ռիսկի ենթարկելու նկատառումներով:
Ժամանակին	Տեղեկատվության տրամադրումը պետք է տեղի ունենա հստակ պարբերականությամբ՝ բացառելով տեղեկատվական վակուումը: Եթե անգամ տրամադրվող փաստերի մեջ ժամանակի ընթացքում տեղեկություն չի փոխվել, սա ևս նորություն է: Ուստի հստակ պարբերականությամբ անհրաժեշտ է ասել այդ ժամին եղած փաստը: Դա նույնպես նպաստում է դինամիկայի ընկալմանը:

Առաջարկներ արտակարգ իրավիճակներ լուսաբանող լրագրողներին՝

Աղետներ լուսաբանելիս՝ ԶԼՄ-ներից պահանջվում է պատշաճ կերպով փոխանցել ճշգրիտ տեղեկատվություն: Ստորև ներկայացված են տեղեկատվության վստահելի աղբյուրները և այն աղբյուրները, որոնցից պետք է խուսափել: Ձեռք բերված տեղեկատվությունը բնակչությանը տրամադրելուց առաջ անպայման պետք է այն ճշտել պաշտոնական իրավասու աղբյուրների հետ: Բացի այդ, ստացված տեղեկությունների իսկությունն անհրաժեշտ է ստուգել միմյանցից բոլորովին անկախ երեք իրավասու աղբյուրներից:

1) Վստահելի պաշտոնական աղբյուրներ.

- արտակարգ իրավիճակներում ստեղծված օպերատիվ շտաբների պատասխանատուներ,
- երկրների ղեկավար կազմի անդամների՝ նախագահների, վարչապետների, առանձին գերատեսչությունների ղեկավարների հայտարարություններ,
- ոլորտի պաշտոնյաներ, որոնք կարող են հայտարարություն անել՝ կապված իրավիճակի հետ,
- պաշտոնական հաղորդագրություններ,
- պաշտոնական կայքեր,
- գերատեսչությունների, պաշտոնյաների պաշտոնական էջեր սոցիալական ցանցերում,
- միջազգային կազմակերպությունների պաշտոնական կայքերի ու սոցիալական կայքերում պաշտոնական էջերի հաղորդագրություններ ու հայտարարություններ,
- մասնագիտացված հեղինակավոր կառույցների հայտարարություններ:

Աղբյուրներ, որոնցից պետք է խուսափել.

- ոչ առաջնային աղբյուրներ, որոնք ի պաշտոնե իրավասու չեն տեղյակ լինելու տվյալ իրավիճակին և հայտարարություն անելու դրա վերաբերյալ,
- տուժածների բարեկամներ, հարազատներ, ծանոթներ, որոնց հայտարարությունները հիմնված են ոչ թե հաստատված փաստի, այլ կարծիքի և ենթադրությունների վրա,
- սոցիալական ցանցերի օգտատերեր, որոնք ի պաշտոնե տվյալ իրավիճակի մանրամասներից տեղեկացված լինելու իրավասություն չունեն,
- մասնագետներ համարվող անձանց կարծիքներ, որոնց հայտարարությունները հիմնված են ոչ թե գիտականորեն ապացուցված տվյալների, այլ հնարավոր կանխատեսումների վրա,
- խուսափել տվյալ երկրի հակառակորդ ու թշնամաբար տրամադրված երկրների պաշտոնյաների հայտարարությունները միանշանակ ընդունելուց,
- հակառակորդ ու թշնամական երկրների լրատվամիջոցների հրապարակումներ:

Միակ շահառուն հասարակությունն է, ուստի տեղեկատվություն տրամադրելիս անհրաժեշտ է նկատի առնել, որ տեղեկատվական օպերացիայի իրականացման նպատակը ոչ թե պետք է լինի զուտ հանրությանը տեղեկացնելը, այլ հանրությանը տեղեկացնելով՝ մարդկանց կյանքի պաշտպանությունն ու անվտանգության ապահովմանը նպաստելը: Այդ նպատակն իրագործելու համար անհրաժեշտ է, որ տեղեկատվություն տրամադրելիս՝ այն համապատասխանի հետևյալ խնդիրների իրականացմանը.

- բացառել կամ նվազեցնել հնարավոր վնասի ծավալները,
- մեղմել վախերը, ցրել խուճապը,
- հասնել հասարակական վստահության,
- կրթել, տեղեկացնել, նպաստել, որ փոխվի հասարակության վարքագիծը, և այն պատրաստ լինի հաղթահարելու մարտահրավերները,
- հասնել հասարակական համագործակցության,
- հասկանալ հասարակությանը՝ նկատի առնելով, որ մարդիկ դժվար են հրաժարվում իրենց համոզմունքներից և սթրեսի մեջ գտնվող մարդը տեղեկատվությունը կարող է լսել կամ մասամբ, կամ աղավաղված, կամ ընդհանրապես չլսել:

Հոգեբաններն ընդգծում են, որ լսարանի համար առավել սթրեսային են լրագրողների որոշ գործողություններ, որոնք կարող են երբեմն անտեսվել՝ ելնելով տեղեկատվություն ապահովելու անհրաժեշտությունից: Սակայն, առանձնակի դաժանություն ցուցադրող կամ սթրեսոգեն այլ տեղեկատվության՝ տեսանյութերի կամ լուսանկարների հրապարակումը պետք է տեղի ունենա միայն բացառիկ դեպքերում: Մյուս բոլոր դեպքերում առաջարկվում է.

- անհարմար վիճակում չնկարահանել վշտի ու հուսահատության մեջ գտնվող մարդուն,
- չցուցադրել մարդուն ստորացված կամ արժանապատվությունը նսեմացված վիճակում,
- չցուցադրել հոգեբանական ու ֆիզիկական ծաղրի ենթարկվածների կամ ենթարկման կադրեր ու լուսանկարներ, տեքստային նկարագրություններ:
- վախ, խղճահարություն, ֆիզիկական «թերություններն» ի ցույց դնող հրապարակումներ չանել,
- առանց անունների ճշգրտման զոհերի և վիրավորների թիվ չհրապարակել,
- խուսափել մարդուն զոհ կամ վիրավոր համարելուց, եթե անգամ կորած է նրան ողջ դուրս բերելու հավանականությունը, բայց նրա աճյունը գտնված չէ: Պահպանել մարդու՝ մինչև վերջ հույս ունենալու զգացումը և մահացած լինելու մասին հայտնել միայն այն դեպքում, երբ գտնված է նրա աճյունը կամ մասունքները:

Լրագրողներին խորհուրդ է տրվում առանձնակի ուշադրություն դարձնել տեղեկատվության մատուցման հիգիենային:

- Զգուշանալ կրկնակի տրավմա առաջացնելուց: Խուսափել ցավոտ պատմությունները որոշ ժամանակ անց կրկնելուց: Մարդուն մոռանալու հնարավորություն տալ:
- Մատնանշել դրական միտումները, եթե անգամ իրադարձությունների ընդհանուր ծավալի մեջ դրանք փոքր տեղ են զբաղեցնում:
- Հրապարակել մարդկային պատմություններ, որոնք ցույց կտան, թե ինչպես է բարդ իրավիճակում հայտնված մարդը հաղթահարել այն:
- Հրապարակել հայտնիների ոգևորիչ խոսքը, միասնականության կոչերը և այլն:

- Պատմել հաջողությունների և հնարավորությունների մասին:
- Ցույց տալ արտակարգ իրավիճակում գտնվող մարդկանց տոկոսությունն ու կամքը:
- Հատուկ տեղ հատկացնել ճգնաժամի ընթացքում:

Հատկապես արտակարգ իրավիճակներում գործող լրատվամիջոցների հրապարակումներում առանձնակի ուշադրության են արժանի գործածվող լեզուն ու բառամթերքը: Դրանից կախված է, թե որքան հստակ և ճշգրիտ տեղեկություն կստանա տեղեկատվության սպառողը, այն խուճապի չի մատնի նրան, այլ թույլ կտա պատկերացում կազմելու տեղի ունեցող իրադարձությունների վերաբերյալ:

Կարելի է լրագրողներին խորհուրդ տալ.
- ուշադրություն դարձրեք գործողություն արտահայտող բառերին: Հետևե՛ք, որ դրանք հստակ արտահայտեն տվյալ երևույթը:
- Ձե՛րձ մնացեք երևույթներին բնորոշումներ տալուց: Դրանք հաճախ սուբյեկտիվ ընկալման արդյունք են և կարող են սխալ պատկերացում տալ իրավիճակի մասին:
- Մարդկանց և երևույթների մասին խոսելիս առաջնորդվե՛ք de jure կարգավիճակը ցույց տվող ձևակերպումներով:
- Պահպանե՛ք անմեղության կանխավարկածը, զե՛րձ մնացեք մարդկանց պիտակավորելուց:
- Պահպանե՛ք անձի պատիվն ու արժանապատվությունը: Խիստ զգուշավորություն ցուցաբերե՛ք նույնականացնող տեղեկություններ ու ձևակերպումներ հրապարակելիս:
- Հարգե՛ք տեղեկատվության աղբյուրները, պահպանե՛ք off the record զրույցների գաղտնիությունը՝ պաշտպանելով ձեր աղբյուրների անվտանգությունը:
- Հնարավորինս խուսափե՛ք ժխտական միտք արտահայտող ձևակերպումներից, փոխարենը հնարավոր բոլոր դեպքերում այն փոխարինե՛ք նույն միտքը արտահայտող հաստատական նախադասություններով:

Ճգնաժամների (պատերազմ, համաճարակ, տարերային և ոչ տարերային աղետներ և այլն) ակտիվ փուլի ավարտմամբ չի սահմանափակվում լրատվամիջոցների լուսաբանումների անհրաժեշտությունը: Եթե ակտիվ փուլի ընթացքում ուշադրության կենտրոնում տեղի ունեցող երևույթների և իրադարձությունների վերաբերյալ տեղեկատվության տարածումն է, ապա այս դեպքում լրատվամիջոցները մի քանի գործառույթ են իրականացնում: Դրանք են՝
- տեղեկատվություն տրամադրել արտակարգ իրավիճակի պասսիվ շրջանի վերաբերյալ՝ ընդգծելով ընդհանուր միտումները:
- Տեղ հատկացնել առանձին հերոսական դրվագների, մարդկային ճակատագրերի, ճգնաժամին դիմագրավելու նրանց փորձի, մարդու ներքին փոփոխությունների ներկայացմանը:
- Վերլուծել տեղի ունեցածի հետևանքներն ու արդյունքները՝ ընդգծելով առավելությունները, փնտրել սխալները:
- Ռազմական գործողությունների ավարտից հետո էլ հարթակ լինել չիրահիրող, ավելին՝ խաղաղությանը նպաստող ու ամրապնդող հրապարակումների համար:
- Գործունեությամբ և ակտիվ լուսաբանումով նպաստել միջազգային մարմիններում հարցի առաջ քաշմանը, պատասխանատվության խնդիրներին:

Աղետների լուսաբանումն ուղղակիորեն չի մեղմացնում աղետների պատճառած վնասը: Այնուամենայնիվ, աղետների լուսաբանումը նախաաղետային փուլում կարող է բարձրացնել հանրային իրազեկվածությունը և խթանել կանխարգելիչ միջոցառումների իրականացումը: Բացի այդ, վերականգնման գործընթացում հնարավոր է վերականգնումն ավելի արդյունավետ դարձնել՝ աղետի գոտում առկա խնդիրները ներկայացնելով աղետի գոտում և դրանից դուրս գտնվող մարդկանց: Այսպիսով, անհրաժեշտ է հաշվի առնել աղետների լուսաբանման կարևորությունը ԱՌՆ ռազմավարություններում:

Սույն հոդվածում նախևառաջ քննարկվել է աղետների լուսաբանման դերը Ճապոնիայի փորձի հիման վրա: Այնուհետև, ներկայացվել են աղետների լուսաբանման և լրատվության խնդիրներն ու լուծումները՝ բացահայտված ՃՄՀԳ ծրագրի շրջանակներում: Դրանց հիման վրա առաջարկվել են Հայաստանում աղետների լուսաբանման հեռանկարները: Այս փաստաթղթում ներկայացված առաջարկները ՁԼՄ-ների համար շատ կարևոր խնդիրներ են, որոնք պետք է հաշվի առնվեն աղետներ լուսաբանելիս: Մինևս ժամանակ, ակնկալում ենք, որ լրագրողների կողմից կկիրառվի նաև լրատվամիջոցներին ուղղված ուղեցույցը, որը մշակվել է ՃՄՀԳ ծրագրի շրջանակներում: ԱՌՆ-ը նախատեսում է աղետների կառավարման ոլորտի վերապատրաստում անցկացնել լրատվամիջոցների համար, և հույս ունենք, որ լրատվամիջոցներն ակտիվորեն կմասնակցեն այդ վերապատրաստմանը:

Այս փաստաթղթում ներկայացված են աղետների լուսաբանման սկզբունքները և խորհուրդներ դրանց վերաբերյալ: Հուսով ենք, որ այն կնպաստի Հայաստանում աղետների լուսաբանման մշակույթի բարելավմանը: Այդ պատճառով ակնկալում ենք, որ ԱՌՆ-ը և լրատվամիջոցները կշարունակեն բարելավել սույն աշխատության մեջ ներկայացված բովանդակությունը՝ կարծիքներ փոխանակելու և բովանդակության համապատասխանությունը ԱՌՆ-ի և լրագրության տեսանկյունից քննարկելու միջոցով:

Սույն հոդվածի մի մասը հիմնված է ՃՄՀԳ կողմից ֆինանսավորված և ԱՌՆ ու ճապոնացի փորձագետների կողմից իրականացված «Աղետների ռիսկի նվազեցման նպատակով ճգնաժամային հաղորդակցության և հանրային իրազեկման բարելավման ծրագրի» արդյունքների վրա:

Գրականություն

1. **UNISDR** (2015) Sendai Framework for Disaster Risk Reduction 2015-2030, Available at: https://www.preventionweb.net/files/43291_sendaiframeworkfordrren.pdf?_gl=1*gqd5mp*_ga*NjYzNTI5ODkxLjE2NTc0MzkwMzY.*_ga_D8G5WXP6YM*MTY2MzlwMjEzNy4zLjAuMTY2MzlwMjEzNy4wLjAuMA.
2. **Koichi Shiwaku** (2020) The Role of Media in Disaster Risk Reduction: Experience of Japan, Crisis Management and Technologies, No 1 (16), pp. 28-39.
3. **Masaya Hirosawa** (1989) Building Damages caused 1988 Armenia Spitak Earthquake, Concrete Technology, Vo. 27 pp. 58-67.
4. **Security Science** and Technology and Social Collaboration Committee (2014) Promotion of Risk Communication, Available at: https://www.mext.go.jp/b_menu/shingi/gijyutu/gijyutu2/064/houkoku/icsFiles/afieldfile/2014/04/25/1347292_1.pdf
5. **Osamu Hiroi** (2004) Disaster Information and Social Psychology, Hokuju Shuppan.
6. **Isao Nakamura** (2012) Disaster Reporting, in Modern Sociological Dictionaries (edited by Masachi Osawa, Shunya Yoshimi, and Kiyokazu Washida), Kobundo.
7. **Seiji Kondo** (2013) Co-construction of Reality in Disaster Reporting, PhD Thesis, Kyoto University,

Available at <https://repository.kulib.kyoto-u.ac.jp/dspace/bitstream/2433/180470/3/djohk00505.pdf>.

8. **Masanobu Kanai** and Toshitaka Katada (2007) Research on How Disaster News Affects Education -The Case of News of the Indian Ocean Tsunami in 2004, Civil Engineering Society Papers D, Vol. 63, pp. 401-415.
9. **JICA** (2021) Progress Report for the Project for the Improvement of Crisis Communication and Public Awareness for Disaster Risk Reduction.

К. Шиваку, Д.Г. Алавердян

УЛУЧШЕНИЕ ОСВЕЩЕНИЯ БЕДСТВИЙ В АРМЕНИИ

Освещение бедствий играет важную роль в снижении риска бедствий. Целью данной статьи является улучшение освещения в Армении бедствий. А именно, посредством: 1) определения роли освещения бедствий, 2) выявления вопросов в области кризисной информации, 3) предложения перспектив освещения бедствий. С целью улучшения показателей снижения риска бедствий на всех уровнях государства, они должны освещаться как до, так и после. Осуществленная совместная армяно-японская международная государственная программа показала, что недостаток в СМИ знаний о бедствиях является одной из проблем их освещения. Наконец, в статье отмечены принципы и предложения освещения в Армении бедствий, которые, опираясь на освещение фактических случаев бедствий, должны быть утверждены государством и со стороны СМИ.

Ключевые слова: освещение бедствий, информационное средство, СМИ, кризисная информация, повышение информированности, снижение риска бедствий.

K. Shiwaku, D.H. Alaverdyan

COVERAGE IMPROVING OF DISASTERS IN ARMENIA

Disaster coverage plays an important role in disaster risk reduction. The purpose of this article is to improve disaster coverage in Armenia by 1) defining the role of disaster coverage, 2) identifying issues in the field of crisis communication, and 3) offering a perspective on disaster coverage. Disasters should be covered both before and after to improve disaster risk reduction at all levels of government. The joint international program implemented by Japan and Armenia showed that the lack of knowledge about disasters among mass media is one of the problems of disaster coverage. Finally, the principles and recommendations of disaster coverage in Armenia are mentioned in the article, which should be approved by the government and mass media, based on actual disaster coverage cases.

Keywords; disaster coverage, mass media, crisis communication, awareness raising, disaster risk reduction.

Քոնիչի Շիվակու - Գլոբալ միջավայրի գիտությունների թեկնածու (ՕՅՕ կորպորացիա, Ճապոնիա).

Ալավերդյան Դավիթ Հրայրի – բան. գիտ. թեկնածու, դոցենտ (ԵՊՀ).

Ներկայացման ամսաթիվը՝ 20.09.2022

Գրախոսման ամսաթիվը՝ 28.09.2022

Ա.Ա. Խաչատրյան, Կ.Է. Զիրաքյան, Ա.Զ. Գասպարյան, Ա.Ս. Տեր-Մեսրոպյան

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՕՋԱԽՈՒՄ ՏՈՒԺԱԾՆԵՐԻՆ ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՔԵՐՄԱՆ, ԲՈՒԺՏԱՐՀԱՆՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ, ՓՐԿԱՐԱՐՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՎԵՐՀԱՆՄԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐՎԱԾ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ

Ամբողջ աշխարհում յուրաքանչյուր տարի տարբեր աղետներից զոհվում և հաշմանդամ են դառնում միլիոնավոր մարդիկ: Զանգվածային լրատվական միջոցները լի են աշխարհի տարբեր անկյուններում տեղի ունեցող բնական կամ տեխնածին վրանգավոր հետևանքների նկարագրությամբ՝ երկրաշարժեր, ջրհեղեղներ, փոթորիկներ, հրաբխի ժայթքումներ, համաճարակներ, պանդեմիաներ, օդային աղետներ, պատերազմներ, ահաբեկչական գործողություններ և այլն:

Աղետներից հաճախակի տուժող երկրներում խաթարվում և դանդաղում է տվյալ պետության զարգացման ընթացքը: Ուստի տեղի ունեցող սոցիալ-քաղաքական գործընթացների, բնական և տեխնածին գործընթացների հետևանքով առաջացած արտակարգ իրավիճակների, պատերազմական իրավիճակների և 21-րդ դարին բնորոշ գործընթացների հետևանքով պետության և ազգաբնակչության շրջանում ստեղծվում են վրանգավոր իրավիճակներ, որտեղ էլ ավելի է կարևորվում շտապ օգնության աշխատակիցների կողմից ցուցաբերվող բուժօգնության և փրկարարական աշխատանքներ իրականացնող փրկարարների դերն ու նշանակությունը:

Առանցքային բառեր. արտակարգ իրավիճակ, տարահանում, անվտանգություն, աղետ, փրկարարական աշխատանք, բուժօգնություն, տուժածների որոնում, շտապ օգնության աշխատակից, երկրաշարժ, հրդեհ, համաճարակ:

Հոդվածում ներկայացված է արտակարգ իրավիճակներում փրկարարների կողմից բնակչությանը ցուցաբերվող օգնությունը և շտապ օգնության աշխատակիցների կողմից ցուցաբերվող բուժօգնությունը, տուժածների տեղափոխման միջոցառումները, ինչպես նաև փրկարարների անվտանգության խնդիրների վերհանումը և ուսումնասիրությունը:

Փրկարարական աշխատանքների կատարման հաջողությունը մեծապես պայմանավորված է փրկարարի ֆիզիկական, բարոյահոգեբանական, մասնագիտական պատրաստակալության մակարդակով, որն էլ աշխատանքների անվտանգության հիմնական գրավականն է: Անհրաժեշտ է նշել, որ փրկարարական ջոկատները տարաբնույթ արտակարգ իրավիճակների դեպքում մշտապես պետք է պատրաստ լինեն փրկարարական, վթարափրկարարական և այլ անհետաձգելի աշխատանքների կազմակերպմանն ու տեխնոլոգիաների ճիշտ կիրառմանը, միաժամանակ՝ հակահրդեհային պատրաստությանը, տեխնիկական, հոգեբանական պատրաստությանը, արտակարգ իրավիճակներում անվտանգ գործելակերպի և գոյատևման սկզբունքներին: Փրկարարական գործի զարգացման ներկայիս մակարդակը բարձր պահանջներ է ներկայացնում փրկարարի ուսումնամարզական գործընթացը: Ժամանակակից փրկարարական գործի արդյունավետ զարգացումը նախատեսում է ուսումնամարզական գործընթացի մշտական կատարելագործում: Դա, որպես կանոն, կապված է փրկարարների պատրաստության միջոցների և մեթոդների նոր ճանապարհների փնտրման հետ ոչ միայն բարձր վարպետության՝ արհեստավարժության այլ գլխավորապես նախնական մասնագիտացման փուլում [4]:

Արտակարգ իրավիճակներում տուժածներին օգնության ցուցաբերման առաջնահերթ խնդիրներից է համարվում կյանքին վտանգ ներկայացնող գործոնների վերացումը և հետագա հոսանքների ու բարդությունների նվազեցումը:

Բավականին դժվարություններ են ի հայտ գալիս մեծամաշտաբ աղետների դեպքում՝ համատարած կառույցների փլուզումներ, խոշոր հրդեհներ և այլն, որոց ժամանակ բարդանում են տուժածների որոնման աշխատանքները: Երբեմն, նույնիսկ տեղային արտակարգ իրավիճակների դեպքում, երբ բնակելի շինություններում տեղի է ունենում փլուզում կամ հրդեհ է բռնկվում, փրկարարների և հրշեջ-փրկարարների համար դժվարություններ և խնդիրներ են առաջանում փոքր երեխաների, տարեց մարդկանց, հիվանդների որոնման, հայտնաբերման, իսկ շտապ օգնության աշխատակիցներին բուժօգնության ցուցաբերման համար և շատ դեպքերում նրանք հայտնաբերվում են արդեն մահացած վիճակում [1]:

Արտակարգ իրավիճակների ժամանակ առաջնահերթ խնդիրներից է տուժածների որոնումը և անհրաժեշտության դեպքում առաջին օգնության ցուցաբերումը, քանի որ մարդկանց գոյատևման աստիճանն ուղիղ կախվածություն ունի նրանց հայտնաբերման և վտանգավոր տարածքից դուրս բերման ժամանակից [4]:

Որոնման համար օգտագործում են վարժեցված շներ, ձայնաորսիչ, տեսաորոնողական սարքավորումներ և էլեկտրոնային սարքավորումներ-գեոֆոններ, որոնց միջոցով որոշվում է տուժածների գտնվելու տեղը, դիրքը փլատակների տակ, ինչպես նաև սրտի աշխատանքի, շնչառության առկայությունը: Մի շարք հեղինակների հետազոտություններում նշվում է, որ ներկայումս իրականացվում են փորձարկումներ կենսագործունեության չափորոշիչների վերահսկումը սարքերի միջոցով (պուլս, զարկերակային ճնշում, շնչառության հաճախելիություն): Այդ սարքերը հագեցած են անհետաձգելի օգնության ցուցաբերման հատուկ միջոցներով՝ ցավազրկողների ներարկում և ազդանշանի փոխանցում տուժածի գտնվելու վայրի վերաբերյալ, ինչը կրճատում է որոնման ժամանակը և նվազեցնում է ինչպես փրկարարների, այնպես էլ բուժաշխատողների աշխատանքներում կորստի դեպքերը [4]:

Փրկարարների հաջորդ խնդիրներից է տուժածների դուրս բերումն արտակարգ իրավիճակների գոտուց, օջախից և տարհանումն անվտանգ գոտի: Նման դեպքերում իրավիճակները լինում են տարբեր և անհնար է դառնում որևիցէ հստակ ցուցումներ տալ:

Փրկարարի կողմից օգնության ցուցաբերման գլխավոր խնդիրներից է տուժածին հավելյալ վնասվածքներ չհասցնելը:

Արտակարգ իրավիճակների օջախից տուժածի դուրս բերման և տարհանման ժամանակ անհրաժեշտ է հիշել, որ կարևոր օրգանները և համակարգերը գտնվում են մարմնի վերին և միջին հատվածներում: Ուստի անհրաժեշտ է կիրառել անշարժացման եղանակի բլոկը՝ գլուխ-պարանոց-ողնաշար: Դա նշանակում է, որ տուժածին դուրս բերելուց պետք է նախապես ֆիքսել, անշարժացնել մարմնի այդ մասերը [2]:

Արտակարգ իրավիճակներում հաճախ տուժածների շրջանում հանդիպում են բազմակի, զուգակցված, կոմբինացված ախտահարումներ, որոնց մասին ևս պետք է գիտենան փրկարարները: Անհրաժեշտ է իմանալ, որ առաջին օգնության ցուցաբերումը 1 ժամ ուշացումով ավելացնում է անբարենպաստ ելքերի քանակը 30%, 3 ժամ՝ 60%, 6 ժամ՝ 90%: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ արտակարգ իրավիճակների օջախում փրկարարական աշխա-

տանքների կատարման ընթացքում փրկարարները հանդիպում են բազմաթիվ խնդիրների, այդ թվում նաև անձնական անվտանգության պաշտպանությանը վերաբերող: Անհրաժեշտ է, նաև հաշվի առնել հոգեյարդային գործոնը մեծ ծավալով տուժածների պարագայում, ինչը բացասական ազդեցություն է թողնում ինչպես տուժածների, այնպես էլ փրկարարների առողջության, հոգեկան աշխարհի վրա:

Փրկարարների գործողությունները կարելի է բաժանել երկու փուլի՝ տուժածներին մինչև դուրս բերումը և դուրս բերումից հետո: Այդ փուլում փրկարարի հիմնական նպատակն է՝ ախտահարող գործոնի վերացումը, տուժածին գտնելը, դուրս բերելը և տարհանելը վտանգավոր տարածքից: Տուժածներին վտանգի օջախից դուրս բերման ընթացքում հիմնական նպատակն է օգնության ցուցաբերումը և տարհանումը անվտանգ տարածք [3]:

Համաձայն «Փրկարար ուժերի և փրկարարի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի արտակարգ իրավիճակների կիզակետում փրկարար ծառայությունների կողմից բնակչությանն առաջին օգնության ցուցաբերումը, արտակարգ իրավիճակներում իրականացվող աշխատանքները մեծ նշանակություն ունի [5]:

Փրկարարական աշխատանքների անմիջական իրականացմանը ներգրավված են արտակարգ իրավիճակների փրկարարական աշխատանքների և քաղաքացիական պաշտպանության ոլորտում որակավորված անձինք, նույն օրենքով, փրկարարների պարտականությունները ներառում են.

- որոնել և միջոցներ ձեռնարկել մարդկանց փրկելու համար.
- բարելավել նրանց ֆիզիկական, մասնագիտական պատրաստվածության, բժշկական և հոգեբանական վիճակը.
- բարելավել փրկարարական կարողությունները և հմտությունները.
- պահպանել անվտանգության կանոնները փրկարարական աշխատանքների ժամանակ.
- պատրաստ լինել աշխատելու արտակարգ իրավիճակների կանխարգելման, նվազեցման և վերացման, առաջին բուժօգնության տրամադրման ուղղությամբ:

Աղետի գոտում փրկարար ծառայության աշխատակիցների կողմից տուժածին ցուցաբերվում է առաջին բուժօգնություն, որի նպատակն է՝ տուժածի կյանքին անմիջական վտանգ սպառնացող գործոնների վերացում և արագ տարհանում ախտահարման գոտուց

Առաջին օգնությունն ընգրկում է հետևյալ միջոցառումները՝

- տուժածների դուրս բերումը փլատակներից,
- վերին շնչուղիների անցանելիության վերականգնում (վերին շնչուղիների մաքրում լորձից, հողից, օտարմար միւսներից), թոքերի արհեստական օդափոխություն,
- արտաքին արյունահոսության ժամանակավոր կանգնեցում (ռետինե լարան, ճնշող վիրակապ, արյունահոսող անոթի մատով սեղմում),
- սրտի անուղղակի մերսում,
- բաց պնևմոթորաքսի դեպքում՝ հերմետիկ վիրակապում,
- այրվածքների և վերքերի ասեպտիկ վիրակապում,
- կտրվածքների, փափուկ հյուսվածքների վերքերի, այրված վերջույթների տրանսպորտային անշարժացում տաբելային և ձեռքի տակ եղած միջոցներով,
- ցրտահարության դեպքում՝ տուժածի տաքացում,

- հրդեհների դեպքում՝ այրվող հագուստի մարում,
- արտաքին միջավայր թունավոր ուժեղ ազդող նյութերի արտահոսքի դեպքում՝ վարակված տեղանքում գտնվելու ժամանակ անհատական, մաշկի բաց մասերի մասնակի հատուկ մշակում ջրով, օճառով լվացում, ախտահարված գոտուց տուժածի դուրս բերում, մասնակի սանիտարական մշակում,
- ճառագայթային վթարների դեպքում՝ ճառագայթային նյութերի օդով, ջրով, սննդամթերքով օրգանիզմ ներթափանցելու կանխում, ճառագայթային նյութերով ախտահարված տարածքից ախտահարվածների դուրս բերում, կանխարգելման միջոցների օգտագործում, մարմնի բաց մասերի հատուկ մշակում, ճառագայթային նյութերի հեռացում հագուստի վրայից, ցավազրկողների օգտագործում [3]:

Այս կարծիքով բուժաշխատողների և արհեստավարժ փրկարարների վերապատրաստումները և անընդհատ կատարելագործումը պետք է իրականացվի համատեղ, արտակարգ իրավիճակներին հավասարեցված պայմաններում, ինչը թույլ կտա փրկարարներին և բուժաշխատողներին ձեռք բերել տեսական և գործնական հմտություններ աղետի օջախում օգնություն ցուցաբերելու և բազմաթիվ տուժածներին փրկելու գործում:

Գրականություն

1. **Խաչատրյան Ա.Ա.**, Գասպարյան Ա.Զ., Մանուկյան Ս.Ա., Վանեսյան Ն.Տ., Հայաստանի Հանրապետության տարածքում արտակարգ իրավիճակներում բնակչությանը բժշկական օգնության ցուցաբերման որոշ հարցեր: «Ճգնաժամային կառավարում և տեխնոլոգիաներ» գիտական հանդես, Եր., No 1(16), 2020, էջ 40-50:
Khachatryan A.A., Gasparyan A.Z., Manukyan S.A., Vanesyan N.T., Hayastani Hanrapetutyan taracqum artakarg iravichaknerum bnakchutyany bzhshkakan ognutyany cucaberman urosh harcer: «Chgnazhamayin karavarum ev tekhnologianer» gitakan handes, Er., No 1(16). 2020, p. 40-50.
2. **Հովակիմյան Գ.**, Փրկարարական գործ, Ուսումնական ձեռնարկ, Եր., 2010, էջ 6-12:
Hovakimyan G., Prkararanakan gorc, Usumnakan dzernark, Er., 2010, p. 6-12.
3. **Левчук И.П.**, Третьяков Н.В., Медицина катастроф, ГЭОТАР-Медиа, 2021, С. 59-64.
Levchuk I.P., Tretyakov N.V., Medicina katastrof, GEOTAR-Media, 2021, p. 59-64
4. **Кошелев А.А.**, Медицина катастроф., Санкт-Петербург, М., Краснодар 2016, С. 33-41.
Koshelev.A.A., Medicina katastrof, Sankt-Peterburg, M., Krasnodar 2016, p. 33-41
5. «**Փրկարար** ուժերի և փրկարարի կարգավիճակի մասին» ՀՀ օրենք, 2-րդ գլուխ, 6-րդ հոդված, ընդունված 25 մայիսի, 2004թ.:
«**Prkarar ujeri** ev prkarari kargavichaki masin» HH orenq, 2-rd glukh, 6-rd hodvac, yndunvac 25 mayisi, 2004 t.

А.А. Хачатрян, К.Э. Зиракян, А.З. Гаспарян, А.С. Тер-Месропян

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ, ПОСВЯЩЕННЫЕ ИЗУЧЕНИЮ ОКАЗАНИЯ МЕДИЦИНСКОЙ ПОМОЩИ ПОСТРАДАВШИМ, ПРОВЕДЕНИЮ ЛЕЧЕБНО-ЭВАКУАЦИОННЫХ МЕРОПРИЯТИЙ, ИССЛЕДОВАНИЮ ПРОБЛЕМ БЕЗОПАСНОСТИ РАБОТЫ СПАСАТЕЛЕЙ В ОЧАГЕ ЧРЕЗВЫЧАЙНЫХ СИТУАЦИЙ

Ежегодно во всем мире миллионы людей гибнут и становятся инвалидами в результате различных стихийных бедствий. Средства массовой информации пестрят описаниями природных

или техногенных опасных явлений, происходящих в разных уголках мира: землетрясений, наводнений, ураганов, извержений вулканов, эпидемий, пандемий, авиакатастроф, войн, террористических актов и т.д.

В статье представлена медицинская помощь, оказываемая медицинскими работниками скорой помощи и спасателями населению в чрезвычайных ситуациях, лечебно-эвакуационные мероприятия, а также выявление и изучение проблем здоровья, безопасности деятельности спасателей.

По нашему мнению, подготовка и постоянное повышение квалификации медицинских работников и профессиональных спасателей должны осуществляться в условиях, приравненных к чрезвычайным ситуациям, что позволит им приобрести теоретические и практические навыки по оказанию помощи, сбережению собственного здоровья и спасению множества пострадавших в очаге бедствия.

Ключевые слова: чрезвычайная ситуация, эвакуация, катастрофа, спасение, медицинская помощь, поиск пострадавших, землетрясение пожар, эпидемия, лечебно-эвакуационное обеспечение.

A.A. Khachatryan, K.E. Zirakyan, A.Z. Gasparyan, A.S.Ter-Mesropyan

SOME ISSUES DEDICATED TO THE STUDY OF PROVIDING MEDICAL AID TO THE VICTIMS, CONDUCTING MEDICAL EVACUATION OPERATIONS ADDRESSING SAFETY ISSUES OF THE WORK OF RESCUERS IN EMERGENCY SITUATIONS

Millions of people are killed and disabled by various disasters around the world every year. The mass media is full of descriptions of natural or man-made dangerous consequences in various corners of the world: earthquakes, floods, hurricanes, volcanic eruptions, epidemics, pandemics, plane crashes, wars, acts of terrorism, etc.

In countries frequently affected by disasters, the development process of the given state is disrupted and slowed down. Therefore, as a result of the ongoing socio-political processes, emergency situations caused by natural and man-made processes, war situations and processes characteristic of the 21st century, dangerous situations are created among the state and the population, where the roles of paramedics and rescuers, who provide medical aid perform rescue operations, are even more important.

Keywords: emergency situation, evacuation, safety, disaster, rescue operation, medical aid, search for victims, paramedic, earthquake, fire, epidemic.

Խաչատրյան Աշխեն Ալբերտի - դոցենտ, բժշկ. գիտ. թեկնածու, ք/ծ պ. փոխգնդապետ (ՀՀ ԱԻՆ ՃԿՊԱ, Մխիթար Գոշ ՀՌ-ՄՀ).

Զիրաքյան Կարեն Էդուարդի - փ/ծ գնդապետ (ՀՀ ԱԻՆ ՃԿՊԱ).

Գասպարյան Արայիկ Զավենի - դասախոս, ԷԿԱՄ գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ, փ/ծ փոխգնդապետ (ՀՀ ԱԻՆ ՃԿՊԱ).

Տեր-Մեսրոպյան Աշխեն Սարգսի - ք/ծ լեյտենանտ, ռազմական բժիշկ (ՀՀ ՊՆ ԿԿԶՀ).

Ներկայացման ամսաթիվը՝ 20.09.2022

Գրախոսման ամսաթիվը՝ 26.09.2022

С.С. Маргарян, Г.Р. Абгарян, А.А. Геворгян, Г.В. Саргсян

ЕРЕВАНСКОЕ ЗЕМЛЕТРЯСЕНИЕ (АРМЕНИЯ)


13 февраля 2021 года 15 часов 29 минут по местному времени в эпицентре с интенсивностью $I_0 = 6$ баллов с магнитудой $M_s = 4.7$

13-го февраля 2021 года в 15:29 по местному времени (в 11:29 по Гринвичу) сейсмической сетью "Региональной службы сейсмической защиты МЧС РА" зарегистрировано землетрясение с магнитудой 4,7 на глубине 10 км. Эпицентр находится в 8 км к юго-востоку от города Ереван (около 2 км к северу от административного района Нубарашен). Географические координаты эпицентра $40,07^\circ$ северной широты и $44,48^\circ$ восточной долготы. Сила подземных толчков в эпицентре составила 6 баллов.

Ключевые слова: эпицентр, очаг, глубина, балльность, макросейсмическое обследование.

Арагатская долина вместе с примыкающим к ней горным обрамлением, расположенная в северо-восточной части Армянского вулканического нагорья, является наиболее сейсмоактивной областью территории Армении, что обусловлено молодым возрастом складчатости и наличием системы глубинных сейсмогенных разломов близширотного и поперечного направлений. В центральной части этой области в районе г. Еревана имели место и другие сильные и разрушительные землетрясения (рис. 1, табл. 1) [1 - 4].

Шоржинское землетрясение 5-февраля 2021 года с магнитудой 4.7 возбудило Ереванское землетрясение 13 февраля 2021 года.



**Рис. 1. Карта эпицентров землетрясений Армянского вулканического нагорья за 851-2009 гг. [1]
1 – магнитуда M_LH ; 2 – инструментальный эпицентр 2021 г.; 3 – населенные пункты;
4 – г. Ереван; 5 – государственная граница**

Таблица 1.

Каталог сильных землетрясений вблизи Еревана за 851-2021 гг.

Название землетрясения	Дата д м год	t_0 , с	Гипоцентр				Магниту да MLH	I_0 , балл	Ист.
			φ°, N	λ°, E	h	h_1-h_2			
Двинское-I	851		(40.0)	(44.6)	(10)	5-20	(5.2)	8	[1]
Двинское-II	858		(40.0)	(44.6)	(10)	5-20	(4.5)	7	[1]
Двинское-III	04.863		(40.0)	(44.6)	(10)	5-20	(4.9)	7-8	[1]
	972		(40.3)	(44.1)	8	4-16	5.0	7-8	[1]
Гарнийское	04.06.1679	~ 04 ч	40.1	44.7	15	10-22	5.9	8-9	[1]
	28.10.1916	20ч 48мин	40.1	44.1	20	13-30	4.9	6-7	[1]
Ереванское-I (есть афтершоки)	07.01.1937	20 47 42	40.13	44.43	10	8-12	4.6	7	[1]
Ереванское-II (нет афтершоков)	02.08.1984	05 52 47.1	40.17	44.35	8-10		3.7 ($K_p=11.4$)	6	[3]
Ереванское-III	1.03.1997.	13.09.26.8	40.17	44.5	15		3.8	6	
Гарнийское	18.06.2009	07.34.53	40.23	44.75			3.6	5-6	

Гипоцентр землетрясения по данным сейсмических станций Национальной сети сейсмических наблюдений РА имеет следующие географические координаты $40.07^\circ N$ $44.48^\circ E$ на глубине 10 км. с магнитудой 4.7. Эпицентр данного землетрясения определен и другими агентствами табл. 2.

Таблица 2.

Основные параметры Ереванского землетрясения 13 февраля 2021 года 15 часов 29 минут по местному времени (по Гринвичу 11^{29}) эпицентре с интенсивностью в $I_0 = 6$ баллов с магнитудой $M_S = 4.7$

№	Агентство	t_0 , ч мин с	Гипоцентр			Магнитуда
			φ°, N	λ°, E	h , км	
1	NSSP (RSSP)	11 29 23.45	40.07	44.48	10	4.7
2	IRSC	11:29:23.2	40.03	44.51	13	4.9
3	EMSC	11:29:22.9	40.02	44.51	10	4.7
4	GSRS	11:29:24.46	40.02	44.53	10	5.0
5	KAN	11:29:24	40.0	44.5	21	$M_w=4.7$

Примечание: сведения об агентствах:

1. **RSSP** - Regional Survey for Seismic Protection;
2. **IRSC** - Institute of Geophysics, University of Tehran;
3. **EMSC** - European Mediterranean Seismological Centre;
4. **GSRS** - Geophysical Survey of the Russian Academy of Sciences;
5. **KAN** - Kandilli Observatory and Earthquake Research Institute.

Данные агентств почти сходятся.

На третий день афтершоковая активность ослабла табл. 3. Анализ имеющихся данных показывает, что вероятность сильного землетрясения мала. Жителей призвали вернуться в свои квартиры. Имеются ощутимые толчки, для такого землетрясения они неизбежны.

14-го февраля в 01:47 по местному времени (13-го февраля в 21:47 по Гринвичу) сейсмической сетью Региональной службы сейсмической защиты МЧС РА зарегистрировано землетрясение с магнитудой 2,3 и глубиной очага 10 км, эпицентр находится в 13 км к юго-западу от города Ереван. Сила подземных толчков в эпицентре составила 3 балла.

Землетрясение ощущалось в городе Ереван и в ряде населенных пунктах региона Арарат - с силой 2-3 балла. Землетрясение в 8 км к юго-востоку от города Ереван: около в 2 км к северу от административного района Нубарашен.

15-го февраля в 18:21 по местному времени (в 14:21 по Гринвичу) сейсмической сетью Службы сейсмической защиты МЧС РА зарегистрировано землетрясение (афтершок) с магнитудой 2,5 и глубиной очага 10 км, эпицентр находится в 17 км к югу от города Ереван, Армения. Сила подземных толчков в эпицентре составила 3 балла.

Землетрясение (афтершок) ощущалось в городе Ереван - с силой 2-3 балла.

17-го февраля в 07:26 по местному времени (в 03:26 по Гринвичу) сейсмической сетью Региональной службы сейсмической защиты МЧС РА зарегистрировано землетрясение (афтершок) с магнитудой 2,0 и глубиной очага 10 км, эпицентр находится в 12 км к юго-востоку от города Ереван. Сила подземных толчков в эпицентре составила 2-3 балла.

Землетрясение (афтершок) ощущалось в городах Ереван и Арташат- с силой 2 балла.

Таблица 3.

Сильных афтершоков данные Ереванского землетрясения 13 февраля 2021года 11 часов 29 минут (по времени по Гринвичу) с магнитудой $M_S=4.7$

мес	день	час	мин	сек	dt0,с	fi	lmd	d, км	h, км	K	MS	P-н
Основной толчок												
2	13	11	29	23,45		40,07	44,48		10		4,7	9
Ощутимые афтершоки												
2	13	21	47	42,96		40,11	44,5		10		2,3	9
2	15	14	21	27,66		40,06	44,59		10		2,5	9
2	17	3	26	58,64		40,02	44,44		2		2,6	9
2	18	1	30	49,29		40,04	44,5		2		2	9

Макросейсмическое обследование Ереванского землетрясения 13 февраля 2021года 11 часов 29 минут (по времени по Гринвичу) с магнитудой $M_S=4.7$. Землетрясение сопровождалось сильным гулом и достаточно интенсивным сотрясением зданий и сооружений. Максимальная интенсивность сотрясений оценена около 6 баллов по шкале MSK-64 [4]. Землетрясение ощущалось в городе Ереван - с силой 5-6 баллов, в регионах Арарат, Армавир, Котайк - с силой 4-5 баллов, а в регионах Арагацотн, Ширак, Вайоц Дзор, Гегаркуник, Сюник - с силой 3-4 балла табл. 4. После землетрясения в Национальный центр управления в кризисных

ситуациях поступило около 3000 различных вызовов. Из полученных и подтвержденных вызовов об обрушениях относительно значительный ущерб был зарегистрирован в следующих районах города Еревана. Улица Айвазовского (обрушилось 9 кв. м от стены одноэтажного здания, 7 кв. м от крыши), улица Смбата Зоравара (обрушилось 2 кв. м от стены здания), улица Чехова (обрушился 1 кв. м от стены) и проспект Комитаса (со стены отвалилось около 10 плиток). Предварительная информация о пострадавшем гражданине на улице Айвазовского была опровергнута. В таблице приведены данные об оцутимости в пунктах, в процессе обследования и опроса. При изучении макросейсмического поля, нам очень помогли социальные сети, в которых с момента начала землетрясения пользователи сразу начали писать, кто где находился и как реагировал. Сотрудники МЧС РА призывали не паниковать.

Таблица 4.

Макросейсмическое поле наблюдений в баллах Ереванского землетрясения 13 февраля 2021года 11 часов 29 минут (по времени по Гринвичу) с магнитудой $M_s=4.7$

5-6 балла				
1	40,18	44,52	8	Ереван
2	40,07	44,43	8	Масис
3	40,06	44,58	8	Ланджазат
4	40,161	44,3797	12	Мусалер
5	40,1932	44,3677	15	Баграмян
5 балла				
6	40,167	44,31	18	Вагаршапат
7	40,12	44,73	19	Гарни
8	40,208	44,696	19	Зовк
9	40,27	44,63	21	Абовян
10	40,317	44,483	23	Егвард
11	40,294	44,36	24	Аштарак
12	40,27	44,32	24	Ошакан
13	40,3	44,28	29	Агарак
14	40,1095	44,1824	28	Арташар
4-балла				
15	39,84	44,71	35	Арарат
16	40,083	44,057	39	Армавир
17	40,389	44,226	39	Амберд
18	40,293	44,079	42	Аруч
19	40,588	44,36	55	Апаран
20	40,35	45,12	58	Гавар
21	40,325	45,11	56	Гандзак
22	40,205	45,187	58	Еранос

3 балла				
23	40,55	44,96	62	Севан
24	40,5	45,27	78	Шоржа
25	40,572	43,867	75	Маралик
26	40,665	45,254	88	Мартуни
27	40,53	43,66	86	Айкадзор
28	40,79	43,85	94	Гюмри
2-3 балла				
29	40,0833	45,8339	113	Верин Шоржа
30	40,18	45,73	104	Варденис
31	39,21	46,4	190	Капан
32	39,21	46,4	190	Вардашен




Рис. 2. Макросейсмическая карта изосейст Ереванского землетрясения 13 февраля 2021 года 15 часов 29 минут по местному времени (по Гринвичу 11²⁹) эпицентре с интенсивностью в $I_0 = 6$ баллов с магнитудой $M_S = 4.7$

Определены геометрические параметры Ереванского землетрясения 13 февраля 2021 года 15 часов 29 минут по местному времени (по Гринвичу 11²⁹) эпицентре с интенсивностью в $I_0 = 6$ баллов с магнитудой $M_S = 4.7$ табл. 5.

Таблица 5.

Основные параметры макросейсмического поля Ереванского землетрясения 13 февраля 2021 года 15 часов 29 минут по местному времени (по Гринвичу 11²⁹) эпицентре с интенсивностью в $I_0 = 6$ баллов с магнитудой $M_S = 4.7$

I_i , баллы	Геометрические параметры поля изосейст, км				Площадь изосейст S_i , км ²
	l_a	l_b	\bar{l}	l_a/l_b	
5-6	16	14	14.9	1.14	704
5	31	26	28.4	1.19	2532
4	71	58	64.17	1.22	12937
3	123	87	103.4	1.41	33.618

Примечание. l_a , l_b – продольная и поперечная полуоси; $\bar{l} = \sqrt{l_a \cdot l_b}$ – их среднее геометрическое.

При сопоставлении карты изосейст Ереванского землетрясения 13 февраля 2021 года 15 часов 29 минут по местному времени (по Гринвичу 11²⁹) эпицентре с интенсивностью в $I_0 = 6$ баллов с магнитудой $M_S = 4.7$ с макросейсмической картой изосейст Ереванского-III землетрясения на рис. 2 в сопоставлении с таковой для Ереванского-II землетрясения 1984 г. она несколько отличается. Форма площади сотрясения землетрясения 1997 г. близка к эллипсу, большая ось которого в плейстосейстовой области имеет северо-восточное простирание с азимутом $AZM = 30^\circ$. Очаг Ереванского-III землетрясения по своему воздействию в эпицентре сходен с Ереванским-I (07.01.1937 г.) и Ереванским-II (02.08.1984 г.) землетрясениями. Однако система изосейст землетрясения 02.08.1984 г. [2] отличается от таковой для описываемого землетрясения 1997 г. (рис. 3), несмотря на близость их инструментальных гипоцентров. Плейстосейстовая область землетрясения 1 марта 1997 г. развернута относительно таковой для землетрясения 02.08.1984 г. на 70° градусов (с северо-западного простирания на северо-восточное).




Рис. 3. Сопоставление карты изосейст землетрясений 1 марта 1997 г. и 2 августа 1984 г.

1 – бальность по шкале MSK-64 [4]; 2 – изосейста Ереванского-III землетрясения 01.03.1997 г., проведенная уверенно (а) и приближенно (б), соответственно; 3 – изосейста Ереванского-II землетрясения 02.08.1984 г. [3]; 4,5 – инструментальный и макросейсмический эпицентры землетрясения 01.03.1997 г., соответственно; 6 – глубинный разлом (I-I – Ереванский, II-II – Арарат-Спитакский, III-III – Армени-Севанский, IV-IV – Ванский по [5])

Эпицентры землетрясений 07.01.1937 г. и 02.08.1984 г. приурочены к дизъюнктивному узлу области пересечения отрезков глубинных разломов двух направлений: Ереванского общекавказского и Арарат-Спитакского меридионального. Эпицентр землетрясения 1 марта 1997 г приурочен к дизъюнктивному узлу пересечения глубинных разломов Ванского (общекавказского простирания), Артени-Севанского, Арарат – Спитакского (рис. 3) [6].

На основе данных первых вступлений записей сейсмических станций определен механизм очага Ереванского землетрясения 13 февраля 2021 года 15 часов 29 минут по местному времени (по Гринвичу 11²⁹) эпицентре с интенсивностью в $I_0 = 6$ баллов с магнитудой $M_S = 4.7$.

Получили в очаге взброс, подробное решение получили и в KAN- Kandilli Observatory and Earthquake Research Institute.




Рис. 4. Стереограмма Ереванского землетрясения 13 февраля 2021 года 15 часов 29 минут по местному времени (по Гринвичу 11²⁹) эпицентре с интенсивностью в $I_0 = 6$ баллов с магнитудой $M_S = 4.7$ по решению RSSP и KAN

Таблица 6.

Результаты фокального механизма очага Ереванского землетрясения 13 февраля 2021 года 15 часов 29 минут по местному времени (по Гринвичу 11²⁹)

Date, time UTC	$\varphi^{\circ}N$	$\lambda^{\circ}E$	region	h	M	Strike 1	Dip 1	Rake 1	Strike 2	Dip 2	Rake 2	agency
<u>2021-02-13 11:29:23.45</u>	40,07	44,48	ARMENIA	10	4,7	59.9	60.9	50.1	299.7	47,9	139,0	<u>RSSP</u>
<u>2021-02-13 11:29:23.0</u>	40.0	44.5	ARMENIA	9	4.6	40	57	48	279	51	136	<u>KOERI</u>

Зона является сейсмоактивной, она известна разрушительными землетрясениями табл. 1. Большое значение имеет макросейсмическое обследование Ереванского землетрясения. При составлении макросейсмической карты изосейст очень помогла информация, полученная от пользователей социальных сетей. При этом землетрясении были сильно напуганы жители высотных зданий. Им было рекомендовано следовать общеизвестным правилам поведения в

случае подобных землетрясений. Было выявлено, что в Ереване много аварийных зданий, и, что в первую очередь надо заниматься вопросами их усиления.

Литература

1. **Бабаян Т.О., Кулиев Ф.Т.**, Папалашвили В.Г., Шебалин Н.В., Вандышева Н.В. (отв.сост.) ТТБ. Кавказ 50-1974г.г. $M \geq 4.0$ [$I_0 \geq 5$] //Новый каталог сильных землетрясений на территории СССР с древнейших времен до 1975 г. Наука. М., 1977. С. 69-170.
Vabayan T.O., Kuliev F.T., Papalashvili V.G., Shebalin N.V., Vandysheva N.V., (otv. sost.) ТТБ. Kavkaz 50-1974г.г. $M \geq 4.0$ [$I_0 \geq 5$] //Noviy katalog silnykh zemletryaseny na territorii SSSR s drevneyshikh vremen do 1975 g. Nauka. M., 1977. S. 69-170.
2. **Агаларова Э.А.**, Гасанов А.Г., Гедакян Э.Г., Гоцадзе О.Д., Каспаров В.А., Папалашвили В.Г., Пирузян С.А., Саргсян Г.В., Светлов А.Б., Тутберидзе Н.П., Шафадияев Р.Н., Шенгелия И.С. 1987. Землетрясения Кавказа // Землетрясения в СССР в 1984 году. М.: Наука. С. 19-35.
Agalarova E.G., Gasanov A.G., Gedakyan E.G., Gocadze O.D., Kasparov V.A., Papalashvili V.G., Piruzyan S.A., Sargsyan G.V., Svetlov A.B., Tutberidze N.P., Shafadiyaev R.N., Shengeliya I.S. 1987. Zemletryasenie Kavkaza// zemletryaseniya v SSSR v 1984 godu. M.: Nauka. С. 19-35.
3. **Гедакян Э.Г.**, Назаретян С.Н., Саргсян Г.В., Саркисян Н.М. и др. 1987. Ереванское землетрясение 2 августа 1984 года // Поиск геофизических предвестников землетрясений на Кавказе. Тбилиси: Изд-во Мецниереба. С. 48-68. (Тр. Ин-та геофизики АН Груз. ССР; т. 54).
Gedakyan E.G., Nazaretyan S.N., Sargsyan G.V., Sarkisyan N.M. I dr. 1987. Erevanskoe zemletryasenie 2 avgusta 1984 goda // Poisk geofizicheskikh predvestnikov zemletryaseny na Kavkaze. Tbilisi: Izd-vo Mecniereba. S. 48-68. (Tr. In-ta geofizicheski AN Gruz. SSR; t. 54).
4. **Медведев С.В.** (Москва), Шпонхойер В. (Иена), Карник В. (Прага). Шкала сейсмической интенсивности MSK-64. М.: Изд-во МГК АН СССР. 1965. - 11 с.
Medvedev S.V. (Moskva), Shponkhoer V. (Iena), Karnik V. (Praga). Shkola seysmicheskoy intensivnosti MSK-64. M.: Izd-vo MGK AN SSSR. 1965. - 11 s.
5. **Габриелян А.А.**, Саркисян А.О., Симонян Г.П., Сейсмотектоника Армянской ССР. Ер.: Изд-во ЕГУ. 1981. - 283 с.
Gabrielyan A.A., Sarkisyan A.O., Simonyan G.P., Seysmotektonika Armyanskoy SSR. Yer., .: Izd-vo EGU. 1981. - 283 s.
6. **Саргсян Г.В.**, Гаспарян В.Р., Ереванское-III землетрясение 1 марта 1997 года с $MLH=3.8$ $I_0=6$ (Армения). С. 222 - 225.
Sargsyan G.V., Gasparyan B.R., Erevanskoe-III zemletryasenie 1 marta 1997 goda s $MLH=3.8$ $I_0=6$ (Armeniya). S. 222 - 225.

Ս.Ս. Մարգարյան, Գ.Ռ. Աբգարյան, Ա.Ա. Գևորգյան, Հ.Վ. Սարգսյան

ԵՐԵՎԱՆԻ ԵՐԿՐԱՇԱՐԺ (ՀԱՅԱՍՏԱՆ)

2021 թվականի փետրվարի 13-ին տեղական ժամանակով ժամը 15:29-ին էպիկենտրոնում $I_0 = 6$ բալ ուժգնությամբ $M_S=4.7$ մագնիտուդով

2021 թվականի փետրվարի 13-ին տեղական ժամանակով ժամը 15:29-ին (Գրինվիչի ժամանակով 11:29-ին) ՀՀ ԱԻՆ Սեյսմիկ պաշտպանության տարածքային ծառայության սեյսմիկ ցանցը գրանցել է 4,7 մագնիտուդով երկրաշարժ՝ խորությունը 10 կմ, երկրաշարժի էպիկենտրոնը գտնվում է Երևան քաղաքից 8 կմ հարավ-արևելք (Նուբարաշեն վարչական շրջանից մոտ 2 կմ հյուսիս): Էպիկենտրոնի աշխարհագրական կոորդինատներն են՝ հյուսիսային լայնության 40.07 և արևելյան երկայնության 44.48: Ստորգետնյա ցնցումների ուժգնությունը էպիկենտրոնում կազմել է 6 բալ:

Առանցքային բառեր. էպիկենտրոն, կենտրոնացում, խորություն, ինտենսիվություն, մակրո-սեյսմիկ հետազոտություն:

S.S. Margaryan, G.R. Abgaryan, A.A. Gevorgyan, H.V. Sargsyan

YEREVAN EARTHQUAKE (ARMENIA)

ON FEBRUARY 13, 2021, 15.29 BY LOCAL TIME, AT THE EPICENTER WITH INTENSITY $I_0=6$ POINTS, WITH $M_S=4.7$ MAGNITUDE

Annotation of the February 13, 2021, at 15.29 by local time (at 11.29 GMT), an earthquake with 4.7 magnitude at the depth of 10km was registered by the seismic network of territorial survey of seismic protection MES, RA. The epicenter was located at 8 km south-east of Yerevan city (about 2 km north of Nubarashen administrative district). The geographic coordinates of the epicenter are 40,07 northern latitude and 44,48 east longitude. The intensity of underground tremors in the epicenter was 6 points.

Keywords: epicenter, concentration, depth, intensity, macroseismic research.

Մարգարյան Սոս Սամվելովիչ - кандидат геол.-мин. наук (ТССЗ МЧС РА).

Աբգարյան Գոար Րաֆիկովնա - (ТССЗ МЧС РА).

Գևորգյան Անի Ամբաշումովնա - (ТССЗ МЧС РА).

Սարգսյան Գեգինե Վլադիմիրովնա - (ТССЗ МЧС РА).

Дата представления: 28.06.2022

Дата рецензии: 05.07.2022

Ռ.Գ. Ղարիբյան

ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ «ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ» ԱՌԱՐԿԱՅԻ ՌԻՍՈՒՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՁԵՎԵՐԸ ԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ

Հողվածում ներկայացվում է ՀՀ ԱԻՆ ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի միջին մասնագիտական և բակալավրի կրթական ծրագրերով ուսուցման խմբերում «Իրավունքի հիմունքներ» առարկայի ուսուցման ձևերը և հեղինակի կողմից մշակված անձնակողմնորոշիչ տեխնոլոգիայի կիրառությունը դասի ժամանակ:

Առանցքային բառեր. ուսուցում, ուսուցման ձև, մանկավարժական տեխնոլոգիա, դասախոսություն, գործնական պարապմունք, սեմինար, ուսումնական կոնֆերանս, ինքնուրույն աշխատանք:

ՀՀ ԱԻՆ ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի բակալավրի կրթական ծրագրի ուսումնական պլաններում «Իրավունքի հիմունքներ» առարկայի ուսումնական խմբերում նախատեսված են՝ դասախոսություններ, սեմինարներ և գործնական պարապմունքներ:

Սակայն, ելնելով ուսումնական նյութի բովանդակությունից, դրա ուսուցման արդյունավետությունից, ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների ընձեռած հնարավորություններից կազմակերպվող ուսումնական պարապմունքների նախատեսված ձևերը մեր կողմից լրացվել են. ուսումնական կոնֆերանսներով, խորհրդատվություններով, ուսումնական պրակտիկայով, ուսանողների բազմազան ինքնուրույն աշխատանքներով, գիտելիքների ստուգման թեստերով:

Վերոհիշյալ առարկայի ուսուցումը միջին մասնագիտական կրթական ծրագրով խմբերում իրականացվում է մասամբ դպրոցական, մասամբ բուհական ուսումնական պարապմունքների ձևով: Միջին մասնագիտական կրթական ծրագրով խմբերում ուսուցման հիմնական ձևը դասն է, որն իրավամբ կարելի է դիտարկել որպես բաղադրիչների ինտեգրված փոխազդեցություն՝

- իրավունքի դասախոս,
- ուսանող,
- ուսումնական առարկայի իրավագիտական բովանդակություն,
- գործունեության մեթոդ,
- նպատակ և արդյունք:

«Իրավունքի հիմունքներ» առարկայի թեմաների բազմազանությունը, որը ձևավորվել է մեր պրակտիկայում, թույլ է տալիս խոսել տարբեր տեսակի դասերի առկայության մասին: Սակայն մեր կողմից հիմնականում գործածվում են ուսումնական պարապմունքների տարբեր դասակարգումներ՝ ըստ իրականացման մեթոդների, ըստ իրավական բովանդակության, ըստ դիդակտիկ նպատակների, կամ նույնիսկ, ուսուցման գործընթացի առանձին օղակների: Եթե դասակարգման համար որպես հիմք վերցնենք առաջատար մեթոդը, ապա կարող ենք տարբերակել՝ դասախոսություն, զրույց, բանավեճ, լաբորատոր դաս՝ իրավունքի աղբյուրներով:

Եթե ուշադրություն դարձնենք միջին մասնագիտական կրթական ծրագրով խմբերում գործունեությանը, ապա պետք է նկատի ունենալ դաս-ընդհանրացումներ, դաս-խաղեր, դաս-կոնֆերանսներ և պրոբլեմային դասեր: Այն դեպքում, երբ դասը դիտարկում ենք իրավաբա-

նական կրթական գործընթացի տարր ուսումնական առաջադրանքի տեսանկյունից, կարող ենք առանձնացնել՝ ներածական, նոր նյութի հաղորդման, համակցված կամ կոմբինացված, վերահսկողության, գիտելիքների ստուգման ու հաշվառման և կրկնության դաս:

Ներածական դասը, որպես կանոն, իրականացվում է առարկայի հենց սկզբում: Այդ դասին բացատրում ենք առարկայի ուսումնասիրության առանձնահատկությունները, ուղղորդում ուսանողների հետաքրքրություններն իրավունքի իմացության նկատմամբ, նշում ընդհանուր պահանջները, որոնք ներկայացվում են ուսումնական գործընթացում: Նման դասի հետագա ուսուցման արդյունավետ կազմակերպման ժամանակ անհրաժեշտ է պարզել ուսանողների նախնական պատրաստվածության մակարդակը և հիմքեր ստեղծել առարկայի նկատմամբ ուսանողների կայուն հետաքրքրության ձևավորման համար: Այդ նպատակով օգտակար է կազմակերպել խաղեր, տարրական իրավական միջադեպերի լուծում և այլն:

Նոր նյութի ուսուցման դասը նպատակահարմար է կազմակերպել այն դեպքում, երբ նախորդ ուսումնասիրված նյութը լավ է յուրացվել: Նոր նյութի հաղորդումը հատուկ ուշադրություն է պահանջում՝ պայմանավորված իր կարևորությամբ, բարդությամբ և այլն: Նման դասը կարելի է կազմակերպել դասախոսության, ֆիլմի դիտման և այլնի տեսքով: Այդ դեպքում գերակշռում է հատկապես նոր նյութի ուսումնասիրությունը:

«Իրավունքի հիմունքների» համակցված դասը մեծ մասամբ բաղկացած է ուսումնական գործընթացի բոլոր հիմնական բաղադրիչներից: Արժե համաձայնել այն հետազոտողների հետ, ովքեր առանձնացնում են այդ դասերի կառուցվածքային բաղադրիչները.

- կազմակերպչական մաս՝ ուսանողները պատրաստվում են առաջիկա ուսումնական գործունեությանը,
- դասի նպատակի ներկայացում,
- դասահարցում՝ ներառում է մի շարք առաջադրանքներ նախորդ թեմայի յուրացման մակարդակը ստուգելու համար,
- նոր նյութի հաղորդում,
- ուսումնասիրված նյութի ամրապնդում,
- դասի ամփոփում՝ ուսումնասիրված նյութի ընդհանրացում,
- տնային աշխատանքի հանձնարարում [1]:

Կրկնության դասերը նպատակահարմար ենք համարում անցկացել առարկայական մոդուլի, ամբողջական թեմայի, ամբողջական բաժնի և դասընթացի յուրացման ընթացքում բացահայտված խնդրի ուսումնասիրելուց հետո:

Ընդհանրացնող կրկնության դասերի հիմնական նպատակն է համակարգել ուսանողների իրավական գիտելիքները, տրամաբանական կապ հաստատել ուսումնասիրված թեմաների, իրավական երևույթների միջև և ընդհանրացնել դրանք: Նման դասի համար անհրաժեշտ ենք համարում նախօրոք պատրաստել հարցերն ու առաջադրանքները և ներկայացնել ուսանողներին: Կրկնվող-ընդհանրացնող դասերը կարող են կրել խաղային կամ օրենքների հետ խմբային աշխատանքի բնույթ և այլն:

Դաս-դասախոսության ժամանակ դասախոսն ուսանողներին ներկայացնում է իրավական որոշակի խնդրի բովանդակությունը: Ուսանողները ունենդրում են դասախոսության նյութը, անհրաժեշտության դեպքում կատարում գրառումներ և այլն: Պետք է պայմանավորվել

որոշակի հապավումների շուրջ, որոնք ժամանակ խնայելու նպատակով կարող են օգտագործվել դասի ժամանակ: Նման պարագայում ուսանողները սովորում են առանձնացնել հիմնական մտքերը և ինքնուրույն կատարել նշումներ: Դասախոսության նպատակն է զարգացնել ուսանողների իրավական տեղեկատվություն լսելու, դրանք ինքնուրույն վերլուծելու, հիմնականը կարևորելու, ինչպես նաև նշումներ կատարելու կարողությունը:

Կարևորում ենք նաև ուսանողներին դասախոսության պլանի ներկայացումը, որը պետք է գրի առնեն: Անհրաժեշտ է հետևել ուսանողների կատարած գրառումներին, ուղղել թույլ տրված սխալները:

Դասախոսությունը որոշակի գիտական գիտելիքների տրամաբանական-հետևողական ներկայացումն է ուսանողներին: Դա բուխերում ուսումնական գործընթացի հիմնական ձևերից է և դասավանդման մեթոդներից: Դասախոսությունները դասավանդման պրակտիկայում հայտնվեցին Հին Հունաստանում, այնուհետև լայն տարածում գտան միջնադարյան համալսարաններում և պահպանեցին իրենց առաջատար դերը բարձրագույն կրթության մեջ մինչև մեր օրերը: Դասախոսությունը կարելի է անցկացնել ավանդական միակողմանի կապի ձևով, երբ դասավանդողը պատմում է, իսկ ուսանողները պասսիվ վիճակում լսում են: Սակայն արդյունավետ է դասախոսությունն իրականացնել ուսումնական նպատակներին հասնելու ակտիվ գործունեություն՝

- պրոբլեմային դասախոսություն,
- դասախոսություն-կոնֆերանս,
- դասախոսություն առանց կոնսպեկտի՝ բարձրաձայն մտորումներ,
- հեղինակային դասախոսություն,
- դասախոսություն հետադարձ կապի կիրառմամբ,
- դասախոսություն կոնկրետ իրավիճակների քննարկմամբ,
- դասախոսություն երկխոսություն,
- դասախոսություն՝ այլ մեթոդների հետ համակցված [3]:

Այդ դեպքում դասախոսը հանդես է գալիս գիտության և ուսանողների միջև միջնորդի յուրօրինակ դերում:

Ուսումնական դասախոսության արդյունավետությունը և դրա բարձր որակն ապահովում են հետևյալ դիդակտիկ պահանջներին համապատասխանությունը, որոնք կարող են ծառայել նաև որպես դասախոսության հաջողության չափանիշ.

- ներկայացված նյութի գիտական բնույթը և տեղեկատվական բովանդակությունը,
- դատողությունների ապացույցներ և փաստարկներ,
- բավարար քանակությամբ վառ և համոզիչ օրինակների, փաստերի, փաստաթղթերի առկայությունը,
- հուզականությունը,
- դասախոսի անմիջական հետաքրքրությունը ներկայացման առարկայի նկատմամբ,
- ուսանողների մտածողությունը, ուշադրությունը և ակտիվացումը՝ ապահովելով նրանց մտքի շարժումը դասախոսի մտքին համահունչ, նյութի մեթոդական նպատակամետ կառուցվածքը (ներածություն, հիմնական մտքերի ու դրույթների ընդգծում, տարբեր ձևակերպումներով եզրակացությունների ընդգծում ու կրկնում և այլն),

- մատչելի, պարզ գրական լեզուն,
- ներմուծված եզրույթների և հասկացությունների պարզաբանումը,
- խոսքի տեմպը,
- ուսանողի լսելու, ընկալելու և համառոտ գրելու ընդունակությունը,
- դիդակտիկ նյութերի և տեսալսողական միջոցների օգտագործումը:

Դասախոսության ժամանակ դասախոսն իրականացնում է իր հիմնական մանկավարժական գործառույթները՝ ուսուցանող, կրթող, դաստիարակող, զարգացնող, կազմակերպչական և օժանդակող:

Կրթական գործառույթն արտահայտվում է ուսանողներին մասնագիտական գործունեության համար անհրաժեշտ հիմնական գիտական և գործնական տեղեկատվության հաղորդմամբ: Կրթական գործառույթը ներառում է ուսանողների արժեքային կողմնորոշումների, աշխարհայացքի, իրավագիտակցության ձևավորման խթանումն ուսումնական նյութի ներկայացման, տարբեր դիրքորոշումների և տեսակետների մեկնաբանման, տեսությունը պրակտիկայի հետ կապելու, ընթացիկ իրավական կարևոր իրադարձությունների քննարկման միջոցով: Զարգացման գործառույթն իրականացվում է դասախոսի և ուսանողների անմիջական մանկավարժական հաղորդակցության ընթացքում՝ ուսանողների ստեղծագործ մտավոր գործունեության ակտիվացման միջոցով՝ առաջադրելով և լուծելով պրոբլեմահարույց խնդիրներ, որոնք ապահովում են մասնագիտական և անձնական զարգացում [4]:

Կազմակերպչական և օժանդակող գործառույթը նախատեսում է ուսանողների ինքնուրույն աշխատանքի կազմակերպում և կառավարում, ինչպես դասախոսության, այնպես էլ արտալսարանային աշխատանքների՝ խորհրդատվությունների ընթացքում, միաժամանակ, խրախուսում՝ դասախոսության մեջ բարձրացված հարցերի անկախ խորը ուսումնասիրության համար:

Կախված դիդակտիկ նպատակներից ուսումնական գործընթացում առանձնանում են դասախոսությունների հետևյալ տեսակները՝

1. ներածական դասախոսություն, որը, որպես կանոն, կարդացվում է դասընթացի սկզբում: Այն ուսանողներին ընդհանուր պատկերացում է տալիս դասընթացի բովանդակության, ուսումնական գործընթացում դրա տեղի և հետագա գործնական գործունեության մեջ ունեցած դերի մասին: Ներածական դասախոսությունը կարող է լինել մեծ մասամբ հանրաճանաչ և մատուցվող մենախոսություն: Ներածական դասախոսության ժամանակ անհրաժեշտ է տալ աշխատանքի համար օգտագործվող գրականության ցանկ, բացատրել, թե գործնական պարապմունքներում ի՞նչ հարցեր են ուսումնասիրվելու, ընդգծել խնդիրները, որոնց լուծումը հատուկ ջանքեր է պահանջում:

Մեր դասավանդման ժամանակ ներածական դասախոսությունը սկսում ենք բացատրելով, թե ինչպե՞ս պետք է ուսանողներն աշխատեն դասախոսության ժամանակ՝ հաշվի առնելով «Իրավունքի հիմունքներ» առարկայի առանձնահատկությունները: Իրավունքի որոշակի ճյուղի և համապատասխան բաժնի պատմության, նրա գիտական ներուժի, այդ ոլորտում առկա գիտական դպրոցի հետ համագործակցության հեռանկարների մասին հակիրճ պատմությունը շատ օգտակար է ուսանողների մոտ հետաքրքրություն առաջացնելու համար:

2. Ընդհանրական դասախոսությունը պարունակում է հակիրճ, հիմնականում ընդհանրացված տեղեկատվություն որոշակի միատարր ծրագրային խնդիրների վերաբերյալ: Այս դասախոսություններն ավելի հաճախ կիրառվում են կրթության ավարտական փուլերում (օրինակ՝ ամփոփիչ ատեստավորումից առաջ), ինչպես նաև առկա և հեռակա ուսուցման ձևերում:
3. Կողմնորոշիչ դասախոսությունը ներառում է առարկայի հիմնական նյութի հակիրճ բովանդակությանը կամ դրա մի մասի յուրացման ընդհանուր ցուցումները: Նման դասախոսությունը, որպես կանոն, բացատրական բնույթ ունի, հնարավոր է անցկացնել ցուցադրական նյութի օգտագործմամբ: Դասախոսն ամփոփում է ուսումնասիրվող օբյեկտի վերաբերյալ ժամանակակից պատկերացումները, ուսանողների ուշադրությունը կենտրոնացնում չլուծված խնդիրների վրա, արտահայտում իր սեփական տեսակետը, տալիս գիտական կանխատեսում ուսումնասիրվող իրավունքի ճյուղի կամ ինստիտուտի հետագա զարգացման վերաբերյալ: Հեռակա ուսուցման բաժնում արդյունավետ է այդ տեսակի դասախոսությունների ընթացքում օգտագործել պրոբլեմահարույց մեթոդը՝ դասախոսը կարող է ուսանողներին առաջարկել իրենց պրակտիկ գործունեության ընթացքում առաջադրված խնդիրների վերաբերյալ գտնել պատասխաններ: Ընդհանուր առմամբ, դասախոսությունը ծառայում է դասընթացի ուսումնական նյութը համակարգված ներկայացնելուն:
4. Ամփոփիչ դասախոսությամբ ավարտում է ուսումնական նյութի ուսումնասիրությունը: Այն ամփոփում է, արդեն իսկ ուսումնասիրվածը և դիտարկում գիտության որոշակի ճյուղի զարգացման հեռանկարները: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում նախաքննական շրջանում ուսանողների ինքնուրույն աշխատանքին:

Ըստ դասի վարման եղանակի կարելի է առանձնացնել դասախոսությունների հետևյալ տեսակները.

1. տեղեկատվական դասախոսություն, որի ժամանակ օգտագործվում է բացատրության և պատկերավոր ներկայացման մեթոդը: Սա բուհերում ամենաավանդական դասախոսությունն է:
2. Պրոբլեմահարույց դասախոսություն՝ ներառում է դասավանդողի կողմից ամբողջ լսարանի ներգրավումը որևէ հետազոտական խնդրի լուծման մեջ: Յուրաքանչյուր ուսումնական նյութում դասախոսը շոշափում է որոշակի խնդրի էությունը, բացահայտում դրա լուծման հնարավոր ուղիները, ցույց է տալիս ձեռքբերումների տեսական և գործնական նշանակությունը, այսինքն՝ յուրաքանչյուր դասախոսություն որոշակի չափով ունի պրոբլեմահարույց բնույթ: Դասախոսության ընթացքում ցանկալի է ներառել գոնե մեկ խնդրահարույց հարց:
3. Դասախոսություն-վիզուալիզացիան ներառում է նյութի տեսողական ներկայացում ուսուցման տեխնիկական միջոցներով (աուդիո-վիդեո սարքավորումներ և այլն)՝ ցուցադրվող տեսողական նյութերի մշակմամբ կամ հակիրճ մեկնաբանությամբ:
 - Դասախոսությունների տեսողականացման տեսակներն են՝
 - ✓ տեսադասախոսություն: Սա դասախոսի կողմից տեսագրված դասախոսություն է: Այն կարող է համալրվել դասախոսության ներկայացումը պատկերող մուլտիմեդիա հավելվածներով: Նման լրացումները ոչ միայն հարստացնում են դասախոսության բովան-

դակությունը, այլև ավելի աշխույժ ու գրավիչ են դարձնում դրա ներկայացումը: Տեսական նյութի ներկայացման այս մեթոդի առավելությունը ցանկացած հարմար պահի դիտելու և (կամ) լսելու հնարավորությունն է՝ բազմիցս անդրադառնալով ամենադժվար հարցերին:

- ✓ Մուլտիմեդիա դասախոսություն: Դասախոսության նյութի հիման վրա ինքնուրույն աշխատանքի համար ուսանողները կարող են օգտվել համակարգչային ուսուցման ինտերակտիվ ծրագրերից: Սրանք դասագրքեր են, որոնցում տեսական նյութը, մուլտիմեդիա գործիքների կիրառման շնորհիվ կառուցված է այնպես, որ յուրաքանչյուր ուսանող կարողանա ինքնուրույն ընտրել նյութն ուսումնասիրելու լավագույն միջոցը, դասընթացի վրա աշխատանքի հարմար տեմպը և լավագույնս ուսումնասիրելու եղանակը: Նման ծրագրերում ուսուցման արդյունքը ձեռք է բերվում ոչ միայն բովանդակության շնորհիվ, այլև, օրինակ, թեստավորման ծրագրերի կիրառմամբ, որոնք թույլ են տալիս ուսանողին գնահատել տեսական ուսումնական նյութի յուրացման աստիճանը:
- ✓ Դասախոսություն-երկխոսությունը նախատեսում է նյութի ներկայացում երկխոսության ձևով երկու դասախոսի, օրինակ՝ գիտնականի և պրակտիկանտի, գիտական երկու ոլորտների ներկայացուցիչների միջև:
- ✓ Սադրիչ դասախոսությունը (դասախոսություն նախապես ծրագրված սխալներով) նախատեսված է տրամադրվող տեղեկատվությունը մշտապես վերահսկելու և սխալներ փնտրել ուղղությամբ ուսանողներին խրախուսելու համար: Դասախոսության ավարտին ախտորոշվում է ուսանողների գիտելիքները և վերլուծվում թույլ տրված սխալները:
- ✓ Դասախոսություն-կոնֆերանսն անցկացվում է որպես գիտական և գործնական պարապմունք՝ ուսումնական ծրագրի շրջանակներում նախապես որոշված խնդրի վերաբերյալ ուսանողների զեկույցներով և ելույթներով: Վերջում դասախոսն ամփոփում, լրացնում և պարզաբանում է տեղեկատվությունը, ձևակերպում հիմնական եզրակացությունները:
- ✓ Դասախոսություն-խորհրդակցությունը ենթադրում է նյութի ներկայացում «հարց-պատասխան» կամ «հարց-պատասխան-քննարկում» ձևով:

Մենք, որպես կանոն, դասախոսության պատրաստումը սկսում ենք դասախոսության կառուցվածքի մշակմամբ: Այստեղ ուղեցույցը մեր աշխատանքային ծրագիրն է, որտեղ հաշվի է առնված ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի կրթության բովանդակային առանձնահատկությունները: Դասախոսության մշակման համար հիմք են հանդիսանում ուսումնական պլանը և աշխատանքային առարկայական նկարագիրը: Դասախոսությունների քանակը որոշվում է ուսումնական պլանով: Դասախոսության կառուցվածքը սովորաբար ներառում է ներածական, հիմնական և ամփոփիչ մասեր: Դասախոսության վրա աշխատելու ժամանակ կատարում ենք հետևյալ քայլերը՝

- դասախոսությունների համար նյութի ընտրություն, դասախոսության պլանի կազմում, հիմնական և լրացուցիչ գրականության ընտրություն,

- դասախոսության ծավալի և բովանդակության որոշում, հիմնարար աղբյուրների ուսումնասիրություն,
- ներկայացման հաջորդականության և տրամաբանության ընտրություն, ամփոփում,
- դիտակտիկ նյութերի և ուսուցման տեխնիկական միջոցների ընտրություն,
- դասախոսության ձևի մշակում:

Գործնական պարապմունքները, ինչպես դասախոսությունները «Իրավունքի հիմունքներ» առարկայի ուսումնական գործընթացի էական տարրեր են: Գործնական պարապմունքների նպատակն է խորացնել, ընդլայնել դասախոսությունների ընթացքում ձեռք բերված գիտելիքները, զարգացնել գործնական նշանակալի կարողություններ և հմտություններ: Դրանք անցկացվում են երկու-երեք դասախոսությունից հետո և կազմում դասախոսության տրամաբանական շարունակությունը: Գործնական դասերը նպաստում են ուսանողների մասնագիտական մտածողության և խոսքի մշակույթի զարգացմանը, ներառյալ իրավական եզրույթների տիրապետումը, հնարավորություն են ընձեռում յուրացրած գիտելիքների ստուգման, գործառնական հետադարձ կապի ապահովման համար:

Անհրաժեշտ է գործնական պարապմունքների պլանները համապատասխանեցնել դասախոսությանը: Դրանք անշուշտ քննարկվում և հաստատվում են ամբիոնի նիստում: Նպատակահարմար է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջև ուսանողների ինքնուրույն աշխատանքի նախատեսումը՝ գրականության, նորմատիվ փաստաթղթերի ուսումնասիրում: Գործնական պարապմունքներին ուսանողները ձեռք են բերում հատուկ իրավիճակներում իրավական նորմերը կիրառելու, նորմատիվ փաստաթղթերը մեկնաբանելու, բազմաթիվ իրավական ակտերի մեջ անհրաժեշտ նորմերը գտնելու կարողություն, ինչպես նաև հնարավորություն են ստանում դրսևորել իրենց անհատականությունը, ինքնուրույն մտածողությունը և ընդունակությունը, պաշտպանել իրենց դիրքորոշումը:

Գործնական դասը նախապատրաստելու ժամանակ կատարում ենք հետևյալ քայլերը.

- դասի թեմայի ուսումնասիրություն,
- անակնկալներից խուսափելու և յուրաքանչյուր առաջադրանքի բովանդակության հետ կապված ցանկացած հարցի պատասխանելու պատրաստ լինելու համար լուծել տրված բոլոր առաջադրանքները,
- գործնական դասի անցկացման պլանի կազմում,
- դասի ժամանակի բաշխում ըստ դասի փուլերի՝ ներածություն, տեսական հարցերի քննարկում, խնդիրների լուծում, ամփոփում,
- հաջորդ դասի համար սովորողների ինքնուրույն աշխատանքի առաջադրանքների պլանավորում:

Սեմինարը հիմնված է դասախոսի ցուցումներով ուսանողների կողմից առանձին հարցերի, խնդիրների ինքնուրույն ուսումնասիրության վրա, որին հաջորդում է զեկույցների ներկայացում և դրանց համատեղ քննարկում: Սեմինարը, ի տարբերություն գործնական պարապմունքների, ունի ավելի տեսական բնույթ և նախատեսված է ուսումնական առարկայի կամ դրա որևէ բաժնի խորը ուսումնասիրության համար: Այն ուղղորդում է ուսանողներին կրթական և ճանաչողական գործունեության մեջ ավելի մեծ ինքնուրույնության դրսևորմանը, նպաստում նրանց գիտելիքների համախմբմանը, քանի որ սեմինարի ընթացքում համակարգվում, խորաց-

վում և վերահսկվում է առաջնային աղբյուրների, փաստաթղթերի, լրացուցիչ գրականության վերաբերյալ ինքնուրույն աշխատանքի արդյունքում ձեռք բերված գիտելիքները: Սեմինարների հիմնական նպատակն է ուսանողներին հնարավորություն ընձեռել տիրապետելու ուսումնասիրվող ոլորտի բնութագրերի հետ կապված տեսական գիտելիքների կիրառման կարողություններ և հմտություններ:

Սեմինարների հիմնական դիդակտիկ խնդիրներն են՝

1. ուսանողների ստեղծագործական մտածողության զարգացումը,
2. կրթական և ճանաչողական մոտիվացիայի բարձրացումը,
3. իրավունքի լեզվի տիրապետումը, իրավագիտության հասկացական ապարատի գործարկման հմտությունների յուրացումը,
4. իրավական խնդիրներ դնելու և լուծելու հմտությունների ու կարողությունների յուրացումը,
5. սեփական տեսակետը վիճարկելու կարողության ձևավորումը,
6. գիտելիքների խորացումը, համակարգումը, համախմբումը և վերահսկումը:

Մեր կողմից կիրառվում է սեմինարի երեք տեսակ՝

- 1) սեմինար ուսումնական առարկայի ուսումնասիրության համար, որը թեմատիկ առումով խիստ կապված է տեսական նյութի հետ,
- 2) սեմինար առարկայի կամ մեկ թեմայի առավել կարևոր և մեթոդաբանորեն բնորոշ թեմաների մանրակրկիտ ուսումնասիրության նպատակով,
- 3) արդիական խնդիրների լուծման հետազոտական տիպի սեմինար:

Սեմինարները սերտորեն կապված են դասախոսությունների հետ, սակայն չեն կրկնօրինակում դասախոսության նյութը, թեև սերտ կապ են պահպանում դրա հիմնարար դրույթների հետ: Դասախոսի առաջատար դերը դրսևորվում է ուսումնական աշխատանքի մանրակրկիտ պլանավորման, սեմինարի քննարկման համար կարևոր հարցերի առանձնացման, ինքնուրույն ուսումնասիրության համար գրականության ընտրության և քննարկման գործընթացի կառավարման մեջ: Որպես կանոն, սեմինարներին ներկայացվում են թեմայի չորս-հինգ հիմնարար հարցից ոչ ավելի:

Ուսանողներին սեմինարին նախապատրաստելու էությունը կայանում է նրանում, որ դասախոսն օգնում է կազմել ելույթի պլան, սովորեցնում է գրել գրական աղբյուրների ցանկ, ռեֆերատների և զեկույցների տեքստերի ճիշտ ձևավորում և խորհուրդներ տալիս ինքնուրույն աշխատանքի գործընթացում ծագած բոլոր հարցերի վերաբերյալ:

Ուսանողների ինքնուրույն աշխատանքը լսարանային աշխատանքի հետ մեկտեղ, կրթական գործընթացի ամենակարևոր ձևն է, քանի որ ոչ մի գիտելիք, կարողություն, հմտություն, որոնք չեն զուգակցվում ինքնուրույն գործունեությամբ, չեն կարող դառնալ մասնագետի գործունեության իրական տարրեր: Երբ ուսանողները տիրապետում են գիտական մտածողության կարողություններին, նրանք հնարավորություն են ստանում լուծել ավելի բարդ ճանաչողական խնդիրներ, և, վերջապես, նրանց մտավոր զարգացումը հասնում է այնպիսի մակարդակի, որ որոնման գործունեության բոլոր փուլերը դառնում են իրագործելի:

«Իրավունքի հիմունքներ» առարկայի ռեֆերատը կամ ինքնուրույն աշխատանքը նույնպես ճանաչողական գործունեության միջոց է: Այն պարունակում է հետազոտության տարր և

ներառում է ստեղծագործական անկախություն ընտրված թեմայի վրա աշխատանքի և ներկայացման գործընթացում, նյութի քննադատական ընկալում:

Վերոգրյալ առարկայի դասավանդման գործընթացում կիրառում ենք մեր կողմից մշակված մանկավարժական անձնակողմնորոշիչ տեխնոլոգիաները, դրանց արդյունավետությունը ստուգված է գիտափորձի միջոցով: Անձնակողմնորոշիչ ուսուցումը յուրաքանչյուր ուսանողի, ելնելով իր հակումներից և հետաքրքրություններից, հնարավորություն է ընձեռել ինքնադրսևորվել ճանաչողության և ուսումնական գործունեության մեջ: Անձնակողմնորոշիչ ուսուցման գործընթացի տեխնոլոգիան ենթադրում է ուսումնական տեքստի, դիդակտիկ նյութերի, դրանց օգտագործման մեթոդական ցուցումների, ուսումնական երկխոսության տեսակների, ուսանողների անձնական զարգացման նկատմամբ վերահսկողության ձևերի գիտելիքների յուրացման հատուկ ձևավորում: Միայն դիդակտիկ ապահովման, կրթության սուբյեկտիվության սկզբունքի իրականացման դեպքում կարող ենք դատել անձնակողմնորոշիչ գործընթաց կառուցելու մասին: Տեխնոլոգիայի նախագծման ընթացքում ձևակերպել ենք անձնակողմնորոշիչ ուսուցման գործընթացի դիդակտիկ ապահովման զարգացման հիմնական պահանջները:

Մեր կողմից մշակված անձնակողմնորոշիչ տեխնոլոգիայի կիրառությունը դասի ժամանակ կարելի է ներկայացնել աղյուսակի տեսքով, որտեղ հստակ առանձնացված են դասախոսի և ուսանողի գործառույթները:

Աշխատանքի բովանդակությունը և փուլերը	Գործունեությունը	
	դասախոս	ուսանող
I փուլ Նախապատրաստական	Որոշում է թեման, նպատակը, խնդիրները, պատրաստում է ուսումնական նյութը, անհրաժեշտության պարագայում մշակում դիդակտիկ և ցուցադրական նյութեր, ընտրում տեխնիկական միջոցներ, ձևակերպում ուսումնական գործունեության արդյունքները և գնահատման չափանիշները: Որոշում է հիմնախնդիրը:	Կարող են ներգրավել առավել ակտիվ ուսանողներին դիդակտիկ և ցուցադրական նյութերի պատրաստման գործընթացում:
II փուլ Ներածություն	Դասի կազմակերպական մասում ներկայացվում է թեման, նպատակը, խնդիրները, ուսումնական գործունեության արդյունքների գնահատման չափանիշները: Բացատրում է ուղեղային գրոհի մեթոդը /եթե ծանոթ չեն/, որպես նպատակների իրականացման միջոց:	Ուսանողները կատարում են նշումներ, ուղղում հետաքրքրող և անհասկանալի հարցերը:
III փուլ Գաղափարների և մոտեցումների ներկայացում	Նկարագրում /անհրաժեշտության պարագայում՝ բացատրում/ է տրված հիմնահարցը և տալիս «սկիզբ» հրահանգը: Կազմակերպում է գաղափարների գրառում ծայնագրիչով, տեսամագնիտոֆոնով, գրատախտակի կամ թղթի վրա: Կազմակերպում է արտահայտված գաղափարների, առաջարկությունների, մոտեցումների քննարկում՝ գնահատման չափանիշներին համապատասխան:	Արտահայտում են գաղափարներ և հիմնախնդրի լուծման առաջարկություններ:
IV փուլ Քննարկում	Ամփոփում է արդյունքները, վերլուծում և գնահատում ուսումնառողների գործունեությունը:	Կոլեկտիվ ձևով քննարկում են արտահայտված գաղափարները, առաջարկություն-

Աշխատանքի բովանդակությունը և փուլերը	Գործունեությունը	
	դասախոս	ուսանող
		ները և մոտեցումները: Որոշում են հիմնախնդրի լուծման առավել օպտիմալ և ռացիոնալ տարբերակը:
V փուլ Արդյունքների ամփոփում, վերլուծում և գնահատում	Առանձնացվում են առավել օպտիմալ և ռացիոնալ լուծումները:	Իրականացնել հինքնագնահատում և փոխադարձ գնահատում:

Կարևոր է նշել, որ հաճախ անձնակողմնորոշիչ տեխնոլոգիային հաղորդվում է պրոբլեմահարույց բնույթ: Այդ պարագայում ի լրումն վերոնշյալ աղյուսակի նախապատրաստական փուլում մշակվել է նաև պրոբլեմային իրավիճակի դրվածքը և ուսանողների հետ դրա լուծման տեխնոլոգիական քայլերը: Երկրորդ փուլում ստեղծվել է պրոբլեմային իրավիճակ (նկարագրվել է հիմնահարցը), ուսանողներին նպատակաուղղելով դրա լուծմանը: Իսկ ուսանողները բաժանվել են խմբերի, ծանոթացել պրոբլեմային իրավիճակին և համապատասխան հիմնահարցը նկարագրող նյութերին: Երրորդ փուլում որպեսզի համոզվենք, որ հիմնահարցը ճիշտ է ընկալվել բոլորի կողմից, մի խմբից անցնել ենք մյուսին, ակտիվացրել բանավեճը և անհրաժեշտության դեպքում նրանց ուղղորդել նպատակների իրականացմանը: Ուսանողներին հնարավորություն է տրվել հասկանալ, որ համալիր հիմնահարցերը կարելի է դիտարկել տարբեր ձևերով, խմբերում քննարկելով տրված հիմնահարցի լուծման տարբեր հնարավորությունները, դրանք վերլուծել, գտնել առավել օպտիմալ և ռացիոնալ տարբերակը, ձևակերպել միասնական կարծիք: Չորրորդ փուլում հակիրճ և առանց գնահատականների թվարկվել է հիմնահարցի լուծման առաջարկված տարբերակներից ամենահիմնականները, և հատկապես, առանձնացվել են մեծամասնության կարծիքների հետ համընկնողները: Ուսանողները հայտնել են արդյունքները, քննարկել այլ խմբերի առաջարկված տարբերակները [2]:

Այսպիսով, «Իրավունքի հիմունքներ» առարկայի դասավանդման գործընթացում կիրառելի են մանկավարժության տեսության մեջ նախատեսված ուսումնական պարապմունքների բոլոր ձևերը, սակայն դրանց կազմակերպման պարագայում ի հայտ են գալիս որոշ առանձնահատկություններ: «Իրավունքի հիմունքներ» առարկայի դասավանդման գործընթացում մեր կողմից մշակված մանկավարժական անձնակողմնորոշիչ տեխնոլոգիաների կիրառությունը փաստել է դրա արդյունավետությունը: Անձնակողմնորոշիչ ուսուցումը ուսանողներին հնարավորություն է ընձեռել հինքնադրսևորվել ճանաչողության և ուսումնական գործունեության մեջ:

Գրականություն

1. **Ամիրջանյան Յու.Ա.**, Սահակյան Ա.Ս., Մանկավարժություն, Եր., 2004. - 455 էջ:
Amirjanyan Yu.A., Sahakyan A.S., Mankavarzhutyun, Yer., 2004. – 455 ej:

2. **Ղարիբյան Ռ.Գ.**, Արտակարգ իրավիճակներում դպրոցականի անվտանգության մշակույթի զարգացման մանկավարժական տեխնոլոգիաները: Մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Եր., 2021. - 190 էջ:
Gharibyan R.G., Artakarg iravichaknerum dprocakani anvtangutyam mshakuyti zargacman mankavarzhakan tekhnologianery: Atenakhosutyun, mankavarzhakan gitutyunneri teknatsui gitakan astichani hajcman, Er., 2021. - 190 ej:
3. **Պետրոսյան Հ.Հ.**, Մանկավարժական ժամանակակից տեխնոլոգիաներ, Եր., 2012. - 564 էջ:
Petrosyan H.H., Mankavarzhakan zhamanakacic tekhnologianer, Yer., 2012. - 564 ej:
4. **Сластенин В.А.** и др., Педагогика: Учеб. пособие для студ. высш. пед. учеб. заведений / В.А. Сластенин, И.Ф. Исаев, Е.Н. Шиянов. Под ред. В.А. Сластенина. - М.: Издательский центр "Академия", 2002. - 576 с.
Slastenin V.A. i dr., Pedagogika: Ucheb. posobie dlya stud. vyssh. ped. ucheb. zavedeniy/V.A. Slastenin, I.F. Isaev, E.N. Shiyarov. Pod. red. V.A. Slastenina. M.: Izdatelskiy centr "Akademiya", 2002. - 576 s.

Ր.Գ. Գարիբյան

ОСНОВНЫЕ ВИДЫ И ПЕДАГОГИЧЕСКИЕ ТЕХНОЛОГИИ ОРГАНИЗАЦИИ ОБУЧЕНИЯ ПРЕДМЕТА “ОСНОВЫ ПРАВА” В УЧЕБНЫХ ЗАВЕДЕНИЯХ

В статье представлено применение видов преподавания и, разработанная автором, личностно-ориентирующая технология на занятиях “Основы права” в группах среднего специального образования и бакалавриата Государственной академии кризисного управления МЧС РА.

Ключевые слова: *обучение, вид обучения, педагогическая технология, лекция, практическое занятие, семинар, учебная конференция, самостоятельная работа.*

R.G. Gharibyan

BASIC FORMS OF ORGANIZING TEACHING OF THE SUBJECT "BASICS OF RIGHTS" IN EDUCATIONAL INSTITUTIONS AND PEDAGOGICAL TECHNOLOGIES

The article presents the ways of teaching the subject "Basics of Rights " in the teaching groups of the secondary professional and bachelor educational programs of the Crisis Management State Academy of the Ministry of Emergency Situations RA and the application of the personal orientation technology developed by the author during the class.

Առանցքային բառեր. *teaching, teaching method, pedagogical technology, lecture, practical training, seminar, educational conference, independent work.*

Ղարիբյան Ռուզաննա Գուրգենի – մանկ. գիտ. թեկնածու, ԷԿԱՄԳԱ մագիստրոս - անդամ (ՀՀ ԱԻՆ ՃԿՊԱ).

Ներկայացման ամսաթիվը՝ 22.09.2022

Գրախոսման ամսաթիվը՝ 30.09.2022

Ժ.Ք. Սարգսյան, Հ.Գ. Հարությունյան

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՇԽԱՏԱՆՔԻՑ ԶՐԿՎԱԾ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

Հողվածում ներկայացված են արտակարգ իրավիճակների հետևանքով աշխատանքից զրկված քաղաքացիների զբաղվածության ապահովման հարցեր:

Արտակարգ իրավիճակների հետևանքով աշխատանքից զրկված քաղաքացիների զբաղվածության ապահովման համար պայմանների ստեղծումը նպաստում է բնակչության սոցիալական լարվածության և աշխատուժի արտահոսքի մեղմմանը:

Առանցքային բառեր. արտակարգ իրավիճակ, զբաղվածություն, սոցիալական լարվածություն:

Հայաստանի Հանրապետությունում բնակչության զբաղվածության խթանման տնտեսական և կազմակերպական դրույթներն ու իրավական հիմքերը, սահմանում է զբաղվածության բնագավառում քաղաքացիների իրավունքների իրացումը, պետության կողմից մատուցվող ծառայությունների տեսակները, գործազրկության դեպքում սոցիալական աջակցության ձևերը, ինչպես նաև պետական-մասնավոր համագործակցության իրավական հիմքերը:

Զբաղվածությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով, «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, «Զբաղվածության մասին» օրենքով և այլ իրավական ակտերով, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

Աղետների ռիսկի նվազեցմանը (ԱՌՆ) և արտակարգ իրավիճակներին պատրաստվածությանն առնչվող հարցերը միայն մասնակի են հիշատակված սոցիալական պաշտպանության մասին օրենսդրության մեջ, և նմանապես՝ սոցիալական պաշտպանությանն առնչվող հարցերը միայն մասամբ են հիշատակված արտակարգ իրավիճակների, աղետների ռիսկի կառավարման մասին որոշ օրենսդրական ակտերում, քանի որ սոցիալական պաշտպանության և ԱՌՆ մասին համապատասխան օրենքները մշակվել են մեկը մյուսից անկախ:

«Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքում հստակ հիշատակում կա արտակարգ հանգամանքներից տուժածների մասին՝ «կյանքի դժվարին պայմաններում և արտակարգ իրավիճակներում գտնվող ընտանիքներ», օրենքը չի պարունակում հստակ դրույթ առ այն, թե ինչ է «արտակարգ հանգամանքը»: Արտակարգ հանգամանք հասկացության տակ նախ հասկացվում են տնային տնտեսությունների մակարդակում ի հայտ եկող արտակարգ հանգամանքները, սակայն նախկինում այս հասկացությունը մեկնաբանվել է նաև որպես կովարիացիոն ցնցում (ցնցում, որը միաժամանակ ազդում է անձանց մեծ քանակի վրա), ուստի, դեռ կա սոցիալական պաշտպանության համակարգի ցնցումներին հակազդման մակարդակն ամրապնդելու կարիք [1]:

Արտակարգ դրությունը հատուկ իրավական ռեժիմ է: Համաձայն 2012 թ. ընդունված «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենքի՝ արտակարգ դրությունը

հայտարարվում է միայն ՀՀ սահմանադրական կարգին անմիջական վտանգ սպառնալու դեպքում, ներառյալ՝ արտակարգ իրավիճակները [2]:

1998 թ. ընդունված «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» օրենքում արտակարգ իրավիճակը սահմանված է՝ որպես որոշակի տարածքում կամ օբյեկտում խոշոր վթարի, վտանգավոր բնական երևույթի, տեխնածին, տարերային կամ էկոլոգիական աղետի, համաճարակի, անասնահամաճարակի, բույսերի և գյուղատնտեսական մշակաբույսերի լայնորեն տարածված վարակիչ հիվանդության, զենքի տեսակների կիրառման հետևանքով ստեղծված իրավիճակ, որը հանգեցնում է կամ կարող է հանգեցնել մարդկային զոհերի, մարդկանց առողջությանն ու շրջակա միջավայրին՝ զգալի վնասի, խոշոր նյութական կորուստների և մարդկանց կենսագործունեության բնականոն պայմանների խախտման [3]:

Նույն օրենքում ամրագրված է նաև, որ բնակչության պաշտպանության սկզբունքներից է արտակարգ իրավիճակների հետևանքներից՝ բնակչության պաշտպանության համակարգի բոլոր մակարդակների բնականոն գործունեության ապահովման միջոցառումների կազմակերպման հարցում համալիր մոտեցում ցուցաբերելը:

Հակամարտությունների և աղետների հետևանքով մարդկանց ապրուստի միջոցները նվազում են, ձեռնարկատիրական գործունեությունը դադարում է, աշխատատեղերը փակվում են և մարդիկ կորցնում են իրենց աշխատանքը: Նման իրավիճակներում թուլանում կամ դադարում է նաև ազգային և տեղական կազմակերպությունների գործունեությունը, որոնք սովորաբար ապահովում են բնակչության սոցիալական պաշտպանությունը և մատուցում են բնակչության կարիքները բավարարող ծառայություններ: Արդյունքում, հատկապես բնակչության խոցելի խմբերի շրջանում աշխատանքը և եկամուտների աղբյուրը կորցնելու դեպքերը հանգեցնում են նաև բնակչության արտագաղթի:

Բնակչության խոցելի խմբերի պաշտպանության համատեքստում՝ 2017 թ. Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) կողմից ընդունվել է «Արժանապատիվ աշխատանք և զբաղվածություն՝ հանուն խաղաղության և ճկունության» N 205 հանձնարարականը: Հանձնարարականի շրջանակներում մշակվել է «Աշխատանք՝ հանուն խաղաղության և ճկունության» ծրագիրը, որի հիմքում ընկած են արագ զբաղվածության ապահովման վրա հիմնված՝ չորս հիմնական նպատակներ [6].

- ինտենսիվ ներդրումներ զբաղվածություն և եկամուտներ ստեղծող ոլորտներում,
- հմտությունների զարգացման միջոցով՝ զբաղունակության բարելավում, ցկյանս ուսումնառություն,
- ձեռնարկատիրությանն աջակցություն,
- աշխատանքի առաջարկի և պահանջարկի կամրջում՝ զբաղվածության ծառայությունների միջոցով:

Մասնավորապես, զբաղվածություն և եկամուտներ ստեղծող ոլորտներում ինտենսիվ ներդրումների իրականացմանն ուղղված ծրագրերի պարագայում՝ կարևորվում է ավերված ենթակառուցվածքների և համայնքային ակտիվների վերակառուցումն ու վերականգնումը, ինչպես նաև սոցիալական համախմբվածությունը: Նշվածը ենթադրում է հասարակական շենքերի՝ առողջապահական կենտրոններ և դպրոցներ, տրանսպորտային ենթակառուցվածքների, ոռոգման, ջրհեղեղների դեմ պայքարի և ջրահեռացման, ջրի և սանիտարական հաստա-

տությունների համակարգերի բարելավման, շրջակա միջավայրի պահպանության, հողերի պահպանման և էրոզիայի վերահսկման միջոցառումների իրականացմամբ՝ զբաղվածության ապահովում: Արդյունքում, այս միջոցառումները նպաստում են նաև գործարար միջավայրի բարելավմանը, ինչպես նաև ներառական և արդյունավետ աշխատաշուկայի երկարաժամկետ կառավարմանը:

Վերոգրյալի շրջանակներում հարկ է նշել, որ ԱՄԿ-ի հետ համագործակցությամբ, տարբեր արտակարգ իրավիճակների պայմաններում, զբաղվածության ոլորտում արագ արձագանքման ներդրումային ծրագրեր են իրականացվել և արդյունքում՝ աշխատանքը կորցրած մարդիկ զբաղվածությամբ են ապահովվել շատ երկրներում, ինչպես օրինակ Լիբանանում, Մյանմայում, Հայիթիում, Մոզամբիկում, Արևելյան Թիմորում և այլն:

2020 թ. օգոստոսի 4-ին Բեյրութի նավահանգստում հնչած պայթյունի հետևանքով մահացել է ավելի քան 200 մարդ, վիրավորվել՝ ավելի քան 6500-ը, անտուն դարձել՝ շուրջ 300000 մարդ: Այսպիսով, ստեղծված իրադրության, ինչպես նաև կորոնավիրուսի աղետալի հետևանքների պայմաններում՝ ԱՄԿ-ի կողմից ձեռնարկվեցին զբաղվածություն և եկամուտներ ստեղծող ոլորտներում ինտենսիվ ներդրումների իրականացման միջոցառումներ: Դոնոր երկրների, նախարարությունների և քաղաքապետարանների հետ համագործակցությամբ՝ մշակվեցին և իրականացվեցին պայթյունի հետևանքով գոյացած բեկորների մաքրման աշխատանքների ծրագիր, որի արդյունքում՝ արագորեն զբաղվածություն ձեռք բերեց աղետից ուղղակիորեն կամ անուղղակիորեն տուժած շուրջ 200 անձ:

Հատկանշական է նաև Հայիթիի օրինակը: Ցիկլոնների և փոթորիկների աճող ինտենսիվությունն ու հաճախականությունը, կլիմայի փոփոխության աճող սպառնալիքները բարդացրել են այդ վտանգների ազդեցությունները բնակչության սոցիալ-տնտեսական կյանքի և բնապահպանական հարցերի վրա: Այդպիսով, 2004 թ. փոթորիկի հետևանքները մեղմելու նպատակով՝ Հայիթիի կառավարությունը, ԱՄԿ-ի հետ համագործակցությամբ, նախաձեռնում է արագ արձագանքման ծրագրերի իրականացում, որոնց արդյունքում՝ շուրջ 54000 տնային տնտեսությունների 9000 անդամներ ընդգրկվում են անտառապատման և ծառատունկի, հակաէրոզիոն խրամատների, ամրապնդող կամուրջների կառուցման աշխատանքներում՝ ձեռք բերելով զբաղվածություն:

Այսօր աշխարհի բնակչության մոտ 23 %-ը կամ շուրջ 1.8 մլրդ. մարդ ապրում է խոցելի իրավիճակում, որնցից 76.5 %-ը ապրում է ծայրահեղ աղքատության մեջ [7]:

Նորանկախ Հայաստանի Հանապետությունում արտակարգ դրություն է հայտարարվել 1996 թ. և 2008 թ.՝ քաղաքական պատճառներով, և 2020 թ.՝ կորոնավիրուսի համավարակով պայմանավորված: Հաշվի առնելով 2020 թ. հայտարարված արտակարգ դրության անմիջական ու ավելի ընդգրկուն ազդեցությունը բնակչության սոցիալ-տնտեսական կյանքի վրա՝ անդրադառնանք 2020 թ. հայտարարված արտակարգ դրության հետևանքներին, իրավական կարգավորումներին, հիմնախնդիրներին և դրանց հնարավոր լուծման ուղիներին: Մասնավորապես, հարցը քննարկենք աշխատանքը կորցրած քաղաքացիների համատեքստում:

2020 թ. հունիսի 25-ին ՀՀ կառավարության նիստում հնչած գնահատականների համաձայն՝ 2020 թ. մարտ-մայիս ամիսներին Հայաստանում աշխատանքը կորցրել է ավելի քան 70000 հազ. զբաղված անձ կամ զբաղվածների մոտ 11.5 %-ը, որի մեծ մասը՝ տնտեսու-

թյան մեջ կիրառված սահմանափակումների պատճառով: Մասնավորապես, համաձայն ՀՀ պետական եկամուտների կոմիտեի տվյալների՝ 2020 թ. մարտի 1-ից մայիսի 31-ը շուրջ 5873 կազմակերպություններ կամ անհատ ձեռնարկատերեր ժամանակավորապես դադարեցրել են իրենց գործունեությունը, ինչը 41 %-ով ավելի բարձր ցուցանիշ է՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ: Միաժամանակ, պաշտոնական վիճակագրության համաձայն՝ 2020 թ. ապրիլին գրանցվել են 563 իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերեր, ինչը շուրջ 5 անգամ ցածր ցուցանիշ է՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ [5]:

Ստեղծված արտակարգ իրավիճակին համապատասխան՝ 2020 թ. ընթացքում ՀՀ կառավարության կողմից հաստատվել և իրականացվել են մի շարք միջոցառումներ [8], որոնցից 6-րդ և 22-րդ միջոցառումների շրջանակներում ուղղակի դրամական աջակցություն է տրամադրվել համավարակի հետևանքով աշխատանքից ազատված անձանց: Հարկ է նկատել, որ նման բնույթ ունեցող ծրագրերի իրականացումն այնքան էլ նպատակային չէ, քանի որ դրանք չունեն արտակարգ դրության հետևանքով աշխատանքը կորցրած անձանց նոր աշխատանքով ապահովելու ուղղվածություն: Հետևաբար, այս տեսանկյունից ավելի նախապատվելի են կառավարության կողմից կորոնավիրուսի սոցիալական և տնտեսական հետևանքների չեզոքացմանը միտված՝ 8-րդ և 20-րդ միջոցառումները, որոնք ունեն համարավարակի հետևանքով առավել շատ տուժած ոլորտների վարձու աշխատողներին լրավճարներ տրամադրելու էություն, ինչը նվազեցնում է այդ ոլորտում աշխատողների աշխատանքը կորցնելու ռիսկը:

Անդրադառնալով միջազգային փորձին՝ նշենք, որ կորոնավիրուսի հետևանքով՝ աշխատատեղերը չկորցնելու, ինչպես նաև աշխատանքից ազատված անձանց նոր աշխատանքով ապահովելու տեսանկյունից՝ հետաքրքրական է Շվեդիայի, Չեխիայի Հանրապետության և Իտալիայի օրինակը: Այս երկրներում տուժած ոլորտների գործատուները, տնտեսական սահմանափակումների ժամանակ, կարող էին կրճատել իրենց աշխատողների աշխատանքային ժամերը մինչև 80 %-ի չափով՝ ամբողջությամբ ստանալով աշխատավարձի սուբսիդավորում պետության կողմից:

Համավարակի սոցիալական և տնտեսական հետևանքների մեղմման գործում առանցքային է գործազրկության ապահովագրության համակարգի դերը, որի կաուցվածքը, սկզբունքներն ու աջակցության ձևերը տարբեր են շատ երկրներում: Օրինակ, Նոր Զելանդիայում բացի գործազրկության նպաստից՝ շաբաթական կտրվածքով տրամադրվում է նաև նպաստ այն գործազուրկներին կամ մասնակի զբաղվածներին, որոնք աշխատանք կամ լրացուցիչ զբաղվածություն են փնտրում: ՀՀ-ում գործազրկության ապահովագրության համակարգի ներդրման պարագայում՝ Նոր Զելանդիայի օրինակով նման բաղադրիչի ներառումը, կարծում ենք, կարող է արդյունավետ լինել, քանի որ դա կստեղծի լրացուցիչ շահադրդում աշխատանք փնտրողի համար՝ կարճ ժամանակում բերելով սպասված հաջողություն:

Ակնհայտ է, որ արտակարգ իրավիճակների հետևանքով աշխատանքից զրկված քաղաքացիների աշխատանքի տեղավորման նպատակով՝ արագ արձագանքման անհրաժեշտ միջոցառումներ իրականացնելու համար կարևոր է ունենալ այնպիսի օրենսդրական դաշտ, որը կնախատեսի ՀՀ կառավարության կողմից համապատասխան պարտավորությունների ստանձնում նման իրավիճակներում: Մասնավորապես, ՀՀ սահմանադրության 120-րդ հոդվածի 1-ին

մասում ամրագրված է, որ ՀՀ կառավարությունը սահմանադրական կարգին սպառնացող անմիջական վտանգի դեպքում՝ հայտարարում է արտակարգ դրություն և ձեռնարկում է իրավիճակից բխող միջոցառումներ: Միաժամանակ, «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենքի 11-րդ՝ «Արտակարգ դրության ընթացքում ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների երաշխիքները» հոդվածում ամրագրված է, որ արտակարգ դրություն հայտարարելու հիմք հանդիսացած հանգամանքների արդյունքում առաջացած սոցիալական խնդիրների և տնտեսական հետևանքների հակազդման նպատակով ՀՀ կառավարությունը կարող է սահմանել ֆիզիկական և իրավաբանական անձանց աջակցությանն ուղղված միջոցառումներ:

Վերը նշվածին համարժեք՝ ոլորտային տարբեր իրավական ակտերում ևս կարելի է գտնել որոշակի դրույթներ, որոնք բխում են զբաղվածության ոլորտում արտակարգ իրավիճակներում արագ արձագանքման լուծումներ գտնելու տրամաբանությունից: Այսպիսով, «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքի [4] համաձայն՝ զբաղվածության ապահովման ամենամյա պետական ծրագրի մշակման և իրականացման մաս է կազմում իրավիճակից բխող ծրագրային ճկուն փոփոխությունների իրականացման նպատակով՝ պահուստային ֆինանսական միջոցների, այդ թվում՝ միջազգային դոնոր կազմակերպությունների կողմից տրամադրվող հնարավոր ֆինանսական միջոցների նախատեսումը՝ նախապես պլանավորված և, ըստ անհրաժեշտության, զբաղվածության պետական նոր ծրագրեր փորձարկելու համար:

Այսպիսով, քննարկվող թեմայի շրջանակներում՝ կարևորվում է «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքում, զբաղվածության ոլորտում լիազորություններ ունեցող պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կանոնադրական գործառույթներում, ինչպես նաև այլ հարակից փաստաթղթերում արտակարգ իրավիճակների կամ արտակարգ դրության ժամանակ՝ աշխատանքը կորցրած անձանց աշխատանքի տեղավորմանը նպաստող համապատասխան իրավական դրույթների ներառումը [4]:

Ամփոփելով նշենք, որ Հայաստանի Հանրապետությունը վտանգների տեսանկյունից խիստ խոցելի է: Վտանգների մեծ մասը սպառնում է մարդու կյանքին ու առողջությանը: Նման իրավիճակներում, բնակչության կենսագործունեության արագ վերականգնման և կյանքի բնականոն ընթացքի ապահովման համար, շատ կարևոր են պետության կողմից ձեռնարկվող արագ արձագանքման միջոցառումներն ու օպերատիվ գործողությունները: Արտակարգ իրավիճակների հետևանքով՝ աշխատանքից ազատված անձանց աշխատանքի տեղավորումը առավել նպատակային և արդյունավետ կարող է լինել, եթե պետությունը կարողանա արագորեն գնահատել արտակարգ իրավիճակի պատճառով՝ տնտեսության առավել տուժած ոլորտներում ստեղծված իրավիճակը, առաջնահերթությունները, կարիքներն ու իր հնարավորությունները. ապա, ըստ այդմ, ձեռնարկել անհրաժեշտ գործուն միջոցառումներ:

Գրականություն

1. «Հայաստանի սոցիալական պաշտպանության համակարգի խորքային ավտորոշում» զեկույց, ՀՀ ԱՍՀՆ, Համաշխարհային բանկ, ՅՈՒՆԻՍԵՖ-ի հայաստանյան գրասենյակ, Եր. 2020 թ., 263 էջ:
«Hayastani socialakan pashtpanutyany hamakargi xorqayin axtoroshum» zekuyc, HH ASHN,

- Hamashxarhayin bank, UNICEF-i hayastanyan grasenyak, Yer., 2020 t., 263 ej.
2. «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենք, 2012:
«Artakarg drutyanyan iravakan rejimi masin» HH orenq, 2012.
 3. «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենք, 1998:
«Artakarg iravichaknerum bnakchutyanyan pashtranyutyanyan masin» HH orenq, 1998.
 4. «Զբաղվածության մասին» ՀՀ օրենք, 2013:
«Zbaghvacutyanyan masin» HH orenq, 2013:
 5. **Rapid** assessment of the employment impact and policy responses of the COVID-19 pandemic on Armenia, ILO, October/2020.
 6. **Emergence** employment, Employment-Intensive Investment Programme (EIIP). ILO, 2021.
 7. **OECD (2020)**, “State of Fragility 2020.”
 8. <https://www.gov.am/am/covid-19-cragrer/>. Դիտում՝ 02.08.2022.

Ж.К. Саргсян, А.Г. Арутюнян

ОБЕСПЕЧЕНИЕ ТРУДОУСТРОЙСТВА ГРАЖДАН, ЛИШЕННЫХ РАБОТЫ В РЕЗУЛЬТАТЕ ЧРЕЗВЫЧАЙНЫХ СИТУАЦИЙ

В статье представлены вопросы обеспечения занятости граждан в результате чрезвычайных ситуаций.

Создание условий для обеспечения занятости граждан, лишенных работы в связи с чрезвычайными ситуациями, способствует снижению социальной напряженности населения и оттока рабочей силы.

Ключевые слова: чрезвычайная ситуация, занятость, социальная напряженность.

J.K. Sargsyan, H.G. Harutyunyan

PROVIDING EMPLOYMENT FOR CITIZENS LOSS OF WORK DUE TO EMERGENCY SITUATIONS

The article presents issues of providing employment of citizens deprived of work as a result of emergency situations.

Creation of conditions for ensuring the employment of citizens deprived of work due to emergency situations contributes to alleviating the social tension of the population and the outflow of labor force.

Keywords: emergency situation, employment, social tension.

Սարգսյան Ժորա Քաջիկի – տնտ. գիտ. թեկնածու, դոցենտ (ՀՊՏՀ)։

Հարությունյան Հասմիկ Գառնիկի - դասախոս (ՃԿՊԱ)։

Ներկայացման ամսաթիվը՝ 10.08.2022

Գրախոսման ամսաթիվը՝ 22.08.2022

С.З. Кроян, Н.И. Самвелян, С.Дж. Тамоян

ИЗМЕНЕНИЕ ФИЗИКО-ХИМИЧЕСКОГО СВОЙСТВА ГОРНЫХ КАШТАНОВЫХ ПОЧВ (KASTANOZEM) РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ ПОД ВЛИЯНИЕМ АНТРОПОГЕННОГО ФАКТОРА

Данная статья посвящена изучению изменения физико-химического состава горных каштановых почв (Kastanozem) Республики Армения под влиянием антропогенного фактора. Установлено, что при длительном и бессистемном сельскохозяйственном использовании kastanozems в пахотных вариантах почв, при сравнении с целинной наблюдаются значительные изменения их физико-химических свойств. Особенно снижается емкость поглощения за счет сокращения таких важных основ как поглощенный кальций и магний.

Для улучшения физико-химических свойств, повышения плодородности, эффективного использования и охраны горных каштановых почв Республики Армения необходимо разработать и применить научно обоснованную, полную систему агротехнических мероприятий.

Ключевые слова: антропогенный фактор, гумус, Kastanozems, карбонаты, кальций, магний, натрий.

Республика Армения является одним из наименее обеспеченных почвенными ресурсами регионов. В настоящее время наиболее важные факторы, способствующие ухудшению горных каштановых почв республики, являются изменения их физико-химических свойства. Это естественно оказывает негативное влияние на плодородие почвы и урожайность сельскохозяйственных культур.

Материалом исследования были горные каштановые почвы (kastanozems) Республики Армения, которые потерпели изменения, происходящие из-за длительной и бессистемной хозяйственной деятельности человека.

Полевые исследования проводились в однотипных участках рельефа, при сравнении целинных и пахотных вариантов почв. Для изучения почв в природе, установления границ между различными почвами, взятия почвенных образцов для анализов закладывались почвенные разрезы.

Для определения места закладки разрезов пользовались методом “ключ”. Почвенные разрезы заложены в однотипных участках рельефа, до глубины материнской породы, которые описаны и классифицированы. На рыхлых материнских породах глубина почвенных разрезов достигает до 1-1,5м, а в плотных породах они имеют сравнительно меньшую глубину. В таких местах обычно глубина разреза доходит до материнской породы.

Почвенные образцы отбирались из основных разрезов по генетическим горизонтам и, при необходимости, из полуразрезов. Отобранные почвенные образцы передаются с поля в лабораторию, где образцы высушаются (в воздушно-сухом состоянии), а затем в воздушно-сухом состоянии они измельчаются и пропускаются через сито в 1,0 мм. После этого полученный мелкозем, используют для различных анализов.

Лабораторные работы проводились в лаборатории отдела генезиса и географии почв Научного центра почвоведения и агрохимии им. Г.П. Петросяна при Национальном аграрном университете Армении общепринятыми в почвоведении методами. В лабораторных условиях определялись: содержания гумуса по методу Тюрина, рН – электрометрически; CO₂ – кальциметрически; поглощенные основания (Ca, Mg) по Гедройцу и Иванову; Na, по Ананяну; емкость поглощения по Бобко-Аскинази [1].

По системе WRB (World Reference Base for Soil Resources) название почв *kastanozems* происходит от сложения двух слов: латинского «*castanea*» – каштан и русского “зём” – земля. Они являются зональными почвами низкотравных степей континентального климата. Каштанозёмы отличаются от Черноземов меньшей мощностью, более светлой окраской гумусового горизонта и более активной аккумуляцией карбонатов. Корреляции на международном уровне могут быть следующими: (Темно) бурые почвы (Канада); (Темно) каштановые почвы (Россия); *Kalktschernoseme* (Германия); Устоллы, Ксероллы (США) [2].

Горные каштановые почвы формируются в низкогорном и среднегорном поясе на высоте 1250-1950м. Крупными массивами встречаются в пределах Араратской котловины, в районах среднего течения рек Арпа и Воротан. В системе вертикальной зональности каштановые почвы занимают переходную полосу между горными степными черноземами и горными бурыми полупустынными почвами.

Рельеф пояса горных каштановых почв средне расчленен. В сложении современного рельефа широкое участие принимают андезито-базальты, туфолавы, элювиально-делювиальные отложения. Климат зоны каштановых почв сухой, континентальный с умеренно-холодной зимой и теплым летом. Горные сухие степи представлены злаково-разнотравными ассоциациями с участием болле ксерофитных растений.

В пределах Араратской котловины материнские породы представлены щебневато-обламочными элювиальными и элювиально – делювиальными окарбончиванными суглинками, а в южных районах республики преобладают делювиальные щебневатые карбонатные суглинки [3].

Разнохарактерные геоморфологические условия и разные почвообразующие породы оставили свой отпечаток на составе и свойствах почв сухостепного пояса. Для характеристики почв приведены данные типичных разрезов, которые соответствуют типам и подтипам этих почв.

Горные каштановые почвы характеризуются каштановой, а с поверхности каштаново-серой окраской, слабой дифференциацией генетических горизонтов, наличием карбонатно-цементированного горизонта. Почвы среднеспонные и среднегумусированные, содержания гумуса не превышает 4 %.

Целинные почвы характеризуются плотным сложением, распыленно-непрочной комковатой структурой и наличием карбонатно-цементированного горизонта мощность которого достигает от 15 до 35см. Почвы отличаются высокой каменистостью и скелетностью, достигая максимума в цементированном горизонте. Сравнительно интенсивное выветривание

коренных пород и глинообразование наблюдается в верхних горизонтах почвы. В основном, пахотные орошаемые почвы характеризуются сравнительно меньшей каменистостью.

Каштановые почвы, распространенные на равнинах и котловинах, богаты пылевато-иловатым и бедны щебневато-обломочным материалом [5, 6].

Горные каштановые почвы в большинстве карбонатны с поверхности, но встречаются и понижено вскипающие почвы, и бескарбонатные почвы, в которых карбонаты отсутствуют в верхнем гумусовом горизонте.

Почвы, распространяющиеся на коре выветривания базальтов, андезито-базальтов и андезитов, отличаются довольно слабой окарбонатченностью верхнего гумусового горизонта.

В окультуренных вариантах почв наблюдается заметное уменьшение содержания суммы поглощенных оснований.

В пахотных почвах уменьшились поглощенный кальций и магний. Если в верхней части горизонта А целины сумма поглощенных оснований колеблется в пределах 34.1-32.6 мгэкв, то в пахотном горизонте она снижается, составляя 30.5 мгэкв на 100 г почвы.

Эти горизонты почв в различной степени сцементированы. Происхождение цементированного горизонта, в первую очередь, связано с углекислым кальцием, однако в отдельных случаях в процессе цементации участвует и углекислый магний.

Горные каштановые почвы (kastanozems) слабо загипсованы. В небольшом количестве гипс обнаружен в самых нижних горизонтах.

Реакция слабощелочная или нейтральная. Только в нижних горизонтах наблюдается повышенная рН среды (рис. 1, 2).




Рис. 1. Физико-химический состав горных каштановых почв, Целина

Характерной особенностью исследуемых почв является средняя величина емкости поглощения, которая по профилю вниз незначительно уменьшается. В составе обменных катионов основную роль играет кальций, содержание которого в отдельных горизонтах достигает до 31.3 мгэкв. Поглощенный магний в верхних горизонтах составляет 2.5 мгэкв. В нижних горизонтах содержание данного элемента несколько выше (8.2 мгэкв на 100 г почвы), что, по-видимому, связано с минералогическим составом почв. Содержание поглощенного натрия незначительно (0.3-0.4 мгэкв на 100 г почвы). Реакция среды слабощелочная (рН -7.9).




Рис. 2. Физико-химический состав горных каштановых почв, Пашня

В пахотных вариантах замечается ухудшение основных агропроизводственных свойств почв.

При сравнении целинных и обрабатываемых вариантов почв в пахотных вариантах наблюдаются некоторое общее снижение содержания гумуса. В окультуренных почвах содержания гумуса в пахотном горизонте составляет 3.1%, в протововес 3.9% в целине.

Целинные варианты каштановых почв характеризуются средней величиной емкости поглощения. В составе обменных катионов преобладает кальций. Затем идет поглощенный магний. Среди них очень редко встречаются разновидности, которые в переходном горизонте содержат небольшое количество (0.3-0.4 мгэкв на 100г почвы) обменного натрия (рис. 3, 4).




Рис. 3. Поглощенные основания горных каштановых почв (kastanozems), целина




Рис. 4. Поглощенные основания горных каштановых почв (*kastanozems*), Пашня

В верхних горизонтах целинных горных каштановых почв количество поглощенного Ca колеблется в пределах 30.0-31.3 мгэкв на 100 г почвы. Вниз по профилю оно постепенно уменьшается. Количество магния в верхних слоях почв меньше, оно резко увеличивается в нижних горизонтах составляя 8.2 мгэкв на 100 г почвы.

При длительном и бессистемном сельскохозяйственном использовании горных каштановых почв наблюдается некоторое уменьшение количества кальция, который в пахотном горизонте составляет 28.1 мгэкв на 100 г почвы. Уменьшается и поглощенный магний, содержание которого в средних и нижних горизонтах почв не превышает 1.7 мгэкв на 100 г почвы. В противовес этому в профиле пахотных вариантов наблюдается отсутствие поглощенного натрия.

Таким образом результаты исследований физико-химических свойств горных каштановых почв (*kastanozems*), а также анализ антропогенного воздействия почв дают основания утверждать, что длительное и бессистемное использование почв, может привести к некоторому ухудшению их физико-химических свойств. Особенно снижается емкость поглощения за счет сокращения таких важных элементов как поглощенный кальций и магний.

Ухудшение емкости поглощения, за счет снижения в почве таких важных химических элементов, как кальций и магний, отрицательно влияет на прочность структурообразования почвы, что, в свою очередь, снижает ее противоэрозионное сопротивление.

Вследствие чего ускоряются эрозионные процессы, то есть поверхностный смыв почвы, который создает чрезвычайные ситуации для рационального использования и сохранения почвенных ресурсов.

1. Сформированные на щебневатом элювиальном карбонатном суглинке лавовых пород, почвы горных каштановых почв, в большинстве случаев, имеют иллювиально-карбонатно-цементированный горизонт, мощностью от 15 до 35 см и более.
2. Почвы горных каштановых почв характеризуются средней величиной емкости поглощения. В составе обменных катионов преобладают кальций и магний. В пахотных вариантах наблюдается уменьшение количества кальция и магния.
3. Для улучшения физико-химических свойств горных каштановых почв (*kastanozems*) необходимо проводить мелиоративные мероприятия по разрыхлению цементированного иллювиально-карбонатного горизонта и удалению цементированного обломочного материала за пределы полей. В частности, раз в 4-5 года необходимо проводить глубокое рыхление подпахотного горизонта. Для сохранения положительного баланса кальция и магния, необходимо применять содержащие кальций органические и минеральные удобрения.

Литература

1. **Александрова Л.Н.**, Найденова О.А., Лабораторно-практические занятия по почвоведению. Ленинград агропромиздат. Ленинградское отделение, 1986, с. 109-111.
Aleksandrova L.N., Najdenova O.A. Laboratorno-prakticheskie zanjatija po pochvovedeniju. Leningrad agropromizdat. Leningradskoe otdelenie, 1986, s. 109-111.
2. **Таргульян В.О.**, Герасимова М.И. Мировая коррелятивная база почвенных ресурсов: основа для международной классификации и корреляции почв. – М.: КМК, 2007. – 235 с.
Targulyan V.O., Gerasimowa M.I. Mirowaja koreljatiwnaq baza pochvennikh resursov: osnovna dlja mezhdunarodnoj klassifikacii i koreljacii pochv. – М: КМК, 2007. – 235 s.
3. **Почвы** Армянской ССР / Под ред. Р.А. Эдиляна, Г.П. Петросяна, Н.Н. Розова. – Ереван: Айастан, 1976. – 383 с.
Pochvi Arnjanskoj SSR / pod red. R.A. Edilyana, G.P. Petrosyana, N.N. Rozowa – Yerevan: Ajastan, 1976. – 383 s.
4. **Кроян С.З.**, Маркосян А.О., Гумусовое состояние горных черноземов и каштановых почв Республики Армения – Научно-технический прогресс в сельскохозяйственном производстве: материалы Междунар. науч.- техн. конф.: в 3 т. / РУП «НПЦ НАН Беларуси по механизации сельского хозяйства». – Минск, 2014. – Т.2. с. 124-128.
Kroyan S.Z., Markosyan A.O. Gumusowoe sostojanie gornikh ch ernozemov i kashtanovikh pochv Respubliki Armenija – Nauchno-tekhnicheskij progress v selskokhozjajstvennom proizvodstve: materialy mezhdunar. nauch. – tekh. konf. v 3 t /RUP „NPC NAN Belorus po mekhanizacii selskogo khozjajstva,,. Minsk. 2014. T. 2. S. 124-128.
5. **Чижикова Н.П.**, Барановская В.А., Хитров Н.Б. Влияние длительного орошения на степень агрегированности и минералогический состав илистых фракций темно-каштановых почв Заволжья // Почвоведение. - 2011. - № 8. - С. 978–994.
Chizhikova N.P. Baranovskaja V.A., Khitrov N.B. Vlijanie dlitelnogo oroshenija na stepen agregirovannosti i minerologicheskij sostav ilistikh frakcij temnokashtanovikh pochv zavlzha / Pochvovedenie. – 2011. N 8. – S. 978-994.

6. **Фрид А.С.,** Кузнецова И.В., Королева И.Е., Бондарев А.Г., Когут Б.М., Уткаева В.Ф., Азовцева Н.А. Зонально-провинциальные нормативы изменений агрохимических, физико-химических и физических показателей основных пахотных почв европейской территории России при антропогенных воздействиях. // Метод. рекомендации. – М.: Почв. ин-т им. В.В. Докучаева, 2010. – С. 176.

Frid A.S., Kuznecova I.W., Koroleva I.E., Bondarev A.G., Kogut B.M., Utkaeva V.F., Azovcev N.A. Zonalno-provincialnoe normative izmenenij agrokhimicheskikh, fiziko-khimicheskikh pokazatelej osnovnikh pokhotnikh pochv evropejskoj territorii Rossii pri antropogennikh vozdeystvijakh. / Metod. rekomendacii. – М.: Pochv. in-t im. V.V. Dokuchaeva, 2010. – S. 176.

Ս.Զ. Կրոյան, Ն.Ի. Սամվելյան, Ս.Ջ. Թամոյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼԵՌՆԱՅԻՆ ՇԱԳԱՆԱԿԱԳՈՒՅՆ ՀՈՂԵՐԻ
(KASTANOZEMS) ՖԻԶԻԿԱՔԻՄԻԱԿԱՆ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՐԴԱԾԻՆ ԳՈՐԾՈՆԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՄԲ**

Հոդվածը նվիրված է Հայաստանի Հանրապետության լեռնային շագանակագույն հողերի (kastanozems) ֆիզիկաքիմիական կազմի փոփոխությունների ուսումնասիրությանը մարդածին գործոնի ազդեցության պայմաններում: Հաստատվել է, որ լեռնային շագանակագույն հողերի մշակվող տարբերակներում գյուղատնտեսական երկարատև և ոչ համակարգված օգտագործման դեպքում, չմշակվող հողերի հետ համեմատած, նկատվում են դրանց ֆիզիկաքիմիական հատկությունների էական փոփոխություններ: Վարելահողերում կլանման տարողությունը նվազում է հատկապես այնպիսի կարևոր հիմքերի կրճատման պատճառով, ինչպիսիք են կլանված կալցիումը և մագնեզիումը:

Հայաստանի Հանրապետության լեռնային շագանակագույն հողերի ֆիզիկաքիմիական հատկությունների բարելավման, բերրիության բարձրացման, արդյունավետ օգտագործման և պահպանության համար անհրաժեշտ է մշակել և կիրառել գիտականորեն հիմնավորված, ագրոտեխնիկական միջոցառումների ամբողջական համակարգ:

Առանցքային բառեր. մարդածին գործոն, հումուս, շագանակագույն հող, կարբոնատներ, կալցիում, մագնեզում, նատրիում:

S.Z. Kroyan, N.I. Samvelyan, S.J. Tamoyan

**THE CHANGES IN PHYSICO-CHEMICAL PROPERTIES OF MOUNTAIN CHESTNUT
SOILS (KASTANOZEMS) OF THE REPUBLIC OF ARMENIA UNDER THE INFLUENCE
OF HUMAN FACTORS**

The article discusses the study of the changes in the physicochemical composition of the mountain brown soils (kastanozems) of the Republic of Armenia under the influence of the human factor. It has been confirmed that in the case of long-term and unsystematic agricultural use in cultivated versions of mountain brown soils, significant changes in their physicochemical properties are observed, compared to uncultivated soils. The sorption capacity of arable soils is reduced, especially due to the reduction of important bases such as absorbed calcium and magnesium.

In order to improve the physical-chemical properties of the mountainous brown soils of the Republic of Armenia, to increase their fertility, to effectively use and preserve them, it is necessary to develop and apply a complete system of scientifically based, agro-technical measures.

Key words: *human factor, humus, brown soil, carbonates, calcium, magnesium, sodium.*

Кроян Самвел Залибекович – кандидат с/х. наук, доцент (Национальный университет архитектуры и строительства Армении).

Самвелян Нерсес Ишханович - кандидат географических наук, доцент (Армянский педагогический университет им. Х. Абовяна).

Тамоян Самвел Джанибекович - кандидат с/х. наук, доцент (Национальный аграрный университет Армении)

Дата представления: 10.10.2022

Дата рецензии: 05.10.2022

Ա.Ս. Գևորգյան

**ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐՆԵՐԻ
ՀՈԳԵՔԱՆԱԿԱՆ ՈՐԱԿՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ**

Գիտական գրականության մեջ անձի մասնագիտական հոգեբանական պահանջների վերաբերյալ արտացոլված հասկացությունները բաժանվում են զարգացման ենթակա և կայուն հոգեբանական որակների, սակայն որպեսզ և՛ զարգանում այդ որակները, դեռևս գտնվում է հոգեբանների ուշադրության կենտրոնում: Արտակարգ իրավիճակների ժամանակ շարժ կարևոր դեր և նշանակություն ունի կառավարման ձևը, որոշումների ընդունելու ճկունությունը և ճշգրտությունը: Փորձարարական ճանապարհով ուսումնասիրված է այդ որակների ձևավորման պայմանները և համաձայն կատարված ուսումնասիրության, հուզական ինտելեկտը զարգանում է մասնագիտական գործունեության ժամանակ հատուկ հոգեբանական աշխատանքների միջոցով:

Առանցքային բառեր. փրկարար ծառայության ստորաբաժանում, հրամանատար, հաղորդակցման հմտություն, հուզական ինտելեկտ:

Արտակարգ իրավիճակներում գործող հրամանատարների համար առավել դժվար է արագ կողմորոշվել և տալ հրահանգներ, ղեկավարել մի ամբողջ անձնակազմի գործողություններ, և իհարկե, ամենակարևորը, կայացնել որոշումներ: Կառավարման ոլորտում, հատկապես փրկարար ծառայության ստորաբաժանումների հրամանատարների մոտ պետք է կառավարչական որակների հետ մեկտեղ զարգացնել նաև աշխատանքային միջավայրին հատուկ որակներ: Որպես այդպիսի որակ, հիմնականում մատնանշվում են անձի հաղորդակցման հմտությունները, հուզական կայունությունը, և իհարկե կամային այնպիսի հատկանիշներ, որոնք փրկարարի բնավորության ամենաընդգծված գծերից են: Մասնագիտական գործունեության արդյունավետությունը պայմանավորող գործոնները բազմիցս քննարկվել են կառավարման հոգեբանության շրջանակներում, սակայն բավականին սակավ գրականություն և ուսումնասիրություններ են առկա արտակարգ իրավիճակների ժամանակ և դրանից հետո հրամանատարների կառավարման գործընթացի վրա ազդող մի շարք գործոնների ազդեցության վերաբերյալ:

Այդ գործոնների հիման վրա կարելի է կազմել արտակարգ իրավիճակում գործող թե՛ անձնակազմի, և թե՛ հրամանատարներին բնորոշ պրոֆեսիոգրամաներ և փսիխոգրամաներ: Հասարակության զարգացման պայմաններում մասնագիտական գործունեության արդյունավետության վրա ազդող հոգեբանական գործոնների բացահայտումը շարունակական բնույթ է կրում՝ կախված կրթությանը, աշխատանքային գործունեությանը ներկայացվող պահանջների փոփոխման հետ: Հոգեբանական տեսանկյունից այդ գործոնները բազմազան են, և արտացոլում են այն պահանջները, որոնք ներկայացվում են տվյալ տեսակի մասնագիտությանը: Անձի մասնագիտական գործունեությունն ամփոփվում է իր կատարած գործառույթներում [2]:

Կախված նրանից, թե ինչպիսի փոխհարաբերություն է ենթադրում մասնագիտությունը, փոխվում են նաև տվյալ անձին ներկայացվող հոգեբանական և մասնագիտական պահանջները [3]: Անձի մասնագիտական հոգեբանական պահանջների վերաբերյալ գրականության

մեջ արտացոլված հատկությունները բաժանվում են զարգացման ենթակա և կայուն հոգեբանական որակների, սակայն այն հարցը, թե որտեղ են զարգանում այդ որակները, դեռևս գտնվում է հոգեբանների ուշադրության կենտրոնում [2]: Արտակարգ իրվիճակների ժամանակ հատկապես հրամանատարների մոտ որպես կառավարիչների, անհրաժեշտ զարգացման ենթակա որակներ, պետք է այլ որակների հետ մեկտեղ մատնանշել նաև անձի հաղորդակցման հմտությունները և հուզական կայունությունը: Հաղորդակցման հմտությունները ձևավորվում են անհրաժեշտ գիտելիքների հիման վրա, այդ պատճառով էլ հաճախ դիտարկվում են որպես հաղորդակցման կոմպետենցիաներ [1]: Հաղորդակցական իրազեկությունը կախված է անձի անհատական ընդունակություններից, նրա սոցիալական կայունությունից: Նրա վրա ազդում են հասարակությունում տեղի ունեցող փոփոխությունները և դրա հետ կապված հաղորդակցական իրազեկությունը չի կարող անձի պատրաստի բնութագիր լինել: Դա գիտելիքների, շփման լեզվական և ոչ լեզվական ինչպես նաև մասնագիտական կարողությունների ու հմտությունների ամբողջականություն է, որոնք մարդու կողմից ձեռք են բերվում բնական սոցիալականացման, ուսուցման և դաստիարակության գործընթացում: Հաղորդակցումը մարդկանց միջև կոնտակտի հաստատման և զարգացման գործընթաց է, որն իր մեջ ներառում է ընկալում, միմյանց հասկացում, տեղեկատվության փոխանակում և ազդեցություն:

Մարդն անընդհատ հարստացնում է իր հաղորդակցման փորձը, քանի որ այն կյանքի ընթացքում ձեռք բերած ամենակարևոր նվաճումն է: Հասարակությունում մարդու կյանքն անհնար է պատկերացնել առանց շփման և հաղորդակցման: Շփման հոգեբանության խնդիրը մշակել են հայտնի հոգեբաններ Լ.Ս. Վիգոտսկին, Վ.Ն. Մյասիշչևը, Բ.Գ. Անանևը և այլք [5]: Այսպես, Լ.Ս. Վիգոտսկու՝ խորհրդային հոգեբանության հիմնադիրներից մեկի տեսանկյունից անհատական զարգացման ընթացքում առաջնային են մարդկային հաղորդակցության այնպիսի ձևերը, ինչպիսիք են՝ երկու անհատների փոխազդեցությունը, երկխոսության, վեճի հարաբերությունները և այլն: Գոյություն ունեն տարբեր հոգեբանական տեսություններ, որոնք բացատրում են հաղորդակցման և շփման հոգեբանական օրինաչափությունները [4]: Գործունեության կատարման հաջողությունը կախված է ոչ թե մեկ, այլ տարբեր ընդունակությունների համադրությունից, ընդ որում նույն արդյունքը տվող այդ համադրությունը կարող է տարբեր եղանակներով ապահովվել: Օրինակ, փրկարար ծառայության ստորաբաժանումներում կան տարբեր մասնագիտացում ունեցող փրկարարներ (ջրասուզակներ, կինոլոգներ և այլն) բազմատեսակ փրկարարական աշխատանքներ կատարելու համար, այսինքն տարբեր վարքային դրսևորումներ ունեցող փրկարարների գործողությունները պետք է ղեկավարվի հրամանատարի կողմից: Հիշյալը խոսում է այն մասին, որ միջանձնային բնույթի ընդունակությունները շատ կարևոր նշանակություն ունեն փրկարար ծառայության ստորաբաժանումներում: Մարդու մոտ նման ընդունակությունների բացակայությունն անհաղթահարելի խոչընդոտ կհանդիսանար նրա՝ կենսաբանական էակից սոցիալական էակի վերածման ճանապարհին [3]: Ե՛վ միջանձնային, և՛ առարկայական ընդունակությունները փոխադարձաբար լրացնում են միմյանց: Դրանց համադրության շնորհիվ մարդը հնարավորություն է ստանում լիարժեք և ներդաշնակորեն զարգանալու: Փրկարար ծառայության ստորաբաժանումների հրամանատարների կառավարման գործունեության արդյունավետությունը պայմանավորող գործոնների զարգացման պայմաններն ուսումնասիրելու համար կատարել ենք հետազոտություն, որի նպատակն է

փորձարարական ճանապարհով դուրս բերել հրամանատարների ինչպես նաև սպայական անձնակազմի համար անհրաժեշտ հոգեբանական որակների ձևավորման և զարգացման պայմանների առանձնահատկությունները: Որպես անհրաժեշտ հոգեբանական որակներ, ռաուժմասիրության համար ընտրվել է հրամանատարների հուզական ինտելեկտը, հաղորդակցական և կազմակերպչական ընդունակությունները: Հետազոտությունն անցկացվել է երկու փորձարարական խմբերի հետ, որոնք բաժանվել են ըստ հետևյալ դասակարգման՝ փորձառու հրամանատարներ, ովքեր ունեն 10 և ավելի տարվա ղեկավար աշխատանքային փորձ և մինչև 3 տարվա ղեկավարման աշխատանքային փորձ ունեցող հրամանատարներ, որոնք կայացնում են որոշումներ, ղեկավարում փրկարարական ջոկատներ:

Այսպիսով՝ հետազոտությունը կատարվել է հետևյալ հաջորդականությամբ. ընտրվել են փորձարարական խմբերը, այնուհետև կատարվել թեստավորում և արդյունքների վերլուծություն: Հետազոտությունը կատարվել է ոչ արտակարգ իրավիճակի պայմաններում, այսինքն հանգիստ իրավիճակում: Հուզական ինտելեկտն ախտորոշելու համար օգտագործվել է հուզական ինտելեկտը որոշելու մեթոդիկան (тест «МЭИ» («Методика диагностики эмоционального интеллекта»), ինչպես նաև հաղորդակցման և կազմակերպչական հմտություններն ախտորոշելու նպատակով օգտագործվել է հաղորդակցման և կազմակերպչական ընդունակությունների ախտորոշման (KOC) մեթոդիկան, որի նպատակն է որոշել, թե փրկարար ծառայության ստորաբաժանումների ղեկավարները հաղորդակցման հմտությունների և կազմակերպչական ունակությունների ինչ մակարդակ ունեն: Հուզական ինտելեկտի ախտորոշման մեթոդիկան թույլ է տալիս դուրս բերելու չորս սանդղակ՝ սեփական զգացմունքների և հույզերի գիտակցում, սեփական զգացմունքների և հույզերի կառավարում, այլ մարդկանց զգացմունքների և հույզերի գիտակցում, այլ մարդկանց զգացմունքների և հույզերի կառավարում, ինչպես նաև հուզական ինտելեկտի միջանձնային և ներանձնային ասպեկտները: Այս մեթոդիկայի միջոցով որոշվել է փորձառու և երիտասարդ հրամանատարների հուզական ինտելեկտը և համեմատելով հետազոտվող երկու խմբերի ցուցանիշները հասկանալի է դարձել, որ սեփական զգացմունքների և հույզերի գիտակցումն առավել արտահայտված է փորձառու հրամանատարների մոտ, իսկ երիտասարդներն այս սանդղակում զիջում են: Երկրորդ սանդղակում սեփական զգացմունքների և հույզերի կառավարումն առավել բարձր մակարդակում է երիտասարդ հրամանատարների մոտ, իսկ փորձառուների մոտ նկատվում է առավել ազատություն հուզական դրսևորումների մեջ, ինչը բացատրվում է նրանով, որ փորձառու կառավարող հրամանատարները գիտակցելով իրենց հույզերը և զգացմունքները, ընտրողաբար են մոտենում այն կառավարելուն կամ ղեկավարելուն, իսկ երիտասարդ հրամանատարները կենտրոնանում են հույզերի կառավարման վրա և քիչ են ուշադրություն դարձնում նրանց գիտակցմանը: Միջանձնային ասպեկտում այլ մարդկանց հույզերի գիտակցումը փորձառու հրամանատարների մոտ գերակշռում է, ինչը հանդիսանում է մարդկանց հետ շփման և մասնագիտական գործունեության արդյունք. նույնը կարելի է ասել նաև այլ մարդկանց հույզերի և զգացմունքների կառավարման մասին, որտեղ դարձյալ փորձառու ղեկավար հրամանատարներն ունեն բարձր կամային և վարքային հատկանիշներ: Հետազոտության նպատակից ելնելով ուսումնասիրվել է փրկարար ծառայության ստորաբաժանումների հրամանատարների հաղորդակցման և կազմակերպչական ընդունակությունները: Երկու խմբերի համեմատական վերլուծությունից պարզ է

դառնում, որ փորձառու փրկարարների մոտ հաղորդակցման, հրամանների կայացման և կազմակերպչական հմտությունների միջին ցուցանիշը գերազանցում է երիտասարդ փրկարարների հաղորդակցման և կազմակերպչական ընդունակությունների միջին ցուցանիշին: Սակայն հետաքրքիր է այն փաստը, որ երիտասարդների կազմակերպչական ընդունակությունները զիջում են հաղորդակցման ընդունակություններին, իսկ փորձառու հրամանատարների մոտ պատկերը հակառակն է՝ հաղորդակցման ընդունակություններն ավելի թույլ են արտահայտված, քան կազմակերպչական հմտությունները:

Այսպիսով՝ հետազոտությունը ցույց տվեց, որ կազմակերպչական և հաղորդակցման ընդունակությունները զարգացել են մասնագիտական գործունեության ընթացքում և դրանց համեմատական պատկերը փոխվում է՝ կապված գործունեության փոփոխման հետ: Հաղորդակցական ընդունակությունների զարգացումն իրականացվում է հոգեբանական ազդեցության այնպիսի մեթոդների կիրառմամբ, ինչպիսիք են՝ վարժանքները, զարգացնող հոգեբանական դասընթացները, զրույցը և այլն: Հարկ է նշել նաև, որ այդ մեթոդները պետք է կիրառել ոչ միայն մինչև արտակարգ իրավիճակի ստեղծումը կամ դեպքի վայր մեկնելուց առաջ, այլ նաև դրանից հետո: Հուզական ինտելեկտը հանդիսանալով մասնագիտական գործունեության կարևոր բաղադրամաս, որը պայմանավորում է նաև անձի հաղորդակցման հմտությունները, մասնագիտական գործունեության ընթացքում զարգանում է, սակայն մասնագիտական կրթության ընթացքում չի հասնում իր զարգացման բարձր մակարդակին: Մասնագիտական գործունեության ոլորտներում, որտեղ կա մարդկանց հետ փոխհարաբերություն, գործունեության արդյունավետությունը պայմանավորված է հաղորդակցման և կազմակերպչական հմտությունների բարձր մակարդակով, հուզական կայունությամբ, ինքնատիրապետման հմտություններով և այլ հոգեբանական որակներով, որոնք ենթակա են զարգացման, և իհարկե փոփոխման՝ կախված իրավիճակից: Չպետք է մոռանալ նաև, որ փրկարար ծառայության ստորաբաժանումների հրամանատարներն իրենց հրամանները և գործառույթներն իրականացնում են հիմնականում արտակարգ իրավիճակի պայմաններում, որն իր հուզական և վարքային բացասական ազդեցությունն անպայմանորեն թողնում են կայացրած որոշումների և անձնակազմի փոխհարաբերությունների վրա, այդ իսկ պատճառով հոգեբանական ազդեցության մեթոդների կիրառումը պարտադիր է դառնում փրկարար ծառայության ստորաբաժանումներում:

Գրականություն

1. **Ավետիսյան Ա.**, Հաղորդակցում և կոնֆլիկտներ, Հեղինակային հրատարակություն, Եր. – 2003.- 187:
Avetisyan A., Haghordakcum ev kwnfliktner, Heghinakayin hratarakutyun, Yer. – 2003. - 187:
2. **Бодров В.А.**, Психология профессиональной пригодности. Учебное пособие для вузов (Современное образование) – М. ПЕР СЭ, 2001. – 511 с.
Bodrov V.A., Psikhologiya professionalnoy prigodnosti. Uchebnoe posobie dlya vuzov (Sovremennoe obrazovanie) – M., PER SE, 2001. – 511 s.
3. **Бодалев А.А.**, Восприятие и понимание человека человеком. М.: Изд-во Моск. ун-та, 1982. - 200 с.
Badalev A.A., Vospriyatie i ponimanie cheloveka chelovekom. M., Izd-vo Mosk. Un-ta, 1982. – 200 s.

4. **Вердербер Р.**, Вердербер К., Психология общения (Серия «Главный учебник»). — СПб.: Прайм-Еврознак, 2003. — 320 с.
Verderber R., Verderber K., Psikhologiya obsheniya (Seriya «Glavniy uchebnik»). – SPb.: Praym-Evroznak, 2003.- 320 s.

А.С. Геворгян

ФОРМИРОВАНИЕ ПСИХОЛОГИЧЕСКОЙ КВАЛИФИКАЦИИ КОМАНДИРОВ ПОДРАЗДЕЛЕНИЙ СПАСАТЕЛЬНОЙ СЛУЖБЫ В ПРОФЕССИОНАЛЬНОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ

Особенности профессиональных психологических требований к личности, отраженные в научной литературе, подразделяются на психологически устойчивые качества и способности к развитию. Однако вопрос о месте развития этих качеств продолжает оставаться в центре внимания психологов. При чрезвычайных ситуациях исключительно важное значение имеют форма управления, гибкость и точность принятия решений. В статье опытным путем изучены условия формирования этих качеств и, согласно сделанному выводу, эмоциональный интеллект, являясь важной составляющей профессиональной деятельности, обуславливает также коммуникативные навыки человека, и развивается в процессе профессиональной деятельности. Однако, в процессе профессионального образования эмоциональный интеллект не достигает высокого уровня в своем развитии и развивается посредством специальной психологической работы.

Ключевые слова: подразделение спасательной службы, командир, навыки коммуникации, эмоциональный интеллект.

A.S. Gevorgyan

FORMATION OF PSYCHOLOGICAL QUALIFICATION OF THE RESCUE SERVICE DEPARTMENTS COMMANDERS IN PROFESSIONAL ACTIVITIES

In the scientific literature, the qualities reflected in the professional psychological requirements of a person are divided into developmental and stable psychological qualities, but where these qualities develop is still in the focus of psychologists' attention. During emergency situations the form of management, the flexibility of decision making process and the exactness play the most important role.

The conditions for the formation of these qualities have been studied experimentally, and according to the study, emotional intelligence is developed during professional activity through special psychological work.

Keywords: the department of Rescue Service, commander, communication skills, emotional intelligence.

Գևորգյան Անի Սեյրանի – դասախոս, հայցորդ (ՃԿՊԱ, ՀՀ ԿՊԱ).

Ներկայացման ամսաթիվը՝ 24.09.2022

Գրախոսման ամսաթիվը՝ 29.09.2022

A.S. Chilingaryan, L.A. Minasyan

THE METHODOLOGY AND MECHANISMS OF LOCALIZATION AND IMPLEMENTATION OF INTERNATIONAL OBLIGATIONS FOR DISASTER RISK REDUCTION IN THE REPUBLIC OF ARMENIA

The purpose of the article is to conduct an analysis of the utilized methodologies for disaster risk reduction system capacity development and formulation of disaster risk reduction national strategy. For this purpose, the case of the Republic of Armenia was studied through a desk review of available information and secondary data analyses. Moreover, the strengths and the weaknesses are presented in the article which will contribute to general matter discussions and possible application of this approach in Europe and Commonwealth of Independent States (ECIS region).

The prerequisites and necessity of developing a national strategy for disaster risk reduction are also presented, as a legal basis for the implementation of international obligations, without which the effective integration and implementation of disaster risk reduction in the management processes and sectoral development would not be possible.

Key words. *Disaster risk reduction, disaster risk management, capacity assessment, Hyogo framework for action, Sendai framework for disaster risk reduction, disaster risk reduction national strategy.*

One of the critical factors for sustainable development and resilience building of Armenia is the development of an effective system for disaster risk management that involves all sectors of the economy and engages wide layers of the society. Resilience cannot be efficient if it is covering only emergency response in case of disasters. Any society should consider the disaster preparedness, risk mitigation, response, and post disaster recovery as the only way to reach the sustainable development and resilience.

According to the United Nations Office for Disaster Risk Reduction (UNDRR) disaster risk management is the application of disaster risk reduction policies and strategies to prevent new disaster risk, reduce existing disaster risk and manage residual risk, contributing to the strengthening resilience and reduction of disaster losses. Every year, more than 200 million people are affected by droughts, floods, cyclones, earthquakes, wildfires, and other hazards. Increased population densities, environmental degradation, and global warming, adding to poverty make the impacts of natural hazards worse. The past few years have reminded us that natural hazards can affect anyone, anywhere [1].

Considering the increase of disasters and anthropogenic impact on Climate Change UNDRR and other UN agencies, international community in collaboration with Governments around the world have committed to take action to reduce disaster risk and have adopted a strategic framework to reduce vulnerabilities to natural hazards and enhance the capacities for resilience building called the Hyogo Framework for Action (2005-2015) and Sendai Framework for Action (2015-2030). This strategic approach assists the efforts of nations and communities to become more resilient to, and cope better with the hazards that threaten their development gains.

This modality has declarative approach and the country delegates participating in the world conference on DRR voting and endorsing the document as a strategy that should be implemented by

UN member countries, which being adopted by the Resolution of General Assembly (both for Hyogo Framework and Sendai Framework). Below is presented the text from the Sendai Framework for DRR document.

The Heads of State and Government, ministers and delegates participating in the Third United Nations World Conference on Disaster Risk Reduction, have gathered from 14 to 18 March 2015 in Sendai City, Miyagi Prefecture, Japan, which has demonstrated a vibrant recovery from the great east Japan earthquake in March 2011. Recognizing the increasing impact of disasters and their complexity in many parts of the world, it was declared the delegates determination to enhance their efforts to strengthen disaster risk reduction to reduce losses of lives and assets from disasters worldwide [2].

When it comes to the implementation of these global strategies at the national level, problems usually arise in the sense that these documents do not create legal obligations, and it is necessary to adapt them to the legal norms existing in the given country, which will be the basis for its localization and implementation. On the other hand, it is very important to understand and evaluate the real capacity and gaps that exist in the Disaster Risk Management system, the identification of which and the development of appropriate actions will only enable the effective implementation of the assumed obligations and international policies.

Considering the mentioned challenges Armenia has started the implementation of the Hyogo framework with the capacity assessment in 2009, initiated by the Ministry of Emergency Situations o Armenia and UNDP.

To ensure the proper implementation of international strategies and aiming the establishment of relevant legislative baseline the Government of Armenia, the Ministry of Emergency Situations (MoES) and UNDP Armenia, UNDP experts from the Capacity Development Group (CDG) and the Bureau for Crisis Prevention and Recovery (BCPR) design and facilitate a Capacity Development process for the national Disaster Risk Reduction (DRR) system in Armenia in 2009. The Hyogo Framework for Action (HFA) 2005-2015 was selected as a basis and toolkit for designing actionable indicators to measure the current baseline and identify the desired level of capacity for the DRR system.

Disaster Risk Reduction Capacity Development process in Armenia has been an innovative exercise for number of reasons:

1. It adapted the UNDP Capacity Development Methodology for DRR; which was the first time in the region.
2. The assessment process established a measurable base line of DRR capacity in Armenia.
3. It was a participatory process with the engagement of a wide range of stakeholders representing the state institutions, local governments, Civil society, academic institutions and international organizations ensuring also “No one left behind” approach.

The capacity development process allowed to develop capacity assessment tools based on the HFA actions 1-5 and key activities to be developed to facilitate self-assessment, inform stakeholder consultations and broaden the understanding and application of HFA. Use of internationally accepted frameworks for DRR and capacity development has created an evidence-based rationale for DRR in Armenia. The methodology and tools developed for the DRR system in Armenia became

a valuable resource that was adapted and replicated in Armenia for the second Capacity Assessment conducted in 2016 based on the Sendai framework for DRR principles. The DRR capacity development process in Armenia helped key government stakeholders actively participate to develop a shared vision for an effective DRR system. The general public was also kept informed of the DRR system exercise by media who actively covered milestone events of the process, as part of ongoing public awareness.

Capacity development is a process of change which is key to the long-term success and resilience building. Capacity is vital for sustainable development and the achievement of nationally and internationally agreed development targets, including crisis prevention and recovery.

UNDP defines capacity development as “the process through which individuals, organizations, and societies obtain, strengthen and maintain the capabilities to set and achieve their own development objectives over time”.

The capacity assessment was implemented through implementation of 5 main steps that are presented below. The assessment main model was based UNDP capacity development process [4] that was adapted for the DRR system in Armenia.




Fig. 1. Five Step Process for developing Disaster Risk Reduction Capacities

Step 1. Engaging DRR system stakeholders

The first step was the engagement of main stakeholders, including line ministries, international organizations, local government, academic institutions, etc. where the overall process was discussed and the scope of the capacity development process for each stakeholder was identified.

During group meetings and individual discussions, the current and desired level of relationship between different players and stakeholders was discussed.

Step 2. Assess the DRR System Capacity Assets and Needs

During the second step the Capacity Assessment was conducted by three main phases: 1) the design of a capacity assessment tool based on the HFA actions 1-5 and adapted for the DRR system

and the Armenian context; 2) conducting the assessment; and 3) interpreting the results by comparing the existing capacities against the realistic level of desired capacities to determine gaps and priorities to inform the formulation of the capacity development response.

Step 3. Formulate DRR System Capacity Development Response

Based on the assessment results and findings, the first draft of capacity development response of the DRR system was formulated and presented to the stakeholders which demonstrated a summary of the current capacity with a priority set of interventions for the key activities of HFA 1-5 that addresses those capacities that should be strengthened. It also included enhancements that could be made to optimize existing capacities that are already strong.

Figure 2 presents the overall picture of DRR capacities in Armenia as provided by the analysis. Current capacities are compared versus desired/target level in the overall framework of HFA capacity standards [4].




Fig. 2. Overall Assessment of DRR System Capacities in Armenia

Key: HFA Priority Areas for Action

- A. Governance: organizational, legal and policy frameworks;
- B. Risk identification, assessment, monitoring and early warning;
- C. Knowledge management and education;
- D. Reducing underlying risk factors;
- E. Preparedness for effective response and recovery

Based on the results of the DRR capacity assessment, an Action Plan for capacity development has been recommended to strengthen the DRR system in Armenia. The Action Plan focused on three capacity areas: i) strengthening of core organizational capacities; ii) strengthening of technical capacities; iii) enhancement of community engagement and cooperation.

The strategic key recommendation was development of National Strategy for DRR, which includes a shift from response-oriented approach to more prevention and risk mitigation modality that can ensure the sustainability of development efforts at all levels.

Step 4. Execute a DRR System Capacity Development Response

The action plan becomes a road map for national and local governments, as well as for the international organizations to support the further capacity development of the DRR system in Armenia. Among the other capacity development activities, the formulation of the DRR National Strategy was initiated by MoES with the support of UNDP and with active participation of the main stakeholders. The strategy was adopted by the Government of Armenia in 2012.

The main objective of the strategy was the establishment of resilient country, increasing the safety of individuals and the society, thus contribute to the sustainable development of the country. The strategy Action Plan 2012-2015 was developed based on the HFA 5 Priority Areas for Action and become a legislative bases for the implementation of HFA as an international strategy for DRR.

The support of the international organizations to implement the Capacity Development Action plan was crucial, with the help of which Armenia registered valuable results in improvement of DRR system and development of human capacity and expertise in the field of DRR. The experts from Armenia participated in Sendai Framework formulation workshops, consultation meetings and other events at regional and global levels.

Step 5. Evaluate DRR System Capacity Development

During the third UN World Conference on DRR, which was organized in Sendai, Japan, on March 18th of 2015, the Sendai Framework for Disaster Risk Reduction 2015-2030 was adopted, and the participating 187 countries declared their commitment to address disaster risk reduction and the building of resilience to disasters with a renewed sense of urgency within the context of sustainable development and poverty eradication, and to integrate, as appropriate, both disaster risk reduction and the building of resilience into policies, plans, programmes and budgets.

Sendai Framework highlights the importance of enhanced work to reduce exposure and vulnerability, thus preventing the creation of new disaster risks, and accountability for disaster risk creation are needed at all levels. More dedicated action needs to be focused on tackling underlying disaster risk drivers, such as the consequences of poverty and inequality, climate change and variability, unplanned and rapid urbanization, poor land management and compounding factors such as demographic change, weak institutional arrangements, non-risk-informed policies, lack of regulation and incentives for private disaster risk reduction investment, limited availability of technology, unsustainable uses of natural resources, declining ecosystems, etc. Moreover, it is necessary to continue strengthening good governance in disaster risk reduction strategies at the national, regional and global levels and improving preparedness and national coordination for disaster response, rehabilitation and reconstruction.

To support the assessment of global progress in achieving the outcome and goal of the present Framework, seven global targets have been agreed and presented below:

(a) Substantially reduce global disaster mortality by 2030, aiming to lower the average per 100,000 global mortality rate in the decade 2020–2030 compared to the period 2005–2015.

(b) Substantially reduce the number of affected people globally by 2030, aiming to lower the average global figure per 100,000 in the decade 2020–2030 compared to the period 2005–2015.

(c) Reduce direct, disaster economic loss in relation to global gross domestic product (GDP) by 2030.

(d) Substantially reduce disaster damage to critical infrastructure and disruption of basic services, among them health and educational facilities, including through developing their resilience by 2030.

(e) Substantially increase the number of countries with national and local disaster risk reduction strategies by 2020.

(f) Substantially enhance international cooperation to developing countries through adequate and sustainable support to complement their national actions for implementation of the present Framework by 2030.

(g) Substantially increase the availability of and access to multi-hazard early warning systems and disaster risk information and assessments to people by 2030 [2].

Following the adoption of Sendai Framework, the Government of Armenia in partnership with UNDP and the World Bank and within the frame of the DRR National Platform of Armenia initiated the new capacity assessment process for disaster risk management (DRM) system in Armenia. The assessment started with monitoring and evaluation exercise of existing DRR Capacity development action plan and DRR National Strategy.

During the evaluation process, it was identified that about 70% of the DRR Capacity Development and DRR National Strategy action plan has been implemented and 10% is in the process of implementation. However, this process also made it clear that the main part of the strategy action plan was implemented by the Ministry of Emergency Situations or its subordinate units. Therefore, considering the Sendai Framework for DRR there was a need for a new capacity assessment exercise, during which the same approach and assessment modality was applied where Sendai four priority directions were adopted as an assessment tool.

The assessment tool was the key instrument used in the assessment process, linking questions from the assessment questionnaire with four specific capacity dimensions:

Dimension A: Sendai Framework for DRR 2015-2030 (SF DRR) Four Priority Actions⁶ includes four priority areas, each with a set of capacity targets for countries to develop:

Priority Action 1 – Understanding Disaster Risk.

Priority Action 2 – Strengthening Disaster Risk Governance to Manage Disaster Risk,

Priority Action 3 – Investing in Disaster Risk Reduction for Resilience.

Priority Action 4 – Enhancing Disaster Preparedness for Effective Response and to “Build Back Better” in Recovery, Rehabilitation and Reconstruction.

Dimension B: DRM Capacity Application Areas are defined governance areas where DRM capacities are needed to achieve development objectives. 20 DRM areas of focus have been suggested for Armenia, all are aligned within the purview of the GoA’s different ministries and agencies.

Dimension C: Functions of DRM Capacity include the capacity to (1) conduct a situation assessment, (2) develop policies and regulations, (3) undertake planning programs and projects, (4) engage stakeholders, (5) build a budget that will provide necessary financing, (6) implement actions, (7) monitor and evaluate the process and the results. These seven functions are considered the main capacities for managing disaster risks and implementing effective DRM programs.

Dimension D: DRM Capacity Levels indicate categories, or levels, that correspond with each capacity. There are four main levels: institutional, organizational, individual and knowledge base.

1. First, there is the overarching institutional environment and practices within which structures and systems operate, they can either enable or constrain DRM capacity. The institutional capacity level refers to the policies, procedures and processes that countries have in place to

regulate and plan as well as manage development, implement the rule of law, measure changes and conduct other functions of the state.

2. Second, there are organizational capacities, such as structures and systems, which shape how various actors come together to perform a given functions, such as implementing a policy or program. For example, policies operate within a system that can either facilitate or constrain the performance of required functions.
3. Third, there are skills individuals possess, they can be technical or functional in nature. These skills can range from technical, such as the ability to conduct geospatial analysis, to an individual’s professional motivation.
4. The fourth and final capacity category is a knowledge base, which ensures existing data, tools, methodologies, information, training materials, etc. are stored so that accumulated knowledge is not lost.

Current (2016) and Future (2020) levels of Capacity for Priority Areas




Fig. 3. Comparative Analysis for Sendai Priority Areas

Based on the assessment, DRM Capacity Development Report and 2016-2022 action plan was adopted by MoES which is in line with the implementation of Sendai Framework at the national and community levels.

It was also highlighted that all capacity areas for Sendai Framework are equally important for resilience building in Armenia. The assessment process showed that the relatively weak capacity areas in Armenia are Sendai Framework Priority Action 2 - Strengthening Disaster Risk Governance to Manage Disaster Risk, and Priority Action 4 – Enhancing Disaster Preparedness for Effective Response and to “Build Back Better” in Recovery, Rehabilitation and Reconstruction. It was agreed that efforts should be made to strengthen country capacities for resilience and post-disaster recovery, and the main issue to address is inclusion of DRM capacity development as one of the main components of the future strategy in Armenia.

One of the key recommendations was the revision of DRR strategy as the first key step of the capacity development process. Considering the lessons learned of the DRR National Strategy evaluation it was suggested to shift from so-called blueprint strategy to process strategy approach. This move was justified by the necessity of having an agile and flexible strategic document, which

can support the process of managing the disaster risk reduction in the country and avoid cumbersome bureaucratic procedures associated with the revision of static blueprint strategies.

Disaster Risk Management National Strategy was formulated with the 2017-2022 Action plan as a Process Strategy. The strategy has a long-term plan of action, which is structured in line with seven basic functions of the DRM approach, specifies the roles and responsibilities of all actors, explores its goals and specifies how to bring about a desired outcome related to this process. It explains what resources shall be made available and how to best use them to achieve the outcome within fixed timeframes. The new Strategy was adopted by Decree N 14 dated 6 April 2017 by the Government of Armenia."

The aim of the strategy is to establish a disaster resilient country, reduce disaster risk and loss of human lives, livelihood and health, as well as economic, physical, social, cultural and environmental losses of people, organizations, communities and the country to ensure increased safety of individuals and the society and the sustainable development of the country [6].

The strategy is fully in line with the Sendai Framework which is emphasized in the priority actions and objectives of the strategy presented below:

- 1) "Understanding disaster risk" – improve the disaster risk identification, assessment, analysis, monitoring and early warning continuously developing systems aimed at disaster risk reduction, as well as making risk sensitive effective decisions for the country's development.
- 2) "Strengthening the disaster risk management system" – ensure strengthening of the disaster risk management system through raising the effectiveness of management functions, targeted decentralization and continuous development of the players.
- 3) "Investments in disaster risk reduction" – incorporate disaster risk reduction functions and measures and enhance transparency ensuring investments in disaster risk reduction sector and possibilities for implementation of innovative programmes.
- 4) "Building back better" – continuous strengthening of the country's capacities and opportunities for disaster preparedness, as well as disaster rapid response and more effective post disaster recovery [6].

With adoption of the National Strategy the Government of Armenia established relevant policy basis for implementation of Sendai Framework for DRR at all levels thus ensuring also the sustainability of DRM system enhancement and integration of DRM into the Government development plan.

1. For the implementation of any international obligation, it is necessary to take into account the existing capabilities and the need for their development. Disaster risk reduction capacity assessment and development action plans in the Republic of Armenia are the most important steps that enable the country to effectively define existing capacities and necessary directions for improvement. The use of Hyogo and Sendai frameworks as an assessment tool is a unique approach that has assessed the actual capacity and environment for implementing these strategies and served as a bases for formulation of a clear-cut road map for systemic development of disaster risk reduction capacities. In terms of methodology, the application of five fundamental stages, from evaluation to monitoring, enables to effectively evaluate the

entire capacity development process, register achievements, identify weaknesses, and propose solutions to make the system improvement and capacity development process more effective.

2. The international policies and strategies that have a declarative nature are sometimes difficult to localize and implement at national levels. Even though the Republic of Armenia accepted and undertook a commitment in the direction of disaster risk reduction international framework the absence of appropriate legal basis was challenging for its implementation. Therefore, the national strategy becomes the legal cornerstone that ensures inclusiveness in development processes and creates an appropriate environment for both implementation and monitoring. The availability of proper action plan, as well as the strategy evaluation mechanisms serv as a bases for identification of policy gaps, challenges, and formulation of effective response measures for upgrading the regulatory framework. The transition from the blueprint strategy into the process strategy was the result of evaluation process and lessons learned from the implementation of the first strategy, which is clear evidence of systemic constructive development. Process Strategy easy to adapt for new reality and determines the best possible way to implement a process under certain assumptions and constraints.

Improvement of Legal Framework for Disaster Risk Management can be fundamental for the sustainability of integration of international obligations on disaster risk reduction into development processes at all levels in the Republic of Armenia. The development and adoption of the Law on Disaster Risk Management and Civil Protection is a crucial for sustainable development and resilience building in Armenia. It can provide concrete roles and responsibilities for decision makers at state, regional and local levels, thus ensuring appropriate integration, planning, implementation, monitoring and financing of disaster risk management. The law will become a legal bases for further strengthening of disaster risk management policy framework and development of sub-laws that will create relevant mechanisms for risk-informed decision making, sustainable development and resilience building in the Republic of Armenia.

Literature

1. United Nations Office for Disaster Risk Reduction: Guideline on Building the resilience of nations and communities to disaster: an introduction to the Hyogo Framework for Action (HFA): Published in 2007 preventionweb.net
2. Sendai Framework for Disaster Risk Reduction 2015-2030: Published in 2015. Sendai Framework for Disaster Risk Reduction 2015 - 2030 (unisdr.org)
3. UNDP Capacity Development Group site where the information including capacity development practice notes, guidelines and tools can be found on the www.capacity.undp.org.
4. "Armenia Disaster Risk Reduction System Capacity Development Report". Published by UNDP in 2010.
5. Armenia DRM Capacity Assessment Report. "Assessment of Disaster Risk Management Capacities in Armenia: Informing the National Disaster Risk Management Strategy". Published by World Bank, UNDP and GFDRR in 2016.
6. PROTOCOL OF THE GOVERNMENT SESSION OF THE REPUBLIC OF ARMENIA N 14, on the approval of the Disaster Risk Management National Strategy and the action plan, dated 6 April 2017.
7. Matevosyan H. Disaster Risk Reduction National Strategy Implementation Guideline. 2012. - 240 p.

Ա.Ս. Չիլինգարյան, Լ.Ա. Մինասյան

ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՂԱՅՆԱՑՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Հոդվածի նպատակն է իրականացնել ուսումնասիրություն աղետների ռիսկի նվազեցման համակարգի կարողությունների զարգացման և աղետների ռիսկի նվազեցման ազգային ռազմավարության մշակման համար կիրառված մեթոդաբանության վերաբերյալ: Այդ նպատակով դիտարկվել է Հայաստանի Հանրապետության փորձը՝ առկա տեղեկատվության և երկրորդային տվյալների վերլուծության միջոցով: Բացի այդ, հոդվածում ներկայացված են գործընթացի ուժեղ և թույլ կողմերը, որոնք կնպաստեն այդ մոտեցման հետագա քննարկմանը և հնարավոր կիրառմանը Եվրոպայի և անկախ պետությունների համագործակցության երկրներում:

Ներկայացված է նաև աղետների ռիսկի նվազեցման ազգային ռազմավարության մշակման նախապայմաններն ու անհրաժեշտությունը, որպես ստանձնած միջազգային պարավորությունների իրականացման իրավական հիմք, առանց որի առկայության հնարավոր չէր լինի աղետների ռիսկի նվազեցման գործառույթների արդյունավետ ներառումն ու իրականացումը կառավարման և ոլորտային զարգացման գործընթաններում:

Առանցքային բառեր. աղետների ռիսկի նվազեցում, աղետների ռիսկի կառավարում, կարողությունների գնահատում, Հյուսիսային գործողությունների ծրագիր, աղետների ռիսկի նվազեցման Սենդայի գործողության ծրագիր, աղետների ռիսկի նվազեցման ազգային ռազմավարություն:

А.С. Чилингарян, Л.А. Минасян

МЕТОДОЛОГИЯ И МЕХАНИЗМЫ ЛОКАЛИЗАЦИИ И РЕАЛИЗАЦИИ МЕЖДУНАРОДНЫХ ОБЯЗАТЕЛЬСТВ ПО СНИЖЕНИЮ РИСКА БЕДСТВИЙ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Цель статьи - провести анализ используемых методологий для развития потенциала системы снижения риска бедствий и формулирования национальной стратегии по снижению риска бедствий.

С этой целью опыт Республики Армения был изучен путем анализа имеющейся информации и вторичных данных. Кроме того, в статье представлены сильные и слабые стороны этого опыта, что будет способствовать дальнейшему обсуждению и возможному применению этого подхода в странах Европы и в Содружестве Независимых Государств.

Также представлены предпосылки и необходимость разработки национальной стратегии снижения риска бедствий, как правового основания для выполнения международных обязательств, без которых была бы невозможна эффективная интеграция и внедрение снижения риска бедствий в процессы управления и отраслевого развития.

Ключевые слова: *снижение риска бедствий, управление рисками бедствий, оценка потенциала, Хиогская рамочная программа действий, Сендайская рамочная программа по снижению риска бедствий, национальная стратегия по снижению риска бедствий.*

Chilingaryan Armen Suren - PhD student of Climate Change and Sustainable Development Policies (University of Lisbon, Institute of Social Science), Lecturer (Crisis Management State Academy, MES, RA).

Minayan Lilit Aram - PhD student of Climate Change and Sustainable Development Policies (University of Lisbon, Institute of Social Science), Lecturer (Crisis Management State Academy, MES, RA).

Presentation date: 29.09.2022

Review date: 03.10.2022

Ա.Ա. Սարգսյան, Հ.Գ. Հարությունյան

ՀԵՏԱՂԵՏԱՅԻՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ

Հոդվածում ներկայացված են արտակարգ իրավիճակների հետևանքով առաջացած կարիքների գնահատման արդյունավետ մեթոդաբանության մշակման վերաբերյալ հարցեր: Մեթոդաբանությունը հնարավորություն կտա գնահատել աղետի հետևանքով պատճառված վնասները և կորուստները, ինչպես նաև, բացահայտել հետադեպային վերականգման և վերակառուցման կարիքները:

Առանցքային բառեր. արտակարգ իրավիճակ, կարիքների գնահատում, մեթոդաբանություն:

Հետադեպային կարիքների գնահատումն անհրաժեշտ է, առաջին հերթին, որոշելու կառավարության կարճաժամկետ միջոցառումները, որոնք անհրաժեշտ են վերականգնման աշխատանքներ սկսելու համար, և երկրորդ՝ ընդհանուր ֆինանսավորման կարիքները՝ աղետից տուժած օբյեկտների ամբողջական վերականգնումն ու վերակառուցումն ապահովելու, ինչպես նաև կառավարման և աղետների ռիսկը նվազեցնելու համար:

Հայաստանում դեռևս չի ձևավորվել աղետների ռիսկի գնահատման միասնական մեթոդաբանություն, մշտադիտարկման ամբողջական համակարգ՝ իր բոլոր բաղադրիչներով, այդ թվում նաև տեղեկատվական բազաներով:

Արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասները գնահատելու նպատակով ձևավորվում է հանրապետական հանձնաժողովը: Արտակարգ իրավիճակների նախարարությունը համակարգում է վնասի և կորուստների, հետադեպային վերականգման և վերակառուցման կարիքների գնահատման գործընթացը: Հանձնաժողովին կից կարող են ստեղծվել աշխատանքային խմբեր, որոնք նախատեսվում են առանձին հարցերի վերաբերյալ վնասի գնահատման նեղ մասնագիտական ակտերի կազմման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության մարզային և Երևան քաղաքի՝ համապատասխան ոլորտում իրականացվող աշխատանքները համակարգող հանձնաժողովների ակտերի ճշգրտման համար: Աշխատանքային խմբերի կազմը ձևավորվում է հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված թեկնածուներից և հաստատվում հանձնաժողովի կամ հանձնաժողովի նախագահի կողմից՝ հանձնաժողովի նիստերի միջև ընկած ժամանակահատվածում [1]:

Վտանգի բացասական հետևանքներից են՝ մարդկային կորուստներ (գոհեր, վիրավորներ, հաշմանդամներ և այլն), շենքերի, շինությունների, հաղորդակցության ուղիների, ինժեներական, կոմունալ-էներգետիկ ցանցերի ավերումներ, մշակութային անշարժ արժեքների ոչնչացում, տնտեսական և նյութական կորուստներ, կենսաապահովման ծառայությունների բնականոն գործունեության խաթարումներ, ռելիեֆի փոփոխություններ, գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակի զանգվածային անկում, մշակաբույսերի և ցանքսերի ոչնչացում, բնակչության հոգեբանական մթնոլորտի կայունության խախտում, երկրորդային վտանգավոր երևույթների ծագում (սողանք, փլուզում, սելավ, ջրհեղեղ, հրդեհ, պայթյուն, տեխնոլոգիական վթար, խմելու ջրի աղտոտում, գրունտային ջրերի մակարդակի փոփոխություն, համաճարակ և այլն):

Հնարավոր հետևանքների որոշման մեթոդների ընտրությունը կապված է այդ հետևանքների բազմաբնույթության հետ, և հետևաբար, տարբեր չափողականություն ունեցող պարամետրերի հետ: Հետևանքները կարող են լինել մարդկային զոհեր, վիրավորներ, անօթևան մնացածներ, փլուզված շենքեր, շինություններ, կառույցներ, ավերված վտանգավոր օբյեկտներ (երկրորդային վտանգներ), շարքից դուրս եկած ճարտարագիտական ցանցեր (կապուղիներ, ավտոճանապարհներ, ջրամատակարարման, գազամատակարարման, կոյուղու, էլեկտրամատակարարման և այլն): Վերոհիշյալով պայմանավորված է հնարավոր հետևանքների գնահատման գործընթացի բարդությունը:

Ռիսկերի կառավարման մոդելավորումը կապված է ռիսկերի գնահատման միասնական մեթոդաբանության ներդրման, թվայնացված քարտեզների մշակման ու ներդրման և որոշումների ընդունման մոդելավորման հետ:

Թվայնացված քարտեզները պետք է ներառեն տարբեր շերտեր: Օրինակ՝ վտանգների, շենքերի, շինությունների, ջրամատակարարման, գազամատակարարման, կոյուղու և ջրահեռացման, ճանապարհային ցանցեր, բնակչության տեղաբաշխման քարտեզներ և այլն: Այդ քարտեզների շերտ-շերտ համադրմամբ կարելի է գնահատել ռիսկը: Դրանց առկայությունը կտրուկ կարող է մեծացնել ռիսկի նվազեցման վերաբերյալ որոշումների ընդունման արդյունավետությունը:

Արտակարգ իրավիճակը, աղետը, ճգնաժամը հետևանք են վտանգի, վտանգավոր երևույթի ազդեցության: Ընդ որում, այդ հետևանքի մասշտաբներն ու բնույթը կախված կլինի սովյալ վտանգից կամ վտանգավոր երևույթից, համակարգի խոցելիությունից: Այսպիսով՝

- համակարգում ծագած արտակարգ իրավիճակի հետևանքները կարելի է վերացնել սեփական ուժերով և միջոցներով,
- համակարգում ծագած աղետալի հետևանքները հնարավոր չէ վերացնել միայն սեփական ուժերով և միջոցներով,
- համակարգում ծագած ճգնաժամը համակարգի համար վճռորոշ է, և նույնիսկ կարող է սպառնալ համակարգի հետագա գոյությանը:

Ծագած իրադրությունների կառավարման մակարդակը կապված կլինի ներգրավված անհրաժեշտ ուժերի և միջոցների ծավալից: Այսպես՝ եթե որևէ կազմակերպությունում ծագած արտակարգ իրավիճակի հետևանքի վերացումը կատարվում է այդ կազմակերպության ուժերով և միջոցներով, ապա այդ իրադրությունում կառավարումն ունի կազմակերպության կառավարման մակարդակ: Եթե այդ նույն կազմակերպությունում ծագած արտակարգ իրավիճակի հետևանքի վերացումը հնարավոր չէ իրականացնել միայն կազմակերպության ուժերով ու միջոցներով և պահանջում է համայնքի ուժերի ու միջոցների ներգրավում, ապա այն պահանջում է համայնքային մակարդակի կառավարում: Այս դեպքում, համայնքում առկա է արտակարգ իրավիճակ, իսկ կազմակերպության համար այն հանդիսանում է արդեն աղետ: Նույն տրամաբանությամբ կարելի է դիտարկել մարզային մակարդակում և հանրապետական մակարդակում կառավարումները: Տարբեր վտանգներ հիմնականում ունեն տարբեր հետևանքներ: Միևնույն հետևանքը կարող է դրսևորվել տարբեր ձևերով, այդ հետևանքներով պայմանավորված պաշտպանական գործընթացները կարող են միմյանցից խիստ տարբերվել [2]:

Հետադետային կարիքների գնահատումն (ՀԿԳ) հետադետային գնահատման մեթոդաբանություն է, որը հնարավորություն է ընձեռնում գնահատելու աղետի հետևանքով պատճառված վնասը և կորուստը, ինչպես նաև, բացահայտելու հետադետային վերականգման և վերակառուցման կարիքները: Վերոհիշյալ գործընթացների կարգը սահմանում է ՀՀ կառավարությունը: Ելնելով արձանագրված աղետի բնույթից, ծավալից և վերականգնողական աշխատանքներին ներգրավվող մասնակիցների կազմից, վնասի, կորուստի և հետադետային վերականգնման կարիքների գնահատման գործընթացին կարող են ներգրավվել համայնքային, մարզային կամ ազգային կառույցների և հաստատությունների ներկայացուցիչներ, ինչպես նաև, ծավալուն ազդեցություն ունեցող աղետների դեպքում, միջազգային կառույցների մասնագետներ:

ՀԿԳ իրականացման անհրաժեշտության վերաբերյալ որոշումը կայացնում է ՀՀ կառավարությունը՝ կախված աղետի տեսակից և ծավալներից: Որոշումը կայացնելու համար կառավարությունը ուղղորդվում է նախապես մշակված և իր կողմից հաստատված ՀԿԳ իրականացումը հիմնավորող չափորոշիչներով: Այսինքն, կառավարությունը պետք ձևավորի իր հստակ դիրքորոշումը տվյալ իրավիճակում իր կողմից ձեռնարկվող հետադետային գործողությունների վերաբերյալ, որոշելով համապատասխանորեն, թե ինչ կարգի տեղեկատվություն/տվյալներ են անհրաժեշտ այդ գործողությունները իրականացնելու համար: Այս հանգամանքից է բխում հետադետային գնահատման մեթոդաբանության և գործիքակազմի հետագա ընտրությունը: Ընտրությունը կատարելիս հաշվի է առնվում նաև համապատասխան իրավական և ինստիտուցիոնալ դաշտի առկայությունը:

ՀԿԳ պատասխանատուն ՀՀ կառավարությունն է, որը վարչապետի գլխավորությամբ գործող արտակարգ իրավիճակների միջգերատեսչական հանձնաժողովի միջոցով կառավարում է ՀԿԳ ողջ գործընթացը: Արտակարգ իրավիճակների նախարարությունը (ԱԻՆ), որպես ԱՌԿ լիազոր մարմին, առաջնորդում է ՀԿԳ օպերատիվ գործողությունները, ապահովելով ՀԿԳ ոլորտային խմբերի ձևավորումը և դրանց գործողությունների համակարգումը: Արտակարգ իրավիճակների նախարարությունը նաև համակարգում և աջակցում է ոլորտային խմբերի աշխատակազմի գործառնական պարտականությունների մշակմանը:

ՀԿԳ իրականացման նպատակով, նախապես մշակված ձևաչափերի համաձայն, ոլորտային խմբերը հավաքագրում են տվյալներ պատճառված վնասների և կորուստների վերաբերյալ, օգտվելով երկրորդական աղբյուրներից:

Հավաքված տվյալները վավերացնելու նպատակով, խմբերը՝ դաշտային առաքելությունների պլանի համաձայն, ուղևորվում են աղետի գոտի, որտեղ այցելում են աղետից տուժած տարածքներ, անցկացնում են հանդիպումներ ֆոկուս խմբերում, հանդիպում են տեղական իշխանությունների հետ: Հարցումներ են անցկացնում տուժած բնակչության շրջանում և տուժած ոլորտների ներկայացուցիչների հետ, ամփոփում են ստացված արդյունքները տեղական իշխանությունների հետ կազմակերպված համատեղ ժողովում:

Ոլորտային խմբերում իրականացվում է հավաքագրված տվյալների ուսումնասիրություն, համեմատելով նախաաղետային տվյալները տեղերում հավաքագրված տվյալների հետ և հաշվարկելով ամեն առանձին վերցված ոլորտին հասցված վնասներն ու կորուստները: Առանձին ուշադրություն են պահանջում այն տվյալները, որոնք անհրաժեշտ են մակրոտնտեսական

ազդեցության, շրջակա միջավայրի և այլ ընդհանուր նշանակության ոլորտների գնահատման համար: Ոլորտային ուսումնասիրությունների արդյունքում յուրաքանչյուր խումբը սահմանում է վերականգնման տվյալ ոլորտին բնորոշ կարիքները, որոնք հետագայում հիմք են հանդիսանում ոլորտային ռազմավարությունների մշակման համար [3]:

Հետադետային կարիքների գնահատումը չի կրկնօրինակում ազգային և միջազգային մակարդակներում իրականացվող մարդասիրական արագ գնահատումները, ընդհակառակը, այն լրացնում է դրանք՝ միասնական համախմբված գործընթաց ստեղծելու համար:

Այսպիսով, հետադետային կարիքների գնահատում իրականացնելու համար կարևորվում է մեթոդաբանության մշակման անհրաժեշտությունը, որտեղ հստակ նշված կլինեն հետադետային վնասների և կորուստների գնահատման մեխանիզմները: Մեթոդաբանությունը կարող է կիրառվել ազգային մակարդակով աղետների ռիսկի նվազեցման/կառավարման, կայունության ամրապնդման և գլոբալ նպատակներին հասնելու համար:

Շատ կարևոր է հետադետային կարիքների գնահատման մեթոդաբանություն մշակած երկրների փորձի վերլուծությունը, լավագույն փորձի տեղայնացումը ՀՀ համար, ինչպես նաև համապատասխան փորձագետների պատրաստումը, վերապատրաստումը:

Անհրաժեշտ է մշակել միջոցառումների միասնական ծրագիր, որը միտված է աղետի գոտում տնտեսական գործունեության և բնակչության բնականոն կենսագործունեության վերականգնմանը, հաշվի առնելով առավել խոցելի խմբերի կարիքները, ինչպես նաև այդ գործընթացում աղետների ռիսկի նվազեցման միջոցառումների ներառում և նոր ռիսկերի բացառում:

Մեթոդաբանության առկայությունն, անշուշտ, կնպաստի կառավարման համակարգի արդյունավետության բարձրացմանը և կնպաստի համակարգի հետագա բարեփոխումների սահուն անցկացմանը:

Գրականություն

1. **ՀՀ վարչապետի** 2012 թվականի ապրիլի 10-ի N 325-Ա «Արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասները գնահատող հանրապետական հանձնաժողովի անհատական կազմն ու աշխատակարգը հաստատելու և ՀՀ վարչապետի 2007 թվականի փետրվարի 8-ի N 97-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» որոշում:
HH Varchapeti 2012 tvakani aprili 10-i N 325-A «Artakarg iravichakneri hetevanqov fizikakan ev iravabanakan andzanc patcharvats vnasnery gnahatox hanrapetakan handznajoxovi anhatakan kazmn u ashxatakargy hastatelu ev HH varchapeti 2007 tvakani petrvari 8-i N 97-A woroshumn ujj korcrac chanachelu masin» woroshum:
2. **Մաթևոսյան Հ.Շ.**, Ճգնաժամային կառավարում: Մենագրություն, Հեղ. հրատ., Եր. 2020. - 380 էջ: Matevosyan H. Sh., Chgnajamayin karavarum. Menagrutyun, Yerevan 2020 t. Hegh.hrat., 380 ej
3. **Սարգսյան Ա.**, Հետադետային վերականգնման կազմակերպման կարգը: Նախագիծ., 2016. - 26 էջ:
Sargsyan A., Hetaghetajin verakangnman kazmakerpman kargy. 2016t., Naxagits., 26 ej.

Ա.Ա. Տարգսյան, Ա.Գ. Արտյունյան

ВОПРОСЫ МЕТОДИКИ ОЦЕНКИ НУЖД, ВОЗНИКАЮЩИХ ПОСЛЕ БЕДСТВИЯ

В статье представлены вопросы разработки эффективной методологии оценки потребностей, возникающих в связи с чрезвычайными ситуациями. Методология позволит оценить ущерб и убытки, причиненные стихийным бедствием, а также выявить потребности в восстановлении и реконструкции после стихийного бедствия.

Ключевые слова: чрезвычайная ситуация, оценка нужд, методология.

A.A. Sargsyan, H.G. Harutyunyan

METHODOLOGICAL ISSUES FOR POST-DISASTER NEEDS ASSESSMENT

The article presents issues regarding the development of an effective methodology for assessing needs arising from emergency situations. The methodology will make it possible to assess the damages and losses caused by the disaster, as well as to identify the post-disaster restoration and reconstruction needs.

Keywords: emergency situation, needs assessment, methodology.

Սարգսյան Արմեն Աշոտի – (ՀՀ ԱԻՆ).

Հարությունյան Հասմիկ Գառնիկի – դասախոս (ՀՀ ԱԻՆ ՃԿՊԱ).

Ներկայացման ամսաթիվը՝ 01.09.2022

Գրախոսման ամսաթիվը՝ 13.09.2022

Ա.Ս. Հարությունյան

ՎԵՐԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄՈՒՄԸ, ՈՐՊԵՍ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ՃԻՇՏ ԿՈՂՄՆՈՐՈՇՎԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾԵԼՈՒ ՆԱԽԱՊԱՅՄԱՆ

Հողվածում քննարկվում է վերառարկայական կարողությունների կարևորությունը, որպես արտակարգ իրավիճակներում ճիշտ կողմնորոշվելու և գործելու նախապայման: Անդրադարձ է կատարվել ուսումնական գործընթացի հանրակրթական նշանակությանը և այդ համարեքստում քննարկվել վերառարկայական կարողությունների ձևավորման հիմնախնդիրը: Ուսումնական գործընթացի հանրակրթական նշանակության իրականացման նպատակով՝ որպես արդյունավետ եղանակ դիտարկվել է ուսուցման կազմակերպման կոլեկտիվ եղանակը:

